

ՑԵՂԱՄՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տարի 9, No 1, 2021

ՑԵՂԱՄՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տարի 9, No 1, 2021



**«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
9 (1)**

Երևան 2021

Ցեղասպանագիտական հանդես

Գլխավոր խմբագիր

Հարություն Մարության, պ.գ.դ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Գլխավոր խմբագրի տեղակալ

Էդիտա Գոյան, պ.գ.թ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Խմբագրական խորհուրդ

Աննա Ալեքսանյան, Քլարկի համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Մելինե Անույան, պ.գ.թ., Արևմտահայոց հարցերի ուսումնասիրությունների կենտրոն,
Հայաստան

Արսեն Ավագյան, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Ռայմոնդ Գևորգյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
արտասահմանյան անդամ, Ֆրանսիա

Անդրանիկ Դաքեայան, քաղաքագիտության դոկտոր, Հայկազյան համալսարան,
Լիբանան

Ռոբերտ Թաթոյան, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ, Հայաստան

Վահե Թաշճյան, պատմագիտության դոկտոր, «Հուշամատյան» ծրագիր, Գերմանիա

Վալերի Թունյան, պ.գ.դ., պրոֆեսոր, Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական
համալսարանի երևանյան մասնաճյուղ, Հայաստան

Անահիտ Խոսրոնա, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան

Աշոտ Հայրունի, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Էկե Հարթման, պատմագիտության դոկտոր, Մյունխենի Լյուդվիգ-Մաքսիմիլիանս
համալսարան, Գերմանիա

Սևանե Ղարիբյան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ժնևի համալսարան,
Շվեյցարիա

Նարինե Մարգարյան, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ, Հայաստան

Հայկ Մարտիրոսյան, պ.գ.թ., Լեփսիոսհաուս, Պոտսդամ, Գերմանիա

Վահրամ Շեմասյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի պետական
համալսարան, Տորթերիջ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Պետրոս Տեր-Մաթոսյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Նեբրասկա-Լինքոլնի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ռուբինա Փիրումյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

***Ts'eghaspanagitakan handes* (“Journal of Genocide Studies”)**

Editor in Chief:

Dr. Harutyun Marutyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Associate Editor:

Dr. Edita Gzoyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Editorial Board

Anna Aleksanyan, Clark University, USA

Dr. Meline Anumyan, Research Center on Western Armenian Studies, Armenia

Dr., Prof. Arsen Avagyan, Yerevan State University, Armenia

Dr. Antranik Dakessian, Haigazian University, Lebanon

Dr., Prof. Bedross Der Matossian, University of Nebraska-Lincoln, USA

Dr. Elke Hartmann, Ludwig-Maximilians-Universität München, Germany

Dr., Prof. Ashot Hayruni, Yerevan State University, Armenia

Dr., Prof. Sévane Garibian, University of Geneva, Switzerland

Dr., Prof. Raymond Kevorkian, foreign member of National Academy of Sciences of the Republic of Armenia, France

Dr. Anahit Khosroeva, Institute of History, National Academy of Sciences of the Republic of Armenia

Dr. Narine Margaryan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Dr. Hayk Martirosyan, Lepsiushaus, Potsdam, Germany

Dr., Prof. Rubina Perroomian, University of California, Los Angeles (UCLA), USA

Dr., Prof. Vahram Shemmassian, California State University, Northridge, USA

Dr. Vahé Tachjian, Houshamadyan Project, Germany

Dr. Robert Tatoyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Dr. Valery Tunyan, Russian State University of Tourism and Services, Yerevan Branch, Armenia

Тсехаспанагитакан андес (“Журнал исследований геноцида”)

Главный редактор

Арутюн Марутян, доктор ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,”
Армения

Заместитель главного редактора

Эдита Гзоян, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

Редакционная коллегия

Арсен Авагян, доктор ист. наук, профессор, Ереванский государственный
университет, Армения

Ашот Айруни, доктор ист. наук, профессор, Ереванский государственный
университет, Армения

Анна Алексанян, Кларкский университет, Соединённые Штаты Америки

Мелине Анумян, канд. ист. наук, Центр изучения западноармянских вопросов,
Армения

Элке Артманн, доктор истории, Мюнхенский университет Людвиг-Максимилианс,
Германия

Севанэ Гарибян, доктор права, профессор, Женевский университет, Швейцария

Раймонд Геворгян, доктор истории, профессор, иностранный член НАН РА,
Франция

Андраник Дакесян, доктор политологии, Айказян университет, Ливан

Айк Мартиросян, канд. ист. наук, дом-музей Лепсиуса (Лепсиусаус), Потсдам,
Германия

Нарине Маргарян, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,”
Армения

Рубина Пирумян, доктор филологии, профессор, Калифорнийский университет в
Лос-Анджелесе, Соединённые Штаты Америки

Роберт Татоян, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,”
Армения

Ваге Ташчян, доктор истории, проект “Ушамадян,” Германия

Петрос Тер-Матосян, доктор истории, профессор, Университет Небраски-
Линкольна, Соединённые Штаты Америки

Валерий Тунян, доктор ист. наук, профессор, ереванский филиал Российского
государственного университета туризма и сервиса, Армения

Анаит Хосроева, канд. ист. наук, Институт истории НАН РА, Армения

Ваграм Шеммассян, доктор филологии, профессор, Калифорнийский
государственный университет в Нортридже, Соединённые Штаты Америки

Ցեղասպանագիտական հանդեսը (ISSN 1829-3980) գրախոսվող պարբերական է և լույս է տեսնում տարին երկու անգամ՝ մայիսին և դեկտեմբերին, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի կողմից (Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի խճուղի 8/8, հեռ.՝ (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am): Հանդեսը Հայաստանում ցեղասպանագիտության ոլորտի հիմնական պարբերականն է, որի նպատակն է ցեղասպանությունների ուսումնասիրությունը՝ պատմական, սոցիալ-հոգեբանական, ժողովրդագրական, կրոնական, մարդաբանական, իրավական, սեռային, մշակութաբանական և այլ գիտակարգերի տեսանկյունից՝ Հայոց ցեղասպանության շեշտադրմամբ: *Ցեղասպանագիտական հանդեսում* տպագրված հոդվածները, գրախոսությունները և այլ նյութերն արտահայտում են հեղինակների մոտեցումները, որոնք կարող են չհամընկնել «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի մոտեցումներին: «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը որևէ իրավական պատասխանատվություն չի կրում հեղինակների սխալների և բացթողումների համար: *Ցեղասպանագիտական հանդեսն* ինդեքսավորվում է Գիտական հղման հայկական ցուցիչ (ԳՀՀՑ) մատենագիտական շտեմարանում: Հոդվածները և գրախոսությունները կարելի է ներկայացնել տպագիր կամ ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ handes@genocide-museum.am:

Ts'eghaspanagitakan handes (“Journal of Genocide Studies”) (ISSN 1829-3980) is a peer-reviewed journal and published twice a year in May and December by the Armenian Genocide Museum-Institute Foundation (8/8 Tsitsernakaberd highway, 0028 Yerevan, Republic of Armenia, (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). *Journal of Genocide Studies* is the main forum for scholarship in the field of genocide studies in Armenia and features articles, reviews and other relevant materials related to the study of genocides from historical, social-psychological, demographic, religious, anthropological, legal, gender, cultural and other scientific fields with a special emphasis on the Armenian Genocide. Articles, reviews and other materials published in the *Journal of Genocide Studies* reflect the opinion of the authors and may not necessarily coincide with the approaches of the Armenian Genocide Museum-Institute Foundation. The Armenian Genocide Museum-Institute Foundation cannot accept any legal responsibility for the errors and omissions made by the authors. *Journal of Genocide Studies* is indexed/abstracted in the Armenian Science Citation Index (ASCI). Articles, reviews, and other relevant materials can be presented in print or sent to the following address: handes@genocide-museum.am.

Тсехаспанагитакан андес (“Журнал исследований геноцида”) (ISSN 1829-3980) – рецензируемое издание, выходит в свет два раза в год, в мае и декабре. Журнал издается фондом “Музей-институт Геноцида армян” (Республика Армения, г. Ереван, 0028, Цицернакабердское шоссе 8/8, (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). Это единственное в Армении периодическое издание в области геноцидоведения, целью которого является научное изучение геноцидов с исторической, социально-психологической, социологической, этнографической, религиозной, антропологической, юридической, гендерной, культурной и других точек зрения с акцентированием на исследование Геноцида армян. Статьи, обзоры и другие материалы, опубликованные в “Журнале исследований геноцида,” отражают мнение авторов и могут не совпадать с подходами фонда “Музей-институт Геноцида армян.” Фонд “Музей-институт Геноцида армян” не несет юридической ответственности за ошибки, допущенные авторами. “Журнал исследований геноцида” индексируется в Армянском индексе научного цитирования (АИНЦ). Статьи, обзоры и другие материалы могут быть представлены в печатном виде или отправлены по следующему электронному адресу: handes@genocide-museum.am.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Ռեզինա Ա. Գալուստյան

*«Կենսական տարածքի» ընկալումները Միություն և առաջադիմություն
կոմիտեի աշխարհայացքում և Հայոց ցեղասպանությունը.....9*

Էլինա Զ. Միրզոյան

*Իրթրիաթականները Կոստանդնուպոլսի «Հայ աշխարհ» պարբերաթերթի
(1919 թ.) էջերում.....37*

Նարինե Վ. Մարգարյան

*Եգիպտոսի հայ որբախնամ կազմակերպության գործունեությունը Կիլիկիայում
Հայոց ցեղասպանության տարիներին.....58*

Վազգեն Վ. Հախոյան

*Քեմալականների իրականացրած զանգվածային կոտորածները Փամբակի
տարածքում (Շիրակի նահանգ) ըստ ականատես-վերապրածների
ընտանեկան հիշողությունների (1920 - 1921 թթ.).....83*

Գևորգ Ս. Ղազարյան

*Հայ հոռոմները 19-րդ դ. վերջի - 20-րդ դ. սկզբի քրիստոնյաների
կոտորածների հորձանուտում.....123*

Էթիկայի կանոններ.....143

Ցուցումներ հեղինակներին.....144

CONTENT

ARTICLES

Regina A. Galustyan

*Perceptions of “Vital Space” in the Worldview of Union and Progress Committee
and the Armenian Genocide.....*9

Elina Z. Mirzoyan

*Ittihadists on the Pages of the “Hay Ashkharh” [The Armenian World]
Periodical in Constantinople (1919).....*37

Narine V. Margaryan

*The Activities of the Armenian Orphan Care Society of Egypt in Cilicia during the
Armenian Genocide.....*58

Vazgen V. Hakhoyan

*Mass Killings Implemented by the Kemalists in Pambak Area
(Shirak province) according to the Family Memories of Eyewitness-Survivors
(1920 - 1921).....*83

Gevorg S. Kazaryan

*The Hay Horoms in the Whirlpool of the Massacres of Christians in the Late
19th – Early 20th Centuries.....*123

*Ethical Guidelines.....*143

*Instruction for Authors.....*144

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ

Регина А. Галустян

*Восприятия “жизненного пространства” в мировоззрении комитета
“Единение и прогресс” и Геноцид армян.....*9

Элина З. Мирзоян

*Иттихадисты на страницах периодического издания “Ай Ашхар”
[Армянский Мир] в Константинополе (1919)*37

Нарине В. Маргарян

*Деятельность Армянского общества попечения сирот Египта в Киликии во
время Геноцида армян.....*58

Вазген В. Ахоян

*Массовые погромы, осуществленные кемалистами в Памбакском
районе (провинция Ширак) по семейным воспоминаниям
очевидцев-выживших (1920 - 1921).....*84

Геворг С. Казарян

*Хай Хоромы в водовороте резни христиан конца
19-го – начала 20-го века.....*123

*Правила этики.....*143

*Руководство для авторов.....*144

**«ԿԵՆՍԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ» ԸՆԿԱՆՈՒՄՆԵՐԸ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔՈՒՄ ԵՎ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ռեգինա Ա. Գալուստյան

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Հոդվածում փորձ է արվում ռատցելյան կենսական տարածքի տեսությունը տեղայնացնել Օսմանյան կայսրության գոյության վերջին քսանամյակի և իշխող Միություն և առաջադիմություն կոմիտեի (*Ittihat ve Terakki*, իթթիհաթականներ) քաղաքականության վրա: Համադրելով Ռատցելի ուսմունքը 1908 թ. հեղաշրջումից հետո, հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում իթթիհաթականների գաղափարական քարոզչության և երկրի տարածքը թրքացնելուն ուղղված գործնական քայլերի հետ՝ կարող ենք առաջ քաշել այն դրույթը, որ կոմիտեի քաղաքական տեսականն ավելին էր, քան զուտ թուրքական ազգային պետություն ստեղծելը: Հոդվածում խնդիր է դրվել ուսումնասիրել կոմիտեի անդամների շրջանում Փոքր Ասիա թերակղզին և Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածը թուրքական կենսական տարածք ընկալելու գաղափարի ձևավորումը, զարգացումը, որի իրականացման գործնական քայլերը հանգեցրին բնիկ քրիստոնյա ժողովուրդների պետականորեն ծրագրված ոչնչացմանը:

Բանալի բառեր՝ Օսմանյան կայսրություն, Միություն և առաջադիմություն, Ֆրիդրիխ Ռատցել, կենսական տարածք, Ռումելիա, Արարիա, Անատոլիա, Հայոց ցեղասպանություն, ներքին գաղութացում, բարենորոգումներ, միջավայրի թրքացում, տնտեսական էքսպանսիա, մշակութային էքսպանսիա:

Հոդվածը ներկայացվել է 20.01.2021: Ընդունվել է տպագրության 25.03.2021:

The article was submitted on 20.01.2021 and accepted for publication on 25.03.2021.

Статья поступила 20.01.2021 и была принята к публикации 25.03.2021.

Ինչպես հղել՝ Ռեգինա Ա. Գալուստյան, ««Կենսական տարածքի» ընկալումները Միություն և առաջադիմություն կոմիտեի աշխարհայացքում և Հայոց ցեղասպանությունը», *Յեղասպանագիտական հանդես* 9, no. 1 (2021), 9-36:

How to cite: Regina A. Galustyan, “Perceptions of “Vital Space” in the Worldview of Union and Progress Committee and the Armenian Genocide,” *Tseghaspanagitakan handes* 9, no. 1 (2021): 9-36.

Как сослаться: Регина А. Галустян, “Восприятия жизненного пространства в мировоззрении комитета “Единение и прогресс” и Геноцид армян,” *Тсехаспанагитакан андес* 9, no. 1 (2021): 9-36.

Ներածություն

Մարդու և աշխարհագրական միջավայրի փոխազդեցությունը միշտ եղել է ուսումնասիրման առարկա, սակայն աշխարհագրական պատճառականության (դետերմինիզմի) տեսությունն իր զարգացման գագաթնակետին է հասել 19-րդ դարի երկրորդ կեսին: Մարդկային խմբի վարքագծի վրա աշխարհագրական միջավայրի ազդեցության ուսումնասիրության ընթացքում հաշվի էին առնվում դիրքը, կլիման, ռելիեֆը, ջրային ռեսուրսները: Գերմանացի կենսաբան Ֆրիդրիխ Ռատցելը¹, համալիր այս ազդակներին գումարելով կենդանիների ու բույսերի կենսակերպի իր դիտարկումները, առաջ է քաշել պետության օրգանական տեսությունը: Ռատցելը հանգել է այն գաղափարին, որ պետությունը, իբրև կենդանի օրգանիզմ, ունի բնակչության կենսապայմաններն ապահովելու համար անհրաժեշտ տարածքի կարիք, առանց որի պետության գոյությունը, զարգացումը և ընդլայնումն անհնար են: «Կենսական տարածք»-ի (գերմ.՝ *Lebensraum*) հասկացությունը Ռատցելը ձևավորել է 1890-ականներին, վերջնականապես սահմանել 1901-ին²: Կենսական տարածքի գաղափարը, միախուսվելով 19-րդ դարի գիտական և կեղծգիտական շատ այլ տեսությունների հետ, 1930-ականներին դրվել է Գերմանիայի նացիստական կառավարության ներքին և արտաքին քաղաքականության հիմքում՝ հանգեցնելով միլիոնավոր մարդկանց սպանդին, ինչից հետո տերմինը սկսել է շաղկապվել Հոլոքոստի պատմության, երբեմն միայն Հիտլերի անվան հետ և որպես քաղաքականություն վերագրվել միայն Գերմանիային³: Զխորանալով այս վարկածի կանխակալ բնույթի մեջ՝ հողվածում առաջադրվել է ռատցելյան կենսական տարածքի տեսությունը իշխող

1 Ֆրիդրիխ Ռատցելը (1844-1904) ծնվել է Կաուսրոեում, Գերմանիա: Տեղում նախնական վեցամյա կրթությունը ստանալուց հետո մեկնել է Շվեյցարիա դեղագործի մասնագիտություն ստանալու: Մեկ տարի անց կենդանաբանություն է ուսանել Հայդելբերգի, Բեռլինի և Յենայի համալսարաններում, ավարտելով՝ 1868 թ.: Կրթություն ստանալուց հետո Ռատցելը սկսել է ճանապարհորդել և դաշտային աշխատանքներ տանել միջերկրածովյան տարածաշրջանում՝ կենդանաբանից վերածվելով աշխարհագրագետի: Շրջադարձային պահը նրա աշխարհայացքի մեջ ԱՄՆ ճանապարհորդությունն էր: Հանդիպելով Ամերիկայում հաստատված ծագումով գերմանացիների հետ, նա առաջին անգամ արձանագրում է մարդու վրա աշխարհագրական միջավայրի ազդեցությունը: Վերադառնալով Գերմանիա դասախոսում է Մյունխենի, այնուհետև՝ Լեյպցիգի համալսարաններում: Նրա առաջին խոշոր ձեռքբերումը «*Anthropogeographie*» երկատորանը (հ. 1, 1882 թ., հ. 2, 1891 թ.) աշխատությունն է, որն ուղենշային դարձավ աշխարհագրական դետերմինիզմի հետևորդների համար: Մարդկության պատմության վրա ազդեցություն գործած Ռատցելի աշխատությունը «*Politische Geographie*»-ն (Քաղաքական աշխարհագրություն, 1897) է, որով նա դրեց քաղաքական աշխարհագրության հիմքերը՝ հանրությանը և գիտական շրջանակներին ներկայացնելով նաև «*Lebensraum*» տերմինը: Շարունակել է դասախոսել մինչ իր մահը՝ 1904 թ. (Harriet Wanklyn, Friedrich Ratzel. A Biographical Memoir and Bibliography (Cambridge: Cambridge University Press, 1961), 40-43)։

2 Woodruff D. Smith, “Friedrich Ratzel and the Origins of Lebensraum,” *German Studies Review* 3, no. 1 (1980): 52; Christian Abrahamsson, “On the Genealogy of Lebensraum,” *Geographica Helvetica* 68, no. 1 (2013): 39, <https://doi.org/10.5194/gh-68-37-2013>.

3 Charles Kruszewski, “International Affairs: Germany’s Lebensraum,” *The American Political Science Review* 34, no. 5 (1940): 964, <https://doi.org/10.2307/1949220>; Doris. L. Bergen, *War and Genocide: A Concise History of the Holocaust*, third ed. (Lanham, Boulder, New York, London: Rowman & Littlefield, 2016), 52.

Միություն և առաջադիմություն կոմիտեի (*Ittihat ve Terakki*, իթթիհաթականներ) քաղաքականության վրա տեղայնացնելու խնդիրը, ինչն իրականացնելու համար նախ պետք է ներկայացնել տարածքը «հայրենիք»-ի վերածվելու գաղափարի էվոլյուցիան թուրքական մտավորական վերնախավի ընկալումներում:

Թուրքերի հայրենիքի և թուրք ազգի մասին տեսական առաջին համակարգված քննարկումները կայսրությունում պատկանում են 1860-ականներին գործող նոր օսմանների խմբակին (թուրք.՝ *Yeni Osmanlilar*): 1860-ականներին ծավալած գրական-գեղարվեստական գործունեությամբ նոր օսմանները սահմանեցին «թուրքերի հայրենիք» և «թուրք ազգ» հասկացությունները՝ դնելով իթթիհաթականների, այնուհետև քեմալականների ազգաստեղծման ծրագրերի գաղափարական հիմքերը: Դեմ լինելով սուլթանական բռնապետությանը՝ նրանք դեմ էին նաև թանգիմաթյան բարենորոգումներին⁴, գտնելով, որ դրանք նսեմացնում են դարեր ի վեր թուրքերին վերապահված կայսրության «գերիշխող համայնքի» (թուրք.՝ *Millet-i Hakime*) դիրքը⁵:

Հայրենիքի՝ *վաթանի* պատկերացումն ընդլայնեց նոր օսմաններից Նամըք Բեմալը (1840-1888): Բեմալի «հայրենիք»-ը ոչ թե պետական սահմաններով տարանջատված հողի կտոր է, այլ տարածք, որի համար անհրաժեշտ է և պետք է զոհողությունների գնալ⁶: Բեմալն իր գրվածքներում առաջ է քաշում հողի սրբության գաղափարը՝ հիմնավորելով այն զինվորների արյամբ ողողված ու ոսկորներով պատված լինելու գործոնով. քարոզչական տարր, որը հատուկ է ազգայնական բոլոր շարժումներին⁷: Հայրենիքի հանդեպ իրավունքների նման հիմնավորումն ամրապնդում էր կայսրության տիրոջ սակի թուրք ազգի մենաշնորհը: Այն նաև հանգեցնում էր հակաքրիստոնեական տրամադրությունների սրմանը, քանի որ Օսմանյան բանակը կայսրության գոյության ողջ ընթացքում կազմված էր մուսուլմաններից: Այս հանգամանքը նվազեցնում էր քրիստոնյաների իրավունքները համընդհանուր հայրենիքի նկատմամբ, քանի որ նրանք գենք չէին կրում և այդ հողի համար արյուն չէին թափում⁸: 1867 թ. Բելգրադի ամրոցը սերբերին հանձնելուն դեմ նոր

4 Գևորգ Հարությունյան, «Արևմտահայության կացությունը և հայ հասարակական միտքը օսմանյան բարենորոգչական շարժման համատեքստում (XIX դ. 70-ական թվականներ)», *Պատմա-բանասիրական հանդես 1* (2006), 115-129:

5 Şerif Mardin, *The Genesis of Young Ottoman Thought: A Study in the Modernization of Turkish Political Press* (Syracuse, N.Y.: Syracuse University Press, 2000), 21.

6 Նույն տեղում, 330:

7 Benedict Anderson, *Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism*, (London and New York: Verso, 1991), 9; Anthony D. Smith, *Ethno-Symbolism and Nationalism: A Cultural Approach* (New York: Taylor & Francis, 2009), 77-78, 95.

8 Ոչ մուսուլմանների զինվորագրման խնդիրը սահմանադրությամբ լուծում չի ստացել: Հեղաշրջումից մեկ տարի անց՝ 1909 թ. հուլիսին, կայսրության հունական և հայկական համայնքների ճնշմամբ օսմանյան խորհրդարանն ընդունել է զինծառայությունը համապարտադիր դարձնելու մասին օրենքը (Derya Bayir, *Minorities and Nationalism in Turkish Law* (Surrey, Burlington: ASHGATE, 2013), 25, 54): Օսմանյան խորհրդարանի պատգամավորներից Գրիգոր Զոհրապը շարունակել է պայքարը զինծառայության ժամկետի կրճատման համար: Պատգամավորը հիմնավորել է դա թուրք բնակչության ժողովրդագրական անկումով և այն հանգամանքով, որ տարիներ ձգվող զինվորական ծառայությունից հետո թուրք երիտասարդներին ժամանակ չի մնում ներգրավվել առևտրի և

օսմաններից Ալի Սուավին «Muhbir» [Տեղեկատու] պարբերաթերթում տպագրում է մի հոդված, որտեղ նշում է. «Մեր նախնիներն արյուն թափելով թիզ առ թիզ գրավել են այս հողերը, իսկ մենք՝ նրանց անարժան հետնորդներս, քայլ առ քայլ ամեն ինչ վերադարձնում ենք... եթե մի տեղ հավաքենք Բելգրադի տակ ընկած մեր նախնիների ոսկորները, անանցանելի սար կգոյանա»⁹: Ազգայնական քարոզչության այս տարրը զարգացրին իթթիհաթականները: Միություն և առաջադիմություն կոմիտեի գաղափարախոսներից Հալիդե Էդիպը, իր հուշերում անդրադառնալով Բալկանյան պատերազմներին (1912-1913), գրում է. «Թուրքերը մինչ այժմ երբեք հող չեն զիջել առանց դրա համար պայքարելու: Հսկայական հողերը, որ նրանք ստիպված են եղել զիջել, միշտ ողողվել են թուրքական արյունով»¹⁰: Տեսնելով 1912 թ. Բալկանյան պատերազմներում պարտություն կրած և նահանջող թուրք զինվորների մուտքը Կոստանդնուպոլիս՝ իթթիհաթականների քարոզչությանն աջակցող լեհ ազնվական Լեոն Օստրորոգը գրում է. «Հնդկական օվկիանոսից Բալկաններ, պարսկական սահմանից մինչև Հունական ծով, ով որ փորի հողը, կգտնի Անատոլիայի գյուղացու ոսկորները: Նրանք կովել են բոլոր ամենահուսահատ և ամենահիմար արշավանքներում»¹¹:

Վերադառնալով հոդվածի բուն նյութին՝ թուրքական կենսական տարածքի ընտրությանը, կարող ենք փաստել, որ կայսրության արաբական շրջանները երբեք էլ գործողությունների առաջնահերթ դաշտ չեն ընկալվել Միություն և առաջադիմություն կոմիտեի համար: Դեռևս 1906 թ. Զմյուռնիայում քարոզչական աշխատանք տանող կոմիտեի գլխավոր քարտուղար դոկտոր Նազըմը մերժում է սիրիական շրջաններում իթթիհաթական բաժանմունք ստեղծելու առաջարկն այն հիմնավորմամբ, որ արաբ բնակչության հետ կապերը և լեզվական ընդհանրությունը բացակայում են¹²: Իթթիհաթական պարբերական «Şura-yi Ümmet»-ի [Համայնքի խորհուրդ] 1907 թ. 119-րդ համարը հակասությանական հեղաշրջման կոչով դիմում է «Անատոլիայի և Ռումելիայի քաջ ժողովուրդ»-ին՝ դուրս թողնելով Արաբիան¹³: Իթթիհաթականների նման ընտրությունը գալիս էր ոչ միայն տեսական գաղափարական դաշտից, այլև արձագանքն էր պետության ներքաղաքական և միջազգային զարգացումների:

20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության տարածքը թեև բաժանված էր

արդյունաբերության մեջ: Սահմանադրությամբ ամրագրված իրավահավասարությունը, ըստ հայ պատգամավորի, կհաստատվեր այն ժամանակ, երբ Օսմանյան կայսրությունում քրիստոնյաները ներառվեին ուժային, իսկ մուսուլմանները՝ տնտեսական կառույցների մեջ (Uğur Z. Peçe, "The Conscription of Greek Ottomans into the Sultan's Army, 1908-1912," *International Journal of Middle East Studies* 52, no. 3 (2020): 13, <https://doi.org/10.1017/S0020743820000392>):

9 Владимир Гордлевский, *Очерки по новой османской литературе* (Москва: Крестный календарь, 1912), 33.

10 Halide Edib, *Memoirs of Halide Edib* (New York, London: the Century Co., 1926), 302.

11 Count Léon Ostrorog, *The Turkish Problem: Things Seen and a few Deductions*, tr. from French by Winifred Stephens (London: Chatto & Windus, 1919), 96.

12 Şükrü M. Hanioglu, *Preparation for a Revolution: The Young Turks, 1902-1908* (Oxford: Oxford University Press, 2001), 172.

13 Նույն տեղում, 185:

նահանգների՝ վիլայեթների, քաղաքական դիսկուրսում կրում էր վարչաքաղաքական առաջին բաժանման՝ էյալեթների անունները, որոնք կազմալուծվել էին 1864 թվականին: Պատմական Ռումելիայի էյալեթն ընդգրկում էր Բալկանյան թերակղզին, իսկ Անատոլիան՝ Փոքր Ասիա թերակղզու միայն հարավ-արևմտյան, արևմտյան և հյուսիս-արևմտյան շրջանները: 20-րդ դարասկզբին Ռումելիա-Բալկաններ միավորի վարչատարածքային փոփոխություն տեղի չէր ունեցել: Թուրքական ազգայնականության ծագումով և ազգային պետություն ստեղծելուն զուգընթաց Անատոլիա անվան կիրառությունը դուրս եկավ պատմական Անատոլիայի տարածքից և սկսեց ներառել ողջ Փոքր Ասիա թերակղզին և Հայկական բարձրավանդակի արևմտյան հատվածը՝ Արևմտյան Հայաստանը, ինչը վերջնականապես ամրագրվեց հանրապետական Թուրքիայում պետական ժխտողական պատմագրությամբ ու քարտեզագրությամբ¹⁴: Այն դեպքում, երբ Օսմանյան կայսրությունը դեռևս հսկայական տարածք էր զբաղեցնում, 20-րդ դարասկզբին Անատոլիան հռչակվեց թուրք ազգի գոյատևման կենսական տարածք, «վերջին կանգառ»¹⁵, որտեղ ամրանալով թուրք ազգը կկարողանար պայքարել ընդդեմ ողջ աշխարհի:

Կենսական տարածքի ընտրություն. պատմական ակնարկ

Աշխարհագրական տեղադրության շնորհիվ Օսմանյան կայսրությունն իր գոյության ողջ ընթացքում գտնվել է եվրոպական գերտերությունների հետաքրքրությունների շրջանակում: Քանի որ նրանց շահերից ավելի շատ բխում էր կայսրության պահպանությունը, քան թե բաժանումը՝ հոգուտ որևէ պետության, Մերձավոր Արևելքում նրանց գործողությունների տրամաբանությունը պայմանավորված էր միմյանց ազդեցությունը հակակշռելով: Վերջիններս, օգտվելով բազմեթնիկ կայսրության ներքին խնդիրներից, երբեմն էլ հրահրելով դրանք, փորձել են միջամտել և ստանալ որոշակի արտոնություններ:

Առաջին նման միջամտությունը 1774 թ. էր, երբ Բյուզուկ Կայնարջիի պայմանագրով Ռուսաստանին վերապահվեց Օսմանյան կայսրության ուղղափառ եկեղեցու հետևորդների հովանավորությունը¹⁶, այն դեպքում, երբ միջազգային հարաբերությունները հիմնված էին Վեստֆալյան հաշտությամբ սահմանված պետությունների համահավասարության, ինքնիշխանության և ներքին գործերին չմիջամտելու

14 «Անատոլիա» տերմինի անհարկի և ժխտողական կիրառությունները լայնորեն ուսումնասիրված են: Տե՛ս օրինակ՝ Լուսինե Սահակյան, «Հայկական տեղանունների թուրքացման քաղաքականությունը Օսմանյան կայսրությունում և Հանրապետական Թուրքիայում», *Վէժ* 2, no. 1 (2010), 92-93:

15 Erik J. Zürcher, *The Young Turk Legacy and Nation Building: From the Ottoman Empire to Atatürk's Turkey* (NY: I. B. Tauris, 2010), 120: 18-րդ դարի վերջին Օսմանյան Ռումելիան կազմված էր ներկայիս Սերբիայի, Բոսնիայի, Կոսովոյի, Մակեդոնիայի, Ալբանիայի, Հունաստանի, Բուլղարիայի տարածքներից և Ռումինիայի մեծ մասից: Արաբիան ներառում էր ներկայիս Սիրիան, Լիբանանը, Հորդանանը, Իսրայելը, Իրաքը, Քուվեյթը, Սաուդյան Արաբիայի մի մասը, Եգիպտոսը, Լիբիան, Թունիսը և Ալժիրը (նույն տեղում, 9):

16 А. А. Сазонов, Г. Н. Герасимова и др. (составители), *Под стягом России: сборник архивных документов* (Москва: Русская книга, 1992), 82-83.

սկզբունքների վրա¹⁷: Քյուչուկ Կայնարչիի պայմանագրով Ռուսական կայսրությունը Սև ծով մուտքից բացի ստացավ նաև հիմքեր՝ Բալկանյան սլավոններին իր ազդեցության գոտի բերելու համար. նպատակներ, որոնք երկրի պատմական, մշակութային և աշխարհաքաղաքական առաջնահերթություններն էին¹⁸: Պայմանագիրն այսպիսով դրեց Արևելյան հարցի հիմքը, որի ածանցյալը պետք է դառնար Հայկական հարցը¹⁹: Ռուսաստանի հովանավորչությունն ուղղափառների նկատմամբ պահպանվեց նաև Ղրիմի պատերազմն ամփոփող Փարիզի 1856 թ. խաղաղության պայմանագրով²⁰: Ի հավելում ռուսական միջամտությունների՝ Օսմանյան կայսրությունը ձախողեց նաև ներքին բարենորոգումների երկու հրովարտակները (1839, 1856 թթ.)²¹, իսկ հռչակումից մեկ տարի անց չեղյալ հայտարարվեց նաև 1876 թ. օսմանյան առաջին սահմանադրությունը²²: Բալկաններում ազգային ազատագրական պայքարի ակտիվացումը հանգեցրեց տարածաշրջանի բոլոր ազգերի անկախացմանը:

Նախ 1830 թ. ազգային անկախության համար մղված պատերազմի արդյունքում իրենց անկախությունը նվաճեցին հույները: Թեև պատերազմի սկզբից Անգլիայի և Ռուսաստանի բանակցություններն ընթանում էին հույներին սահմանափակ ինքնավարություն շնորհելու շուրջ, չդադարող պատերազմը դրդեց նրանց մասնակցել Նավարինյի ծովային ճակատամարտին և ստիպել Օսմանյան կայսրությանն ընդունել Հունաստանի անկախությունը: Մեծ տերությունների՝ Լոնդոնում կնքված 1827 թ. հուլիսի 6-ի դաշնագրով կողմերը կատարեցին մի շարք շեշտադրումներ, որոնք ցույց են տալիս, որ դա պատմության մեջ առաջին հումանիտար ինտերվենցիան էր, սակայն ոչ վերջինը Օսմանյան կայսրության պատմության մեջ: Տերություններն իրենց գործողություններն օրինականացնելու համար հայտարարեցին, որ միջամտության խնդրանքն արել է հունական կողմը, երկարատև «ոչ քաղաքակիրթ մեթոդներով» վարվող պատերազմը խաթարում է միջազգային առևտուրը, խորացնում է անիշխանությունն Օսմանյան կայսրությունում, հանգեցնում հպատակ ժողովրդի արյունահեղությանը՝ ավարտելով իրենց հիմնավորումը «մարդկության առջև ստանձնած պարտավորություններով»²³: Դժգոհ լինելով Ղրիմի պատերազմի ելքից և

17 Claire A. Cutler, "Critical Reflections on the Westphalian Assumptions of International Law and Organization: A Crisis of Legitimacy," *Review of International Studies* 27, no. 2 (2001): 133-150, <https://doi.org/10.1017/S0260210500001339>.

18 Владимир А. Колосов, "Российская геополитика: традиционные концепции и современные вызовы," *Общественные науки и современность* no. 3 (1996): 88.

19 Vahakn N. Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (Providence, Oxford: Berghahn Books, 1995), 8, 10.

20 Е. А. Адамов, И. В. Козьменко (составители), *Сборник договоров России с другими государствами, 1856-1917* (Москва: Государственное издательство политической литературы, 1952), 23-40.

21 Sükrü M. Hanioglu, *A Brief History of the Late Ottoman Empire* (Oxford, Princeton: Princeton University Press, 2008), 72-76.

22 Եղիշէ Թովիչեան, *Երիտասարդ Թուրքիան եւ հայերը, մասն առաջին* (Թիֆլիս, Շրումա, 1909), 137-160:

23 Simon Chesterman, *Just War or Just Peace? Humanitarian Intervention and International Law* (New York: Oxford University Press, 2001), 29.

Սև ծովի չեզոքության կարգավիճակից՝ Ռուսաստանը, չեղյալ հայտարարելով Փարիզի խաղաղության դաշնագիրը, 1877 թ. նոր պատերազմ սկսեց Օսմանյան կայսրության դեմ: Պատերազմի արդյունքներն ամրագրելու համար հրավիրված Բեռլինի միջազգային վեհաժողովում 1878 թ. հուլիսի 13-ին ստորագրվեց պայմանագիր, որով ճանաչվեց Սերբիայի, Ռումինիայի, Մոնտենեգրոյի անկախությունը, իսկ Բուլղարիային շնորհվեց սահմանափակ ինքնավարություն²⁴: 1908 թ. հեղաշրջումից անմիջապես հետո Ավստրո-Հունգարիան հայտարարեց Բոսնիա և Հերցեգովինայի բռնակցման, իսկ Բուլղարիան անկախ թագավորություն հռչակելու մասին, Կրետեն միավորվեց Հունաստանին²⁵: Օսմանյան Ռումելիայի ճակատագիրը վերջնականապես լուծեցին Բալկանյան պատերազմները (1912-1913): Եվրոպական տարածքներից Օսմանյան կայսրությանը մնաց միայն մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը՝ նեղուցների ափամերձ շրջաններով, և նախկին մայրաքաղաք Ադրիանապոլիսը²⁶: Պետության հիմնական հարկատու լինելուց բացի՝ Բալկանները Միություն և առաջադիմություն կոմիտեի առաջնորդների ծննդավայրն էր, Սալոնիկը՝ հիմնական բաժանմունքի հիմնադրման վայրը և հեղաշրջումը սկսելու օջախը²⁷: Դա ոչ միայն ժողովրդագրական և տնտեսական հարված հասցրեց պետությանը, այլև գաղափարական և հոգեբանական դրոշմ թողեց հենց իթթիհաթականների վրա:

Պատկերը գրեթե նույնն էր կայսրության արաբական տիրույթներում: 1805 թ. Օսմանյան բանակի ալբանացի սպա Մուհամմեդ Ալին Եգիպտոսից Նապոլեոն Բոնապարտի զորքը դուրս մղելուց հետո սուլթան Մահմուդ II-ից պահանջեց իրեն նշանակել Եգիպտոսի վալի: 1831 թ. նրա որդին՝ Իբրահիմը, շարունակեց առաջ-խաղացումը ցամաքով դեպի Կոստանդնուպոլիս, իսկ եգիպտական նավատորմը մոտենում էր Բոսֆորին: Մահմուդ II-ի խնդրանքով ցար Նիկոլայ I-ը որպես օգնություն նավատորմ ուղարկեց: Մեծ տերությունների միջնորդությամբ բանակցություններ սկսվեցին, որոնց արդյունքում Մուհամմեդ Ալին դարձավ Սիրիայի և Ադանայի կուսակալ²⁸: 1839 թ. նա նորից պատերազմ սկսեց՝ այս անգամ անկախանալու նպատակով: Կրկին մեծ տերությունների միջամտությունը փրկեց Օսմանյան կայսրությունը: Օգոստոսի 22-ին Աբդուլ Մեջիդ I-ը (1839-1861) մեծ տերություններին արտոնեց բանակցություններ վարել իր անունից: 1841 թ. մայիսին ստորագրվեց համաձայնագիր, որով Մուհամմեդ Ալին Եգիպտոսի նահանգապետի (վալի, ավելի

24 Walter A. Phillips, "Berlin, Congress and Treaty of" in *The Encyclopaedia Britannica; A Dictionary of Arts, Sciences, Literature and General Information*, 11th ed., Vol. III (Austria Lower to Bisectrix), (Cambridge: England, 1910), 790-791.

25 Taner Akçam, *A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility* (New York: Metropolitan Books, Henry Holt and Company, 2006), 55.

26 Richard C. Hall, *The Balkan Wars 1912-1913: Prelude to the First World War* (New York: Taylor & Francis, 2002), 128-129; Владимир М. Хвостов, *История дипломатии, т. II. Дипломатия в новое время, 1871-1914* (Москва: Государственное издательство политической литературы, 1963), 756-757.

27 Akçam, *A Shameful Act*, 85.

28 Efraim Karsh, *Islamic Imperialism: A History*, sec. ed. (New Haven: Yale University Press, 2013), 99-100.

ուշ՝ խեղիվ) պաշտոնը դարձրեց ժառանգական²⁹: Թեև Եգիպտոսը մնաց Օսմանյան կայսրության կազմում, սակայն նրա լայն ինքնավարությունը պահպանվեց մինչև 1914 թվականը:

Գրեթե միևնույն ժամանակ բախումներ սկսվեցին Լեռնալիբանանում մարոնի և դրուզ համայնքների միջև: Եվրոպական գերտերությունների առաջարկով սուլթան Աբդուլ Մեջիդը I-ը 1842 թ. Լեռնային Լիբանանը բաժանեց հյուսիսային և հարավային շրջանների, համապատասխանաբար քրիստոնյա և դրուզ կայմակամի ղեկավարության ներքո³⁰: 1860 թ. մայիսի 22-ին բախումները վերսկսվեցին՝ քրիստոնյա զոհերի թիվը հասցնելով 40000-ի³¹: Ֆրանսիայի միակողմանի հումանիտար ինտերվենցիան հակակշռելու նպատակով Անգլիան և Ռուսաստանը նույնպես միջամտեցին՝ արդեն երկրորդ անգամ Օսմանյան կայսրության պատմության մեջ³²: Սեպտեմբերի 5-ին Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Ավստրիայի, Պրուսիայի, Ռուսաստանի և Օսմանյան կայսրության ներկայացուցիչներից դեպքերը հետաքննելու և Լիբանանի համար կառավարման նոր համակարգ առաջարկելու նպատակով գումարվեց միջազգային համաժողով: Ի պատասխան շրջանի ինքնավարության առաջարկին՝ օսմանյան պետական գործիչ, նախկինում Մեծ վեզիր Մեհմեդ Էմին Ալի փաշան հայտարարեց, որ բրիտանական իշխանության ներքո Հնդկաստանում ևս բախումներ են տեղի ունենում, սակայն Մեծ Բրիտանիայի իշխանությունն այնտեղ երբևէ կասկածի տակ չի առնվել³³: Այնուամենայնիվ, հանձնաժողովը, հայտարարելով, որ քրիստոնյաները «լքված են իրենց իսկ կառավարության կողմից, որի պարտականությունն էր նրանց պաշտպանելը», կարողանում է ստիպել օսմանյան կառավարությանը 1861 թ. հունիսին ընդունել Լիբանանի օրգանական ստատուտը (ֆրանս.՝ *Règlement Organique*)³⁴: Փաստաթղթով Լեռնալիբանանը՝ դեպի ծով ելքով, անջատվեց Սիրիայից: Այն պետք է ղեկավարեր օսմանյան սուլթանի նշանակած ոչ լիբանանցի քրիստոնյա կառավարիչը, որի թեկնածությունը նախապես պետք է համաձայնեցվեր եվրոպական տերությունների հետ³⁵: 1864 թ. մյութասարիֆությունը դարձավ մշտական և Լիբանանի կիսանկախ վիճակը շարունակվեց մինչև 1918 թվականը: Օսմանյան կայսրության արաբական շրջանների մասին նշենք նաև, որ դեռևս 1830 թ. Ֆրանսիան գրավել էր Ալժիրը, իսկ 1912 թ. հոկտեմբերին իտալոթուրքական պատերազմի արդյունքում Իտալիան գրավեց Լիբիան և Էգեյան ծովում գտնվող Դոդեկանեսի կղզիախումբը³⁶:

29 Նույն տեղում:

30 Carol Hakim, *The Origins of the Lebanese National Idea: 1840 – 1920* (LA: University of California Press, 2013), 99.

31 Dadrian, *The History of the Armenian Genocide*, 23-24.

32 Chesterman, *Just War or Just Peace?* 32.

33 Leila T. Fawaz, *An Occasion for War: Civil Conflict in Lebanon and Damascus in 1860* (Berkeley, Los Angeles: University of California Press, 1994), 215.

34 Նույն տեղում, 199:

35 Նույն տեղում, 216:

36 Hall, *The Balkan Wars*, 20.

Ինչ վերաբերում է կայսրության արևելյան՝ հայկական նահանգներին, ապա այստեղ սահմանային լուրջ փոփոխությունները կապված էին միայն Կարսի նահանգի հետ: Այն 1829 թ. գրավվել, սակայն Ադրիանապոլսի պայմանագրով վերադարձվել էր Օսմանյան կայսրությանը: Դրիմի պատերազմի ընթացքում կրկին գրավելով նահանգը, Ռուսաստանը այն վերադարձրեց 1856 թ. Փարիզի հաշտության պայմանագրով³⁷: Կարսի նահանգը վերագրավվեց 1877-1878 թթ.՝ հերթական ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, և մնաց Ռուսական կայսրության կազմում մինչև 1917 թվականը³⁸: Հայկական նահանգներում օտարերկրյա վերահսկողությամբ բարենորոգումների հարցը բարձրացվել է Բեռլինի վեհաժողովի ընթացքում: Դաշնագրի 61-րդ կետը, որը նախատեսում էր որոշակի բարեփոխումներ, այդպես էլ մնաց չիրականացված: Տերությունների հերթական միջամտությունները բարենորոգումների առաջարկով տեղի ունեցան 1880 և 1895 թթ., որոնց սուլթան Աբդուլ Համիդը II-ը պատասխանեց 300 հազար հայերի կազմակերպված կոտորածով³⁹:

Հայ ցեղասպանագետ Վահագն Դադրյանը, ձախողված հումանիտար ինտերվենցիաները համարելով Հայոց ցեղասպանության պատճառներից մեկը, առանձնացնում է Բալկաններում եվրոպական միջամտությունների հաջողության և հայկական վիլայեթներում ձախողվելու երկու պատճառ՝ աշխարհագրական և ժողովրդագրական: Արևմտյան Հայաստանի՝ թուրքական «հարթլանդ»-ում⁴⁰ գտնվելը թուրքերին բացահայտ սպառնալուց բացի եվրոպական տերությունների համար առաջացնում էր լոգիստիկ խնդիրներ: Ժողովրդագրական առումով՝ պարբերական ջարդերի և ներքին միգրացիաների արդյունքում հայ ժողովուրդն այլևս կոմպակտ բնակված չէր Արևմտյան Հայաստանում, այլ սփռված էր կայսրության ողջ տարածքով մեկ⁴¹: Սրան կարող ենք նաև ավելացնել օգտակար հանածոների և դեպի ծով ելքի բացակայությունը, ինչը թուլացնում էր գերտերությունների՝ Հայկական հարցով

37 *Сборник договоров России*, 24.

38 Ashot A. Melkonyan, “The Kars Oblast”, 1878-1918,” in *Armenian Kars and Ani*, ed. by Richard G. Hovannisian (Costa Mesa, California: Mazda Publishers, 2011), 223-225, 240.

39 Արման Ջ. Կիրակոսյան, *Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը* (պատմաիրավական եռալեզու տեղեկանք) (Երևան, Նորավանք ԳԿԸ, 2006), 9-10:

40 «Հարթլանդ»-ը տերմին է, որն աշխարհաբաղադրականության մեջ ներմուծել է բրիտանացի աշխարհագրագետ Հալֆորդ Մաքինդերը (1861-1947): Քաղաքական աշխարհագրության ոլորտում իր ուսումնասիրություններում նա երկրագնդի վրա ռազմավարական կարևորություն ունեցող տարածքը նախ անվանել է «պատմության աշխարհագրական առանցք», ապա՝ «հարթլանդ» (անգլ. *heart* – սիրտ, *land* – հող): Ըստ Մաքինդերի, այն պետությունը, որը կիշխի «հարթլանդ»-ում, կկարողանա հասնել համաշխարհային գերակայության: Մաքինդերի սահմանած «հարթլանդ»-ը ներառում է ներկայիս Ռուսաստանի, Ղազախստանի, Կովկասի տարածքը, հյուսիս-արևմտյան Չինաստանը և Մոնղոլիայի մի մասը (Halford J. Mackinder, “The Geographical Pivot of History,” *The Geographical Journal* XXIII, no. 4 (1904): 421-437): Տերմինը սկսել է կիրառվել Մաքինդերի սահմանումից դուրս, ընկալվելով որպես քաղաքական, տնտեսական և ռազմական կենսական նշանակություն ունեցող կենտրոնական աշխարհագրական շրջան որևէ ազգի կամ պետության համար:

41 Dadrian, *The History of the Armenian Genocide*, 105; Robert Melson, *Revolution and Genocide: On the Origins of the Armenian Genocide and the Holocaust* (Chicago and London: the University of Chicago Press, 1992), 168.

գրադվելու շահագրգռվածությունը: Այս ամենից ելնելով՝ պատմական տվյալ ժամանակահատվածում Օսմանյան կայսրության հայկական համայնքի համար ձախողված բարենորոգումներին, օտարերկրյա անավարտ մարդասիրական միջամտություններին այլընտրանք մնում էր միայն սահմանադրական կարգերի հաստատումը: Սրանով էր պայմանավորված մի քանի հայ գործիչների անդամակցությունը Միություն և առաջադիմություն կոմիտեին, հայկական քաղաքական շրջանակների կողմից կոմիտեին ցուցաբերած աջակցությունը, հայ քաղաքական կուսակցությունների մասնակցությունը Օսմանյան լիբերալների առաջին (1902 թ.) և երկրորդ (1907 թ.) կոնգրեսներին⁴²: 19-րդ դարի երկրորդ կեսից հայ համայնքը փորձել է հնարավորինս նպաստել սահմանադրական կարգերի հաստատմանը և բարենորոգումների իրագործմանը այն երկրում, որը, շվեյցարացի պատմաբան Հանս Լուկաս Կիզերի բնորոշմամբ, շատ ավելի հայերի երկիրն էր, քան օրինակ՝ հրեաներին⁴³: Օսմանյան կայսրության գրեթե բոլոր ազգերն ունեին երկրնտրանք. թուրքերի համար թուրքիզմ Փոքր Ասիայում, հրեական սիոնիզմ՝ Պաղեստինում, արաբական իշխանություն Իրաքում և Սիրիայում, հույների համար անկախ Հունաստան և գրեթե բոլոր ծրագրերի դեպքում աջակցություն որևէ գերտերության կողմից: Իսկ ծագող թուրքական ազգայնականության պայմաններում հայկական համայնքն առավել խոցելի դարձավ ընդգծված ազգային ինքնություն ունենալու, թուրքական «հարթալեռ»-ում ֆիզիկական գոյության, քրիստոնյաների համար թույլատրված բոլոր հնարավոր ոլորտներում բարձր ներկայության և արտասահմանյան որևէ հովանավորչությունից զուրկ լինելու պատճառով:

Անատոլիան՝ կենսական տարածք

Ռատոցելը, ինչպես ժամանակի բոլոր աշխարհագրագետները, ընդունում էր բնակչության և տարածքի համակցության կարևորությունը, սակայն առաջնային գործոնը պետության գոյության մեջ վերապահում էր տարածքին⁴⁴: Ռատոցելի 1901 թ. մեկնաբանությամբ՝ «սխալ գործածվող և շատ ավելի սխալ ընկալվող «գոյության կոիվ»-ը նախ և առաջ նշանակում է կոիվ տարածության համար: Տարածությունը կյանքի առաջնային նախապայմանն է»⁴⁵: Պետության «ներքին

42 Dadrian, *The History of the Armenian Genocide*, 43; Hanioglu, *Preparation for a Revolution*, 191-192.

43 Hans-Lukas Kieser, *Talaat Pasha: Father of Modern Turkey, Architect of Genocide* (Princeton & Oxford: Princeton University Press, 2018), 300.

44 Տերմինը նշելու համար անգլերեն բառը՝ space, լիովին արտահայտում է Ռատոցելի տեսությունը: Հայերենի պարագայում այն ավելի շատ աշխարհագրական տարածության, միջավայրի և տիրույթի հանրագումարն է:

45 Mark Bassin, "Imperialism and the Nation State in Friedrich Ratzel's Political Geography," *Progress in Human Geography* 11, no. 4 (1987): 479, <https://doi.org/10.1177/030913258701100401>: Ռատոցելը ծանոթ էր սոցիալ-դարվինիզմի տեսությանը, 1869 թ. Ենայի համալսարանում ունկնդրել է դպրոցի վառ ներկայացուցիչներից Էռնստ Հեքքելի դասախոսությունները, սակայն չի կիսել վերջինիս ծայրահեղ ազգայնական հայացքները: Ազդվել է նաև քաղաքագետ, սոցիալ-դարվինիստ Լյուդվիգ Գումպլովիչից, ինչպես նաև տնտեսագետ Ֆրիդրիխ Լիստից:

գաղութացումը»՝ դրա մակերևույթին միատարր բնակչության համաչափ տեղաբաշխմամբ, Ռատցելը համարում է պետության գոյատևման և բարգավաճման առաջնային պայման: Ռատցելը «լեբենստումը» նկարագրում է որպես կոնցեպտ, որը միավորում է տրված տարածքի կենսաբանական, աշխարհագրական և մարդաբանական երևույթները: Ռատցելի բնորոշմամբ. «կյանքի յուրաքանչյուր նոր ձև գոյություն ունենալու համար ունի տարածության կարիք և շատ ավելիի կարիք՝ հաստատվելու և իր հատկանիշները փոխանցելու համար»⁴⁶: Նա նաև տարանջատում է պետության ընդլայնման բնական պահանջը «տարածքի հանդեպ ծարավ»-ից: Վերջինիս մեջ նա գրեթե միշտ մեղադրում է Ռուսաստանին, որը տնօրինում էր իր բնակչության թվաքանակը գերազանցող տարածք՝ չօգտագործելով դրա բոլոր հնարավորությունները: Պետությունը, ըստ Ռատցելի, միայն իր դիրքն ամրապնդելուց, տնտեսական զարգացումից և բնակչության աճից հետո պետք է անցնի իր բնական սահմանների ընդլայնմանը՝ ինչպես բույսը: Հակառակ պարագայում այն կդադարի գոյություն ունենալ⁴⁷:

Միահյուսվելով Սպենսերի սոցիալ-դարվինիզմի ուսմունքի և դրա երկու հիմնական՝ «գոյության կռիվ», «ամենահարմարվածի գոյատևման» դրույթների հետ, ռատցելյան «լեբենստում»-ի կոնցեպտը քաղաքական շրջանակների, այդ թվում նաև իթթիհաթականների համար դարձավ հիմնավորված և ուղենշային⁴⁸:

1908 թ. հեղաշրջումից հետո Օսմանյան կայսրությունում գործող բազմաթիվ օտարերկրյա դիվանագիտական, միսիոներական գործիչներ և լրագրողներ փաստում են պետական մակարդակով իրականացվող թրքացման քաղաքականությունը⁴⁹: Թեև սահմանադրությունը հիմնված էր բոլոր օսմանցիների հավասարության սկզբունքի վրա՝ անկախ էթնիկ կամ կրոնական պատկանելությունից, կառավարությունը բացահայտ խոսում էր թուրքի՝ որպես Օսմանյան կայսրության գերակա ռասայի և ամեն ինչ թրքացնելու իրենց ծրագրի մասին⁵⁰, որի մեջ առաջնայինը կենսական տարածքի թրքացումն էր: Կենսական տարածքի ընտրությունը պետք է տեղավորվեր

46 Bassin, "Imperialism and the Nation State," 477.

47 Նույն տեղում:

48 Սոցիալ-դարվինիստները ցիտում էին Ռատցելին, նշելով, որ գոյության կռիվում կհաղթի այն տեսակը, որն առավել հարմարված կլինի իր տարածքին և կօգտագործի դրա ընձեռած բոլոր հնարավորությունները: Իթթիհաթականների աշխարհայացքի վրա սոցիալ-դարվինիզմի ունեցած ազդեցության և Հայոց ցեղասպանության ընթացքում այդ հայացքների դրսևորման մասին տե՛ս Ռեզիսա Ա. Գալուստյան, «Սոցիալ-դարվինիզմը երիտթուրքերի աշխարհայացքում», ՎԷՄ 12, no. 4 (2020), 253-273: Օսմանյան թուրք մտավորականության վրա ընդհանուր ազդեցության մասին տե՛ս Atila Doğan, *Osmanlı Aydınları ve Sosyal Darwinizm* (Istanbul: Karton Kapak, 2021), 352.

49 George Horton, *The Blight of Asia, an Account of the Systematic Extermination of Christian Populations by Mohammedans and of the Culpability of Certain Great Powers; With the True Story of the Burning of Smyrna* (Indianapolis: the Bobbs-Merrill Company, [1926] 1953), 28; Harry Stuermer, *Two War Years in Constantinople: Sketches of German and Young Turkish Ethics and Politics* (London, New York, Toronto: Hodder and Stoughton, MCMXVII (1917)), 183.

50 A. D. Hagopian, "The Situation in Constantinople," *Armenia (NY)* 5, no. 8 (1912): 235.

որոշակի տրամաբանության մեջ⁵¹: Ինչպես Ադոլֆ Հիտլերը 1925 թ. հիմնավորում էր “Mein Kampf” [Իմ պայքարը] գրքում, գերմանացիների պայքարը կենսական տարածքի համար պետք է տեղի ունենար Եվրոպայում, ոչ Կամերունում, որը Գերմանիայի գաղութն էր մինչև 1916 թվականը⁵²: Կարելի է ենթադրել, որ թուրքական կենսական տարածքի համար պայքարը ևս պետք է տեղի ունենար ոչ թե Սաուդյան Արաբիայում կամ Եգիպտոսում, այլ Անատոլիայում, որն ամենակայունն էր և միջազգային միջամտությունից առավել ապահովագրվածը: Ինչպես նշեցինք՝ տարածքի նման ընտրությունն աստիճանական էր և տրամաբանական:

Կայսրության արևելյան նահանգների կենսական նշանակությունը ընդունում էին նաև իթթիհաթական կոմիտեի շրջանակներում գործող պանթուրքական գաղափարախոսները: Նրանցից մեկը, Ահմեդ Աղաօղլուն⁵³ Բալկանյան պարտությունից հետո գրում է. «Մեր ասիական տարածքները մեծ են և լի բնական հարստություններով: Նրանք կարող են ապահովել ներկայիս բնակչությունից հինգ անգամ ավելի բնակչության: Պետք է ուղղակի այդ տարածքներին նոր կյանք հաղորդել՝ եվրոպական մասնագետներ հրավիրել՝ զարգացնելու և կազմակերպելու համար կրթական, գյուղատնտեսական, կապի, առևտրի և արդյունաբերության ոլորտները»⁵⁴: Պանթուրքիզմի քարոզիչներից Թեկինալփը ևս նշում է. «Թուրքիան կարիք չունի ընդլայնված տարածքների կամ նվաճումների: Անատոլիայի պտղաբեր հողը կարող է ապահովել տուն և ուտելիք ներկայիս բնակչության քանակից երեք անգամ ավելի բնակչության համար: Թուրքական տարրն իր տանը պահանջ ունի ոչ միայն նյութական, այլև բարոյական ընդլայնման և ուժեղացման»⁵⁵:

Յուրաքանչյուր ազգի կամ էթնիկ միության համախմբման համար օգտագործվում են «ոսկեդարի» մասին պատումները⁵⁶: Թուրքական ազգային ինքնության կառուցման և քաղաքական միավորման համար օգտագործվում էին թուրքական ռասայի ծագման վայրի՝ Թուրանի մասին պատումները և առասպելները: Գրեթե բոլոր ազգային համախմբման հռետորաբանությունները բաղկացած են երեք տարրից՝ փառավոր անցյալ, ծանր ներկա և ուտոպիստական ապագա: Իթթիհաթական գաղափարախոսները ևս, թուրքական ազգայնականությունը քարոզելիս, գործածել են այս հռետորաբանությունը, որը հատուկ էր նաև գերմանական և իտալական

51 Kieser, *Talaat Pasha*, 295.

52 George Stein, “Biological science and the roots of Nazism,” *American Scientist* 76, no. 1 (1988): 52.

53 Ահմեդ Աղաօղլու (1869-1939): Կովկասյան թաթար, եղել է պանթուրքիզմի գաղափարախոսության հիմնադիրներից: 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո տեղափոխվել է Կոստանդնուպոլիս, անդամակցել իթթիհաթական ակումբներին, թղթակցել նրանց թերթերին: 1915-ից սկսել է քարոզել Օսմանյան կայսրության թուրքական ցեղերը միավորելու նվաճողական քաղաքականության անհրաժեշտության գաղափարը:

54 Ahmed Effendi Aghaieff, “Turkey Needs Foreign Instructors,” *The Orient* (Constantinople, “Bible House”) IV, no. 19 (1913): 2.

55 Tekin Alp, *The Turkish and Pan-Turkish Ideal* (London-England: Liberty Press, [1917], 1993), 70.

56 Matthew Levinger, Paula F. Lytle, “Myth and Mobilisation: The Triadic Structure of Nationalist Rhetoric,” *Nations and Nationalism* 7, no. 2 (2001): 177, <https://doi.org/10.1111/1469-8219.00011>.

ազգայնականություններին: Մամուլում, գրականության մեջ և իրաքիսական ակումբներում իրականացվող հանրային քարոզի միջոցով Թուրանը ներկայացնելով որպես թուրքական ռասայի ոսկեդար՝ այն հակադրում էին Բալկանների կորստին, ծանր տնտեսական իրադրությանը և քարոզում, որ հզորանալով և բոլոր թուրքական ցեղերին Օսմանյան կայսրության շուրջ միավորելով՝ անցյալի փառքը հնարավոր կլինի վերականգնել⁵⁷: Թեև ազգայնական հռետորաբանության համար տարածք-իդեալի գոյությունը, դրա գովերգումը, այն «փառավոր ապագայում» կրկին վերագտնելը կարևոր քարոզչական բաղադրիչներ են, այնուամենայնիվ «կենսական տարածքի» պարագայում նշանակետը պետք է լինի առավել շոշափելի, հասանելի և պահպանելի⁵⁸:

Ման գաղափարական և քաղաքական համատեքստում Բալկանյան պատերազմներին զուգահեռ հայկական բարենորոգումների հերթական արծարծումը 1912-1914 թթ. թուրքական կառավարությունը դիմավորեց սվիններով⁵⁹: Թեև նախկին ձախողված փորձերը քաջ հայտնի էին իրաքիսականներին, այնուամենայնիվ տարածքային հսկայական կորուստներից հետո միջազգային հարթակում նման քննարկումների վերաբացումն անհանգստացնում էր նրանց⁶⁰: Քաղաքական գործիչ, սոցիալ-հեղափոխական կուսակցության անդամ Վահան Մինախոյանը վկայում է, որ 1912 թ. իրաքիսական կուսակցության Սամսունի բաժանմունքի առաջնորդ Սըդկին ցանկություն է հայտնում հանդիպել ՀՅԴ մասնաճյուղի հետ: Թեև Մինախոյանը ՀՅԴ անդամ չէր, նրան ևս առաջարկել են ներկա գտնվել հանդիպմանը, որի ընթացքում քննարկվել են կյանքի չկոչված սահմանադրությունը և հայկական վեց նահանգներում

57 Նույն տեղում, 178:

58 Նույն տեղում:

59 Բալկանյան պատերազմներին զուգահեռ բանակցությունների նոր հարթակ բացելով՝ Օսմանյան կայսրությանը հարվածելու նպատակով ռուսական կողմը կրկին բարձրացնում է հայկական բարենորոգումների հարցը: 1860 թ. հայկական ազգային սահմանադրության, Բեռլինի դաշնագրի և 1895 թ. մայիսյան բարենորոգումների ծրագրի վրա հենված նոր նախագիծը ռուսական դեսպանատունը 1913 թ. հուլիսին ներկայացնում է Կոստանդնուպոլսում գումարված դեսպանաժողովին: Այն նախատեսում էր հայկական վեց նահանգներից ստեղծել մեկ նահանգ՝ վարչական լայն լիազորություններով օժտված քրիստոնյա նահանգապետով, դադարեցնել մուհաջիրների բնակեցումը հայկական նահանգներում և բարենորոգումների վերահսկողությունը վերապահել մեծ տերություններին: Բանակցությունների արդյունքում 1914 թ. հունվարի 26-ին (փետրվարի 8) ստորագրվեց ռուս-թուրքական համաձայնագիր, որը բավականին հեռու էր նախնական ծրագրից: Գերմանիայի և Օսմանյան կայսրության ակտիվ ընդդիմության հետևանքով ամենազլխավոր երկու կետերը փոփոխվեցին: Հայկական նահանգներից ստեղծվելու էր երկու նահանգ, իսկ մուհաջիրները կարող էին բնակվել կայսրության ողջ տարածքում, ներառյալ՝ հայկական նահանգները, ինչն ուներ դրանց էթնիկ կազմը փոխելու նպատակ: Նահանգապետների փոխարեն նշանակվեցին երկու եվրոպացի տեսուչներ՝ սահմանափակ լիազորություններով: Ընդհանուր առմամբ բարենորոգումների այս ծրագիրը ևս ձախողվեց: Ավելին, Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումով, միջազգային այլ պայմանագրերի հետ մեկտեղ, Օսմանյան կառավարությունը խզեց նաև այս համաձայնագիրը (Roderic H. Davison, "The Armenian Crisis, 1912-1914," *The American Historical Review* 53, no. 3 (1948): 503-504; *Министерство иностранных делъ, Сборникъ дипломатическихъ документовъ. Реформы въ Арменіи, 26 ноября 1912 года – 10 мая 1914 года* (Петроградъ: Государственная типография, 1915), 162-165):

60 Կիրակոսյան, *Հայկական հարցը*, 13-14:

տիրող իրավիճակը: Սըդկին հայտարարում է, որ կառավարությունը ծանր վիճակում է գտնվում պարտության և մուսուլման փախստականների՝ մուհաջիրների պատճառով: Սամսունի շրջանում, ըստ Սըդկիի, շատ դժվար էր նրանց հետ պահել հայերի վրա հարձակվելուց. «Բարեկամաբար յայտնում եմ ձեզ, որ ատան էին սրում ու չէք կարող երեւակայել, թե ինչ ահռելի դժբախտություններ պիտի պատճառէին, եթե ժամ առաջ չմիջամտէինք... Բայց վստահ եմ, որ ընդհանուր ուժերով այդ դժուարությունները վերջնականապես կը հարթենք: Կամք, համերաշխություն եւ ընդհանուր ջանք: Այս ուղղությամբ միշտ վստահ եղէք մեր պաշտպանության վրայ եւ աշխատեցէք խուսափիլ այնպիսի սխալներից, որոնք կարող են թուրք ամբոխը գրգռել»⁶¹: Մինախորյանը փաստում է, որ դա թուրք պաշտոնյայի կողմից հնչեցված բացահայտ սպառնալիք էր:

Նույնն է փաստում նաև ՀՅԴ հայտնի գործիչ Արմեն Գարոն (Գարեգին Փաստրմաճյան): Նա պատմում է, որ 1913 թ. դեկտեմբերին՝ հայկական բարենորոգումների բանակցությունների ժամանակ, Ջեմալ փաշան գիշերով կանչում է խորհրդարանի պատգամավոր Վարդգեսին (Հովհաննես Սերենկյույան) և հայտնում, որ եթե պնդեն բարենորոգումների իրագործման նկատմամբ եվրոպական վերահսկողություն սահմանելու դրույթի վրա, թուրքական կառավարությունը ստիպված կլինի ընդունել, բայց դրա արդյունքում հայկական վեց վիլայեթներում մուսուլմանները ոտքի կելնեն և կկոտորեն 3-4 հարյուր հազար հայերի: Ջեմալն ասում է, որ իր ասածները փոխանցի ՀՅԴ մյուս անդամներին: Այս միջադեպը պարզաբանելու համար Գարոն դաշնակցական մեկ այլ գործչի՝ Փոքր Սարգսի հետ այցելում են իթթիհաթական Կենտրոնական կոմիտեի անդամներից Միդհատ Շյուքրույին և Քյուչուկ Բեմալին, որոնք Ջեմալի սպառնալիքները վերագրում են միայն նրան, այլ ոչ կուսակցության ընդհանուր տրամադրվածությանը⁶²:

Իթթիհաթական «Tanin»-ը [Արձագանք], արձագանքելով Պողոս Նուբարի՝ Փարիզում բարենորոգումների անհրաժեշտության մասին տված հարցազրույցին, հայտարարում է. «Օտարերկրացին կարող է առանձնացնել Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը և դրա հիման վրա պահանջել բարենորոգումներ: Բայց օսմանցու համար դա թույլատրելի չէ: Քանի որ Նուբար փաշան խոսում է հայերի հավատարմության, հայրենիքի հանդեպ տածած սիրո, ինքնավարություն ընդունելու դժկամության մասին, ապա ինչո՞ւ է ընդունել իր պնդումներին ակնհայտորեն հակասող նման տեսակետ: Թող ոչ ոք այլևս մեզ հետ չխոսի Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի մասին»⁶³:

Այսպիսով, փաստացիորեն թուրքական կենսական տարածքն ընտրված էր: Ռատոնելի գաղափարների համալիրը թույլ է տալիս մեզ առանձնացնել դրա նվաճման ու հաստատման հետևյալ միջոցները.

- բռնի (ներքին և արտաքին պատերազմ, տարածքի ֆիզիկական գտում «հակառակորդ» ընկալվողներից),

61 Վահան Մինախորյան, *1915 թուական. արհաւիրքի օրեր* (Վենետիկ, Ս. Ղազար, 1949), 58:

62 Արմեն Գարո, «Մեր վերջին տեսակցությունը Թալեթ փաշայի հետ», *Հայրենիք* (Բոստոն), Ա տարի, թիվ 2, 1922, 41:

63 “Armenian Demands and Turkish Resentment,” *The Orient* (Constantinople) IV, no. 41, 1913: 2.

- տնտեսական ընդլայնում (economic expansion),
- մշակութային ընդլայնում (cultural expansion):

Օսմանյան կայսրության մուսթն Առաջին համաշխարհային պատերազմ, ազգային փոքրամասնությունների էթնիկ գտումները, ցեղասպանությունները, բռնի տեղափոխումներն ընդունում ենք որպես առաջին՝ բռնի միջոցի գործադրում: Սակայն հաշվի առնելով այդ հարցերի վերաբերյալ ուսումնասիրությունների բավարար քանակը, հոդվածը քննության կենթարկի տնտեսական և մշակութային ընդլայնումը, որպես զուգահեռ ընթացող և համարժեք կարևոր միջոցներ:

Տնտեսական ընդլայնում

Թուրքական «ազգային տնտեսության» (թուրք.՝ *milli iktisat*) քարոզչությունը իթթի-հաթական մամուլն սկսել էր դեռևս 1904 թ., իսկ պետական քաղաքականություն այն դարձավ 1908 թ. հեղաշրջումից անմիջապես հետո՝ առավել ազդեցիկ տեսք ստանալով իտալո-թուրքական և Բալկանյան պատերազմների ընթացքում (1911-1913)⁶⁴: Որպես ընդօրինակման մոդել այս անգամ ևս ընտրվեց բիսմարկյան Գերմանիան: Գերմանական տնտեսության ազգայնացման և արդյունաբերական թռիչքի նախագծի հեղինակ, տնտեսագետ, սոցիալ-դարվինիստ Ֆրիդրիխ Լիստի գրքերը սկսեցին օգտագործվել որպես դասավանդման ձեռնարկներ: Քննելով Օսմանյան կայսրությունում տիրող տնտեսական վիճակը՝ իթթիհաթական գաղափարախոսները եզրակացնում էին, որ 19-րդ դարի տնտեսական լիբերալիզմը Օսմանյան կայսրության մեջ նպաստել է միայն քրիստոնյա բուրժուազիայի ձևավորմանը, այնուհետև նրանց մոտ ազգայնական կողմնորոշումների առաջացմանը, անջատողականությանը և կայսրությանը տարածքային կորուստներ պատճառել: Հետևաբար, պրոտեկցիոնիզմի որդեգրումը կօգնի թուրքական ազգային բուրժուազիայի առաջացմանը և ազգային պետության հաստատմանը⁶⁵: Հղելով Լիստին՝ Թեկինսալիք պաշտպանում էր թուրք միջին խավի և «ազգային տնտեսության» գաղափարը, նաև սնուցում 1904 թ. ի վեր կայսրության քրիստոնյաների՝ «թուրքերի հաշվին ապրելու և հարստանալու» քարոզչությունը⁶⁶: Ըստ Թեկինսալիի, տնտեսության մեջ լիբերալիզմը հանգեցրել էր նրան, որ պետության կապիտալը դարձել էր այնպիսի «տարրերի սեփականություն, որոնք ուղղակիորեն շահագրգռված չեն իրենց հայրենիքով»⁶⁷:

Իթթիհաթականներից ոմանք նաև ընդգծում էին Օսմանյան կայսրության կիսագաղութային վիճակը: Նրանց մեջ առանձնանում էր Մուստաֆա Փարվուզը:

64 Bayir, *Minorities and Nationalism*, 59.

65 Zafer Toprak, “Nationalism and Economics in the Young Turk Era,” in *Industrialisation, communication et rapports sociaux*, eds. Thobie Jacques, Kançal Salgur (Paris: Varia Turcica XX, L’Harmattan, 1994), 264-265.

66 Tekin Alp, *The Turkish and Pan-Turkish Ideal*, 56.

67 Ugur Ü. Üngör, Mehmet Polatel, *Confiscation and Destruction: The Young Turk Seizure of Armenian Property* (London: Continuum, 2011), 34.

Գործունեության վաղ շրջանում սերտ կապեր ունենալով հայ և բուլղար սոցիալիստների հետ՝ Կոստանդնուպոլիս տեղափոխվելուց հետո նա հարել է Միություն և առաջադիմությանը՝ քարոզելով վերջիններիս ազգությամբ թուրք ձեռնարկատիրական խավ հիմնելու կարևորությունը⁶⁸:

Իթթիհաթականների տնտեսական ազգայնականության ազդեցիկ գաղափարախոսներից էր նաև Զիյա Գյոքալփը: Գյոքալփի տնտեսագիտական միտքն ազդվել էր ոչ թե Լիստից, այլ դյուրկհայմյան սոցիոլոգիայից⁶⁹: Նա պնդում էր, որ իդեալական տնտեսական համակարգը պետք է կանխի անհատների կողմից հասարակական ունեցվածքի յուրացումը, ինչի մեջ նա սովորաբար մեղադրում էր հայերին և հույներին⁷⁰: Համաձայն Գյոքալփի՝ ազգային տնտեսություն նշանակում էր շուկայական տնտեսություն՝ լայն աշխատանքի բաժանումով: Գյոքալփը նաև համաձայնվում էր Դյուրկհայմի այն պնդմանը, որ աշխատանքի սոցիալական բաժանումը, թուլացնելով մրցակցությունը հասարակության ներսում, կանխում է «գոյության կոիվը»: Սակայն, կրկին հղելով Դյուրկհայմին, Գյոքալփը պարզաբանում է, որ զբաղվածության ավանդական բաժանումը Օսմանյան կայսրության տարբեր համայնքների միջև իրականում «փոխադարձ մակարոնություն» էր, ոչ թե աշխատանքի դասական բաժանում⁷¹: Կապիտալիզմի հիմքը, ըստ Գյոքալփի, պետք է լիներ պետության կողմից հովանավորվող ազգային, իհարկե դրա տակ նկատի ունենալով թուրք, ոչ թե օսմանցի, առևտրականը⁷²:

1908 թ. հետո քրիստոնյա գործարարների դեմ պայքարի գործնական միջոց դարձավ բոյկոտը⁷³: Այն հետապնդում էր միաժամանակ մի քանի նպատակ. համախմբում էր թուրքերին ընդհանուր հռետորաբանության ներքո, հարվածում էր հունական և հայկական գործարար միջին խավին, աջակցում թուրք ձեռնարկատերերին: Ավստրո-Հունգարիայի կողմից Բոսնիա և Հերցեգովինայի գրավումից հետո մուսուլմանները բոյկոտեցին ավստրիական ապրանքները: Նույնը տեղի

68 Ալեքսանդր Հելֆանդ (Փարվուզ կամ Պարվուս, 1867-1924): Ծագումով հրեա Ռուսաստանից: Նրիտասարդ հասակում մեկնել է Գերմանիա և միացել տեղի սոցիալիստական շարժմանը: Փարվուզը պատկանում էր սոցիալիստների ռադիկալ թևին, որոնք ձգտում էին համաշխարհային պատերազմի՝ գտնելով, որ դա կհանգեցնի համաշխարհային հեղափոխության: 1905 թ. ռուսական հեղափոխությունից հետո նա վերադարձել և աշխատել է Պետերբուրգի խորհրդում Տրոցկու հետ միասին: Վերջինիս հետ գաղափարական որոշակի հակասություններ ունենալով՝ 1910 թ. մեկնել է Կոստանդնուպոլիս: Բալկանյան պատերազմների ընթացքում Փարվուզը կարողություն է դիզել զենքի և սննդի անօրինական վաճառքով: Ինչպես Ցյուրիխերն է նշում, 1912 թ. հետո Փարվուզը Օսմանյան կայսրությունում հաջողությամբ միավորում էր «լրագրողի, գերմանական գործակալի, զինավաճառի և մարքսիստ մտավորականի» գործառույթները (Erik J. Zürcher, *Turkey: A Modern History*, third. ed. (London, New York: I.B. Tauris, 2004), 125-126):

69 Toprak, “Nationalism and Economics,” 8.

70 Üngör, Polatel, *Confiscation and Destruction*, 31.

71 Ziya Gökalp, *Turkish Nationalism and Western Civilization*, ed. Niyazi Berkes (New York: Columbia University Press, 1959), 161.

72 Նույն տեղում, 72-73:

73 Zürcher, *Turkey*, 101-102; Raymond Kévorkian, *The Armenian Genocide: A Complete History* (London, New York: I.B. Tauris, 2011), 201-202.

ունեցավ իտալո-թուրքական պատերազմից հետո իտալական ապրանքների հետ⁷⁴: Բալկանյան պատերազմների ընթացքում հունական նավերին թույլ չէին տալիս կայանել կայսրության նավահանգիստներում, հունական ապրանքների ներմուծումն արգելված էր⁷⁵: Սակայն տնտեսության թրջացման քաղաքականության նոր դրսևորումը հայ ձեռնարկատերերի և նրանց արտադրանքի բոյկոտն էր՝ ապահովված միջոցառումների մի ամբողջական զինանոցով, ինչպիսիք էին բանկային վարկերի մերժումը և արտահանմամբ զբաղվողների նկատմամբ կիրառվող վարչական հետապնդումները: Զուգահեռաբար, պետական եկամուտներից տրամադրվող վարկերի միջոցով Կոստանդնուպոլսում 1913 թ. մի քանի ամիսների ընթացքում մոտ 600 թուրքական խանութ բացվեց և մուսուլման բնակչությանը «հայրենասիրության» քարոզով կոչ էր արվում հովանավորել բացառապես թուրք առևտրականներին՝ քրիստոնյաների «պիղծ ապրանքները» գնելու փոխարեն⁷⁶: Թեկինալիը ընդգծում է բոյկոտի արդյունավետությունը՝ նշելով, որ մի քանի ամսվա ընթացքում այն հանգեցրեց հարյուրավոր հույն և հայ փոքր արհեստավորների ջախջախմանը, որոնք «ապրում էին թուրքերի հաշվին և ամբողջապես կախված էին նրանցից»⁷⁷: 1914 թ. հունիսին ընդունված Արդյունաբերության խրախուսման մասին օրենքն արդեն սահմանում էր, որ նախապատվություն պետք էր տալ օսմանյան արտադրանքին, նույնիսկ եթե դրանք թանկ էին ներկրվածներից 10 տոկոսով⁷⁸: Ազգային տնտեսության հիմնման ուղղությամբ ամենաորոշիչ քայլը 1914 թ. հոկտեմբերի 1-ին Օսմանյան կայսրության կողմից կապիտուլյացիաների ռեժիմի միակողմանի չեղարկումն էր: Արտասահմանյան պարտքերի մարումը հետաձգվեց անորոշ ժամանակով, հաստատվեցին նոր մաքսային սակագներ, որոնք նպատակ ունեին պաշտպանել թուրք արտադրողին⁷⁹:

Տնտեսության թրջացման և լեզվի ազգայնացման պետական քաղաքականություններն ընթանում էին գուգահեռ: 1908 թ. վերահաստատված սահմանադրությամբ պետության պաշտոնական լեզու հայտարարվել էր թուրքերենը: Դրան հետևեցին օրենքներ, որոնք ամրապնդում էին թուրքերենի մենաշնորհային դիրքը: 1915 թ. նման մի օրենքով թուրքերենը պարտադիր դարձավ գործարար հաղորդակցման և պաշտոնական հաշվետարության համար օսմանյան բոլոր ընկերություններում՝ չենթարկվողների համար սահմանելով տուգանք, իսկ զանցանքի կրկնության դեպքում՝ առևտրով զբաղվելու արգելք⁸⁰: Սա, իհարկե, լրացուցիչ հարված հասցրեց դեռևս գործող հայ ձեռնարկատերերին: Կոստանդնուպոլսում «Kölnische Zeitung»

74 Նույն տեղում, 104:

75 Գևորգ Վարդանյան, *Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և Փոքրասիական աղետը (1914-1923 թթ.)* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2012), 77; Charles H. Woods, *The Danger Zone of Europe: Changes and Problems in the Near East* (London: T.F Unwin, 1911), 46.

76 Toprak, "Nationalism and Economics," 3.

77 Tekin Alp, *The Turkish and Pan-Turkish Ideal*, 38.

78 Zürcher, *Turkey*, 125-126; Toprak, "Nationalism and Economics," 3.

79 Bayir, *Minorities and Nationalism*, 59.

80 Նույն տեղում, 57:

[Զյոլնի թերթ] թերթի թղթակից Հարի Շթյուրմերի վկայությամբ, նույնիսկ Բերայի թաղամասի խանութների անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն ցուցանակները փոխվեցին թուրքերենով, այն դեպքում, երբ այնտեղ միայն արտասահմանացիներ էին բնակվում⁸¹:

Առաջին համաշխարհային պատերազմ մուտք գործելով՝ տնտեսության ազգայնացման մասշտաբներն ընդլայնվեցին: Հայերի ֆիզիկական ոչնչացմանը զուգահեռ պետական մակարդակով կազմակերպվում էր նաև նրանց ունեցվածքի բռնագրավումը: Իշխող Միություն և առաջադիմություն կուսակցությունը, ըստ էության, գիտակցում էր, որ Հայոց ցեղասպանության հետևանքով լուրջ տնտեսական անկում էր գրանցվելու երկրում, հատկապես պատերազմական իրավիճակում, սակայն դա համարում էր ժամանակավոր և օգտակար հիմնվելիք թուրքական ազգային պետության համար:

1915 թ. Օսմանյան կայսրությունում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցիչները փաստում են տնտեսական ճգնաժամը: Ալեքսանդրետի գերմանական փոխհյուպատոս Հերման Հոֆմանը նոյեմբերի 8-ի գեկուցագրում փաստում է, որ եթե հայերն իրոք միայն «վաշխառու» լինեին, ինչպես թուրքական կառավարության տարբեր անդամներ էին պնդում, ապա տնտեսական նման ճգնաժամ չէր առաջանա⁸²: Նա նաև հայտնում է, որ թուրքական վերնախավը չի հերքում վերականգնելու այն մեծ տնտեսական վնասը, որն առաջացել է հայերի ոչնչացման և նրանց մուսուլմաններով փոխարինելու դժվարության արդյունքում, բայց առավել խաղաղ և աստիճանական ճանապարհն անհնար է դիտում, քանի որ խաղաղ մրցակցության ցանկացած տեսակի դեպքում ձեռնարկատիրական փորձ չունեցող թուրքերը տանով կտան: Հոֆմանը նաև հավելում է. «Իմ թուրք բարեկամները հուսով են, թե թուրքական տնտեսության մարմնին արված այս ծանր վիրահատությունն, ի վերջո, կհանգեցնի կայսրության վերակենդանացմանը՝ մուսուլմանական-թուրքական շահերով»⁸³: Պետք է նշել նաև, որ հայերի ունեցվածքի բռնագրավումը տնտեսական հեռահար ծրագիր էր, այն չէր կարող միանգամից արդյունք տալ: Իրեն թուրքական Բիսմարկ համարող Թալաթի⁸⁴ ձևակերպմամբ՝ թուրքերը տարածքի կարիք ունեն, որում կկարողանան իրենց պատմական դերակատարումը ստանձնել: Քանի որ կենսական բոլոր ոլորտները «զբաղեցված են հայերի և հույների» կողմից, պետք էր հասարակության «օտար» մարմիններն արմատախիլ անել. «Մենք պետք է դատարկ միջավայր ստեղծենք: Թշնամիները պետք է ոչնչացվեն: Չեն լինի արհեստավորներ, բանվորներ, առևտրականներ, բանկիրներ, գործարարներ և թուրքերը ստիպված կլինեն լրացնել այս դատարկ տեղերը»⁸⁵: Նույն պատասխանն է նա տվել 1915 թ.

81 Stuermer, *Two war years in Constantinople*, 167-168.

82 *The Armenian Genocide: Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916*, ed. by Gust Wolfgang (New York, Oxford: Berghahn, 2014), 513.

83 Նույն տեղում, 514.

84 Արմէն Գարօ, «Մեր վերջին տեսակցութիւնը Թալէթ փաշայի հետ», 44:

85 Gyula Germanus, *A Félhold farkó fényében, Útikalandok* (Budapest: Táncsics, 1963), <http://mek.oszk.hu/00600/00663/00663.htm>, դիտվել է 16.01.2021:

օգոստոսի 18-ին լրագրողի այն հարցին, թե արդյո՞ք հայերի դեմ իրականացվող հետապնդումները չեն վնասի տնտեսությանը. «Այո, մի փոքր: Բայց մենք արագորեն կլցնենք դատարկ տեղերը թուրքերով»⁸⁶:

Հայկական ունեցվածքի բռնագրավումն օրինականացնելու և կազմակերպելու համար թուրքական կառավարությունն ընդունել է մի շարք օրենքներ⁸⁷: 1916-1918 թթ. հայերից բռնագրավված ունեցվածքով 80 թուրքական ձեռնարկություն հիմնվեց, որոնց մեծ մասը ոչ գործնական շահագործման հետևանքով հանրապետության գոյության առաջին տասնամյակում արդեն չէր գործում⁸⁸:

Մշակութային ընդլայնում

1909 թ. Օսմանյան խորհրդարանն ընդունեց միությունների մասին օրենքը (թուրք.՝ *Cemiyetler Kanunu*), որն արգելեց էթնիկ կամ ազգային հիմքով միությունների, մշակութային կազմակերպությունների հիմնումը: Միաժամանակ կառավարության ուղղակի ֆինանսավորմամբ հիմնվում էին իթթիհաթական կազմակերպություններ, մշակութային ակումբներ՝ երիտասարդական թևերով, ինչպես, օրինակ, «Թուրքական օջախներն» էին (թուրք.՝ *Türk Ocakları*)⁸⁹: Խորհրդարանում այս օրենքը ևս մեծ քննարկումների տեղիք տվեց, որի ընթացքում ոչ թուրք պատգամավորները հայտարարեցին, որ այն «ապստամբության սերմ է», որն ավելի ծառայում է տարրերի բաժանմանը, քան թե միությանը, աղերս չունի օսմանիզմի հետ և ծառայելու է կայսրության միայն թուրք բնակչության շահերին⁹⁰: Օրենսդրությամբ ճնշելով այլ ազգերի մշակութային ազատությունը՝ միննույն ժամանակ զարկ էր տրվում թուրքական անցյալի, պատմության ուսումնասիրությանը և քարոզին: 1911-1912 թթ.՝ Կոստանդնուպոլսում գտնվելու տարիներին, ռուս լրագրող Արիադնա Տիրկովան (1869-1962) փաստում է, որ թուրք մտավորականներից կարելի էր լսել «յուրաքանչյուր հայրենասեր պարտավոր է սովորել և մյուսներին սովորեցնել» կոչը: Լրագրողը նշում է, որ կազմակերպվում էին հասարակական դասախոսություններ, լեզվի և այբուբենի բարեփոխման, Ղուրանի թարգմանության վերաբերյալ քննարկումներ՝ «նոր մշակութային գործունեություն նոր ձևավորվող թուրք մտավորականության կողմից» ձևաչափով⁹¹:

1908 թ. հետո կառավարության հատուկ ուշադրությանն արժանացավ կրթական համակարգը: Օսմանյան կայսրությունում կրթական համընդհանուր համակարգ գոյություն չի ունեցել: 18-րդ դ. վերջին – 19-րդ դ. սկզբին Օսմանյան կայսրությունում մուսուլմանների տարրական կրթությունը հիմնականում ապահովում էին մզկիթներ-

86 Kieser, *Talaat Pasha*, 22.

87 Üngör, Polatel, *Confiscation and Destruction*, 69.

88 Kévorkian, *The Armenian Genocide*, 202.

89 Bayir, *Minorities and Nationalism*, 52.

90 Նույն տեղում:

91 Ариадна Тыркова, *Старая Турция и младотурки. Годъ въ Константинополе* (Петроградъ: тип. Б.М. Вольфа, 1916), 135, 136.

րին կից գործող մեքթերենները, բարձրագույնը՝ մեդրեսենները: Մեդրեսեն այնպիսի հաստատուն կառույց էր, որ վերացվեց միայն հանրապետության հռչակումից հետո: 1839 թ. գործում էին նաև հանրակրթական դպրոցներ՝ ույուշթիեններ, որոնց տված կրթությունը իրականում չէր տարբերվում մեդրեսեններից⁹²: Թանգիմաթյան բարենորոգումների արդյունքում պետությունը սկսեց կրթությունը դիտել որպես հանրային պարտականություն և սկսեց միջամտել նաև օտար և ազգային փոքրամասնություններին պատկանող մասնավոր դպրոցների գործունեությանը: Համընդհանուր կրթության խնդիրն առաջին անգամ օրակարգ մտավ 1869 թ. ընդունված «Հանրային կրթության մասին» օրենքով, որով Օսմանյան կայսրությունում տարրական կրթությունը պարտադիր էր դառնում բոլոր հպատակների համար, բոլոր դպրոցները պետական վերահսկողության տակ էին դրվում, դասագրքերը ենթարկվում էին գրաքննության: Կրթության մասով այս օրենքը երբեք չգործադրվեց⁹³: Պետական հաջորդ միջամտությունը կատարվեց օսմանյան առաջին սահմանադրությամբ, որը, ճանաչելով բոլոր հպատակների իրավունքները հաճախելու հանրային կամ մասնավոր դպրոցներ, դրանց նկատմամբ վերահսկողությունը վերապահում էր պետությանը: Տարրական կրթությունը համապարտադիր դարձնելով՝ սահմանադրությունը դրեց կրթության կենտրոնացված համակարգի հիմքերը⁹⁴:

Այս ուղղությամբ, ինչպես և մյուս բոլոր ոլորտներում, առաջին լուրջ քայլերը կատարվեցին 1908 թ. հեղաշրջումից հետո: 1912-1913 թթ. ակադեմիական տարում կայսրությունում գործում էր 12814 նախակրթարան՝ 596460 ուսանողով և 19212 ուսուցչով, 153 միջնակարգ դպրոց՝ 27461 ուսանողով և 1518 ուսուցչով, 17 մանկավարժական քոլեջ 1518 ուսանողով և 141 ուսուցչով և 17 բարձրագույն ուսումնական հաստատություն՝ 6677 ուսանողով և 368 ուսուցչով⁹⁵: Թվերը շատ ցածր էին կայսրության մուսուլման բնակչության ընդհանուր թվաքանակի համեմատ, բայց նույնիսկ այս ցուցանիշներն արդյունք էին իթթիհաթականների վարած պետական քաղաքականության: Կառավարությունը սկսեց պնդել նաև խառը դպրոցների ստեղծման վրա, որոնք կապահովեին քրիստոնյաների և մուսուլմանների համատեղ կրթությունը. բնականաբար, ուսուցման լեզուն պետք է լիներ թուրքերենը⁹⁶:

Դեռևս 1896 թ. կանոնակարգով թուրքերենի ուսուցումը դարձավ պարտադիր

92 Selami Sonmez, "Primary Education System in Ottoman Empire," *International Journal of Humanities and Social Sciences* 3, no. 5 (2013): 163-169.

93 Fatma Gök, "The History and Development of Turkish Education," in *Education in "Multicultural" Societies - Turkish and Swedish Perspectives*, eds. Carlson Marie, Rabo Annika and Gök Fatma, vol. 18 (Stockholm: Swedish Research Institute in Istanbul, 2007), 247.

94 Bayir, *Minorities and Nationalism*, 46.

95 Ahmet E. Yalman, *Turkey in the World War* (New Haven: Yale University Press, 1930), 82 (մասնավոր և օտար դպրոցների թվերը ներառված չեն): Համեմատության համար նշենք, որ 1904-1908 թթ. կրթության նախարարության բյուջեն կազմում էր 200000, 1909-ին՝ 660000, 1910-ին՝ 940000, իսկ 1914-ին՝ 1230000 օսմանյան լիրա (Sina Akşin, 100 Sorunda. Jön Türkler ve İttihat Terakki (Istanbul - Birinci Baskı: Gerçek Yayınevi, 1980), 245).

96 Анатолий Д. Желтяков, Юрий А. Петросян, *История просвещения в Турции (конец XVIII – начало XX века)* (Москва: Наука, 1965), 105.

ոչ մուսուլմանական դպրոցներում (հոդված 245): Կանոնակարգով ստեղծվեց նաև հանձնաժողով ոչ մուսուլմանական դպրոցների ավարտական քննությունների ընթացքում աշակերտների թուրքերենը ստուգելու համար (հոդված 50)⁹⁷: 1908 թ. Միություն և առաջադիմության քաղաքական ծրագիրը նախատեսում էր տարրական կրթությունը դարձնել թուրքերեն: Տարբեր համայնքների դիմադրությամբ 1909 թ. քաղաքական ծրագիրը թույլ տվեց մայրենի լեզուների գործածությունը բարձրագույն դպրոցներում (թուրք.՝ *idadiye*)⁹⁸: 1915 թ. ընդունված մասնավոր դպրոցների կարգավորման կանոնադրությամբ պարտադիր սահմանվեց ոչ միայն թուրքերենի ուսուցումը, այլև օսմանյան պատմության և աշխարհագրության դասերի թուրքերեն ուսուցումը մասնավոր դպրոցներում (հոդված 6)⁹⁹: 1917 թ. ծրագիրը թույլ տվեց մայրենի լեզուների դասավանդումը տարրական դպրոցներում, թեև տարրական կրթությունը պետք է լիներ թուրքերեն¹⁰⁰:

Ազգային փոքրամասնությունների կրթական հաստատությունների իրավունքների սահմանափակումից բացի երիտթուրքերը լուրջ քարոզ սկսեցին նաև միսիոներական դպրոցների դեմ: 1912 թ. թուրքական «Hakk» [Իրավունք] թերթում տպագրված մի հոդված միսիոներական դպրոցներում ուսում ստացող մուսուլման աշակերտների թիվը տալիս է 60 տոկոս, բայց ամենակարևորը միսիոներական դպրոցների կրթության ձևն էր, որ արժանացել էր թերթի քննադատությանը, այն է՝ իսլամ և թուրքերեն չդասավանդելը: Հոդվածն ավարտվում է այն եզրահանգմամբ, որ միսիոներական դպրոցների շրջանավարտները ոչ քրիստոնյա են, ոչ մուսուլման, ոչ օտարերկրացի, ոչ օսմանցի, քանի որ չեն ունենում հայրենասիրության կամ ազգային ինքնության որևէ զգացողություն¹⁰¹: 1914 թ. հանրային դպրոցների որակապես թույլ լինելը կրկին քննարկվում է մամուլում: Մուսուլման երեխաների օտար դպրոցներ հաճախելուն այս անգամ էլ անդրադառնում է «Peyam»-ը [Հաղորդում], շեշտելով, որ նրանք նման դպրոցներում չեն ստանում «իրենց սոցիալական դիրքին և ռասային» հարիր կրթություն¹⁰²:

Կրթությունն աշխարհիկացվեց և մեկ միասնական կրթական համակարգ ստեղծվեց հանրապետության առաջին տասնամյակում, սակայն դրան զուգահեռ քրիստոնյաների ազգային հաստատությունները, դպրոցները և հասարակական միությունները պետա-կան նպատակաուղղված քաղաքականությամբ բոլոր առումներով քանդվեցին:

Ամփոփիչ դիտարկումներ

Ֆրիդրիխ Ռ-աուցելի քաղաքական աշխարհագրությունը տեսականացվել է 19-րդ դարի վերջի եվրոպական՝ հատկապես գերմանական իրականությանը համապատաս-

97 Bayir, *Minorities and Nationalism*, 47.

98 Նույն տեղում, 58:

99 Նույն տեղում, 47:

100 Նույն տեղում, 58:

101 “Startling Figures,” *The Orient* III, no. 29 (1912): 2.

102 “The Lack of Moslem Schools,” *The Orient* V, no. 16 (1914): 153.

խան: Դարվիհի բնական ընտրության տեսությանը համաձայն, Ռատցելը պետությունները համարում է կոնկրետ ժողովրդի՝ իր կենսական տարածքին ադապտացվելու արդյունքը: Պետության վերջնական ձևավորման հարցում կարևոր դեր է ունենում ժողովրդի փոխհարաբերությունը կենսական տարածքի հետ և այն մեթոդների հանրագումարը, որը ժողովուրդը գործադրել է այդ տարածքին տիրելու համար¹⁰³: Ռատցելի տեսությունը բխում էր նաև Գերմանիայի ներքաղաքական և սոցիալական վիճակից: 1815-1890 թթ. պարբերական արտագաղթը հանգեցնում էր աշխատուժի և ռեսուրսների արտահոսքի: Սահմանելով «լեբենստում»-ը՝ ժողովրդի կողմից այն լքելը Ռատցելը հայտարարեց ոչ հայրենասիրական քայլ: Միաժամանակ նա սկսեց պնդել, որ պետությունը պետք է ընդլայնվի իր ժողովրդի պահանջներին համապատասխան՝ արտագաղթ թույլ չտալու նպատակով¹⁰⁴: Միավորվելով և պետականություն հիմնելով արևմտասլավոնական պետություններից համեմատաբար ուշ՝ Գերմանիան հետ էր մնացել գաղութային մրցավազքից: Պետության և օրգանիզմի անալոգիան առաջ քաշելով՝ Ռատցելը հետապնդում էր նաև պետության ֆիզիկական և քաղաքական էքսպանսիան «գիտականորեն» արդարացնելու նպատակով¹⁰⁵:

Ռատցելը երբեք չի պնդել, որ կենսական տարածքի կամ պետության բնակչությունը պետք է լինի միատարր՝ պատկանի միևնույն ռասային կամ էթնոսին: Ընդունելով հանդերձ, որ միջազգային հարաբերությունները պետությունների անվերջ պայքարն է տարածքի համար՝ նա չէր պնդում, որ այդ պայքարը պարտադիր զինված էլք պետք է ունենա¹⁰⁶: Նրա հետևորդներից շատերը «լեբենստում»-ին վերաբերվել են որպես մաքուր գիտական հասկացության, իսկ քաղաքական գործիչներն այն փոխառելով՝ կիրառել են հեղինակի համար անընդունելի նպատակների համար:

Վերադառնալով օսմանյան իրականությանը և Հայոց ցեղասպանությանը՝ նշենք, որ 1914-1918 թթ. իթթիհաթական կառավարությունը կենսական տարածքի հաստատման առաջին՝ ներքին ժողովրդական, տնտեսական և մշակութային էքսպանսիայի փուլում էր, որը թուրք պատմաբան Ուդուր Ումիթ Ունգորն անվանում է «ներքին գաղութացում»¹⁰⁷: 1918 թ. սեպտեմբերին Բեռլինի հյուրանոցներից մեկում Մուհիթթին Բիրզենի¹⁰⁸ հետ հանդիպման ժամանակ ներքին գործերի նախարար Մեհմեդ Թալաաթը հաստատում է այդ փաստը: Քննարկելով հավանական պարտությունը և մոտալուտ խաղաղության կոնֆերանսը՝ Թալաաթը եզրակացնում է, որ ստատուս քվոն պահելը դժվար կլինի: Արաբական շրջանների անկախությունը

103 Smith, “Friedrich Ratzel,” 53.

104 Նույն տեղում, 64:

105 Bassin, “Imperialism and the Nation State,” 474.

106 Նույն տեղում, 483:

107 Ugur Ü. Üngör, *The Making of Modern Turkey: Nation and State in Eastern Anatolia, 1913-1950* (Oxford: Oxford University Press, 2011), 41, 135.

108 Մուհիթթին Բիրզեն (1885-1951), գրող, լրագրող, հրապարակախոս: Եղել է Միություն և առաջադիմություն կուսակցության անդամ և «Tanin» պարբերաթերթի խմբագիրներից: Երկրորդ սահմանադրական շրջանում եղել է խորհրդարանի պատգամավոր Չորումից (1914-1918), հանրապետական շրջանում՝ Մարդինից (1939-1941):

Թալաաթն ընդունում էր որպես կատարված փաստ, հասկանալով, որ կոնֆերանսի ընթացքում այդ հարցը կբարձրացվի: Նրա հիմնական մտահոգությունը բուն Փոքր Ասիան էր, որը նրա քաղաքականության առանցքն էր 1913 թ. սկսած: Ընդգծելով այս փաստը՝ Թալաաթը եզրակացնում է. «փոքրամասնությունների հետ կապված որևէ խնդիր նախկին իմաստով և կարևորությամբ այլևս չի մնացել... լավ ենք արել, թե՛ վատ, ամեն դեպքում մեզ հաջողվել է Թուրքիան վերափոխել ազգային պետության Անատոլիայում: Մեր մեջ անհանգստություն և երկպառակություն սերմանող տարրերը նվազել են»¹⁰⁹:

Ֆիզիկական ոչնչացումից զատ, 1915 թ. տեղահանություններին զուգահեռ օրենսդրությամբ կազմակերպվում էր նաև հայերի ունեզրկումը¹¹⁰: Այս քաղաքականությունը Հալեպի ամերիկյան հյուպատոս Ջեյմս Ջ. Ջեքսոնն իրավամբ որակում է «ռասան մարելու վերջնական հարված»¹¹¹: Հայկական ունեցվածքը պետությանը փոխանցելուց, թուրքական նորաստեղծ բուրժուազիայի համար նախնական կապիտալ ծառայելուց բացի, ունեզրկումը ցեղասպանության կարևոր փուլ էր: Տրապիզոնի գերմանական հյուպատոս Հայնրիխ Բերգֆելդը 1915 թ. հուլիսի 9-ին ուղարկեց Ռեթման Հոլվեգին ուղղված զեկույցում մանրամասնում է, որ իթթիհաթական Կենտրոնական կոմիտեն տեղահանությունների միջոցով ցանկանում է լուծել Հայկական հարցը, և որ տեղահանվածներից նրանք, ովքեր կփրկվեն պատահականությամբ, վերադառնալու դեպքում միջոցներ չեն ունենա վերահաստատվելու համար¹¹²: Վերադառնալու և վերահաստատվելու ֆինանսական միջոցներ չունենալուց բացի, փրկված հայը վերադառնալու էր թրքացված միջավայր՝ առանց հայկական ազգային հաստատությունների, ինչը հայ ինքնության տարրերը պահպանելու և փոխանցելու որևէ հնարավորություն չէր թողնելու: Դեռևս 1915 թ. հունիսին, երբ ցեղասպանությունը դեռ իրագործման ընթացքի մեջ էր, Խարբերդի ամերիկյան հյուպատոս Լեսլի Դևիսը կարծիք է հայտնում, որ հայկական գործարար կյանքի վերացմամբ և միսիոներների կրթական հաստատությունների փակումով, առհասարակ հյուպատոսական ծառայություն իրականացնելու անհրաժեշտություն չկա ոչ միայն Խարբերդում և Դիարբեքիրում, այլև ողջ կայսրությունում¹¹³: Թալանը և ունեզրկումը կիրառվեցին որպես մեթոդ: Այլ կերպ ասած՝ իթթիհաթականների քաղաքականության օբյեկտը ոչ թե ունեցվածքն էր, այլ ժողովուրդը¹¹⁴, որը սեփականությամբ կապված էր նոր թուրք ազգի ապագա «հայրենիքի» հետ: Թուրքերի կենսական տարածքի թրքացման լիարժեքությունը և դրա հետագա ընդլայնումը դեպի Կենտրոնական Ասիա վիճարկելի հարցեր են, որոնք սույն հետազոտության քննությունից դուրս են, սակայն,

109 Kieser, *Talaat Pasha*, 376.

110 Üngör, Polatel, *Confiscation and Destruction*, 69.

111 *United States Official Records on the Armenian Genocide 1915-1917*, ed. by Ara Sarafian (London: Taderon Press, 2004), 207.

112 *The Armenian Genocide*, 242.

113 *United States Official Records*, 460.

114 Üngör, Polatel, *Confiscation and Destruction*, 166.

ինչպես ներքին գործերի նախարարն ինքն է փաստում, նվազագույն պլանը՝ *ներքին էքսպանսիան*, իրականացված էր:

Տեսության ոչ քննադատական ներառումը պետական գաղափարախոսության մեջ կարող է պետական քաղաքականությունն ուղղորդել սխալ ճանապարհով: Գերմանիան, լինելով աշխատուժ ներմուծող երկիր, երկու համաշխարհային պատերազմներում ձգտում էր դեպի Արևելք (գերմ.՝ *Drang nach Osten*), ձեռք բերելու տարածքներ՝ վերաբնակեցնելու համար իր գոյություն չունեցող «աճած» բնակչությունը՝ արդյունքում դառնալով ոճրագործ և միջազգային ատյանում մեղադրվելով ռազմական հանցագործությունների մեջ¹¹⁵: Նմանապես և Օսմանյան կայսրության իշխող կուսակցությունը, քաղաքական ճգնաժամի պայմաններում պսևդոգիտական տեսություններից ազդվելով, որդեգրեց ծայրահեղ ազգայնական դիրքորոշում՝ օտարելով իր բնակչության մի հատվածը, որի լիակատար ինտեգրումը պետության զարգացումը կտաներ լրիվ այլ ուղով: Հայերի ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում պետական հաշվարկված քայլերի համալիր էր՝ միտված խզելու հայերի կապն իրենց պատմական հայրենիքի հետ: Դա միայն ֆիզիկական ոչնչացումը չէր, այլև հայերին թուրքական կենսական տարածքից, երկրի սոցիալական և մշակութային համակարգից արմատախիլ անելու պետական ծրագրավորված գործողություն:

PERCEPTIONS OF VITAL SPACE IN THE WORLDVIEW OF UNION AND PROGRESS COMMITTEE AND THE ARMENIAN GENOCIDE

Regina A. Galustyan

Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

SUMMARY

Friedrich Ratzel (1844-1904), a prominent thinker of political geography, put forward an idea of vital space (Lebensraum) by an analogy between a plant and a state. Developing this idea in the 1890s Ratzel defined the vital space as a precondition for a given state to provide proper living conditions for its population, without which the existence, development and further expansion of the state would be impossible. Although Ratzel's theory was predominantly attributed to the Nazi regime and German quest for land in the East, the theory of Lebensraum could be localized on the Ottoman Empire and the policy of the Committee of Union and Progress (CUP). Juxtaposing the teachings of Ratzel with the ideological propaganda of the CUP as a ruling party from 1908-1918 and the practical steps taken towards the Turkification of the country, the article argues that the Committee's political vision was more than just a creation of a Turkish nation-state. The formation and

¹¹⁵ Smith, "Friedrich Ratzel," 68.

development of the perception of the Asia Minor peninsula and the western part of the Armenian Highlands as a Turkish vital space and the practical steps taken towards the maintenance of this land led to the deliberate destruction of the native Christian populations.

The article will present the theoretical framework of Lebensraum, the development of the idea of “homeland” among the Turkish intellectual elite, the geopolitical and historical context in which “Anatolia” was chosen as a Turkish vital space. Interwoven with Herbert Spencer’s doctrine of social Darwinism, and its main concepts “struggle for survival” and the “survival of the fittest,” Ratzel’s Lebensraum became more comprehensible to political circles, including high-ranking officials of the Committee of Union and Progress.

The paper discusses the preconditions for the selection of an area, methods of its conquest and maintenance. While the physical cleansing of the vital space from the “opponent” or “alien” population is one of the methods for maintenance of Lebensraum. Taking the Armenian Genocide as a clear example of this method, the article discusses only the economic and cultural inner expansions.

The article concludes that the Armenian Genocide was a set of state-planned deliberate measures by the Ottoman government aimed at the physical destruction and full eradication of the Armenians from the Turkish living space and the social and cultural system of the country.

Key words: Ottoman Empire, Union and Progress, Friedrich Ratzel, vital space, Rumelia, Arabia, Anatolia, Armenian Genocide, inner colonization, reforms, Turkification of the space, economic expansion, cultural expansion.

ВОСПРИЯТИЯ “ЖИЗНЕННОГО ПРОСТРАНСТВА” В МИРОВОЗЗРЕНИИ КОМИТЕТА “ЕДИНЕНИЕ И ПРОГРЕСС” И ГЕНОЦИД АРМЯН

Регина А. Галустян

Фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

РЕЗЮМЕ

Фридрих Ратцель (1844-1904), выдающийся мыслитель политической географии, выдвинул идею жизненного пространства (Lebensraum) по аналогии между растением и государством. Развивая эту идею в 1890-х годах, Ратцель определил жизненное пространство как необходимое условие для обеспечения надлежащих условий жизни населения, без которого существование, развитие и дальнейшее расширение государства были бы невозможным. Хотя теория Ратцеля преимущественно приписывалась нацистскому режиму и немецким поискам земли на Востоке, теория “лебенсраума” может быть применена и к Османской империи, и политике Комитета “Единение и

прогресс.” Сопоставляя учение Ратцеля с идеологической пропагандой Комитета как правящей партии в 1908-1918 годах и практическими шагами, предпринятыми в направлении тюркизации страны, в статье утверждается, что политическое видение Комитета выходит за пределы создания турецкого национального государства. Формирование и развитие восприятия полуострова Малой Азии и западной части Армянского нагорья как турецкого жизненного пространства и практические шаги, предпринятые для сохранения этой земли, привели к преднамеренному уничтожению коренного христианского населения.

В данной работе представлены теоретические основы “лебенсраума,” развитие идеи “родины” среди турецкой интеллектуальной элиты, геополитический и исторический контекст, в котором “Анатолия” была выбрана в качестве турецкого жизненного пространства. Переплетаясь с учением Герберта Спенсера, социал-дарвинизмом и его основными понятиями “борьба за выживание” и “выживание наиболее приспособленных,” жизненное пространство Ратцеля стало понятным и приемлемым политическим кругам, включая высокопоставленных чиновников Комитета.

В статье рассматриваются предпосылки выбора той или иной территории, методы ее завоевания и сохранения. В то время как физическое очищение жизненного пространства от “противника” или “чужого” населения является одним из методов освоения жизненного пространства, данная статья, принимая Геноцид армян в качестве наглядного примера этого метода, рассматривает только экономические и культурные внутренние экспансии.

В статье делается вывод о том, что Геноцид армян представлял собой комплекс спланированных мер османского правительства, направленных на физическое уничтожение и полное искоренение армян из турецкого жизненного пространства и социально-культурной системы страны.

Ключевые слова: Османская империя, комитет “Единение и прогресс,” Фридрих Ратцель, жизненное пространство, Румелия, Аравия, Анатолия, Геноцид армян, внутренняя колонизация, реформы, тюркизация пространства, экономическая экспансия, культурная экспансия.

REFERENCES

Adamov, E. A., Kov'menko, I. V. (eds.). Сборник договоров России с другими государствами, 1856-1917 [Collection of Treaties of Russia with Other States, 1856-1917]. Moscow, Gosudarstvennoe izdatel'stvo politicheskoi literatury, 1952.

Armen, Garo. «Մեր վերջին տեսակցութիւնը Թալաթ փաշայի հետ» [Our Last Meeting with Talaat Pasha]. Hayreniq 1, no. 2 (1922): 39-45.

Galustyan, Regina. «Անցիալ-դարվինիզմը երիտթուրքական աշխարհայացքում» [Social Darwinism in the Worldview of Young Turks]. Vem 12, no. 4 (2020): 253-273.

Gordlevskii, Vladimir. Очерки по новой османской литературе [Essays on New Ottoman Literature]. Moscow: Krestnyi kalendar', 1912.

Harut'yunyan, Gevorg. «Արևմտահայության կացությունը և հայ հասարակական միտքը օսմանյան բարենորոգչական շարժման համատեքստում (XIX դ. 70-ական թվականներ)» [Condition of the Western Armenians and Armenian Social Opinion in the Context of the Ottoman Reformative Movement (The 70s of the 19th cent.)]. Patmbanasirakan handes 1 (2006): 115-129.

Khvostov, V. M. История дипломатии, т. II. Дипломатия в новое время, 1871-1914 [History of Diplomacy, vol. II, Diplomacy in Modern Times, 1871-1914]. Moscow, Gosudarstvennoe izdatel'stvo politicheskoi literatury, 1963.

Kirakosyan, Arman. Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը (պատմաիրավական եռալեզու տեղեկանք) [The Armenian Question and the Armenian Genocide (trilingual historical-legal reference)]. Yerevan: Noravanq SEF, 2006.

KolosoV, V. "Российская геополитика: традиционные концепции и современные вызовы" [Russian Geopolitics: Traditional Concepts and Contemporary Challenges]. Obshchestvennye nauki i sovremennost' no. 3 (1996): 86-94.

Minakhorean V. 1915 թուական. արհաժիրքի օրեր [1915: the days of disaster]. Venice: San Lazzaro, 1949.

Sahakyan, Lusine. «Հայկական տեղանունների թուրքացման քաղաքականությունը Օսմանյան կայսրությունում և հանրապետական Թուրքիայում» [The Policy of Turkification of the Armenian Toponyms in the Ottoman Empire and the Republic Of Turkey]. Vem 2, no. 1 (2010): 83-96.

Sazonov, A., Gerasimova, G., Glushkova, G., Kisterev, S. (Eds.). Под стягом России: сборник архивных документов [Under the Banner of Russia: A Collection of Archival Documents]. Moscow: "Russkaia kniga," 1992.

Top'ch'ean, E. Երիտասարդ Թուրքիան և հայերը, մասն առաջին [Young Turkey and the Armenians: part 1]. Tbilisi: Shroma, 1909.

Tyrkova, A. Старая Турция и младотурки. Годъ въ Константинополе [Old Turkey and Young Turks. A Year in Constantinople]. Petrograd: tipografiia B.M. Vol'fa, 1916.

Vardanyan, Gevorg. Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և Փոքրասիական աղետը (1914-1923 թթ.) [The greek population in the Ottoman Empire and the Asia Minor Disaster (1914-1923)]. Yerevan: AGMI, 2012.

Zheltiakov, A. D., Petrosian lu. A. История просвещения в Турции (конец XVIII – начало XX века) [History of Enlightenment in Turkey (Late XVIII to Early XX Centuries)]. Moscow: Nauka, 1965.

Министерство иностранныхъ делъ, Сборникъ дипломатическихъ документовъ. Реформы въ Арменіи, 26 ноября 1912 года – 10 мая 1914 года [Ministry of Foreign Affairs, Collection of Diplomatic Documents. Reforms in Armenia, November 26, 1912 - May 10, 1914]. Petrograd: Gosudarstvennaia tipografiia, 1915.

Հեղինակի մասին
About the Author
Об авторе

Ռեգինա Ա. Գալուստյան, միջազգայնագետ-պատմաբան, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի հայցորդ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Կրթական ծրագրերի բաժնի գիտաշխատող: Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանություն, թուրքական ազգայնականություն, ազգաստեղծման, պետականաստեղծման ծրագրեր ցեղասպանությունների և էթնիկ զտումների միջոցով:

Էլ. փոստի հասցե՝ galustyanra@gmail.com, galustyan.regina@genocide-museum.am

Regina A. Galustyan, International Relations specialist, historian, PhD student and researcher at the Educational Department, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – Armenian Genocide, Turkish nationalism, nation-building and statebuilding programs through genocides and ethnic cleansings.

E-mail: galustyanra@gmail.com; galustyan.regina@genocide-museum.am

Регина А. Галустян, историк-международник, соискатель и научный сотрудник отдела Образовательных программ Фонда “Музей-институт Геноцида армян.”

Область исследований – Геноцид армян, турецкий национализм, конструирование наций и государств посредством геноцидов и этнических чисток.

Эл. почта: galustyanra@gmail.com; galustyan.regina@genocide-museum.am

ԻԹԹԻՀԱԹԱԿԱՆՆԵՐԸ ԿՈՍՏԱՆՂՆՈՒՊՈԼՍԻ
«ՀԱՅ ԱՇԽԱՐՀ» ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԻ (1919 Թ.) ԷՋԵՐՈՒՄ

Էլինա Զ. Միրզոյան

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Հոդվածում քննության առարկան Կոստանդնուպոլսում 1919 թ. լույս տեսած «Հայ աշխարհ» պարբերաթերթի էջերում իթթիհաթականների վերաբերյալ հրապարակումներն են։ Հարկ է նշել, որ սույն պարբերականը գրեթե ուսումնասիրված չէ ինչպես հայ, այնպես էլ օտարալեզու գիտական շրջանակներում։ Հոդվածն անդրադառնում է պարբերաթերթում առկա գնահատականներին ու վերլուծություններին, որոնք լուսաբանում են իթթիհաթական կուսակցության ու նրա գաղափարախոսության բնորոշ կողմերը։

Թեման ներկայացվում է մի քանի ուղղություններով՝ իթթիհաթականները և հայերը, ինչպես դիտարկել իթթիհաթականներին, իթթիհաթականների ազգայնականությունը։

Բանալի բառեր՝ պոլսահայ մամուլ, պարբերականներ, իթթիհաթականները և հայերը, իթթիհաթականություն, Վահան Զեյթունցյան, Վահան Շահրիման։

Հոդվածը ներկայացվել է 18.09.2020:

Ընդունվել է տպագրության 29.03.2021:

The article was submitted on 18.09.2020 and accepted for publication on 29.03.2021.

Статья поступила 18.09.2020 и была принята к публикации 29.03.2021.

Ինչպես հղել՝ Էլինա Զ. Միրզոյան, «Իթթիհաթականները Կոստանդնուպոլսի «Հայ աշխարհ» պարբերաթերթի (1919 թ.) էջերում», *Յեղասպանագիտական հանդես* 9, no. 1 (2021), 37-57:

How to cite: Elina Z. Mirzoyan, “Ittihadists on the Pages of the “Hay Ashkharh” [The Armenian World] Periodical in Constantinople (1919),” *Tseghaspanagitakan handes* 9, no. 1 (2021): 37-57.

Как сослаться: Элина З. Мирзоян, “Иттихадисты на страницах периодического издания «Ай Ашхар» [Армянский Мир] в Константинополе (1919),” *Тсехаспанагитакан андес* 9, no. 1 (2021): 37-57.

Կոստանդնուպոլսի հայոց պարբերականների ուղեգիծը և
«Հայ աշխարհ»-ը. համառոտ տեսություն

Կոստանդնուպոլիսը 15-19-րդ դարերում և այնուհետև՝ ընդհուպ Հայոց ցեղասպանությունը, արևմտահայ մշակույթի ամենախոշոր կենտրոնն էր, որովհետև իր համազգային ընդգրկումներով ու ներգործությամբ խթանել է ոչ միայն Օսմանյան կայսրության հայկական, այլև բուն Հայաստանի քաղաքների ու գավառների կրոնական, լուսավորական ու մշակութային կյանքը¹:

1 Ալբերտ Խառատյան, *Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դարեր)* (Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2007), 7, 49-50:

Տարատեսակ զարգացումներն աշխարհասփյուռ հայության համար առաջնային էին դարձրել մայրենի լեզվով սեփական մամուլ ստեղծելու պահանջը, ինչն էլ սկիզբ է դրվել հայոց առաջին պարբերական «Ազդարար»-ի հրատարակմամբ, որով, ինչպես պատմաբան Լեոն է ընդգծում, հայ ազգը մտնում է քաղաքակիրթ ազգերի ընտանիքի մեջ²: «Ազդարար»-ին հաջորդել են Վենետիկի Մխիթարյան հայերի հրատարակած հանդեսներն ու տարեգրքերը, իսկ դրանից անմիջապես հետո հայ պարբերական մամուլը «իրեն կայք կը գտնէ Պոլիսը»³: Պոլսահայ մամուլի փաստացի պատմությունն սկիզբ է առնում 1832 թվականին. 1831 թ. լույս է տեսնում Օսմանյան պետության առաջին թերթը՝ Բարձր Դռան պաշտոնաթերթը «Թաքվիմը Վեքայի»-ն, իսկ 1832 թ. սկզբներին պետական արտոնություն է տրվում թերթի հայերեն և հունարեն նույնաբովանդակ հրատարակության համար, որով իբրև ազգային փոքրամասնություններին սեփական լեզվով պարբերաթերթ ունենալու հնարավորություն էր տրվում: «Թաքվիմը Վեքայի»-ի հայերեն տարբերակը լույս է տեսնում «Լրո գիր» անվանմամբ («Թաքվիմը Վեքայի»-ի հայերեն թարգմանությունն է), որի խմբագիր է նշանակվում Գևորգ Գրիգորյանը⁴: Թեև թերթը համարվում է Կ.Պոլսի հայ լրագրության անդրանիկ և ազգային առաջին շաբաթաթերթը, սակայն, իրականում, այն բովանդակությամբ և նշանակությամբ հեռու էր ազգային լինելուց, քանի որ միակ առաքելությունը թուրքական պաշտոնական տեսակետի տարածումն էր հայոց մեջ:

1840-ական թթ. արևմտահայ հասարակական կյանքում ծավալվում է լուսավորականությունը, և պոլսահայ մտավորականության մեջ հասունանում է ազգային բովանդակությամբ և ազգային շահերը սպասարկող պարբերական ունենալու պահանջը՝ սկիզբ դնելով «լրագրական շարժմանը»⁵: Ժողովրդի զարգացման նպատակով հիմնադրվում են բարեգործական ընկերություններ, մեծահարուստների հովանավորությանն արժանացած հայ ընդունակ երիտասարդներ մեկնում են Փարիզ: Նոր զարգացող արևմտահայ երիտասարդության կրթության գործում պակաս դեր չի խաղացել Վենետիկը: Դեպի Եվրոպա ծայր առած այս հոսանքը հետագա տարիներին նոր թափ է ստանում, թեպետ այն չէր կարող վրիպել օսմանյան կառավարության ուշադրությունից և բազմաթիվ աքսորների ու պարբերականների փակման առիթ պիտի դառնար:

Այսպիսով, Եվրոպայում ուսում ստացած հայ երիտասարդները, գիտելիքներով զինված, վերադառնում են Կ.Պոլիս ու Չմյուռնիա՝ լծվելով ազգը կրթելու աշխատանքին: Այլ բովանդակություն են ստանում մամուլն ու գրականությունը, նոր ձև ու որակ են ձեռք բերում հրապարակախոսությունն ու գրականությունը՝ դառնալով հասարակական ազդեցիկ նշանակություն ունեցող երևույթներ:

Մինչև արևմտահայոց ազգային սահմանադրության ընդունումը⁶ թուրքահայ

2 Լէօ, *Հայկական Տպագրութիւն*, Ա. Մաս (Թիֆլիս, Վրաց. հրատ. ընկ., 1901), 600:

3 Վաղարշակ դպ. Սեբրեան, «Պոլսահայ մամուլը», *Մարմարա* (Կ.Պոլիս), 15 հոկտեմբեր 1994:

4 *Հայոց պարբերական մամուլը. Լիակատար ցուցակ հայ լրագրության*, կազմող՝ Գարեգին Լևոնյան (Յերևան, հրատարակություն Մելքոնյան ֆոնդի, 1934), 4:

5 «Հայ մամուլի մասին», *Ժամանակ* (Կ.Պոլիս), 15 հոկտեմբերի 1994:

6 Արևմտահայոց ազգային սահմանադրության մասին առավել մանրամասն տե՛ս Առում, *Ազգային*

պարբերականների թիվը զգալիորեն ավելանում է Կ.Պոլսում, Ջմյուռնիայում, ինչպես նաև մի քանի հայաբնակ գավառային կենտրոններում:

Սակայն նկատենք, որ հրատարակվող պարբերականներն այդքան էլ հարուստ չէին բովանդակությամբ և ունեին մեկը մյուսին կրկնօրինակելու միտումներ: Պատճառը ոչ միայն «պատրաստված, մարզված խմբագրի» պակասն էր, այլև արևմտահայության հասարակական-քաղաքական անկայուն վիճակը, թրքական բռնատիրական համակարգը՝ «ատոնցմէ կարևորագոյնը՝ թրքական գրաքննութիւնը»⁷: Այնուամենայնիվ, կային այնպիսի պարբերականներ, որոնք առաջադրում էին նոր գաղափարներ և ծրագրեր, ինչպես «Ազատամարտ»-ը (1909-1915 թթ.), որը համարվում էր նոր սերնդի «խոսափող», «Բիզանդիոն»-ը, որը Խրիմյան Հայրիկը նկատել է որպես Կ.Պոլսի ամենալուրջ և ամենապատվավոր թերթ⁸ և այլն:

1857 թ. Օսմանյան կայսրությունում դրվում է տպագրության, գրքի և մամուլի իրավական վերահսկողության սկիզբը՝ ծայրահեղ խստություն դրսևորելով իր գոյության առաջին իսկ օրերից⁹: Թերթերն ու ամսագրերն իրավական կանոնակարգման առանձին բնագավառ դարձան մամուլի վերաբերյալ օրենքի հրապարակումից անմիջապես հետո (1864 թ.)¹⁰, որով որոշակի շրջանակի մեջ էր դրվում հրատարակիչների և խմբագիրների գործունեությունը. հատուկ կարգ էր սահմանվում տպագրվող նյութերի և թերթերի ուղեգծերի վերաբերյալ, արգելակվում էր առանց այդ էլ խիստ հսկողության տակ գտնվող խոսքի ազատությունը: Եթե մինչ այդ թերթերի հրատարակիչները առաջնորդվում էին սուլթանի *ֆերմանով* (հոշակագիր) և նրանից նույնիսկ դրամական օգնություն էին ստանում, ապա այժմ նրանք անմիջապես ենթարկվում էին նորաստեղծ մամուլի վարչությանը, որը ոչ թե առաջվա պես բավարարվում էր իրենց համար ոչ հաճելի ուղղություն բռնած պարբերականին տուգանելով կամ դատի տալով, այլ պարզապես արգելում էր հետագա հրատարակումը:

Առավել դժվար էր հպատակ ժողովուրդների վիճակը: «Նոր կյանք»-ը պատկերավոր նկարագրում է իրավիճակը. «Եւ... Պոլսոյ գահը բարձրացաւ այն հիւանդ գիշակէրը [Աբդուլ Համիդ]... Չարչարանքի դրութիւնը սկսաւ... Իր հրամանովը հայերէն թատերական ներկայացումները դադրեցաւ, Հայոց պատմութեան ուսուցումը խստի

սահմանադրութիւնը. գիծեր մեր մշակոյթի պատմութենէն (Կ.Պոլիս, Արծի ժողովրդական գրավաճառանոցի, 1914); Արշակ Ալպոյաճեան, *Ազգային սահմանադրութիւնը, իր ծագումը եւ կիրառութիւնը. «Ընդարձակ օրացոյց ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց»* (Կ.Պոլիս, 1910); Լեւոն Չորմիսեան, *Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան: Ա. հատոր: 1850-1878* (Պէլյուր, Imprimerie G. Donigian & Fils, 1972); *Ազգային սահմանադրութիւն հայոց* (Լիբանան, Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1968); Ալբերտ Խառատյան, «Արևմտահայերի ազգային «Սահմանադրությունը» (1860-1863)», *Պատմաքաղաքական հանդես* 2-3 (1992), 51-66; Ալբերտ Խառատյան, «Դարձյալ արևմտահայերի ազգային սահմանադրության մասին», *Պատմաքաղաքական հանդես* 2 (2008), 81-93:

7 Յակոբ Օշական, *Համապատկեր արեւմտահայ գրականութեան*, հ. 5 (Երուսաղէմ, Սրբոց Յակոբեանց, 1952), 383:

8 Բիզանդ Քէչեան, «Երկու խափանումներ», *Բիզանդիոն* (Կ.Պոլիս), թիւ 3, 13-26 մարտ 1909, 789:

9 Анатолий Желтяков, Юрий Петросян, *Печать в общественно-политической и культурной жизни Турции (1729-1908)* (Մ.: Наука, 1972), 65:

10 Ալբերտ Խառատյան, *Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908)* (Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1989), 5:

արգիլուեցաւ, հաւատաքննական գրաքննութիւն մը մամուլն ու գրականութիւնը շղթայ: Գրաքննութիւնը բառեր, նիւթեր, սեռեր կ'արգիլէր. վերջ ի վերջոյ ոտանաւոր գրելը արգիլեց...»¹¹:

1888 թ. տպագրական տեսչության հրամանով հաստատված նախնական գրաքննությամբ աճում են խստությունները հատկապես հայկական և հունական թերթերի նկատմամբ, որոնք մինչև հրատարակվելն անցնում էին գրաքննչական բազմաստիճան մի համակարգով: Պարբերականի բովանդակությունը Բարձր Դռան ներքին գործերի պաշտոնատան երեք հայ տեսուչներ համառոտագրում էին թուրքերեն և ներկայացնում թուրք վերաքննիչին: Կասկածելի մեկ բառի կամ նախադասության դեպքում նյութը պետք է թարգմանվեր ամբողջությամբ: Ապա թարգմանված օրինակներից ուղարկվում էին Բարձր Դուռ, ոստիկանապետին, հանրային կրթության գրասենյակ և այլուր: Ըստ որում, դրանցից յուրաքանչյուրն իր մեղոդով էր քննում նյութը և, ինչպես նշում է Յու. Ավետիսյանը, չէր բացառվում, որ մյուսների ընդունած նյութը մերժվեր, ասենք, «Յըլդըզի»¹² անմիտ քնահաճությամբ»¹³: Հայերին արգելվում էր գրել և արտասանել «Հայաստան», «հայրենիք» բառերը¹⁴, հայկական աշխարհագրական անունները դուրս էին մղվում գործածությունից և փոխարինվում թրքական տեղանուններով, մերժվում էին թագավորների սպանության, սուլթանի վատառողջության, երաշտի կամ անբերրիության մասին «վտանգավոր», խորհելու առիթ տվող լուրերը¹⁵: Արգելվում էր մեկ համարում չտեղավորվող հոդվածների տպագրությունը, բազմակետերի օգտագործումը, քանի որ դրան հաջորդող «Շարունակությունը կլինի», «Շարունակությունը վաղը» արտահայտություններն իբր վատ կերպով լարում էին ընթերցողի միտքը, անհաճո ենթադրությունների տեղիք տալիս,

11 Նոր կեանք (Լոնդոն), 1898, թիվ 11, 216:

12 Օսմանյան սուլթան Աբդուլ Համիդ II-ի նստավայրը:

13 Յուրի Ավետիսյան, «Անահիտ» հանդեսը (Երևան, Երևանի պետական համալսարան, 1999), 42:

14 Նույն տեղում, նաև՝ Վիկտորյա Դուկայան, Պոլսահայ մամուլի և հրապարակախոսության սկզբնավորումը (1832-1853) (Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1975), 32-34:

15 Նշված ժամանակաշրջանում մեկ «կասկածելի» բառի համար թերթերը ոչ միայն փակվում էին, այլև հարցաքննության էին ենթարկվում վարիչները և խմբագիրները՝ «Երլտըզի միահեծան բռնակալութեան դէմ թաքուն նպատակ» հետապնդելու պատճառաբանությամբ: Սակայն շատերին չէր հաջողվում «օձիքը ազատել»: Ընդ որում՝ «ստոր գրապարտութեանց հետեւանքով, որ ընթացիկ նորոյթ էին հին ուէժիմին», բանտարկվել են հայ խմբագիրներ և արտոնատերեր: Ասվածի վառ օրինակ է «Մանգումե» թերթի հետ կապված «Ակօս»-ում բերված հիշատակությունը. «Օր մը Ֆրանսերէն թերթէ թարգմանուած հատուած մը, որ գուշակութիւններ կը պարունակէր աշխարհի վախճանին վրայ, վերջ կտայ այս ձեռնարկին... այդ հատուածին մէջ կար տող մը մանաւանդ, որ կ'ըլէր թէ աստղերը (Երլտըզ) պիտի թօթափին: Այս բառերը բաական կ'ըլլան ոչ միայն թերթը փակելու, այլև հարցաքննութեան ենթարկելու թերթին վարիչն ու խմբագիրները, որոնց կը վերագրուէր թաքուն նպատակ մը՝ Երլտըզի միահեծան բռնակալութեան դէմ: Անոնք դժուարաւ յաջողեցան իրենց օձիքը ազատել...»: Միապէ Գօյունեան, «Փոխն ի փոխ», Ակօս (Կ.Պոլիս), թիւ 462, 4 փետրուար 2005: Թերթը քանիցս դադարեցվել է գրաքննության համար, իսկ արտոնատերն ու խմբագրապետը բանտարկվել են կեղծ գրապարտությունների պատճառով: Սակայն «Բյուզանդիոն»-ը նկատել է տալիս, որ բռնակալության տարիներին անճարակները, անարժեքները, անարժեքները միայն ջանում էին փակել տալ մրցակից թերթերը՝ իրենցը հաջողեցնելու համար: Դիտակ, «Կառավարութիւնն եւ Հայերը», Բիզանդիոն, մարտ 13-26, 1909, նաև Ս. Յ. Ալիքսանեան, «Ի՛նչ կ'ըսէ բրօքսթօր մը», Բիզանդիոն, մարտ 13-26, 1909:

խոչընդոտում նրա հոգու հանգստությանը: Նման խստություններ բանեցվում էին նաև գեղարվեստական գրականության, թատերական ներկայացումների¹⁶, անգամ գրքերի նկատմամբ¹⁷:

Ստեղծված պայմաններում պոլսահայ մամուլը գրեթե ընդունակ չէր իր վրա կրելու արևմտահայ մտավոր ու հասարակական կյանքի կազմակերպման ամբողջ ծանրությունը, նորոգելու գրական շարժման ընթացքը. մտքերի վրա իշխում էր 1894-1896 թթ. ջարդերը և շարունակվող ծանր ու սարսափելի թմբիրը: Հասարակական ու ազգային ամենատարրական իրավունքներից զրկված բազմահազար անտուն ու անօթևան հայեր լրում էին Կ.Պոլիսը: Արևմտահայ մտավորականները տագնապով էին նայում գալիքին՝ սրությամբ փնտրելով փրկության ուղին, և կամ «մէկիկ-մէկիկ Պոլսէն արտասահման էին հեռացեր թրքահայ լաւագոյն մտաւորականները: Ասպարէզը մնացեր էր հացկատակներուն և անոնց, որ լրագրութիւնը ապրուստի միջոց մը ըրած էին»¹⁸: Այնուամենայնիվ, պետք չէ եզրակացնել, որ հրատարակչական գործը բացարձակապես դադարել է: 1860-ականներից մինչև Օսմանյան սահմանադրության ընդունման առաջին տարին՝ 1908 թ. և երբեմն էլ ավելի ուշ, հաջորդաբար լույս են տեսել մի շարք օրաթերթեր՝ «Մանգումէի Էֆքյար» (1866-1917 թթ.), «Մասիս» (1852-1908 թթ.), «Փունջ» (1860-1907 թթ.), «Օրագիր» (1868 թ., հազիվ երկու ամսվա կյանք է ունեցել), «Ծաղիկ» (1899-1903 թթ.), «Պայքար» (1908 թ.) և այլն:

1908 թ. Օսմանյան սահմանադրության առաջ բերած մակերեսային դրական տեղաշարժերից էր այն, որ համեմատաբար մեղմացան մամուլի նկատմամբ կիրառվող սահմանափակումները, փոքր հնարավորություն ստեղծվեց որոշ թեմաների մասին գրելու, խոսելու, քննարկելու: Թեև լույս տեսնող հանդեսները որևէ սկզբունքային նորություն չէին ավելացնում հայկական մտքի զարգացմանը, այդուհանդերձ, դրանք շատ հարցերում ձգտում էին վերականգնել տպագրական գործի ընթացքը, ակտիվացնել հրատարակչական գործը:

Այսպիսով՝ թեպետ Օսմանյան կայսրությունում մամուլի նկատմամբ կիրառվում էին տարատեսակ սահմանափակումներ, այնուամենայնիվ, Կ.Պոլսում հայ մամուլը շարունակում է որոշակի զարթոնք ապրել ընդհուպ մինչև Հայոց ցեղասպանությունը:

Հայոց ցեղասպանությունը թեև անասելի ծանր հարված հասցրեց պոլսահայ մշակույթին, սակայն «Թուրքիայի Հանրապետության առաջին տարիներին արդեն Կ.Պոլսի հայ համայնքում սկսել են որոշ քայլեր կատարվել մշակույթի վերագարթոնքի ուղղությամբ»¹⁹: Նման մթնոլորտում հայության համար մամուլն էր մնում հասարակական կյանքի կազմակերպման այն ասպարեզը, ուր կենտրոնանում էին ազգի իմացական ուժերը, հայ մտավոր-հասարակական կյանքի տագնապներն ու հույզերը: Մամուլին վերապահվում էր բացառիկ դեր՝ գորավիզ լինել ազգի գոյապայքարին:

16 Иван Голобородько, *Старая и новая Турция* (Москва: “Польза” В. Антик и К., 1908), 117-119.

17 Նույն տեղում:

18 *Հայրենիք* (Բոստոն), 1924, թիվ 6:

19 Արսեն Ավագյան, Ռուբեն Մելքոնյան, *Ստամբուլի հայ համայնքի արդի վիճակը* (Երևան, Լուսակն, 2009), 108:

«Հայ աշխարհ» շաբաթաթերթի հրատարակության պատճառները

«Հայ աշխարհ» շաբաթաթերթը սակավ ուսումնասիրված թերթերից է։ Այն թեև հայտնի չէ լայն շրջանակների, սակայն արժանի է ուշադրության. թերթն ոչ թե հետևում էր այդ շրջանում Կ.Պոլսում տպագրվող հայկական թերթերին բնորոշ ուղեգծին, այն է՝ արտատպումներ կամ խուսափողական նյութեր հրատարակելը, այլ հանդես էր գալիս ինքնուրույն, վերլուծական, քննողական, քննադատական հրապարակումներով։ Նշենք, որ ենթադրաբար լույս է տեսել թերթի ընդամենը մի քանի համար (մեզ հասանելի է եղել 8-ը, այլ կոնկրետ տեղեկություն համարների թվի մասին մեզ չի հաջողվել գտնել)։ Ընդհանրապես Կ.Պոլսում թերթի տպագրական ընթացքի երկարատևությամբ ու կարճատևությամբ չենք կարող գնահատել նրա կարևորությունն ու նշանակությունը, քանի որ հնարավոր է մեկ համար լույս տեսած լինի, սակայն այնպիսի նյութի հրապարակմամբ, որը թերթի տպագրական խափանման պատճառով դարձած լինի, երբեմն էլ, այո՛, մեկ թերթի մեկ հոդվածն իր նշանակությամբ կարող է դառնալ գիտահետազոտական ուսումնասիրության նյութ։

Կ.Պոլսի «Հայ աշխարհ» գրական, գիտական և հասարակական շաբաթաթերթը մի քանի ուսումնասիրողներ²⁰ նույնացնում են իբր 1909 թ. Կ.Պոլսում լույս տեսած «Հայ աշխարհ» համանուն պարբերականի հետ, որը տպագրվել է «Քեշիշյան»-ի տպարանում²¹ և լույս է տեսել 1909-1914 և 1919 թվականին։ Պետք է նշենք, որ Գարեգին Լևոնյանն իր համապարփակ աշխատության մեջ «Հայ աշխարհ»-ը ներկայացնում է որպես երկու առանձին նույնանուն պարբերական, նշում, որ մեր հետազոտության շաբաթաթերթը տպագրվել է 1919 թ. Կ.Պոլսում։ Վեց էջից բաղկացած այս պարբերաթերթի արտոնատերը և պատասխանատու տնօրենն էր Վահան Զեյթունցյանը²²։ Մենք հակված ենք ընդունել Գարեգին Լևոնյանի տեսակետը։ Այն որ թերթը 1909-1914 թթ. շարունակություն չի ունեցել չի ապացուցում է նաև այն փաստը, որ իր առաջին համարում շաբաթաթերթը ներկայացնում է հրատարակման պատճառները, ինչպես նաև անդրադառնում թերթում արձարծվելիք ուղղություններին, իսկ որևէ նշում շարունակականության վերաբերյալ չկա։

«Հայ աշխարհ»-ն իր հրատարակման պատճառներն ու նպատակները հիմնա-

20 Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967), կազմող՝ Ա. Կիրակոսյան (Երևան, Ա. հ., 1970), 325։ Տե՛ս նաև Հայ պարբերական մամուլը։ Մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմող՝ Մանվել Բաբլոյան (Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1986), 78։ Վահան Զեյթունցյանը խմբագրի ծանրակշիռ փորձ ունեցող մտավորական էր, ինչպես նաև Հնչակյան կուսակցության անդամ, որն այս մասին գրում է. «Այն ինչ որ եմ, կը պարտիմ իմ կուսակցության-Հնչակեանության, որ հայության ծառայել է շեղում չէ կատարած։ Հնչակեանության ուղին եղած է պատմականորեն շիտակ, արտասահմանի հայությունը կը շղթայէ մեր նոր ազատ հայրենիքին, որու որդեգրած ուղին վաղը քաղաքականապես եւ տնտեսապես անազատ ժողովուրդներու ուղին ըլլալուն հաւատքն ունիմ։ Որ որ ըլլամ պիտի ծառայեմ հայութեան եւ տառապող մարդկութեան»։ Նա խմբագրել է Հարավային Ամերիկայի հնչակյանների պաշտոնաթերթ «Շարժում»-ը, ապա «Նոր Երկիր», «Նոր Աշխարհ» թերթերը։ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Միրզաբեկ, Ընկեր Վահան Զեյթունցյան, Երիտասարդ Հայաստան (Նիւ Եորք), 56-րդ Տարի, Թիւ 69, 15 Յունուար, 1960։

21 Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967), 325։

22 Հայոց պարբերական մամուլը, 59, 100։

վորում է այդ ժամանակահատվածում Եվրոպայի և Ասիայի աշխարհագրական քարտեզների փոփոխությամբ: Շաբաթաթերթը հաղորդում է, որ Առաջին համաշխարհային պատերազմում՝ այդ գերմարդկային պայքարում, ճակատվել են երկու հսկա բանակներ: Մեկը ներկայացնում էր անգլիական ազատ բուրժուազիայի ռամկավարությունը՝ իր քաղաքական ազատ կարգերով, իր հակազինվորական հակումներով, «միս կողմը կանգնած էր գերմանական ազնուապետությունը՝ իր հակազերմանական ոգիով, գինտորական իր խիստ կարգ ու սարքերով ետին ունենալով պուկարական էմբերիալիզմը և թրքական համախառնությունը»: Ապա պարբերաթերթը հետևյալ հարցադրումն է շեշտադրում՝ ունենալով նաև այդ հարցի պատասխանը. «Ո՞վ խլեց յաղթութեան դափնին:

–Ոչ մեկը:

Յաղթանակեց պատմությունը, կեանքի պահանջը, թերեւս՝ “Նախախնամությունը”, ինչպես պիտի ըսեր Վ. Հիլզո»²³:

Այդ աշխարհագրական «կարգավորումների» և համաշխարհային իրադարձություններին անհաղորդ լինելն, ըստ թերթի, անկարելի էր հայերի համար: Շաբաթաթերթն իր նպատակներից էր համարում հայերի շրջանում այդ հարցերի վերաբերյալ գիտական ու հստակ ըմբռնում ձևավորելը, ինչը պետք է օգներ հայությանը՝ կարգավորելու իր վերածնության ուղին: Այս ուղղությամբ պարբերաթերթը գրում է. ««Հայ Աշխարհ»-ի նպատակը պիտի ըլլայ խնամուած, ուսումնասիրություններով ծանօթացնել հայ հասարակությունը, այն նորություններուն, որոնք մուտք պիտի գտնեն գրեթէ ընկերային գիտութեան բոլոր ճիւղերու մէջ:

«Հայ Աշխարհ»-ը պիտի ձգտի վերլուծել ու պատկերացնել հայ ժողովուրդի կենսունակությունն ու ստեղծագործ ուժը:

«Հայ Աշխարհ»-ը պիտի երգէ ու փառաբանէ հայ աշխատանքը եւ անոր աննըկուն ոգին»²⁴:

Նշենք, սակայն, որ թեև շաբաթաթերթը հրատարակվում էր որպես գիտական, հասարակական և գրական շաբաթաթերթ, այդուհանդերձ, մեր ուսումնասիրությունները թույլ են տալիս ասելու, որ թեև պարբերաթերթի գրական հետաքրքրությունների շրջանակը բավական լայն էր՝ ընդգրկելով հայոց (գլխավորապես՝ ռուսահայոց) գրականության պատմության և տեսության ամենաբազմազան հարցեր, սակայն շաբաթաթերթը ժանրային նմանօրինակ ուղղությունների ներքո առավելապես պահում էր ազգային, քաղաքական-հասարակական խմբագրական նպատակային ուղեգիծ, ինչը գալիս էր օրվա և կարգավիճակի անհրաժեշտությունից և բնական էր Կ.Պոլսի պարագայում:

Պարբերաթերթն իրթիհաթականների շուրջ

«Հայ աշխարհ»-ը գլխավորապես իրթիհաթականներին հատկացրած նյութերի ներկայացման մեջ գործում է թեմայի լուսաբանման հետևյալ ուղղություններով՝

23 «Մեր հրատարակութեան պատճառները», *Հայ Աշխարհ*, Ա. Տարի, Կ.Պոլիս, թիւ 1, 14/27 Յունուար, 1919, 1:

24 Նույն տեղում:

իթթիհաթականները և հայերը, ինչպես դիտարկել իթթիհաթականներին, իթթիհաթականների ազգայնականությունը: Այս ուղղությունները, սակայն, անհրաժեշտ է դիտարկել մեկ ամբողջական տիրույթում:

Պարբերաթերթը նախ և առաջ դնում է իթթիհաթականների ազգային նկրտումներին ծանոթանալու խնդիրը:

Իթթիհաթականները և հայերը

Քննվող ենթաթեմայի ուսումնասիրությունն արվել է մտավորական, հասարակական գործիչ, խմբագրի հարուստ փորձառությամբ Վահան Շահիրմանի լայնածավալ վերլուծական հոդվածի հիմքով: Հեղինակն իր «Իթթիհաթականների համախալամական քաղաքականությունը և 1915 թ. հայասպան եղեռնի գաղտնիքը» վերտառությամբ հոդվածում առանձնացնում է համախալամական քաղաքականության երկու ուղղություն՝ ներքին և արտաքին: Ըստ «Հայ Աշխարհ»-ի՝ համախալամականությունը իսլամական հավատքի տարածման շարժում չէ՝ տարբեր իսլամական ուժերի կրոնական միավորմամբ: «Յիմարութին մը պիտի ըլլար արդէն յաւակնիլ, թէ կարելի է որ համաձայնին այն բազմաթիւ աղանդները, որոնք մահմէտական աշխարհը կը բաժնեն եւ որոնք իրարու դէմ բռնուհալ կապառակութիւններ ունին»²⁵:

Ավելին՝ թերթը կոչ էր անում այն չընկալել նաև որպես իսլամական համախորհուրդ դաշնակցություն, որով աշխարհի բոլոր մահմեդականները սուլթանի կրոնական և քաղաքական իշխանությունը ճանաչում էին որպես կայսրություն կազմելու միակ միջոց: Պարբերաթերթն ընդարձակում է համախալամականության ընկալման տիրույթը՝ նշելով, որ այս ամենը քաղաքական և կրոնական մեծ ծրագրի մաս է, որը պետք է ձգտել ազատել կամ պաշտպանել իսլամական այն երկրները, որոնք եվրոպական պետությունները գրավել էին, կամ առկա էր նման վտանգ²⁶: Համախալամական այս ընդհանուր ծրագիրը, ինչպես պարբերականն է ուրվագծում, Թուրքիայի արտաքին քաղաքականության «ահաբեկիչ մէկ խրտուիլակն»²⁷ էր, որով «Ալճերիան պիտի սպառնայ Ֆրանսայի, Հնդկաստանը՝ Անգղիոյ, Կովկասը՝ Ռուսիոյ....»²⁸:

Ըստ պարբերաթերթի, կար նաև համախալամականության ներքին քաղաքականություն, որ գծված էր բացառապես Թուրքիայի համար: 1908 թ. սահմանադրությունից անմիջապես հետո թուրքերը մի պահ դադարեցին քաղաքական խնդիրների մեջ իսլամության անունից խոսել: «Իսլամ ազգին» մի քանի ամիս հետո հաջորդեց «Օսմանյան ազգ՝ *միլլեթի Օսմանիյե*»-ն, որով երիտասարդ թուրքերն իրենց սովորական ծածկամտությամբ ցանկանում էին քողարկել համախալամական ներքին քաղաքականությունը՝ ցույց տալու, թե թուրք վարչության գոտ աստվածապետական բնույթը այլևս վերացած է, և երկրի քաղաքական իշխանությունը

25 Վահան Շահիրման, «Իթթիհատականներու համախալամական քաղաքականութիւնը եւ 1915ի հայասպան եղեռնին գաղտնիքը», *Հայ Աշխարհ*, Ա. Տարի, 14/27 Յունուար, 1919, թիւ 1, 3:

26 Նույն տեղում:

27 Երբեմն մենք, թեև ոչ ուղղակի խոսքում, անհրաժեշտաբար պահպանում ենք թերթի բառապաշարային առանձնահատկություններն ընդգծող ձևակերպումներ, որով ևս ընթերցողը կարող է ձևավորել իր մտացումը թերթի տվյալ հարցի շուրջ դիրքորոշման մասին:

28 Շահիրման, «Իթթիհատականներու համախալամական քաղաքականութիւնը», 3:

հանձնված է նախարարների ժողովին, ուր իսլամ և ոչ իսլամ տարրերն իրարից չեն զանազանվում²⁹: «Կեղծիքը նրանց սուտ ու նպատակաուր յայտարարությունն էր, այն է՝ մահմեդականի ու քրիստոնեայի մէջ տարբերություն չկայ այլևս»³⁰: Ապա հետևում է այն դիրքորոշումը, որ հին թուրքերն ի սկզբանե անվերապահորեն հայտարարել են, որ ընդհակառակը, «մահմեդականի և քրիստոնեայի մէջ հաւասարություն չի կարող ընդունել»: Պարբերաբերթը նաև շեշտում է, որ ներքին համախալամականության գաղափարը չէր ենթադրում, որ երիտասարդ թուրքերը դեմ էին խորհրդարանական կարգերին: Ավելին, երիտթուրքերը մեծապես կոդմ էին, որ երկրի կառավարումը դուրս բերվի սուլթանի բացարձակ իշխանությունից:

Վերոնշյալ ուղղությամբ պարբերաբերթն իր էջերում ներկայացնում է նաև թուրքական այլ թերթերի բանավեճեր:

Թանգիմաթից հետո, երբ թղթի վրա ամեն անհավասարություն ջնջվում էր, Կ.Պոլսի «Բասիրեթ» թերթը՝ հին թուրքերի գլխավոր պարբերաբերթը, հրապարակայնորեն իր կարծիքն է հայտնել, ինչպես պարբերաբերթում է նշվում, հետևյալ թվացյալ միամիտ, անպատկառ, բայց վերջապես անկեղծ բացատրությամբ. «Պէտք չէ որ բանակին մէջ քրիստոնեաները՝ իսլամներուն համաստիճան բարձր դիրքեր ունենան: Վարչական բարձրագոյն պաշտօնները... կարելի չէ որ քրիստոնեաներուն յանձնուին, որովհետև այդպէսով զօրացած պիտի ըլլան անոնք, և մեր կողմէն ինքնախաբէություն պիտի ըլլար անոնց երախտագիտութեան և հաւատարմութեան վրայ յոյս դնել»³¹:

Իսկ ահա երիտասարդ թուրքերն իրենց «Վազըթ» թերթում հետևյալ պատասխանն են տալիս. «Ձեր խորհուրդները՝ եթէ կարելի ըլլար անոնց հետևիլ՝ դէպի անդունդ պիտի առաջնորդէին Օսմանեան Պետութիւնը: Ճնշողական դրութեան ժամանակն անցած է, որովհետև անիկա չի կրնար հաշտուիլ՝ քաղաքակիրթ ընկերութեանց զգացումներուն հետ: Որպէսզի կարելի ըլլայ Թուրքիայէն մեծ և հզօր ազգ մը կազմակերպել, պէտք է հաւասար պարտականութիւն և հաւասար իրաւունք տալ Օսմանեան բոլոր հպատակներուն անխտիր: Եւ մեր կրօնքը հակառակ չէ ազատագրութեան այս սկզբունքին»³²:

Ի պատասխան՝ «Բասիրեթ»-ը նշում է. «Դուք կը սխալիք, Շերիաթը չունի թոյլատու ոգին, զոր դուք փոխ տալ կ'ուզէք իրեն: Ձեր տեսութիւններն ընդունիլ՝ պիտի նշանակէր իսլամութիւնն ու խալիֆան ջնջել: Իսլամութիւնն է որ մեր ուժը կը կազմէ եւ պէտք չէ որ անիկա իր էութեան մէջ ճեւէ հարուած կրէ՝ վատ իրաւախոհութիւններով»³³:

«Հայ աշխարհ»-ում այս մասին շարունակվում է. «Երիտասարդ թուրքերը խորապէս միեւնոյն համոզումն ունէին, բայց կ'ուզէին երեւոյթը փրկել՝ հաւատարիմ մնալով, նոյն ատեն, իրենց համախալամական քաղաքականութեան սկզբունքներուն, որոնց շտրիկի միայն կը յուսային իսլամ գերիշխանութիւնը տեւականօրէն երաշխաւորել»³⁴:

29 Նույն տեղում:

30 Նույն տեղում:

31 Նույն տեղում, 3:

32 Նույն տեղում:

33 Նույն տեղում, 3-6:

34 Նույն տեղում:

Ապա նշվում է, որ «այս կեղծիքին ապաինած է երիտասարդ թուրքերու կուսակցութիւնը իր գոյութեան առաջին օրէն: 1867ին այդ կուսակցութեան պետերը հաստատուած էին Բարիզ, Մուսթաֆա Ֆազիլ փաշայի ղեկավարութեան տակ: Իրենց օրկանը, Մուխպիր, խորխտաձայն թմբկահարութեամբ կը յայտարարէր անընդհատ, թէ ուխտեալ պաշտպանն է ինք՝ իսլամներուն եւ քրիստոնէից միջեւ կատարեալ հաւասարութեան»³⁵:

Ապա թերթը հաղորդում է. «Նոյն երիտասարդ թուրքերը՝ 1867 ապրիլ 30-ին, հրատարակած են կանտնադրութիւն մը, որուն առաջին յօդուածը կ'ըսէր թէ՝ Կուսակցութեան նպատակն է ազատական վարչութիւն մը հաստատել եւ, մանաւանդ, Կայսրութեան քրիստոնէայ ժողովուրդներուն ազատագրութիւնն ապահովել, հաւասարութեան սկզբունքին վրայ»³⁶:

Հոդվածագիրը նշում է, որ եկավ, սակայն, մի օր, երբ այդ ազատականները մի կողմ նետեցին իրենց «զգվելի դիմակը և ցույց տվին, թե միշտ միևնույն մարդիկ են, նույն վայրագ թշնամիները». ««Մուխպիր» թերթը, որ երբեմն հաւասարութեան ախոյեանն ըլլալ կը յաւակնէր, սկսաւ վերջապէս առաջին խալիֆաներու գոտ իսլամութիւնը քարոզել, ոչ-իսլամներու դէմ սուրբ պատերազմ գրգռել, որովհետեւ մասնատրապէս զայրացեր էր, թէ թուրք կառավարութիւնը՝ Լոնտոնի և Պէրլինի համար քրիստոնէայ ներկայացուցիչ նշանակած է»³⁷:

Այս վկայության մեջ խտացած է՝ հին և նոր, ծեր կամ երիտասարդ, բոլոր թուրքերի հոգեվիճակը, որ «զիրենք կը մղէ, կը կապէ՝ համաիսլամական ներքին քաղաքականութեան»³⁸: Այդ քաղաքականությունը, ինչպէս շեշտադրում է հոդվածագիրը, կապ չունի բնավ համաիսլամական շարժման հետ, որ եվրոպական պետություններից ոմանց լրջորեն վտանգավոր է թվում: Համաիսլամական այդ ներքին քաղաքականությունը, պարբերաթերթի համոզմամբ, ծնունդն էր թուրք տարրի թվական նվազության, տնտեսական, գիտական և ճարտարարվեստական զգալի տկարությունների:

Այս ուղղությամբ շարաթաթերթն Վահան Շահիրիմանի լայնածավալ հոդվածով նկատել է տալիս, որ այս երկրի՝ օսմանյան Թուրքիայի մեջ ոչ թուրք տարրերի միացյալ թիվը բացարձակ մեծամասնություն է ներկայացնում: Եվ թուրքերի գերիշխանության հարցը կորցնում է իր կռվանը, եթե այլացեղ տարրերի միջև համագործակցություն հաստատվեր՝ երկրի բոլոր բաղկացուցիչ տարրերի համար հավասարություն ստեղծելու և պահպանելու հիման վրա:

Այս հեռապատկերը սարսափ էր պատճառում թուրքերին, որոնք չէին կարողանում իրենց աշխարհակալ և սանձարձակ իրավունքներից հրաժարվել, և որոնք թուրք տարրի գերակշռությունն ապահովելու գլխավոր միջոցներից մեկն էին նկատում համաիսլամական քաղաքականությունը, որի նպատակն էր՝ թուրքական դատին կապելու մյուս բոլոր ոչ թուրք, բայց իսլամ տարրերը՝ արաբներ, քրդեր, չերքեզներ, լազեր

35 Նույն տեղում:

36 Նույն տեղում:

37 Նույն տեղում, 4:

38 Նույն տեղում:

ու բռնաբաններ՝ կրոնի և ազգության անջատ գաղափարները դիտմամբ նույնացնելով և անբաժանելի հռչակելով:

Սրա համար է, որ երբ ոչ իսլամը մահմեդականություն է ընդունում, Օսմանյան կայսրությունում համարվում է իր ազգությունից բոլորովին հրաժարված ու թրքացած:

Ապա հողավածագիրը շարունակում է, որ մշտապես այս դավանանքն են ունեցել պահպանողական կամ ազատական բոլոր թուրքերը, որոնք մահվան էին դատապարտում ոչ մահմեդականին, որ մեկ անգամ իսլամ ընդունելուց հետո իր նախկին կրոնին է վերադառնում:

Շաբաթաթերթում ընդգծվում է, որ թուրք վարչության ներքո այս երկրում հնարավոր չէ ակնկալել խղճի ազատություն, ինչպես նաև տարանջատել ազգայնականության և կրոնի գաղափարները, այդ իսկ պատճառով թուրք տարրը շարունակում է մնալ փոքրամասնություն, և անհրաժեշտություն է առաջանում իր դատին կապած պահել ոչ թուրք իսլամ տարրերին, իսկ մյուս այլացեղ տարրերին՝ զանազան միջոցներով հալածել, ցրել, նվազեցնել, բռնի իսլամացնել:

Այդ *պետքն* էր, որ թուրքերին մղում է քուրդի և չերքեզի հայաջինջ տրամադրությունը վառ պահել, խրախուսել և հովանավորել՝ իրենց բոլոր արդյունքներով:

Պարբերաթերթը սկզբունքային դիրքորոշում է արտահայտում, համաձայն որի՝ մահմեդականի և քրիստոնյայի միջև իրական հավասարությունը՝ թուրք վարչության ներքո, լոկ ցնորք էր, բարենորոգումը՝ միայն անիմաստ բառ. «Թուրքերը ոգի ի բոլին կը հակառակէին այս սկզբունքին, որպէսզի հայոց իրաւունքները, անոնց խաղաղ զարգացման միջոցները, անոնց կեանքի, ստացուածքի, ու պատիւի ապահովութիւնը, ամէն ինչ, շնորհք մը ըլլար, գոր կարենային գրչի հարուածով մը ջնջել, ինչպէս ըրին 1915-ին»³⁹:

Անդրադառնալով Եվրոպային՝ պարբերականը նշում է, որ երկարատև անտարբերություններից հետո, մեղսակից լքումներից և թույլտվություններից հետո իր տարրական պարտականությունն է կատարում հայ ժողովրդի հանդեպ, որին հարկադրված էր պաշտպանել իրավագիտական արժեք ունեցող բացորոշ հանձնառությամբ:

Ըստ պարբերաթերթի՝ իթթիհաթականները մեկ անգամ ևս հասկացան, թե Թուրքիան անձնիշխան պետություն չէ, ինչի առիթը Առաջին համաշխարհային պատերազմին մասնակցությունն էր Բեռլինի թելադրությամբ, որն «երկար ժամանակ Ասիական Թուրքիայի լքեալ, բայց արգասանդ ու կարեւոր մասերի վրայ աչք էր դրել գերազանցապես յարմար հողեր նկատելով գաղթաւորման համար»⁴⁰: 1914 թ. վերանորոգվեց և որոշակիորեն ամրացավ այդ համաձայնությունը, որի շնորհիվ Թուրքիան երազում էր արտաքին ազդեցությունների լուծը թողափել և, մասնավորապես, ազատվել ռուսական ճնշումներից և ռոնձգություններից, որոնք քայքայում և կորուստ էին սպառնում իրեն:

Այդ նորոգված համաձայնության անմիջական արդյունքը եղավ հայկական

39 Նույն տեղում:

40 Նույն տեղում, 6:

նահանգների համար նշանակված մարզպետների վտարումը. «Այդ համաձայնությունը բացարձակ իշխանություն կուտար թուրքերուն, որպէսզի միանգամ ընդ միշտ և անխնայ վերջացնեն Հայոց գործն ու դատը»⁴¹:

Նշյալ դիրքորոշման տեսանկյունից պարբերականը դիտարկում է, որ ահա թե ուր «պէտք է փնտռել 1915ի հայկական ահռելի տրամին գաղտնիքը»⁴²:

Այս ենթաթեմայի շուրջ արվում է հետևյալ ամփոփումը. պատմական անհրաժեշտությամբ Թուրքիայում ստիպված են եղել կողք կողքի ապրել հայն ու թուրքը՝ առաջինը՝ տիրապետվող, երկրորդը՝ տիրապետող: Ապրել են որպես բարեկամներ, քանի դեռ հայ ժողովուրդը իր քայլը առաջ չի դրել հասարակական նոր պահանջներին ընդառաջ, ինչը հակառակ էր թուրքերի շահերին. «Հոս է որ կը սկսի հայ ժողովուրդի մարտիրոսագրության ճշմարիտ թուականը թուրք տիրապետության տակ.... Հայ ժողովուրդը արիւնի մէջ է ապրած այս վերջին հարիւր տարուան ընթացքին, որուն պսակը կազմեց թուրք յառաջադէմ տարրին՝ Իթթիհաթի կազմակերպած այս վերջին սպանդը, որ աննախընթաց է պատմութեան մէջ»⁴³: Ի լրումն այս մոտեցմանը՝ ընդգծվում է, որ թեև այսքանից հետո վրեժխնդրության արդար ցասումով պետք է լցվեր հայի սիրտը, սակայն հայ ժողովուրդը ցույց տվեց և ցույց է տալիս իր քաղաքակրթական և քաղաքացիական բարձր ոգին՝ պահելով իր պաղարյունությունը և քաղաքակրթական արժեքները:

Ինչպես դիտարկել իթթիհաթականներին

Ենթաթեման գլխավորապես քննվում է այս պարբերաթերթում տպագրված լայնածավալ մի քանի հոդվածի հետազոտության հիմքով: Անդրադարձ է արվում նաև թերթում այլ հայկական, հունական և թուրքական թերթերի քննական ներկայացմանը:

«Թէ ինչպէս կը դատենք թուրք ժողովուրդը» վերտառությամբ հոդվածում, որի հեղինակը Վահան Զեյթունցյանն էր, որը նաև պարբերաթերթի արտոնատերն ու պատասխանատու տնօրենն էր, նշվում է, որ Զինադադարի կնքումից անմիջապես հետո Թուրքիայում հրատարակվող ամեն ազգի մամուլ սկսում է հաշվեհարդար տեսնել, այդ թվում՝ հայկական և հունական մամուլը սկսում է քննել նախորդ սև տարիների ոճիրների էությունն ու դրանց պատասխանատուներին: Միննույն ժամանակ թուրքական մամուլն սկսում է պրպտել այն պատճառները, որոնք Թուրքիայի համապետական կյանքն առաջնորդեցին այդ ժամանակվա քառասային վիճակին: Ու այս փնտրտուքների մեջ շատ բնականորեն իրար են բախվում այս երկու հակառակ հոսանքների գաղափարները:

Հոդվածաշարում ընդգծվում է, որ թուրքական մամուլը չնչին բացառությամբ մտնում է շատ ծիծաղելի երևույթների մեջ՝ նախևառաջ ուրանալով այն, ինչ աղաղակող ճշմարտություն էր ամբողջ աշխարհի համար: Ուրացավ հալածանքը, յաթաղանը, ջարդը և այն բոլոր ոճիրները, որոնք իրականացրեց նախորդ կառավարությունը: Քիչ

41 Նույն տեղում:

42 Նույն տեղում:

43 «Արևելքի ժողովուրդներու մէջ բաղդատութեան երկու եզրեր», *Հայ Աշխարհ*, Ա. Տարի, 9 Փետրուար, թիւ 3, 34:

հետո, երբ թուրքական մամուլը տեսավ ու ըմբռնեց, որ դա չէր հայրենիքը փրկելու ուղիղ ճանապարհը, սկսեց այդ բոլոր ոճիրների պատասխանատու նկատել որոշ անձերի, որոնք բախտի քմահաճույքով հաջողել էին Թուրքիայի դեկն իրենց ձեռքն առնել և նրա ճակատագիրը վարել իրենց քմահաճ կարգադրությամբ: Եթե կարելի լիներ ապացուցել այս թեզը, արդեն փրկված պիտի լիներ թուրք ժողովուրդը:

Հողվածում նշվում է, որ հայ և հույն մամուլն ընդհանրապես ծառացավ այս գաղափարի դեմ և պնդեց, որ թուրքերը տրամադրված են ջարդի ու ոճիրի, և ուստի քրիստոնյայի դեմ գործված ոճիրների պատասխանատուն պետք է նկատել ոչ թե կառավարությանը, այլ ամբողջ թուրք ժողովրդին: Թուրք հասարակությունն ինքն իրեն ճանաչում և քայլերն ուղղում է՝ համաձայն իր հասարակական կյանքի տվյալների: Քրիստոնյա ժողովուրդները ևս ծանոթանում են իրենց միջավայրին և, ըստ այնմ, բանաձևում են իրենց պահանջները⁴⁴:

Հողվածագիրը շեշտադրում է, որ, բնականաբար, ճիշտ չի կարող լինել թուրք մամուլի տեսակետը և հղում է տալիս գերմանացի սոցիոլոգ Ֆերդինանդ Լասսալին, ըստ որի՝ կառավարությունը «զայն ժողովուրդի մը մեջ գտնուող ուժերու փոխարաբերութեան արդիւնսարարն է»⁴⁵: Ըստ Լասսալի՝ որևէ ժողովրդի հասարակական կյանքը պարզ և միասեռ ամբողջություն չէ. այդ ժողովրդի մեջ գոյություն ունեն իրար ներհակ, զանազան հակումներով ուժեր, որոնք ստեղծված են անհրաժեշտորեն, առանց որևէ արհեստական միջոցների, և որոնց փոխադարձ հարաբերությունն ստեղծում է արդյունաբար, որից կախում ունի նույն երկրի պետական կազմը, նրա ձևը, ոգին և ուղղությունը:

Պարբերաթերթը շեշտադրում է, որ սահմանադրությունը, սահմանադրական պետությունը կամ նույնիսկ հանրապետությունը միշտ չէ, որ համագոր են ազատությանը. հունական և հռոմեական պատմական աշխարհների մեջ իսկ գոյություն ունեին հանրապետություններ, բայց դրանք չի կարելի համարել ազատական կառավարություններ, քանի որ թեև դրանց հիմքն ազատանիներն էին, սակայն պետության բոլոր գործերին մասնակցում էին անազատներն ու փոքր սեփականատերերը⁴⁶:

Որպեսզի հնարավոր լինի փոխել որևէ երկրի պետական համակարգը, անհրաժեշտ է նախ փոխել այդ երկրի մեջ գոյություն ունեցող ուժերի փոխհարաբերությունը: Երբ խոսում են որոշ բարեկարգության կամ հեղափոխության մասին, պետք է նկատի ունենալ, որ տվյալ երկրի ժողովրդի լայն խավերի մեջ արդեն իսկ տեղի են ունեցել որոշ փոփոխություններ, կամ հողատիրությունը տեղի է տվել արդյունաբերական դրամազլխին, կամ խոշոր սեփականությունը տեղի է տվել մանր սեփականատիրությանը, և կամ սրա նման ուրիշ որևէ փոփոխություն է առաջ եկել: Ահա այս գիտական սկզբունքներով է պարբերականն առաջնորդվում՝ պարզելու

44 Վահան Զեյթունցեան, «Թէ ի՞նչպէս կը դատենք թուրք ժողովուրդը», *Հայ Աշխարհ*, Ա տարի, 18/31 Յնվր., թիւ 2, 1919, 21, նաև թիւ 3, 1919, 36, 37:

45 Վահան Զեյթունցեան, «Թէ ի՞նչպէս կը դատենք թուրք ժողովուրդը», *Հայ Աշխարհ*, Ա տարի, 18/31 Յնվր., թիւ 2, 1919, 21:

46 Նույն տեղում:

վերջին մի քանի տարվա ընթացքում Թուրքիայի մեջ տեղի ունեցած քաղաքական դեպքերը:

Թուրքիայում բարեկարգությունն սկսում է Թանզինաթից, ընդգրկում Միդհատ փաշայի սահմանադրությունը և հանգում 1908 թ. Իթթիհատի հռչակած Օսմանյան սահմանադրությանը, որի էությունն ու վախճանը ծանոթ են արդեն բոլորիս. «Թանզինաթով կը ջնջուէր Ենիչերիներու դրութիւնը, Թուրքիոյ մէջ կը հաստատուէր տարրերու հաւասարութիւնը: Միդհատ փաշայի սահմանադրութիւնով կը տապալէր միապետութիւնը եւ անոր կը յաջորդէր ժողովրդային իշխանութիւնը»⁴⁷:

Միևնույն դերն էր գալիս խաղալու նաև իթթիհաթական սահմանադրությունը:

Թուրքիայի կյանքի մեջ բարեկարգության այս երեք դարագլուխներն էլ, ինչպես գնահատում է հոդվածագիրը, անհաջող փորձեր էին՝ թուրք պետական անձանց ձեռքի տակ երկիրը փրկելու անմիջական քայլայումից:

Այս բարեկարգությունները ժողովրդի ներքին ինքնաբերական պահանջի արդյունք չէին, այլ արտաքին ճնշումների անմիջական հետևանք, ինչն էլ ունեցել է միմիայն ժամանակավոր ազդեցություն: Հոդվածագիրը պատմական մանրամասնությունների մեջ չի մտնում, միայն հիշատակում է, որ Թուրքիայի բարեկարգությունները եղել են մշտապես եվրոպական պետությունների ճնշումների ներքո, որից փորձում էին ամեն ձևով խուսափել բազմաթիվ թուրք պետական անձինք:

Զեյթունցյանը շարունակում է, որ բարեկարգության այդ ձգտումները մնացին անհետևանք այն պարզ պատճառով, որ Թուրքիան չէր ներկայացնում անհրաժեշտ պայմանները՝ դրանք տևական և արդյունավետ դարձնելու ուղղությամբ: Թուրքիայում՝ «Արևելքի տիպար այս անշարժ երկրի մեջ», իրերի փոփոխություններն այդ ժամանակահատվածում կատարվում էին այն աստիճան դանդաղ, որ ոչ միայն տարիների, այլև տույնիսկ դարերի ընթացքում հազիվ նշարելի լինի մի որևէ ներքին իրական փոփոխություն ժողովրդային խավերի մեջ. «Թանզինաթի ժամանակից այս երկրի մեջ տիրող դասակարգը եղել է էշրաֆը⁴⁸, միացած պաշտոնեության (բյուրոքրասի), այս երկու տարրի մեջ էլ չի կարելի փնտրել դեմոկրատական հակումներ և ուստի ասոնք չէին որ պիտի գային օժտել այս երկիրը իրական սահմանադրական օրենքներով: Այս իսկ պատճառով անհաջող են անցնում Միդհատ փաշայի ջանքերը»⁴⁹:

Հոդվածաշարով մատնանշվում է, որ հետագեմ տարրերն առաջին օրից Թուրքիայում բնակվող քրիստոնյա ժողովուրդներին դիտարկել են որպես հակառակորդ, որոնք իրենց իրենց պատմական ուղիով ներկայացնում էին նյութական և բարոյական տարբեր մակարդակ. վերջապես Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդները ցանկանում են տեսնել այս երկիրը քաղաքակրթված: Հիշտ այս ցանկությունն էր, որ իրենց դեմ հանեց տիրող դասակարգին իր հակոտնյա շահերով, որն էլ հակառակորդին պատասխանեց «սրով և յաթաղանով»:

Սակայն, Զեյթունցյանն ուղղորդում է ընթերցողին, որ սխալ կլինի կարծել, թե

47 Նույն տեղում, 22:

48 Օսմաներենից թարգմանաբար՝ eşraf- 1. հարուստները, տեղանքի նշանավորները, 2. հարգված մարդիկ, ազնվականությունը, 3. երևելիները, 5. մեծարգո, ակնաավոր երեցները:

49 Նույն տեղում:

Թուրքիայում քրիստոնյա ժողովուրդների տառապանքն ու զարհուրելի ջարդերն արդյունքն են թուրք ժողովրդի կրոնական մոլեռանդության: Հաճախ հանդիպում են տվյալներ, որ այդ նույն ժողովուրդը որպես բարեկամ ապրել է քրիստոնյա դրացիների հետ, երբ միտումնավոր գրգռողներ չեն եղել. «Թուրքիոյ քրիստոնեայ ժողովուրդները նահատակներ են, ոչ թե յանուն քրիստոնեութեան այլ յանուն քաղաքակրթութեան»⁵⁰: Ապա լրացնում է, որ Իթթիհաթը կուսակցություն լինելուց առավել դժգոհների խումբ էր կազմում, որ ապաստանել էր Եվրոպայում: Երկրի մեջ՝ ո՛չ մի գործունեություն, ո՛չ մի համակերպություն: Հեղինակը շեշտադրում է, որ «նոյն իսկ բռնապետության վերջին շրջանին հոս ու հոն ցանուած դժգոհութեան վատառողջ սերմը այդ աւագուտ, անարգասաբեր հողին մէջ կուտային բոլորովին հակոտնեայ արդիւնք»: Էրզրումում 1907-ին երևան եկած փոքրիկ ըմբոստության փորձը՝ իշխող կառավարության դեմ, վերջիվերջո հանգեցրեց հակաքրիստոնեական շարժման, որին զոհ գնաց Գրիգոր Օհանյան անունով հայ վաճառականը»⁵¹:

Ապա հողվածագիրը շարունակում է՝ առաջ բերելով այն կարծիքը, որ դեռևս այդ օրերին թուրքական օրաթերթում մի հողվածագիր Իթթիհաթի պատմությանն անդրադառնալիս հայտնել է այն գաղափարը, թե քսանհինգ տարի առաջ Թուրքիայում ամեն խելահաս մարդ իթթիհաթական էր: Սակայն Չեյթունցյանը նշում է, որ այդ տեսակետը հիմնովին սխալ է, քանի որ Իթթիհաթն իր կազմությունից մինչև սահմանադրության հռչակումը երբեք ժողովրդային հոսանքի արտահայտություն չի եղել, ինչպես նաև չի վայելել համաժողովրդական համակրանք. «Շախտրդ բռնապետական շրջանի տիրող ռեժիմի դեմ ցույց անելու համար «Անատոլիայի»⁵² զանազան մասերու մէջ»՝ պատերի վրա թռուցիկներ փակցնելու անհրաժեշտությունը և այդ գործը գլուխ բերելու համար Իթթիհաթը Հնչակյան կուսակցության աջակցությունն էր խնդրել՝ առարկելով, որ ինք այդ վայրերում պահանջված կազմակերպություններից չէ: Պարբերաթերթում պաշտպանվում էր այն դիրքորոշումը, որ Իթթիհաթը բառի բոլոր իմաստներով կուսակցություն չէր սահմանադրությունից առաջ, քանի որ թիկունքում չունեին կազմակերպություն, չունեին ժողովրդային մասսա, այլ մի քանի դժգոհների խումբ էր, որից շատերը վերադառնում էին Պոլիս, երբ ամեն անգամ բռնապետը «կը հաճէր իրենց հրամցնել պատառ մը անուշ խորոտիկ իր համադամ սեղանէն»⁵³:

Հողվածագիրը նշում է, որ այս երևույթներն իրենք արձանագրեցին՝ պարզապես ցույց տալու, որ թուրք ժողովուրդը ներքին իրական որևէ փոփոխություն չէր կրել այս վերջին մեկ դարի շրջանում, և որ Իթթիհաթի հռչակած սահմանադրությունը երբեք իր հիմքում չունեին ժողովրդային պահանջը:

«Բնչ տեղի ունեցավ սահմանադրությունից հետո». այս հարցադրման դիրքերից պարբերաթերթն առաջ է քաշում հետևյալը. «Իթթիհատի շէֆերը սկսան գործի, բնական էր որ նախ մտածէր կուսակցութիւնը ժողովրդականացնելու պէտքին

50 Նույն տեղում, 23:

51 Նույն տեղում:

52 Անվանաձևը պահպանվել է միայն այն պատճառով, որ ուղիղ մեջբերում է:

53 Վահան Չեյթունցեան, «Թէ ի՞նչպէս կը դատենք թուրք ժողովուրդը», *Հայ Աշխարհ*, Ա տարի, 9 Փետրուար, թիւ 3, 1919, 36:

վրայ, և Իթթիհատը սկսաւ իր կազմակերպութեան գաւառներու մէջ»⁵⁴: Այդ օրերին, թէն սկզբնական շրջանում էր, որ ամեն անհատ իթթիհաթական էր, ամեն թուրք՝ սահմանադրական, ուստի շուտով էլ կազմվում են իթթիհաթական «գլխայներ»՝ ակումբներ, նշվում է նաև, որ առաջին իթթիհաթական կազմակերպությունների մէջ մեծամասնություն են կազմում նաև քրիստոնյաները, նրանք, ովքեր իրենց տեղանքում ճանաչված էին պարկեշտ և սահմանադրասեր, ընտրվել էին առաջին հիմքը դնելու իթթիհաթական կազմակերպությանը, նրանց էր միացել նաև մի քանի թուրք, այդուհանդերձ, հետագայում, սակայն, երևոյթը փոխվում է: Մասնավոր պատվիրակները պտտվում են գավառով, չեղյալ նկատում նախորդ կազմակերպությունները և երևան հանում ուրիշ կազմակերպություններ՝ բոլորովին տարբեր ոգով: Այս վերջին կազմակերպությունների մէջ են մտնում տեղի ավագանին, հարստահարիչները, կողոպտիչները, բեյերը և աղաները:

Այժմ ահա, եթե Իթթիհաթն իբրև ներկայացուցիչ նոր ու կենսունակ տարրի պատմության հրապարակ իջած լիներ, բնական է, որ պետք է փնտրեր և միանար այն տեսակ տարրերին, որոնք իր բնական դաշնակիցները կարող էին լինել. այդ տարրերը քրիստոնեաներն էին, բայց իթթիհաթը նկատի չունեցավ այդ կետը, քանի որ նա հասարակական նոր պաշտոնով հրապարակ չէր գա, այլ պարզապէս կգար կատարելու քաղաքական դեր⁵⁵:

Եվ վերջապէս, իթթիհաթականները, ինչպէս նպատակային դիրքորոշմամբ շեշտադրում է պարբերականը, իրենց քվեարկած օրենքներով և պարտադրած տուրքերի դրույամբ էլ եկան ապացուցելու, որ երկրի վաճառական դրամատեր տարրի պաշտպանը չեն, այլ ներկայացուցիչն են ավատապետերի, որոնց շահերի հսկողությունը ստանձնելու համար ստիպված էին, ինչպէս իրենց նախորդները, հանդես գալ իրենցից առաջ եղած ուրիշ դիմակների ներքո: «Թուրքիան իր ներքին կեանքով հոն էր ուր որ էր Թանզիմաթի կամ Միդհատ փաշայի սահմանադրութեան ժամանակ», – նշվում է պարբերաբերում: Ուրիշ՝ արտաքին պատճառներով, փոխվել էր պետության արտաքին երևոյթը, բայց ներքին դասակարգային փոխհարաբերությունը պահում էր իր հին գոյությունը: Եվ այս պայմանների ներքո, ինչպէս ընդգծվում է շաբաթաթերթում, իթթիհաթականները չճանաչողեցին իսկական սահմանադրական կյանք:

Այսպիսով, ըստ պարբերաթերթի՝ Իթթիհաթի գործունեությունը ոչ թե անհատական ցանկությունների արդյունքն է, այլ դասակարգային շահերի: Պատասխանատուն ոչ թե անհատն է, այլ դասակարգը⁵⁶:

Իթթիհատականների ազգայնականությունը

Թուրք ազգայնական շարժումն օսմանյան սահմանադրության հայտարարումից հետո երևան է գալիս, և իր գործելակերպով ու ուղղությամբ տարբերվում թե՛ հին և թե՛ նոր երիտասարդ թուրքերի ծրագրից:

54 Նույն տեղում:

55 Նույն տեղում:

56 Նույն տեղում, 37:

Երիտասարդ թուրք շարժումը մինչև Աբդուլ Համիդի անկումն ազդված էր ֆրանսիական հեղափոխության ազատական գաղափարներից: Ֆրանսիական մշակույթն էր, որ ազդում էր թուրքական մտավորական կյանքի վրա: Ֆրանսիական գրականությունը տարածված էր կրթված շրջանակներում, իսկ ֆրանսերենը՝ կատարելապես բարձրագույն վարժարաններում: Թուրք ազատական վտարանդիները ապաստանում էին Փարիզում և այնտեղ հիմնում իրենց հեղափոխական թերթերը: Իսկ երիտասարդ թուրքերի գործելակերպը պարզ ընդօրինակություն էր հույն, սերբ և բուլղար չեթեական⁵⁷ գործունեության, ինչպես պարբերականը բնորոշում է իթթիհաթականներին:

Այս ուղղությամբ հողվածաշարում ասվում է, որ Սալոնիկի երիտասարդ թուրքերը և թուրք սպաները, կովեղով մակեդոնացի հեղափոխականների դեմ, շատ բան սովորեցին, շատ բան ընդօրինակեցին նրանցից: Մինչև անգամ երբ Միություն և առաջադիմություն կուսակցությունը գաղտնի կազմակերպություն էր, դրանից հետո նրա ներքին կանոնագիրն ընդօրինակված էր Մակեդոնական հեղափոխական կազմակերպությունից⁵⁸: Ապա շեշտադրվում է, որ եթե երիտասարդ թուրք շարժումն իր սկզբնական շրջանում տոգորված էր ֆրանսիական գաղափարներով և առաջնորդվում էր մակեդոնական գործելակերպով, շատ մոտ անցյալի ազգայնական շարժումը, ինչպես գրում է պարբերաթերթը, «գերման դավին ստեղծագործումն էր, և իր մեթոդը այնքան քանդիչ, այնքան ավերիչ, այնքան արյունաթաթախ, որքան գերմանականն էր»⁵⁹: Հողվածաշարում նշվում է, որ մի անգլիացի հրապարակագիր ասում էր, թե նախապես երիտասարդ թուրքերն ազգայնականներ չէին, քանի որ Միություն և առաջադիմություն կոմիտեն հիմնված էր ֆրանսիական հեղափոխության սկզբունքների վրա՝ կայսրության բնակչությունը ազատելու և հաշտեցնելու հավատով, ահա «1909ի համագումարին ամենքը ժխտեցին ազգայնականները՝ անոնց երեսին պողալով. «Մեր նպատակը կազմակերպությունն է, ուրիշ ոչինչ»⁶⁰: Բայց երիտասարդ թուրքերի գաղափարները հետզհետե նեղացան: Ազատականությունը տեղի տվեց համախալամությանը, համախալամությունը՝ համաթուրանությանը, և Օսմանյան պետության գաղափարը փոխվեց, հավասարությունը և եղբայրությունը եղավ բոլոր ոչ թուրք ազգությունների բռնի թրքացումը⁶¹:

Համաթուրանական շարժումը սահմանադրության հաստատումից հետո երևան եկավ մայրաքաղաքում և համաշխարհային պատերազմի սկսվելուց հետո լայն ծավալ ստացավ թուրք-թաթարական ցեղերի մեջ: Ինչպես որ Գերմանիան համագերմանականությամբ ուզում էր ստեղծել Միջին Եվրոպա, այնպես էլ Գերմանիայի դաշնակից Թուրքիան համաթրքականությամբ ուզում էր ստեղծել Միջին Ասիա:

57 *Չեթե - սերբո-հորվաթերեն «չեթնիկ»՝ աշխարհագրային բառի թուրքերեն աղավաղված ձևն է:*

58 Յովի. Յակոբեան, «Թուրք ազգայնական շարժումը», *Հայ Աշխարհ*, Ա տարի, 23 Փետրուար, թիվ 5, 1919, 68-70:

59 Նույն տեղում, 68:

60 Նույն տեղում:

61 Նույն տեղում, 68:

Ինչպես ամփոփվում է հոդվածաշարում, թուրքական ազգայնականությունը հիմնված էր ոչ թե «քաղաքական վարդապետության», այլ «ցեղագրական գիտության» վրա, որ առաջին անգամ երևան եկավ Հունգարիայում անցյալ դարերում: 1877-1878 թթ. պատերազմից հետո Ռուսաստանի թաթարական ցեղերի մեջ ռուսացման քաղաքականության դեմ շարժում է սկսում՝ «գործակցությունն ստեղծելու բոլոր թուրանական կամ թուրքական ցեղերու միջև»⁶²:

Փաստենք, սակայն, որ պարբերաթերթում հաճախ էր նշվում այն մոտեցումը, որ կայսրության գոյությունը կախված էր երիտասարդ թուրք կուսակցության ուժից և թշնամական գաղափարների զարգացումից. «բոլոր թուրքական ուրիշ հպատակների օսմանցիացման երիտասարդ թուրքերի դավադիր այս ծրագիրն իրականացնելու համար, թուրքն իր ազգային իդեալին հասնելու համար վայրենի ավազակի նման արյունկգակ ավազակների անխուսափելի բաժին կդարձնի հպատակ ժողովուրդներին, քանի որ թուրքերը ավազակի հոգեբանություն ունեն»⁶³:

Այսպիսով, այս պարբերականի 1919 թ. բոլոր համարները յուրօրինակ անդրադարձ են այդ օրերի թուրքական քաղաքական-ազգայնական ուղեգծի՝ քննված ուղղությունների ներկայացմամբ և լուսաբանմամբ: Շաբաթաթերթի՝ բոլոր ուղղություններով ընդգծվող ամփոփիչ դիրքորոշումն առանձնանում է այն առանցքային մտքով, որ Թուրքիայի բոլոր ազգերը մշտապես կանգնած են լինելու թուրք ազգայնական ոճրագործների կողմից բնաջնջման վտանգի առաջ, քանի որ, պարբերաթերթում հաճախ կիրառվող ձևակերպմամբ՝ թուրքերի հայրենիքը ոչ Թուրքիան է, ոչ էլ Թուրքիստանը, այլ Թուրանիայի «լայն հավիտենական» երկիրը, իսկ այդ երկիրը ստեղծելու համար պետք էր ոչնչացնել այն ազգերին, որոնք այդ «լայն» ճանապարհի վրա են գտնվում. համաթուրք այդ ազգասպան քաղաքականությունը երիտթուրքերի նպատակային ուղեգիծն էր:

ITTIHADISTS ON THE PAGES OF THE “HAY ASHKHARH” [THE ARMENIAN WORLD] PERIODICAL IN CONSTANTINOPLE (1919)

Elina Z. Mirzoyan

Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

SUMMARY

This article aims at studying the publications about Ittihadists on the pages of the periodical *Hay Ashkharh* [The Armenian World] for the year of 1919. The Armenian and foreign scholarly circles have not studied this periodical. The article examines the assessments and analyzes of the publication, which present the typical aspects of the Ittihad party and its ideology.

62 Նույն տեղում:

63 Յովհ. Յակոբեան, «Թուրք ազգայնական շարժումը», *Հայ Աշխարհ*, Ա տարի, 1 Մարտ, թիւ 6, 1919, 83-87:

The following main directions, Ittihadists and Armenians, how the Ittihadists and their nationalism were perceived, are discussed in the article. Within the framework of these directions, the publication gives an assessment of Ittihadists' activities of the time.

Key words: Armenian Press in Constantinople, periodicals, Ittihadists and Armenians, Ittihadizm, Vahan Zeytunts'yan, Vahan Shahriman.

ИТТИХАДИСТЫ НА СТРАНИЦАХ ПЕРИОДИЧЕСКОГО ИЗДАНИЯ “АЙ АШХАР” [АРМЯНСКИЙ МИР] В КОНСТАНТИНОПОЛЕ (1919)

Элина З. Мирзоян

Фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

РЕЗЮМЕ

Предмет исследования данной статьи – публикации об иттихадистах на страницах периодического издания “*Այ ափսար*,” т.е. “Армянский мир,” выходящего в свет в Константинополе в 1919 году. Данное издание практически не изучено ни в армянских, ни в иностранных научных кругах. В статье рассматриваются публикуемые в периодическом издании оценки и анализы, освещающие типичные аспекты партии иттихадистов и её идеологии.

Тема представлена в нескольких основных направлениях: иттихадисты и армяне, как рассматривались иттихадисты и их национализм. Издание в рамках этих задач в целом дает оценку данного времени о деятельности иттихадистов.

Ключевые слова: армянская печать в Константинополе, периодические издания, иттихадисты и армяне, иттихадизм, Ваан Зейтунцян, Ваан Шагриман.

REFERENCES

Atom. *Ազգային սահմանադրությունը. գիծեր մեր մշակույթի պատմութենէն* [The Armenian National Constitution; Lines From the History of Our Culture]. Constantinople: Artsvi Joghovrdakan Gravacharanots'i, 1914;

Avagyan, Arsen, Melqonyan, Ruben. *Ստամբուլի հայ համայնքի արդի վիճակը* [Current Condition of the Armenian Community in Istanbul]. Yerevan: Lusakn, 2009;

Avetisyan, Yuri. «*Անահիտ*» *հանդեսը* [The Journal “Anahit”]. Yerevan: YSU, 1999;

Babloyan, Manvel (compilier). *Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980)* [The Armenian Periodical Press. A General Bibliographical Catalogue, 1794-1980]. Yerevan: Acad. of Sc. of Armenian SSR, 1980;

Chormisyan, Levon. *Համապատկեր արևմտահայոց մէկ դարու պատմութեան: Ա հատոր: 1850-1878* [Panorama of a Centenary History of Western Armenians, Vol. I; 1850-1878]. Beirut: Imprimerie G. Doniguan & Fils, 1972;

Ghukasyan, Viktorya, *Պոլսահայ մամուլի և հրապարակախոսության սկզբնավորումը (1832-1853)* [Establishment of the Armenian Press and Publicism in Constantinople: (1832-1853)]. Yerevan: Academy of Sciences of Armenian SSR, 1975;

Goloborod'ko, I. Ivan (Iuzhanin). *Старая и Новая Турция* [Old and New Turkey]. Moscow: Pol'za V. Antik i K°, 1908;

Kharatyan, Albert. «Արևմտահայերի ազգային «Սահմանադրությունը» (1860-1863)» [The National “Constitution” of the Western Armenians (1860-1863)], *Patma-banasirakan handes* no 2-3 (1992): 51-66;

Kharatyan, Albert. «Դարձյալ արևմտահայերի ազգային սահմանադրության մասին» [Once Again on National “Constitution” of the Western Armenians], *Patma-banasirakan handes* no 2 (2008): 81-93;

Kharatyan, Albert. *Արևմտահայ մամուլն իր պատմության ավարտին (1900-1922 թթ.)* [The Western-Armenian Press at the End of its History (1900-1922)]. Yerevan: NAS RA, Institute of History, 2015;

Kharatyan, Albert. *Վաստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դարեր)* [Armenian Colony of Constantinople in the XV-XVII centuries]. Yerevan: YSU, 2007;

Kirakosyan, Amalya (complier). *Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967)* [Bibliography of The Armenian Periodical Press: 1794-1967]. Yerevan, 1970;

Leo, *Հայկական Տպագրութիւն, Ա Մաս* [Armenian Printing, Part 1]. Tiflis: Tp. Vrats' Hrat. Ėnk.), 1901;

Levonyan, Garegin (comlier). *Հայոց պարբերական մամուլը* [The Armenian Periodical Press]. Yerevan: Hratarakutyun Melqonyan Fondi, 1934;

Oshagan, Hagop. *Համապատկեր արևմտահայ գրականության, հ. 5* [Panorama of Western Armenian Literature, Vol. 5]. Jerusalem: Srbots' Yakobeants', 1952;

Salamon, Lyudvig. *Всеобщая история прессы* (Перевод с немецкого Э. Б.), в кн.: *История печати. Том 1 («Серия Классика журналистики»)* [General History of the Press (translated from German by E.B.), in A History of the Press; Vol. 1 (“Classic Journalism Collection”)]. Moscow: Aspekt Press, 2001;

Sirvard. Ընկեր Վահան Զեյթունցեան [Comrade Vahan Zeytunts'ean]. *Eritasard Hayastan* [Young Armenia] An Armenian Semi-Weekly, New York, Friday, January 15, 1960, № 69;

Zheltyakov, D. Anatoli. *Печать в общественно-политической и культурной жизни Турции (1729-1908 гг.)* [The Press in Turkish Social, Political and Cultural Life (1729-1908)]. Moskva: Nauka, 1972;

Ազգային սահմանադրութիւն հայոց [Armenian National Constitution]. Lebanon: Katozhikosutean Hayots' Mets'i Tann Kilikioy, 1968;

Այոս [Agos], (Constantinople), February 4, № 462, 2005;

Բիւզանդիոն [Puzantion], (Constantinople), 13-26, № 3.789, 1909;

Ընդարձակ օրացույց և Փրկչյան հիվանդանոցի հայոց [Extensive Calendar of Surb Prkich Armenian Hospital]. Constantinople, 1910;

Ժամանակ [Jamanak] (Constantinople), October 15, 1994;

Հայ Աշխարհ [Hay Ashkharh] (Constantinople), January 14/27, № 1, 1919; January 18/31, № 2, 1919; February 9, № 3, 1919; February 23, № 5, 1919; March 1, № 6, 1919;

Հայրենիք [Hayrenik daily] (Boston), № 11, 1924;

Մարմարա [Marmara] (Constantinople), November 21, 1988; October 15, 1994;

Մեղու [Meghu] (Constantinople), № 8, 1857; 1876;

Նոր կեանք [Nor Kyanq] (London), № 11, 1898.

Հեղինակի մասին

About the Author

Об авторе

Էլինա Զ. Միրզոյան, բան. գիտ. թեկն., արևելագետ (թյուրքագետ), սփյուռքագետ, բանասեր (հայոց լեզու և գրականություն), ՀՅԺԻ Հուշագրությունների, վավերագրերի և մամուլի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող, ԵՊՀ դասախոս:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ թուրքահայ, թուրքական մամուլում Հայոց ցեղասպանության թեմայի ուսումնասիրություն, ազգային ինքնություն, հայկական թեմատիկան թուրքական տպագիր մամուլում:

Էլ. փոստի հասցեն՝ elina-mirzoyan@mail.ru

Elina Z. Mirzoyan, PhD in Philology, orientalist, philologist, specialist of Armenian diaspora studies, a researcher at the Department of the Armenian Genocide Memoirs, Documents and Press, Armenian Genocide Museum-Institute Foundation, Lecturer at Yerevan State University.

Research fields – the Armenian Genocide in the Turkish and Armenian-Turkish press, national identity.

E-mail: elina-mirzoyan@mail.ru

Элина З. Мирзоян, канд. фил. наук, востоковед, филолог, диаспоровед, научный сотрудник Отдела изучения воспоминаний, свидетельств и прессы Фонда “Музей-институт Геноцида армян,” преподаватель Ереванского Государственного Университета. Область исследований – вопрос Геноцида армян на страницах турецкой и армяно-турецкой прессы, национальная идентичность, армянская тематика на страницах турецкой прессы.

Эл. почта: elina-mirzoyan@mail.ru

**ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅ ՈՐԲԱՆԱՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՆ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ**

Նարինե Վ. Մարգարյան

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Հայոց ցեղասպանության տարիներին որբաշխարհի խնդիրներն առաջնային և հրատապ լուծման հարցերից էին: Բազմաբնույթ էին որբերին սպառնացող վտանգները, ու ժամանակն ի վնաս նրանց փրկության գործի էր աշխատում: Այս ընթացքում ակտիվանում են բազմաթիվ միջազգային և հայկական կազմակերպություններ: Դրանց թվում էր նաև Հայ որբախնամ ընկերությունը: Հոդվածի՝ նպատակն է ներկայացնել Եգիպտոսում 1905 թ. ստեղծված ու 1916 թ. օգոստոսին վերակազմավորված Հայ որբախնամ ընկերության գործունեությունն ու հիմնական նպատակը՝ ջարդերից ու սովի արհավիրքներից փրկված հայ որբերին անհրաժեշտ օգնության տրամադրման տարբեր դրսևորումները, մասնավորապես՝ Կիլիկիայի տարածքում: Ներկայացվում են Որբախնամի Կանոնադրության հիմնական հոդվածները, անդրադարձ է արվում նաև շարժման տարածմանը, նրա երկու մարմինների՝ Ընդհանուր և Վարչական ժողովների, Կահիրեի ու Ալեքսանդրիայի վարչությունների, ինչպես նաև նոր մասնաճյուղերի ու օժանդակ կառույցների գործունեությանը, որի հասույթն ապահովում էր, ի թիվս այլ որբանոցների, նաև Ադանայի և Այնթափի որբանոցների կենսագործունեությունը: Անդրադարձ է կատարվում Որբախնամի կազմակերպած տարատեսակ հանգանակություններին, ինչպես նաև միջազգային ու հայկական բարեգործական տարբեր կազմակերպությունների հետ նրա համագործակցությանը: Հոդվածի համար աղբյուրագիտական հիմք են ծառայել Ընկերության կանոնադրությունները, տեղեկագրերը, «Որբունի» պարբերաթերթը, ինչպես նաև ժամանակի մամուլի հրապարակումները, որոնցում իր արձագանքն է գտել Կիլիկիայում Որբախնամի ծավալած գործունեությունը:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Եգիպտոսի հայ որբախնամ ընկերություն, որբահավաք, որբեր, փրկություն, Կիլիկիո պատվիրակություն, հանգանակություն, Ադանայի որբանոց, Այնթափի որբանոց, Որբունի, որբերի անվանացանկեր:

Հոդվածը ներկայացվել է 13.03.2021: Ընդունվել է տպագրության 15.04.2021:

The article was submitted on 13.03.2021 and accepted for publication on 15.04.2021.

Статья поступила 13.03.2021 и была принята к публикации 15.04.2021.

Ինչպես հղել՝ Նարինե Վ. Մարգարյան, «Եգիպտոսի հայ որբախնամ կազմակերպության գործունեությունը Կիլիկիայում Հայոց ցեղասպանության տարիներին», *Ցեղասպանագիտական հանդես* 9, no. 1 (2021), 58-82:

1 Հոդվածը զեկույցի տեսքով ամփոփ ներկայացվել է «Կիլիկիան և կիլիկիահայությունը Հայոց ցեղասպանության տարիներին» միջազգային գիտաժողովի ժամանակ՝ նվիրված 1920-1921 թթ. Կիլիկիայի ինքնապաշտպանական մարտերի հարյուրամյա տարելիցին (2020 թ. հոկտեմբերի 30-31, Երևան, ՀՅԺԻ հիմնադրամ):

How to cite: Narine V. Margaryan, “The Activities of the Armenian Orphan Care Society of Egypt in Cilicia during the Armenian Genocide,” *Tseghaspanagitakan handes* 9, no. 1 (2021): 58-82.

Как сослаться: Нарине В. Маргарян, “Деятельность Армянского общества попечения сирот Египта в Киликии во время Геноцида армян,” *Тсехаспанагитакан андес* 9, no. 1 (2021): 58-82.

Որբախնամի վարչական ու կազմակերպչական աշխատանքները

Եգիպտոսը դարձավ հայկական կազմակերպությունների հիմնակետը, որն առաջինն արձագանքեց Հայոց ցեղասպանության հետևանքով սիրիական անապատներում ապաստանած հայ գաղթականներին, որբերին ու այրիներին օգնելու ձեռնարկներին:

Նշենք, որ Եգիպտոսը, մասնավորապես Կահիրեն, տնտեսական զարգացման շրջան էր ապրում: Այնտեղ էին ապաստանել համիդյան վարչակարգի վտարանդիներ, ընդդիմադիր երիտթուրքեր, բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ, հայ հեղափոխականներ, գրողներ ու լրագրողներ, որոնց հանդեպ սուլթան Աբդուլ Համիդը հակակրակ էր տածում: Եգիպտոսն ազատության օազիս էր, բնական արքայապետ, որ այս մարդիկ վստահ էին, որ բարյացակամ ընդունելություն պիտի գտնեն²:

Բրիտանական հովանու տակ գտնվող և Օսմանյան կայսրության սահմանակից այս երկիրն այն ռազմաճակատն էր, որ հակադրվում էին դաշնակից ուժերը և Սիրիայում ու Պաղեստինում տեղակայված գերմանաօսմանական զորքերը: Եգիպտոսում էր Բրիտանական սպայակույտը պատրաստում և վերահսկում տարածաշրջանի ռազմական գործողությունները, այստեղից էին սկիզբ առնում Օսմանյան կայսրության արաբական նահանգների բաժանման ծրագրերը:

Մերձավոր Արևելքի խնդիրների մեջ Եգիպտոսի առանցքային դերն ավելի է ընդգծվում Առաջին աշխարհամարտի վերջին տարում, հատկապես Օսմանյան պարտության շրջանում, երբ դաշնակիցների զորքերը շարժվում էին երկրի խորքերը, իսկ գրավված շրջաններն ուղղակիորեն կառավարում էր բրիտանական Բարձր հրամանատարությունը, որի կենտրոնն էր Կահիրեն:

Կահիրեի և Ալեքսանդրիայի հայ համայնքները հայրենակիցների համար օգնության արշավներ էին կազմակերպում: Եգիպտոսի համայնքի դերն ավելի է կարևորվում, երբ երիտթուրքական կառավարությունը պաշտոնապես լուծարում է Կ.Պոլսի հայկական պատրիարքարանը: Ստեղծվում է իրավիճակ, երբ հարկավոր էր նախաձեռնող մի ուժ, որը կկարողանար իր ձեռքն առնել հայ տարագիրների օգնության կազմակերպումը և կկենտրոնացներ դրսից եկող օգնությունների արդյունավետ տեղաբաշխումը:

2 Յարութին Ռ. Գեորգեան, Վահե Թաշճեան, *Դար մը պատմություն Հայ Բարեգործական Ընդհանուր Միության, 1906-1940*, հատոր առաջին (Գահիրե-Փարզ-Նի Եորք, ՀԲԸՄ Կենրոնական վարչություն, 2006), 17:

Դեռևս 1905 թ. Կահիրեում ստեղծված Միացյալ որբախնամ ընկերության³ կանոնագրի առաջին հոդվածում կազմակերպությունը սահմանել էր իր նպատակը՝ «Հասույթի կետով Հայաստանի և Կիլիկիոյ անտերունչ և չքաւոր որբերը խնամել, և կէտովն ալ՝ կարօտ գաւառներու մէջ ուսում տալով»⁴:

1916 թ. մայիսին Վասպուրականի Որբախնամ ընկերության ատենապետ, հետագայում՝ Միացյալ որբախնամ ընկերության Գործադիր ժողովի ատենապետ Գարեգին Իսազուլյանը մի քանի անձանց հրավիրում և առաջարկում է վերակազմել, վերականգնել Կահիրեի միացեալ որբախնամը, որն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կազմալուծվել և անգործության էր մատնվել: Նախկին աշխատողներից շատերն արագ միանում են անհրաժեշտություն դարձած սուրբ գործի շուրջ և ասպարեզ են իջնում հետևյալ հայտարարությամբ. «Կահիրեի Միացեալ Որբախնամ վերակազմուած է, Հայաստանի անհամար որբերուն ի նպաստ վերստին գործելու և գոյացած գումարները անյապաղ պարբերաբար դրկելու նպատակով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին»⁵:

1916 թ. Ալեքսանդրիայում վերակազմավորված Որբախնամը կանոնագրության առաջին հոդվածով իր գլխավոր նպատակն է սահմանում՝ «Ջարդին ու սովին արհաւիրքներէն ճողոպրած հայ որբերուն անմիջական նպաստ հասցնել, ըլլայ Հայաստանի, ըլլայ Կիլիկիոյ մէջ»⁶: Այսպիսով, Կիլիկիան նույնպես հայտնվում է Որբախնամի ուշադրության կետրոնում, որտեղ 1919 թ. կազմակերպությունը ուղարկում է իր պատվիրակներին՝ տեղում որբերի վիճակն ուսումնասիրելու, որբահավաք աշխատանքներ կազմակերպելու և որբանոցներ հիմնելու համար:

Կանոնագրի երկրորդ հոդվածով նշվում է, որ Ալեքսանդրիայի Հայ որբախնամը կարող է համագործակցություն մշակել Կահիրեի միացյալ որբախնամ ընկերության հետ, որը կիրականացվի պարբերական թղթակցության և խորհուրդների փոխանակության, նաև՝ տարին գոնե մեկ անգամ պատվիրակային ժողով գումարելու միջոցով: Քույր հաստատությունները կարող են գործակցել, երբ առիթ լինի հանուն եգիպտահայ գաղութի միասնաբար Հայկական որբանոց հիմնելու հայրենի հողի վրա⁷:

Ալեքսանդրիայի և Կահիրեի քույր կազմակերպությունները պարբերական թղթակցությամբ կապ էին պահպանում միմյանց հետ, տարին նվազագույնը մեկ անգամ

3 Միացեալ Որբախնամը ստեղծվել էր մի քանի բարեսիրական ընկերությունների միավորումով, որոնց թվում էին արդեն լուծարված Վասպուրականի Որբախնամ, Ակնի Որբախնամ, Արաբկիրցիների Որբասիրաց ընկերությունները: Տե՛ս Սուրէն Պալարամեան, *Հայկական համայնքային կառույցները Եգիպտոսի մէջ* (Կահիրե, Նուպար տպ., 2017), 82:

4 *Կանոնագիր Միացեալ որբախնամ ընկերութեանց Հայոց ի Գահիրէ* (Կահիրե, Օսնիկ Հալեպեան տպ., 1906), 1:

5 Համբարձում Երամեան, «Որբ», *Որբունի. Տեղեկատու հայ Որբախնամ ընկերութեան (Ալեքսանդրիա)*, 1919, թիվ 1, 6:

6 Կանոնագիր Հայ որբախնամ ընկերութեան (*Ալեքսանդրիա*) (Կահիրե, Զ. Պէրպէրեան տպ., 1916), 2:

7 Նույն տեղում:

պատվիրակային ժողով անում: Կազմակերպության Ընդհանուր ու Վարչական ժողովներից յուրաքանչյուրն ուներ իր պարտականություններն ու գործառույթները: Ընկերության անդամներն անդամավճար էին վճարում: Հոդված 11-ով սահմանվում էին Որբախնամի հասույթի աղբյուրները՝ Ընկերության «բաժնեգին»-ները⁸, կամավոր կամ տոմսերով նվերներն ու կտակները, վիճակահանությունները, կինոյի, գրական և թատերական ներկայացումներից, գրական-գեղարվեստական երեկոյներից, դաշտահանդեսներից, գրքույկների հրատարակություններից ու վաճառքից ստացված հասույթը: Ընկերությունը բոլոր հասույթները գանձում էր տպված ու թվագրված ընկալագրերով (կտրոն), որոնք կրում էին Վարչական ժողովի ատենապետի և գանձապետի ստորագրություններն ու ընկերության կնիքը:

Վարչական ժողովն իր հավաքած նպաստը Ազգային առաջնորդարանի միջոցով պարբերաբար ուղարկում էր կաթողիկոսին՝ գումարը նպատակին ծառայեցնելու համար: Վարչական ժողովը պարտավոր էր տարին գոնե մեկ անգամ «Credit Foncier Egyptien» սակարանից արժեթուղթ գնել և Ազգային առաջնորդարանին ի պահ հանձնել: Արժեթղթերի հավանական գործածումը Ընդհանուր ժողովի որոշմանն էր վերապահվում:

Կանոնագիրը, որը թվագրված էր 1916 թ. օգոստոսի 18-ով, ստորագրել են հիմնադիր, Վարչական ժողովի անդամներ Հովհաննես Աբտարյանը, Կարապետ Անյանը, Պետրոս Մուղայանը, Թովմաս Թովուզյանը, Հովհաննես Կուստուզյանը:

1916 թ. սեպտեմբեր 6-ին՝ կանոնագիրը վավերացվելուց հետո, Եգիպտոսի հայոց առաջնորդ Թորգոմ Գուշակյանը կնքում է այն և մակագրում «...կ'յանձնենք եւ կ'յանձնարարենք օրհնութեամբ ի գործադրութիւն»⁹: 1917 հունվարի 2-ին Ամենայն Հայոց Վեհապետ Հայրապետ Գևորգ Ե Սուրենյանցը օրհնության կոնդակով նվիրագործում է Որբախնամի և Կարմիր խաչի գործունեությունները¹⁰ հետևյալ բովանդակությամբ. «Կոնդակ օրհնութեան Եգիպտոսի Առաջնորդի. Որբախնամ և Կարմիր-Խաչի ընկերութիւնների անունով՝ հայ փախստական որբերի ի մի ժողովելու և նոցա պահպանելու համար»¹¹:

Որբախնամի գործունեությունը բարձր է գնահատել նաև Կիլիկիո Սահակ կաթողիկոսը¹²: Կ.Պոլսի պատրիարք Զավեն արքեպիսկոպոսը Որբախնամի ատենապետին ուղղված իր նամակում շնորհակալություն է հայտնում Կեսարիայի որբերին Որբախնամին տրամադրած նպաստի համար և նշում. «...Մենք շարունակ կը հետեւինք Ձեր գործունեութեան, սրտի կատարեալ ուրախութեամբ կը տեսնենք գեղեցիկ արդիւնքները, ու կը մաղթենք Ձեզ և բոլոր յարգելի անդամակիցներուն կարողութիւն, որպէս զի յաջողին լիապէս իրենց առաջադրած բարեսիրական նպատակին մէջ, ինչ

8 «Բաժնեգին»-ը Ընդհանուր ժողովի անդամների վճարած ամիսն առնվազն 2 դահեկան գումարն էր:

9 Կանոնագիր Հայ որբախնամ ընկերութեան, 8:

10 Երամեան, «Որբ», Որբունի, 1919, թիվ 1, 6:

11 Արարատ (Ս. Էջմիածին), փետրվար-մարտ, թիվ Բ-Գ, 1917, 85:

12 Երամեան, «Որբ», Որբունի, 1919, թիվ 1, 7:

որ կարելու օժանդակություն մը պիտի ըլլայ ներկայ աղէտին մեծութեան հանդէպ»¹³:

Հայ որբախնամն իր գործունեությունը հողվածների, հաշվետվությունների միջոցով ներկայացնելու, հասարակությանն իրազեկելու, Ընկերության գործունեությունն ընդլայնելու նպատակով հիմնում է իր պաշտոնաթերթը՝ «Որբունի»¹⁴ տեղեկագիր-պարբերականը, որը կազմակերպության գործունեության կապակցությամբ գրում է. «Որբախնամը հրապարակ կ'ելլէ ու Որբախնամի զոյգ Վարչութիւնները այն հաւատքն ունին, թէ իրենց տոյն ձեռնարկը արժանի ընդունելութիւն մը պիտի գտնէ հայ որբասէր հասարակութեան բոլոր խաւերուն մէջ ալ անխտիր»¹⁵: Պարբերաթերթի համար ստեղծվում է խմբագրական առանձին մարմին, որը ղեկավարում էր Հրաչյա Փեհրիզյանը: Պարբերականը մանրամասն տեղեկություններ է տրամադրել Որբախնամի գործունեության մասին: Այստեղ են տպագրվել կազմակերպության նախաձեռնությունների, հաշվետվությունների, հանգանակությունների, վիճակահանությունների արդյունքների, որբահավաք գործունեության մասին տվյալներ: «Որբունի»-ն հատուկ ուշադրություն է դարձրել մասնաճյուղերի գործունեությանը. հաճախ ամբողջական ցուցակներ են տպագրվել մասնաճյուղերի անդամների անուն-ազգանուններով, նշվել են նվիրաբերած գումարների չափերը, նպաստների առաքումները: Կարևոր էին նաև որբանոցներում ապաստանած, ինչպես նաև անապատներից հավաքագրված որբերի անվանացանկերն ու նկարները, որոնք դյուրացնում էին որբերին փնտրելու ու նրանց հարազատներին գտնելու գործընթացները:

Սկսում են գործել տիկնանց, տղամարդկանց, կամավորների օժանդակ հանձնախմբերն ու դրանցից ածանցված մասնախմբերը: Ուշագրավ է Որբախնամի օժանդակ՝ կանանց հանձնախմբի գործունեությունը: Վերջինս հիմնականում զբաղվում էր որբերի հանդերձավորման և որդեգրման աշխատանքներով: Որբերին որդեգրության տալու նպատակով վերջինիս անդամները ժողովրդի շրջանում աշխատանքներ էին տանում, հավաքություններ կազմակերպում և այլն: Այս կապակցությամբ «Որբունի»-ում կարդում ենք. «Ուր կամք կայ՝ հոն միջոց ալ կայ»... որբերու օգնելու, այսինքն՝ որբերու օգնելով Հայրենիքին ծառայելու բազմաթիւ միջոցներ ու եղանակներ կան. լաւագոյն եղանակն է, անշուշտ, որդեգրումը, որ՝ ներկայ պարագաներու տակ՝ տարեկան շուրջ 24 ոսկիի ծախք կ'ենթադրէ որբ գլուխ: Պարտ է, և վայելուչ, որ կարողները ու կամեցողները, ըլլայ անհատ, ըլլայ հաստատութիւն, ընկերութիւն և այլն, մէկ կամ աւելի որբեր որդեգրեն, իրենց կարողութեան ներած չափով»¹⁶:

Նույնատիպ կոչ է տպագրվում նաև «Որբունի»-ի հայտարարության մեջ, որտեղ կազմակերպությունը պատրաստակամություն է հայտնում որբասեր անհատներին,

13 «Ամեն. Սրբազան Պատրիարքին ստացուած», *Որբունի*, 1919, թիվ 8, 117-118:

14 «Որբունի. Տեղեկատու հայ Որբախնամ ընկերութեան» պարբերականը սկսել է լույս տեսնել 1919 թվականից: Մինչև 1922 թ. հրատարակվել է Ալեքսանդրիայում Արամ Ստեփանյանի, ապա՝ Ա. Գասպարյանի տպարաններում, ունեցել է 12 պրակներ՝ ընդհանուր 301 տպագիր էջ:

15 «Յայտարարութիւն Որբունի», *Որբունի*, 1919, թիվ 1,1:

16 Յովհաննէս Թ. Գալսեան, «Դրական գործը», *Որբունի*, 1921, թիվ 12, 254:

համաքաղաքացի խմբերին կամ ընկերակցություններին անմիջապես ուղարկել որբի նկարը՝ տեղեկություններով հանդերձ, և նշում, որ գոհ կլինի, եթե գտնվեն խնամակալ անհատներ, որոնք ուզենան նամակագրական կապ հաստատել իր պաշտպանության տակ վերցված որբի հետ¹⁷:

Կանանց հանձնախմբի՝ որբերի հանդերձավորման աշխատանքներն ընդլայնվում են 1919 թ. Կիլիկիայի ներգաղթից հետո, և ստեղծվում է Հանդերձարանի օժանդակ կառույցը, որտեղ պատրաստում էին Որբախնամի կողմից հովանավորվող որբանոցների որբերի հանդերձները¹⁸:

Եգիպտահայոց առաջնորդ Գեր. Տ. Թորգոմ Եպիսկ. Գուշակյանը՝ Առաջնորդական փոխանորդ Տ. Հայկազուն քհ. Ոսկերիչյանի ընկերակցությամբ, հուլիսի 30-ին այցելում է Որբախնամի Ալեքսանդրիայի Գրասենյակ և Հանդերձարան: Սրբազանը, գնահատելով Որբախնամի արդյունավետ գործունեությունը, իր մասնավոր գոհունակությունն է հայտնում¹⁹:

Որբախնամի զույգ վարչությունները կազմակերպում էին նաև որբանոցների անհրաժեշտ պարագաների՝ անկողին, հագուստ, խոհանոցի և ճաշարանի սպասք և գրենական պիտույքների մատակարարումը²⁰:

1919 թ. դեկտեմբերին կազմակերպության քույր հատվածների միջև աշխատանքի բաժանում է կատարվում. արտասահմանի հետ հարաբերությունները պահելու, մասնաճյուղերի հետ թղթակցելու և եկամուտ հայթայթելու գործը հանձն է առնում Կահիրեի հատվածի Վարչությունը, իսկ որբանոցների մատակարարումը՝ Հանդերձարանի վարչությունը, «Որբունի»-ի հրատարակությունը բաժին են ընկնում Ալեքսանդրիայի վարչությանը, որտեղ պահվում էին մատակարարության բոլոր հաշվեթղթերը²¹:

Մյուս օժանդակ մասնախումբը տղամարդկանց օժանդակ հանձնախումբն էր, որը կազմակերպում է հայերեն անդրանիկ ներկայացումը, հետազայում՝ նաև օպերաների ներկայացումները²²:

Հաճախ տարբեր ձեռնարկներին շրջանակներում տիկնանց ու տղամարդկանց հանձնախմբերը միավորում էին իրենց ուժերը, մասնավորապես պատի օրացույցների և Որբախնամի տեղական ձեռնարկների տպագրման և տարածման գործում: Նշենք, որ տպագրված օրացույցները, բացի դրամական օգնությունից, օտար շրջանակներում ճանաչողական նշանակություն են ունեցել Որբախնամի գործունեության համար²³:

Կազմակերպությունն ուներ նաև օժանդակողների խումբ: Նրանց թվում շատ ակտիվ էին ԱՄՆ-ից Զապել Փանոսյանը, Պորտ Սաիդի հայությունը, ովքեր

17 «Հայ սիրտերուն ուղղված», *Որբունի*, 1921, թիվ 12, 275-276:

18 «Որբախնամ շարժում», *Որբունի*, 1919, թիվ 6, 97:

19 «Նույն տեղում», 96:

20 «Որբախնամ շարժում», *Որբունի*, 1919, թիվ 7, 108:

21 *Հայ որբախնամ ընկերություն, տեղեկագիր Հայ որբ. Ընկ. Գահիրեի հատուածին վարչական ժողովոյ, շրջան 1919 օգոստ. 17-էն 1921 դեկ. 31* (Գահիրե, Փարոս, 1922), 20:

22 Նույն տեղում, 17:

23 «Որբախնամ շարժում», *Որբունի*, 1920, թիվ 9, 157:

սակավաթիվ էին, բայց շատ արդյունավետ են գործել: Նրանցից կարելի է առանձնացնել Տեր և Տիկին Մասրաֆներին, Ռ. Գալֆայանին, Ն. Թոգաթլյանին, Ա. Թագվորյանին, Գ. Թեքեյանին, Պորտ Սաիդ վրանաքաղաքի բժիշկներից Սալբին (Արամ Սահակյան)²⁴: Տեր և Տիկին Մասրաֆներն անգամ հատուկ նվիրատվության տետր են ունեցել, որտեղ կարող էին որբերի անուններով նվիրատվություններ անել հայ և օտար անհատները: Տիկին Մարի Մասրաֆը գեղարվեստական երեկույթներ է կազմակերպել և հայերից ու օտարերկրացիներից ստացված գումարը կրկին ծառայեցրել է Որբախնամի նպատակների համար²⁵:

1919 թ. փետրվար-մարտ ամիսներին, օգտվելով Որբախնամ ընկերության անդրանիկ պատվիրակ, հայտնի որբախույզ Ռուբեն Հեռյանի ներկայությունից՝ տիկնանց մասնախումբն որբերի համար կազմակերպում է բազմաթիվ հավաքույթներ: Նման հավաքների ընթացքում, ոգեշնչվելով Հեռյանի և նրա նման հայրենասեր մարդկանց բանախոսություններից, նվիրաբերվում էին բազմաթիվ թանկարժեք իրեր, որոնք աճուրդում վաճառվելուց հետո հասույթը տրամադրվում էր որբերին²⁶:

Գործում էր նաև դեռատի երկսեռ կամավորների խումբը, որն իր հասակակիցներին օգնելու համար ծանուցումներով ու հանգանակության կտրոնների տարածմամբ էր զբաղվում²⁷:

Որբախնամի մասնաճյուղերում ակտիվ գործունեություն էին ծավալում փոքրահասակները. նրանք պարբերաբար ելումուտ էին անում «հարկահավաքության թուղթ», կամավորության վկայագիր ստանալու կամ հավաքածն անկորուստ հանձնելու համար, դիմում էին մանկական ամենահամարձակ քայլերի, կարևորը՝ կարողանալին համոզել մեծահասակներին իրենց հասակակից որբերի համար գումարներ հայթայթել:

Կազմակերպությունն որպես հասույթի լրացուցիչ ձև շրջանառության մեջ է դնում կաղանդչեքի թերթիկները: Դեռևս 1919 թ. վերջերին հատուկ կոչով դիմում են կամավորներին երկու շաբաթվա ընթացքում մասնավոր թերթիկներով հավաքել որբերի կաղանդչեքերը: Կոչն արագ արձագանք է գտնում: Կահիրեից, Ալեքսանդրիայից, Զակազիկեից, Պորտ Սաիդից, Նիկոսիայից նշված ժամանակահատվածում հավաքվում է 1200 անգլիական ոսկի: Երկու առավելագույն գումար հավաքագրողները պարգևատրվում են, բոլոր դեռատի կամավորների անուններն ու նրանց հավաքած գումարների ցանկը պարբերաբար հրատարակվում էր «Որբունի» պարբերաթերթի համարներում:

Այս հաջող փորձից հետո արտասահմանի կամավորները նույնպես միանում են այս գործին. Եգիպտոսի, Սուդանի, Եթովպիայի, Կիպրոսի, Սիրիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի կամավորները հավաքում են 600 անգլիական ոսկի:

Նշենք, որ 1921-1925 թթ. դեռատի կամավորները որբերի համար կարողանում են հավաքել 2400 ոսկի արժողությամբ գումար, որը, ինչպես նշում է Որբախնամի

24 Մ. Սալբի, *Աղեակներ եւ խլեակներ* (Ալեքսանդրիա, Ս. Գասպարեան տպ., 1920), 157:

25 «Հայ որբախնամ ընկերություն», *Որբունի*, 1921, թիվ 12, 282:

26 Հայ որբախնամ ընկերություն, 15:

27 «Որբախնամ շարժում», *Որբունի*, 1920, թիվ 9, 158:

վարչությունը, հպարտանալու երևույթ էր և շարունակելի: Նշվում է, թե հավաքված գումարները պետք է հրատարակվեն մասնավոր գրքույկով, որը պետք է ունենա «Հայ որբերուն պահապան հրեշտակները» վերնագիրը և յուրաքանչյուր կամավոր այդ գրքույկից անվճար ստանալու է՝ իբրև հիշատակ իր կատարած բարի գործի²⁸: Համապատասխան վերտառությամբ երկու գրքույկը լույս է տեսնում 1924 և 1925 թվականներին²⁹: Մեր ձեռքի տակ եղած գրքույկն ամփոփում է 1924 թ. կամավորական շարժման արդյունքները, որտեղ առանձին-առանձին նշվում են տարբեր երկրների ու հաստատությունների կամավորների անուն ազգանուններն ու հավաքագրած գումարները³⁰: Կամավորական բանակը ընդհանուր հաշվվել է 653 հոգի³¹: Գրքույկի վերջում Որբախնամի վարչությունը հայտնում է, որ Ջունեյի որբերն ու որբանոցի տնօրենությունն իրենց գոհունակությունն են հայտնում որբանոցին աջակցելու համար:

Որբախնամը հանգանակությունների կազմակերպման համար կիրառում էր նաև գանձանակների միջոցով դրամահավաք կազմակերպելու ձևաչափը: 1916 թ. հուլիսի 3-ի համարում «Յուսաբեր» թերթն առաջարկում է. «Ծնունդներու, կամ մկրտութեանց, նշանախօսութիւններու կամ պսակադրութեանց, մահերու կամ յուղարկավորութեանց առիթներով՝ ծաղկեմինջերու, շաքարներու, պսակներու և այլն այս կարգի պայմանադրական պէտքերուն գործածվելիք դրամովը՝ փոխանակ օտարներու քսակը պարարտացնելու՝ Որբախնամին, Կարմիր Խաչին և այլ բարենպաստակ հաստատութեանց տրամադրել զայն»³²: Առաջարկվում էր նաև, որ ամեն տուն գանձանակ ունենա, ուր ընտանեկան հավաքությունների ու ազգային տոների ժամանակ նվերներ դնեն հանուն Որբախնամի համար և կոչ էր արվում մասնաճյուղեր կազմել Եգիպտոսի բոլոր հայ գաղութներում:

Գանձանակների գործն առաջ տանելու համար Հայ որբախնամը Կահիրեի և Ալեքսանդրիայի համար միաձև մոտ 500 նոր գանձանակներ է պատվիրում³³: Կահիրեում գրեթե չորս տարի գանձանակների գործը փոխադարձ համաձայնությամբ վարել են Կահիրեի Հայ երիտասարդական քրիստոնեական ընկերակցությունը, որն իր նախագահի՝ Վեր. Հայկազուն Խանդամորի վարչության ներքո կարողացել է ապահովել 2000 ոսկու հասնող հասույթ³⁴:

Աստիճանաբար կազմակերպությունն ընդլայնում է իր աշխարհագրական սահմանները, հիմնվում են նոր մասնաճյուղեր. առաջիններից էր Եթովպիայի մասնաճյուղը, Ամերիկայի Միացյալ Նահանգների Նյու Բրիքսփորթի տիկնանց մասնաճյուղը, Ժնևի տիկնանց բարեսիրական ընկերությունը, որն ապրիլին 10 հազար

28 Հայ որբերուն ի նպաստ նուիրահաւաքում, *Արև*, 20 փետրվարի 1925, թիվ 1822, 4:

29 *Մեր որբերուն պահապան հրեշտակները, Դեռատի հայ կամավորներու նուիրահաւաքութեան Ե տարուան արդիւնքը*, 1925 (Գահիրե, Փարոս, 1925), 29 էջ:

30 *Մեր որբերուն պահապան հրեշտակները, Դեռատի հայ կամավորներու նուիրահաւաքութեան Դ տարուան արդիւնքը*, 1924 (Գահիրե, Յուսաբեր, 1924), 23 էջ:

31 *Մեր որբերուն պահապան հրեշտակները*, 1924, 38:

32 Հ. Երամեան, «Որբը», *Որբունի*, 1919, թիվ 1, 6:

33 «Որբախնամ շարժում», *Որբունի*, 1921, թիվ 12, 284:

34 Նույն տեղում:

Ֆրանկի կտրոն է ուղարկում և խնդրում իրեն նույնպես ներառել կազմակերպության մասնաճյուղերի թվում³⁵։ Բացի այդ, աշխարհի տարբեր վայրեր հրավերներ էին ուղարկվում, հատուկ աշխատանքներ էին տարվում նոր մասնաճյուղեր կազմելու ուղղությամբ։

1919 թ. փետրվարի 1-ի Որբախնամի Կահիրեի վարչական ժողովի նամակից տեղեկանում ենք, որ Զապել Եսայանին հանձնարարվում է զբաղվել Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Իտալիայում Ընկերության մասնաճյուղեր կազմելու աշխատանքներով։ Որբախնամը գումարներ էր ստանում նաև Հոնկոնգից, Ջիբութիից, Շանհայից, Նիկոսիայից և այլ վայրերից։

1919 թ. հունիսի 15-ին Բեյրութում տեղի է ունենում հավաքույթ, որի ժամանակ ելույթ են ունենում Ազգային պատվիրակության ներկայացուցիչ Միհրան Տամատյանը և Որբախնամի Կիլիկիո պատվիրակներ Հրանտ Ազատյանն և Հակոբ Աղազարմը, կազմվում է Բեյրութի Որբախնամի մասնաճյուղը։ Մասնաճյուղը, որին անդամակցում էին 50 ազգայնականներ, կազմակերպում է նվիրատվություններ, իրականացնում հինգ որբերի որդեգրումը³⁶։

Ալեքսանդրիայի վարչության՝ 1920 թ. աշնան շրջաբերական կոչից տեղեկանում ենք, որ Որբախնամն առանց հաստատուն եկամտի, միայն անդամավճարներով և նվերներով կարողացել է հոգալ 2000 որբերի սննդի, հագուստի, առողջության և կրթության ծախսերը³⁷։

Որբախնամը համագործակցում էր նաև Հայ ազգային միության³⁸ հետ, և Ալեքսանդրիայի վարչությունից Գրիգոր Մանուկյանը, Կահիրեի վարչությունից Մարտիկ Տեր Սահակյանը և Հակոբ Մարգարյանը ընդգրկվում են Ազգային միության հետ համագործակցության կազմի մեջ։

Ընկերությունն իր ինսամայա՝ 1918 նոյեմբեր-1919 հուլիս ընկած ժամանակահատվածի գործունեությունն ավելի արդյունավետ է գնահատում։ Իհարկե, այս փաստը, կարծում ենք կապված էր նաև Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության կրած պարտության հետ, երբ հասարակության շրջանում ոգևորվածությունը բարձր էր, ընդլայնվում էր հայերի փրկության գործը։ Բնական է, որ այս հարցում ազգայնական գաղափարն էր որբերին փրկելու ու հայկական միջավայրում մեծանալու հիմնական գրավականը³⁹։

35 «Որբախնամ շարժումը», *Որբունի*, 1919, թիվ 4, 58-59։

36 «Որբախնամի մասնաճյուղեր», *Որբունի*, 1919, թիվ 6, 74-75։

37 «Շրջաբերական», *Որբունի*, 1920, թիվ 11, 230-231։

38 Հայ ազգային միությունը ստեղծվել է 1916 թ. նոյեմբերին և համախմբում էր Եգիպտոսի հայության տարբեր միություններ ու քաղաքական կուսակցություններ։ Միության անդամ եգիպտահայ քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներ Սաբահ Գյուլյանի, Միհրան Տամատյանի և Արտավազդ Հանմյանի անդամակցությամբ կազմված պատվիրակությունն իր մասնակցությունն է բերել ժամանակի միջազգային բանակցություններում։ Բարեգործականը նույնպես մաս էր կազմում դրա ու նրա ներկայացուցիչն էր Կահիրեում Միհրան Ղազարոսյանը։ Տե՛ս Գեորգեան, Թաշճեան, *Դար մը պատմություն*, 58; Պայրամեան, *Հայկական համայնքային կառույցները*, 98։

39 Այս շրջանին վերաբերող նյութերն ամփոփված են հետևյալ ժողովածուում՝ *Հայերի փրկության գործը Մերձավոր Արևելքում 1915-1923 թթ., միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու*, խմբ.՝ Հ. Մարության, Ն. Մարգարյան (Երևան, ՀՅԹԻ, 2020)։

Որբախնամի գործունեության ուղղություններից էր նաև որբահավաք աշխատանքների կազմակերպումն ու որբանոցների ֆինանսավորումը: Կարևոր նախաձեռնություն էր Որբախնամ կազմակերպության կողմից Սիրիայի պատվիրակության ձևավորումը՝ հանձնիս Կարապետ Սեֆերյանի, որը ներկայացնում էր Եգիպտահայ նպաստամատույցը, Մկրտիչ Եփրեմյանի, որը ներկայացնում էր Եգիպտոսի հայ ազգային միությունը, և Ռուբեն Հերյանի, որը ներկայացնում էր Եգիպտոսի հայ որբախնամը⁴⁰: Այս պատվիրակությանը Որբախնամը 1000 եգիպտական ոսկի էր տրամադրել և պատգամել աշխատել խիստ օրակարգով, բայց այս կազմով պատվիրակությունը կարճ գործունեություն է ծավալել:

Որբախնամ ընկերության հետ համագործակցել է որբահավաք Լևոն Յոթնեղբարյանը: Կազմակերպության Ալեքսանդրիայի վարչության կողմից 1920 թ. հունվարի 31-ի գրությամբ նա հատուկ շնորհակալական նամակ է ստացել Հաուրանի շրջանում որբահավաք աշխատանքների, ինչպես նաև որբերի մասին տեղեկությունների համար, որտեղ նաև հաջողություն են մաղթում նրան իր հետագա գործունեության համար⁴¹: Նամակից տեղեկանում ենք, որ նախատեսվում է, որ հավաքված որբերի ցանկն ու լուսանկարները պարբերաբար պիտի հրապարակվեն «Որբունի»-ի էջերում:

Որբերի առաջին՝ 29 հոգուց բաղկացած ցուցակը տպագրվում է «Որբունի»-ի համարում և նշվում է, որ ինը որբ չեն կարողացել տեղեկություն տալ իրենց մասին⁴²: Նա նաև կոչ է անում բոլոր հայերին, որ փոխանցեն իսլամական տներում պահվող որբերի մասին իրենց ունեցած տեղեկությունները, որպեսզի ինքը կարողանա աշխատանքներ տանել նրանց փրկելու ուղղությամբ⁴³:

1919 թ. սկսած «Որբունի»-ն հայտարարություն է տարածում, որտեղ նշվում է, որ այսուհետ պետք է տպագրվեն Կիլիկիայի, Միջագետքի և այլ վայրերի որբերի ցանկերը, որտեղ նշվելու են որբերի անունները, հայրանունները, շատերի պարագայում անգամ՝ մայրանունները, ազգանունները, տարիքն ու ծննդավայրը և խորհուրդ է տրվում, որ որբեր փնտրողները «Որբունի»-ի էջերում փորձեն գտնել իրենց հարազատներին⁴⁴:

Այսպիսով, դատելով թվական տվյալներից, կազմակերպության ակտիվությունից, հանրային և մամուլի արձագանքից, կարելի է եզրակացնել, որ ընկերությունը կարողացել է իր ներդրումն ունենալ հայ որբերի փրկության գործում. «Որբախնամիս հանդէպ ունեցած գործնական համակրանքին ճոխ ապացոյցները տուաւ, որուն համար, և յանուն որբերուն, կը յայտնենք մեր խորին երախտագիտութիւնը»⁴⁵:

40 Ռուբեն Հերյանի որբահավաք և որբախնամ գործունեության մանրամասները տե՛ս Նարինե Մարգարյան, «Միջագետքի անապատների հայ որբախույզները (1918-1923 թթ.)», *Հայագիտության հարցեր* 13, no. 1 (2018), 39-57:

41 *Անապատի ագռափները*, Լևոն Յոթնեղբարյանի հուշերը, խմբ.՝ Լևոն Փարյան, Մարո Փարյան (Երևան, Հայաստան, 2017), 105:

42 «Որբախնամ շարժում», *Որբունի*, 1920, թիվ 9, 177:

43 Նույն տեղում, 156-157:

44 «Յայտարարութիւն», *Որբունի*, 1919, թիվ 8, 144:

45 *Հայ որբախնամ ընկերութիւն, Իննամսնայ տեղեկագիր Հայ որբախնամ ընկ. Գահիրէի հատուածին գործադիր ժողովին 1918 նոյեմբերէն 1919 յուլիս 31 (Գահիրէ, Փարոս, 1922)*, 25-26:

Որբախնամը 1919 թ. հուլիսի դրությամբ իր խնամատարության տակ էր վերցրել 5 որբանոցներ՝ մոտ 3200 որբերով: Դրանք էին Բաղդադ-Բաքուբայի որբանոցը՝ 1200 որբ, Ադանայի որբանոցը՝ 600 որբ, Անթուրայի որբանոցը՝ 600 որբ, Դամասկոսի որբանոցը՝ 220 որբ, Այնթափի որբանոցը՝ 5-600 որբ⁴⁶: Այս որբանոցներից մի մասն ամբողջությամբ էին ֆինանսավորվում կազմակերպության կողմից, մյուսները՝ մասնակի: Ժամանակ առ ժամանակ քաղաքական իրավիճակին համապատասխան փոխվում էին որբանոցների հոգատար մարմինները: Նույնը կարելի է ասել նաև Որբախնամի հոգածության տակ գտնվող Ադանայի և Այնթափի որբանոցների մասին: Մինևույն ժամանակ պետք է նշել, որ ի տարբերություն Բաքուբայի, Դամասկոսի, Անթուրայի որբանոցների, Կիլիկիայի այս երկու որբանոցները եղել են հիմնականում Որբախնամի կենտրոնացված հոգատարության տակ և ֆինանսական միջոցների մեծ մասն Ադանայի և Այնթափի որբանոցներ են ուղղորդվել:

Ադանայի որբանոց

Ադանայի որբանոցը Որբախնամի հովանավորության տակ վերցնելու առաջարկ անում է Սիրիայի եգիպտահայ պատվիրակ Ռուբեն Հերյանը: Վերջինիս հանձնարարված էր 1918 թ. դեկտեմբերին ճշգրիտ տեղեկություններ տրամադրել Սիրիայի և հարակից տարածքներում գտնվող որբերի մասին: Իր կազմած տեղեկագրում Հերյանն ամփոփ տեղեկություններ է տալիս Բեյրութի, Զահլեի, Դամասկոսի, Հոմսի, Համայի և այլ վայրերի որբերի մասին: Միաժամանակ, նա տեղեկացնում է, որ Ադանայի մոտ 350 որբեր թշվառ վիճակում են՝ հավաքված տեղի Ազգային Միության շենքում և հազիվ մեկ ամսվա սնունդ ունեն՝ հորդորելով անհապաղ ստանձնել որբերի խնամքը, որոնք դրսից ոչ մի օգնություն չեն ստանում և իրենց գոյությունը պահել են միայն պատահական նպաստներով⁴⁷:

Որբախնամը ստանձնում է որբանոցի հոգածությունը: Կահիրեի, Ալեքսանդրիայի վարչությունների կազմակերպած որբանպաստ հավաքույթների հանգանակությունները կազմում են մոտ 5 հազար ոսկի գումար, որն անմիջապես նպատակին է ուղղվում⁴⁸: Հետագայում Որբախնամը, բացի նպաստներից, որբանոց է ուղարկում 2417 կտոր հանդերձանք և գլխարկ⁴⁹:

«Կիլիկիա» թերթը գրում է, որ ապրիլ ամսվա վերջում որբանոցում կային 225 աղջիկ և 250 տղա, 1 փոռապան, 1 դռնապահ, 2 օգնական դռնապահ, 6 ուսուցիչ, 2 ուսուցչուհի, տեսուչն ու իր ընտանիքը: Նշվում է նաև, որ փախուստների թիվը նվազել է, կերակուրը բավարար է և դասերն ընթանում են իրենց հունով: Թերթում նշվում է, որ ավետարանական եկեղեցու բակում բոլորտության համար անօգնական թողնված 65

46 Նույն տեղում, 11:

47 *Իննամսեայ տեղեկագիր*, 14:

48 Նույն տեղում:

49 «Որբախնամ շարժում», *Որբունի*, թիվ 6, 97:

որբերին բերել են որբանոց, որոնք ամերիկյան հիվանդանոցում բուժում ստանալուց հետո ապաքինվել են ու համալրել որբանոցի շարքերը⁵⁰:

1919 թ. ամռանն արդեն որբանոցը պատսպարում էր մոտ 600 երկսեռ որբ: Տեղում խնամակալ մարմին ընտրելու համար Ադանա է մեկնում Ռուբեն Հեյյանը, որը գործերը դեռ չավարտած, որբահավաք աշխատանքների համար մեկնում է Դեր Զոր:

Որբախնամի Ադանայի որբանոցի տնօրենության հունիս 14-ի տեղեկագրից հայտնի է դառնում, որ շինության վերնահարկում կատարված որոշակի փոփոխությունների արդյունքում հնարավոր է եղել 40 հոգու տեղ ավելացնել: Տեղեկանում ենք նաև, որ որբերի առողջական վիճակը բավարար է, իսկ Ամերիկյան նպաստամատույց կազմակերպության հիվանդապահուհին որբանոցում է մնում⁵¹:

Որոշ ժամանակ ֆրանսիական գինվորական իշխանությունը որբերի համար հաց և ալյուր է փոխանցում, բայց իրավիճակն էականորեն չի փոխվում: Որբախնամի Ալեքսանդրիայի հատվածը Կահիրեի հետ համախորհուրդ՝ Վարիչ մարմնի որոշումը փոխանցում է Հայ պատվիրակության ներկայացուցիչ Միհրան Տամատյանին, և հեռագրերով և նամակներով լիազորություններ է տալիս նրան՝ որբանոցի հաշիվները վերցնել և Հայ ազգային միության հետ համախորհուրդ ավելի արդյունավետ գործող վարչություն ստեղծել: 1919 թ. կազմվում է Վարիչ մարմին՝ Գեր. Տ. Գեորգ Ծ. Վարդ. Ասլանյանի (Ադանայի առաջնորդ), Հրանտ Ազատյանի՝ Որբախնամի պատվիրակ, Հովհաննես Ասլանի՝ տեղի Ազգային միության անդամ, մասնակցությամբ: Որբանոցի տնօրենությունը հանձնվում է Խաչատուր Գռուզյանին, որը փորձառու էր այդ ոլորտում: Վարիչ մարմնի տեղեկագրում կարդում ենք, թե ինչպես են երեխաները ջանք գործադրում հայերեն խոսելու համար, ինչպես են ոգևորված, գրքերը ձեռքներում դասի ժամերից դուրս կարդում, գրում ու երգում⁵²: Բացի այդ որբանոցում գործել են նաև արհեստանոցներ, որտեղ որբերից շատերը իրենց արհեստների մեջ են հմտացել, տղաների համար գործել է դերձակության բաժին⁵³: Որբանոցում ակտիվ է եղել մարզական կյանքը: Ինչ վերաբերում է հոգևոր կյանքին, ապա ամեն կիրակի եկեղեցի են գնացել, ինչպես նաև շաբաթը երեք օր ժամասացության համար քահանա է այցելել որբանոց⁵⁴:

Հետագայում Հայ ազգային միությունը և Որբանոցի Վարիչ մարմինը սկսում են նոր որբեր ընդունել՝ վերջիններիս թիվը հասցնելով 950-ի, որոնք հիմնականում Կեսարիայի և Սեբաստիայի շրջաններից էին: Հասկանալի էր, որ անհրաժեշտ էին լրացուցիչ ֆինանսական միջոցներ, որի համար էլ կազմակերպությունը լրացուցիչ կոչերով և հայտարարություններով դիմում է համայն հայությանը: Ավելի ուշ որբերի թիվը հասնում է 1300-ի, չնայած Ադանայի որբանոցը կարող էր տեղավորել միայն 400-

50 Ատանայի ազգ. Որբանոցը (Քաղուած Ազգ. Միութեան ներկայացուած տեղեկագրէն), *Կիլիկիա* (Ադանա), 18 ապրիլի 1919:

51 «Որբախնամ շարժում», *Որբունի*, 1919, թիվ 5, 73:

52 «Որբախնամ շարժում», *Որբունի*, 1919, թիվ 7, 108:

53 «Որբախնամ շարժում», *Որբունի*, 1919, թիվ 8, 126:

54 «Որբախնամ շարժում», *Որբունի*, 1919, թիվ 7, 110:

500 որբի: Սա նոր խնդիրներ է առաջացնում Որբախնամի, Հայ ազգային միության և որբանոցի տնօրենության միջև:

Երբ Կիլիկիայի հայությունը երկրորդ անգամ ենթարկվում է բռնագաղթի, անհրաժեշտություն է առաջանում լուծել նաև որբերի տեղափոխության խնդիրը: Գործն իր պատասխանատվության տակ է վերցնում Զապել Եսայանը, որը Փարիզից վերադառնալուց անմիջապես հետո Միացյալ պատվիրակության կողմից ստանձնում է Կիլիկիայի որբերի և որբանոցների խնամատարությունը: Նա Միհրան Տամատյանի հետ համաձայնության է գալիս՝ ներքին կարգով գործերի բաժանման վերաբերյալ, և ֆրանսիական իշխանություններին տեղեկացնում, որ ինքը պետք է զբաղվի որբերի հարցերով⁵⁵:

Եսայանն ապրիլի 2-ին հանդիպում է Կիլիկիայի գլխավոր կառավարիչ նշանակված ֆրանսիացի գեներալ Բրեմոնի հետ: Վերջինս հավաստում է, որ պատրաստ է ապահովել որբերի անվտանգությունն: Քանի որ Մերսին-Ադանա երկաթգիծը վտանգված էր, որոշվում է Ադանայի որբերին տեղափոխել Մերսին⁵⁶:

Սկզբում փոխադրվում է 400, հետո՝ 300 որբ՝ առաջնահերթությունը տալով ամենափոքրերին և աղջիկներին: Մերսինում նրանք տեղավորվում են հայոց և հունաց վարժարաններում: Որբանոցում են մնում 245 չափահաս որբ տղաներ, որոնցից մի մասը որպես պահակ զենք է ստանում: Նշենք որ որբանոցի շենքը համեմատաբար ապահով էր, քանի որ նկուղ ուներ⁵⁷:

Որբախնամն իր հանձնառություններն Ադանայում մնացած որբերի նկատմամբ կանոնավոր շարունակում է մինչև 1920 թ. մայիս, հետո այն ժամանակավորապես անցնում է ֆրանսիական իշխանության հոգածության տակ՝ կրկին հատկացումները վերսկսելու նպատակադրությամբ: Սակայն սկզբում Որբախնամի ֆինանսական սղության, ավելի ուշ՝ ստեղծված քաղաքական իրավիճակից ելնելով՝ այս որբերը նույնպես Կիլիկիայի վերջնական հայաթափման ժամանակ լքում են այն:

Ինչ վերաբերում է Մերսին տեղափոխված որբերին, տեղեկագրում Զապել Եսայանը նշում է, որ Մերսին տեղափոխված որբերն ապահով են, մաքուր և արդեն իրենց զբաղմունքներն ունեն⁵⁸: Չնայած Որբախնամն երկու անգամ կարողանում է Զապել Եսայանին գումար ուղարկել (75000⁵⁹ և 73078 եգիպտական դահեկան)⁶⁰՝ արդեն ֆինանսապես ի վիճակի չէր հոգալ Մերսինում որբանոցի ծախսերը⁶¹: Մերսինում Զապել Եսայանի նախաձեռնությամբ ստեղծված Խնամակալ մարմինը, հաշվի առնելով, որ ամիսներ առաջ ՀԲԸՄ-ը ցանկություն էր հայտնել իր խնամատարության տակ վերցնել տեղափոխված որբերը⁶¹, ուստի, Որբախնամ կազմակերպության գույգ

55 «Որբախնամ շարժում», *Որբունի*, 1920, թիվ 10, 187:

56 Նույն տեղում, 188:

57 Նույն տեղում, 189:

58 Նույն տեղում, 189:

59 Նույն տեղում, 212:

60 «Որբախնամ շարժում», *Որբունի*, 1920, թիվ 12, 283:

61 ՀԲԸՄ-ը դեռևս 1920 թ. սկզբներին նպատակ ուներ փոխարինել Որբախնամ կազմակերպությանը

վարչությունները, համախորհուրդ նամակով դիմում են ՀԲԸՄ-ին, որը համաձայնում է նյութական ծախսերը հոգալ⁶²: 1921 թ. դեկտեմբերի 30-ին ՀԲԸՄ-ի Մերսին որբանոցի 314 որբերը՝ իրենց տնօրեն Հայր Մամբրե Սիրունյանի հետ հասնում են Ջունեյի նավահանգիստ ու անմիջապես տեղափոխվում Աշքուֆ և Զմմառ⁶³:

Այնթափի որբանոց

Այնթափը և աշխարհագրական (օդի մաքրությունը, ջրի առկայությունը, բուսականությունը), և կրթական առավելություններ ուներ տարածաշրջանի մյուս շրջանների հետ համեմատ, ինչը հիմք էր, որ շատերն այդտեղ կենտրոնանային:

1918 թ. դեկտեմբերի 2-ին Որբախնամը նամակ է ստանում Լոնդոնի Հայոց միացյալ ընկերությունից՝ տեղեկանալով, որ 2000 անգլիական ոսկի են ուղարկել: Վերջինս մանրամասներ է պահանջում Ընկերության նպատակի և գործունեության մասին: Դեկտեմբերի 10-ի նամակում մանրամասն ներկայացնելով իրենց ծրագիրը՝ հայտնում են, որ բրիտանական գինվորական իշխանությունների համագործակցության պարագայում կարող են այդ գումարով Այնթափում որբանոց բացել:

Շուտով կազմակերպության հետ կապ է հաստատում բրիտանական գինվորական իշխանությունը և հրավիրում է Բեյրութ՝ «Հայրենադարձության և օգնության վարչության» (Repatriation and Relief Administration) ներկայացուցիչների հետ նախնական խորհրդակցություններ անելու և համաձայնության գալու նպատակով:

Այդ կապակցությամբ կազմվում է Կիլիկիո պատվիրակությունը՝ Հակոբ Աղազարմի գլխավորությամբ: Հրանտ Ազատյանը նշանակվում է խորհրդական: Նրանց տրվում են հստակ հրահանգներ և գործունեության ծրագիր, ըստ որի Բեյրութում պետք է հանդիպելին Հայրենադարձության և օգնության վարչության պետ Կոմիսար Հոքերին, նրա միջոցով ստանալ Բրիտանական գինվորական իշխանության մոտ եղած 2000 ոսկի գումարը, ծրագրված ձեռնարկների համար ապահովել վերջիններիս գործակցությունը, այցելել Անթուրա, Դամասկոս, Հոմս, Հալեպ, Ադանայում պաշտոնապես ստանձնել որբանոցի խնամատարությունը, բանակցել Հայ ազգային միության հետ Հայկական որբանոցն այնտեղ փոխադրելու համար⁶⁴: Չորսամսյա աշխատանքներն այս ուղղություններով Կիլիկիո պատվիրակությունը հաջողությամբ է կատարում⁶⁵: Պատվիրակները պետք է տեղեկանային նաև որբերի կացության մասին, կազմեին խնամակալ մարմին և այլն: Բանակցություններից հետո որոշվում է, որ Այնթափի որբանոցը պետք է Որբախնամի խնամատարությամբ լինի,

և այդ ուղղությամբ բանակցություններ էր վարում ֆրանսիական վարչության հետ՝ որբանոցարհեստանոց ստեղծելու համար: Այդ բանակցությունները դեռ ընթացքի մեջ էին, երբ սկսվում է բեմալական զորքի առաջխաղացումը Կիլիկիայում: Տե՛ս Գեորգեան, Թաշճեան, *Դար մը պատմություն*, 123:

62 «Որբախնամ շարժում», *Որբունի*, 1920, թիվ 11, 223-224:

63 Գեորգեան, Թաշճեան, *Դար մը պատմություն*, 145:

64 *Տեղեկագիր Հալեպի հայկական որբանոցի (31.7.15-30.9.1919)* (Հալեպ, ա.տ., 1919), 10:

65 *Հայ որբախնամ ընկերություն, 1919 օգոստ.-1921 դեկ.*, 8-9:

բրիտանական իշխանությունները պետք է հոգան սննդի խնդիրը, նախատեսվում էր, որ որբանոցն ունենա 500 որբ՝ 5-14 տարեկան, որոնք պետք է լինեն երկկողմանի ծնողագուրկ: Ակնկալվում էր նաև այնթափցիների լայն օժանդակությունը: Որբերը պետք է ընդունվեին բժշկական գնությունից հետո: Նախատեսվում էր, որ այն ոչ միայն ապաստարան պետք է լիներ, այլ ուսումնարան⁶⁶:

1919 թ. Կիլիկիայի պատվիրակ Հակոբ Աղազարմն օգոստոսին մեկնում է Այնթափ, ստեղծում են Խնամակալ-Վարիչ մարմին, որի անդամներն էին Ներսես Քահանա Թավուզճյանը՝ որպես նախագահ, Գևորգ Ասլանյանը՝ որպես ատենապետ: Աղազարմն անձամբ է մասնակցում Խնամակալ մարմնի առաջին նիստերին: Շուտով նա հեռագրում է Համայնի որբանոցի տնօրեն Ղազարոս Ղալիկյանին, որ Համայնի որբանոցի վերջին որբերը, որոնք մեծ մասամբ ազատագրվել էին արաբների մոտից, տեղափոխվեն Այնթափ և ինքն էլ դառնա նորահաստատ որբանոցի տնօրեն: Ղալիկյանը Համայնի Բրիտանական իշխանության ներկայացուցչի՝ մայոր Նևիլի միջնորդությամբ Այնթափ է ուղարկում որբանոցի գույքը, վարձակալում են Բարսույան եռահարկ շենքը և նախապատրաստական աշխատանքներ սկսում: Որբանոցի բացումը տեղի է ունենում սեպտեմբերի 25-ին: Որբերի առաջին խումբը՝ 70 հոգի քնության ենթարկվելուց հետո սեպտեմբերի 22-ին ընդունվում են որբանոց⁶⁷:

«Որբունի» թերթում տպագրվում է 1919 թ. նոյեմբերի 20-ի դրությամբ որբանոցի որբերի անուն-ազգանուններով ցանկը՝ նշելով վերջիններիս ծննդավայրը, տարիքը, հոր և մոր անունները (եթե հիշում են): Որբերի թիվը նշվում է 86 հոգի, որոնք 6-14 տարեկան էին⁶⁸:

Նոյեմբերի վերջին որբերի թիվը հասնում է 117-ի, որից 87-ը տղաներ էին, 30-ը աղջիկներ, որոնց թվում էին նաև Քիլիսի կազմալուծված որբանոցի որբերը: Որբերին բաժանում են երեք կարգի՝ գրել-կարդալ չիմացողներ, սկսնակներ և նախնական կրթության ստացածներ: Կազմվում է ուսուցչական խորհուրդ: Սկզբնական շրջանում դասավանդվում են հայոց լեզու, հայոց պատմություն, թվաբանություն, գեղագիտություն, որին ավելանում է նաև ֆրանսերենը: Որբանոցի աշտոնական լեզուն խստորեն սահմանվել էր հայերենը: Որբերի մեծամասնությունը Այնթափ-Քիլիսի տարածաշրջանից էին, և երկու ամիս հետո անգամ բառ չիմացող որբերը խոսում էին հայերեն: Եղել է նաև արհեստանոց հիմնելու ծրագիր. արհեստանոցի ծախսերը հոգալու համար 1920 թ. սկզբին դիմում են Եգիպտոսի Այնթափի տարագրելոց մարմնին, բայց քաղաքական պայմանները ձախողում են ծրագրված ձեռնարկները:

1919 թ. հոկտեմբերին Այնթափում աստիճանաբար անգլիական զորքերին փոխարինում են ֆրանսիական զորքերը: Միևնույն ժամանակ քաղաքում գնալով ավելանում էր Քեմալի և նրա համախոհների թիվը: Նոյեմբեր-մարտ ամիսներին

66 *Ակնարկներ հաստատության պարագաներուն եւ քառամեայ պատմութեան վրայ (1919 օգոստոսէ 1923 յունիս)* (Ադեքսանդրիա, Ս. Գասպարեան տպ., 1923), 5:

67 Նույն տեղում, 6-7, տե՛ս նաև *Իննամեայ տեղեկագիր*, 17-20; *Հայ որբախնամ ընկերութիւն, 1919 օգոստ. - 1921 դեկ.*, 11-14:

68 «Ցուցակ Հայ Որբախնամ Ընկերութեան Այնթափի Որբանոցի որբերուն եւ որբուհիներուն», *Որբունի*, 1919, թիվ 9, 173-175:

քաղաքական վիճակը լարվում է: 1920 թ. Մարաշի փետրվարյան ընդհարումները ոգևորում են Այնթափի իսլամ բնակչությանը: Արդեն փետրվարին հայերը սկսում են կենտրոնանալ հայկական թաղամասում և ձեռնարկում են ինքնապաշտպանական գործողություններ:

Այս ընթացքում որբանոցը կարողանում է շարունակել իր աշխատանքները. 1920 թ. անգամ կիսամյակային քննություններ է կազմակերպում, բայց արդեն ֆինանսական կացությունը ծանր էր, գումարները տեղ չէին հասնում: Ֆրանսիական կողմը միայն ուսուցման համար էր գումար տրամադրում: Ճիշտ է, նախատեսվել էր որբերի թիվը հասցնել մինչև 500-ի, բայց շենքային պայմանների, ինչպես նաև ստեղծված անտրոշ իրավիճակից ելնելով, Վարչությունը հրահանգում է հետաձգել նոր որբերի ընդունումը:

Այս ընթացքում որբանոցները բացառիկ կարևորություն ունեին, Այնթափում մոտ 2500 որբեր կային, որոնք ապրիլի 1-ից կենտրոնացել էին հայկական թաղամասում՝ ամերիկյան դրոշի հովանու տակ, ինչը վերաբերում էր նաև Որբախնամի որբանոցին, որի սաները տեղափոխվել էին Ամերիկյան որբանոցի և Աղջկանց քոլեջի շենք⁶⁹: Ապրիլին սկսվում են անհավասար բախումները. այս ընթացքում մշտապես սննդի պակաս կար, իսկ արդեն պաշարման ժամանակ սովն անխուսափելի էր:

Ապրիլի 17-ին սկսվում է բախումների երկրորդ շրջանը, և հայերը 16 օր շարունակ պայքարում են միայնակ, որից հետո միայն նրանց են միանում ֆրանսիական ուժերը: Թնդանոթների կիրառումը կոիվների կենտրոնը տեղափոխում է քաղաքի այն մասը, ուր կենտրոնացած էին Ամերիկյան քոլեջն ու հիվանդանոցը՝ թիրախավորելով որբերին: Որբերի փոխադրության հարցը դառնում է անխուսափելի: Հարցի լուծման նպատակով ժամանում է Մերձավոր Արևելքի նպաստամատույց կազմակերպության Հալեպի բաժնի տնօրեն Լեմբերթը: Ամերիկացիների տրամադրած և սեփական գումարներով վարձած 12 կառքերով գաղթի ճանապարհին են բռնում Որբախնամի որբերն և ղեկավարության մի մասը: Երկու օրվա ճամփորդությունից հետո քարավանը իջևանում է Քիլիսի եկեղեցում և դպրոցում, մայիսի 30-ին Գաթմայից տեղափոխվում են Հալեպ, ապա հունիսի 1-ին՝ Բեյրութ: Բեյրութում նրանց ծախսերը հոգում է Նպաստամատույցը: Վրանների տակ մեկուկես ամիս մնալուց հետո Լիբանանի տարածքում հավանական ապաստան գտնելու քննարկումներից հետո, որոշվում է որբերին տեղափոխել Ջունեյ: Երկու անգամով՝ հուլիսի 21-ին և 24-ին, 122 որբեր հաստատվում են այստեղ: Որբախնամը հոգում էր Ջունեյի որբանոցի ծախսերը: Ղազարոս Ղալիկյանն իր որբերի հետ տեղափոխվում է այդտեղ ու շարունակում իր հսկողությամբ կարգավորել որբանոցի գործերը⁷⁰:

1921 թ. նոյեմբերին տիկնանց մասնախումբը հայտարարում է, որ Որբախնամի առաջին վիճակահանության⁷¹ գումարները փոխանցվելու են Այնթափից Ջունեյ

69 *Ակնարկ մը հաստատութեան պարագաներուն*, 11:

70 «Որբախնամ շարժում», *Որբունի*, 1921, թիվ 12, 259:

71 Որբախնամի Վարչական ժողովը Ներքին գործերի նախարարությունից ձեռք էր բերել տարին մեկ անգամ տեղի ունենալիք վիճակահանության արտոնագիրը (16 հոկտեմբեր, 1920 թ.), որը

փոխադրված որբանոցին⁷²: Տոմսի վրա նշված էր, որ վիճակահանությունը տեղի է ունենալու 1922 թ. հունվարի 22-ին, իսկ ներքևի տողում կարդում ենք. «Յարգոյ ազգայիններին կը խնդրուի՝ մեր որբերուն հանդէպ իրենց սիրոյն գործնական ապացոյցը տալ, գնելով կամ իրենց շրջանակներուն մէջ ցրելով տոյն վիճակահանութեան տոմսերը»⁷³:

Որբանոցի Վարիչ մարմնի ատենապետ Հայր Պողոս Վրդ. Արիսի դիմումների արդյունքում ֆրանսիական *Assistance Publique* կազմակերպությունը ապահովում է որբանոցի ալյուրի պաշարները⁷⁴:

Որբախնամի ղեկավար մարմինները քայլեր են ձեռնարկում որբանոցի ֆինանսավորման հարցում ստանալ նաև Ամերիկյան նպաստամատույց կազմակերպության աջակցությունը: Բանակցությունների արդյունքում 1922 թ. Նպաստամատույցը որոշ ֆինանսական միջոցներ է տրամադրում: Տարեվերջին Կոնիա-Թալաս-Կեսարիա շրջանների որբերի տեղաբաշխման ժամանակ Նպաստամատույցն այստեղ է տեղավորում նախ՝ 54, ապա՝ 113 որբի, որոնց ծախսերը հոգում էր ինքը⁷⁵:

Այսպիսով, 1923 թ. հունիսի դրությամբ որբանոցի որբերի ընդհանուր թիվը 279 էր, որից 87 տղա և 35 աղջիկ գտնվում էին Որբախնամի, իսկ 30 տղա և 127 աղջիկ՝ Ամերիկյան Նպաստամատույց կազմակերպության հոգածության տակ⁷⁶:

Ջունեյի որբանոց այցելած հայ և օտարազգի ներկայացուցիչները մեծ գոհունակությամբ են խոսում որբանոցում տիրող իրավիճակի մասին: Արշակ Չոբանյանը որբանոցի մասին գրում է. «Այցելելով այսօր Որբախնամի հիմնած այս Որբանոցը, մեծ գոհունակությոնն ունեցանք տեսնելով հոն տիրող մաքրութիւնը, կարգապահութիւնը ... ուրախ եղանք լսելով իրենց ազգասիրական եռանդով երգած երգերը և արտասանած բանաստեղծութիւնները: Կը շնորհաւորենք բազմաջան Տնօրէնը, անձնուեր ուսուցիչները և Որբախնամի Վարչութիւնը»⁷⁷:

1920 թ. օգոստոսին Սահակ կաթողիկոսը գովեստով է արտահայտվում Ջունեյ կատարած այցի վերաբերյալ. «Օրինյալ է Գահիրեի Որբախնամ Մարմինը, որ Նեղոսի հեռաւոր ափերէն Մովսիսանման ցեղասիրութեամբ կը պահեն ու կը սատարեն որբերուն, որ ապագայ հայութիւնը պիտի կազմեն»⁷⁸:

«Որբունի»-ում տպագրվել են Ջունեյի որբանոցի որբերի անվանացանկերը՝ 30 տարբեր քաղաքներից 89 տղա և 37 աղջիկ որբեր: Սա նույնպես յուրահատուկ ձև էր, որն ուղղված էր տվյալ տարածաշրջանի մարդկանց ներգրավվելու և շահագրգռելու որբերի որդեգրման գործում: Ցանկերին կից առկա նաև կոչ, որը ստորագրել էին Մայր

կանոնավոր հասույթի աղբյուր էր Որբախնամի համար: Տե՛ս *Հայ որբախնամ ընկերություն*, 16:

72 «Դրական գործը», *Որբունի*, 1921, թիվ 12, 285:

73 Նույն տեղում, 286:

74 *Հայ որբախնամ ընկերություն*, 16:

75 Նույն տեղում, 24:

76 Նույն տեղում, 25:

77 «Որբախնամ շարժում», *Որբունի*, 1921, թիվ 12, 263:

78 «Որբախնամ շարժում», *Որբունի*, 1920, թիվ 11, 224-225:

դիվանի կողմից Վերապատվելի Հ. Խանադմուրը, Վարչական ժողովի կողմից՝ Յ. Թ. Գայայանը⁷⁹ և որն ավարտվում էր հետևյալ խոսքերով. «Որբերուն հետ, հաւատքով կ'սպասենք լսելու Ձեր սրտին պատասխանը»⁸⁰:

Ադանայի «Նոր Սերունդ» թերթն, անդրադառնալով Ջունեյի որբանոցին, նշում է, որ որբերի թիվը 125-140 էր⁸¹:

Որբախնամը ծառայում էր որպես ուսումնարան՝ կարևորելով կրթական հարցերը: Ըստ Կենտրոնի վարչության ներկայացրած կրթական ծրագրի՝ որբանոցը պետք է ունենար 6 կանոնավոր դասարաններ, ուսումնառության նյութերը պետք է դասավանդվեին հայերեն և ֆրանսերեն լեզուներով, որբերն ուսումնասիրելու էին կրոն, թվաբանություն, բարոյագիտություն, հայոց պատմություն, աշխարհագրություն, իրավաբանություն, գեղագիտություն, երգեցողություն, մարմնամարզություն, իսկ բարձր դասարաններում՝ ընդհանուր պատմություն, բնապատմություն, բնագիտություն և այլն⁸²: 1921 թ. փետրվարից սկսվում են նաև երաժշտության դասերը. որբանոցն ունեցել է նաև 80 հոգանոց երգչախումբ: Ակտիվ է եղել մարզական կյանքը:

Գիտակցելով որբերի համար արհեստների ուսուցման կարևորությունը՝ որբանոցի Վարիչ մարմինը դիմում է Որբախնամի կենտրոնի վարչությանը՝ ներկայացնելով աշխատանոց հիմնելու ծրագիր, որը պետք է ունենար 3 ճյուղ՝ դերձակություն, հյուսնություն և կոշկակարություն, և որտեղ որբերը պետք է անցկացնեին օրվա երկրորդ մասը: Ծրագիրը հավանության է արժանանում, և 1921 թ. հոկտեմբերի 1-ից աշխատանոցը սկսում է գործել: Նույնատիպ աշխատանոց է ստեղծվում նաև աղջիկների համար, որտեղ վերջիններս ասեղնագործություն էին սովորում: 1921 թ. տարեվերջին արդեն որբուհիների մոտ 80 ձեռագործ աշխատանքները ուղարկվում են Ալեքսանդրիայի կենտրոնական վարչություն⁸³:

Որբանոցն ունեցել է նաև գրադարան՝ մոտավորապես 400 գրքերով: Բարձր դասարանները 1922 թ. սկսած հրատարակել են «Այգ» անունով աշակերտական կիսամյա ձեռագիր 16 էջանոց պարբերաթերթը, որտեղ որբերն իրենց գրական նախափորձերն են կատարել⁸⁴:

Հոգևոր կյանքը նույնպես ակտիվ է եղել: Որբերի մեծամասնությունը լուսավորչական է եղել. եղել են նաև հայ բողոքական և հայ կաթոլիկ որբեր: Որբերին թույլ չի տրվել եկեղեցի կամ ժողովարան գնալ, բայց տարին մի քանի անգամ, հարանվանական հոգևորականներն այցելել են որբանոց:

1922-1923 թթ., 1923-1924 թթ. տարեշրջաններն որբանոցն անցկացնում է բնականոն հունով. մասնավոր ուշադրության է արժանանում ձեռագործ ասեղնագործությունը:

Աստիճանաբար որբերը սկսել են ամուսնանալ և դուրս գալ որբանոցից:

79 Նույն տեղում, 276:

80 Նույն տեղում, 275-276:

81 «Հայ ուսանողություն. հայ որբանոցներ. մայիս 28», *Նոր սերունդ* (Ադանա), 1 հուլիսի 1921:

82 *Ակնարկ մը հաստատության պարագաներուն*, 16-17:

83 Նույն տեղում, 19-20:

84 Նույն տեղում, 21:

Որբանոցի տնօրենությունը խիստ է վերաբերել փեսացուների ընտրությանը և հատուկ պահանջներ է ներկայացրել վերջիններին⁸⁵։ Շարունակվել են նաև որբերի որդեգրումների գործընթացները։

1923 թ. դրությամբ Ջունեյի որբանոցից առանձնանում է Ջունեյի աղջիկների վարժարան-որբանոցը՝ շուրջ 120 որբուհիներով, որը շարունակում է գտնվել Ուրբախնամի հոգածության տակ։ Որբանոցն մասնագիտանում է կարուճնի և Կիլիկյան ասեղնագործության և գորգագործության ուղղությամբ⁸⁶։ Այն փակվում է 1925 թ. և որբուհիները տեղափոխվում են Լիբանանի Ղազիր և Սայդա որբանոցներ⁸⁷։

Ինչ վերաբերում է Ջունեյի բուն որբանոցին, ապա այն աստիճանաբար անցնում է Նպաստամատույցի հոգածության տակ⁸⁸։ Որբերը մի մասը, չափահաս դառնալով, դուրս են գալիս որբանոցից։ 1928 թ. որբանոցը ֆինանսական խնդիրներ է ունենում, և ՀԲԸՄ այնտեղ գտնվող 75 որբերին տեղափոխում է Բեյրութի Քելեկյան-Սիսուան որբանոց⁸⁹։

Փաստորեն իր գործունեության ընթացքում Ուրբախնամը գործել է տարբեր ուղղություններով և, ինչպես ընդգծում է իրենց Կենտրոնական վարչությունը՝ հիմնականում առաջնահերթ գործերում և խիստ կարիքավորների համար՝ առաջնորդվելով որբերի փրկության ազգային միասնական գաղափարով. «Ուրբախնամը գթոտ ժողովուրդը իրենց գանձը համարելով՝ պատրաստի գումարներէն աւելին պահանջող յանձնառութիւններու ընդառաջ կ'երթան ուրեմն, վստահ լինելով՝ թէ հայը չալտի լքէ իր որբերը»⁹⁰։

Ամփոփում

Ընդհանրացնելով ու ամփոփելով Ուրբախնամի գործունեությունը՝ նշենք, որ 1925 թ. կազմակերպությունը, ամփոփելով իր աշխատանքները, փաստում է հետևյալ ձեռքբերումները. 3400 երկսեռ որբեր, հայ ժողովրդի աջակցությունը, ինչպես նաև Մերձավոր Արևելքի նպաստամատույց կազմակերպության գործակցությունը և վերջին վեց տարիների ընթացքում հավաքված շուրջ 34000 անգլիական ոսկի, որն ամբողջովին իր նպատակին է ծառայել։ Ընկերությունն իր որբերին չորս տարի շարունակ, ուսման հետ զուգընթաց, կահույքագործություն, կոշկակարություն, դերձակություն, թիթեղագործություն սովորեցնելուց հետո նրանց տեղավորել է վարպետների մոտ, և նրանք ինքնուրույն են դարձել։

85 Նույն տեղում, 28։

86 «Հայ որբերուն ի նպաստ նուիրահաւաքում», *Արև* (Կահիրե), 20 փետրվարի 1925, թիվ 1822, 4։

87 *Յուշամատենան Ճիպէյլի ամերիկյան որբանոցի 1920 - 1925* (Պէյրութ, Համազգային, հրատարակություն նախկին սաներու, 1969), 51։

88 1925 թ. Նպաստամատույցը ստեղծել էր իր որբանոցային ցանցի սաների համար համընդհանուր մի կառույց՝ Մերձավոր Արևելքի որբերի ընկերակցություն, որը իր որբանոցներում գտնվող և արդեն դուրս եկած որբերի եղբայրակցությունն էր։ Տե՛ս «Տեղեկություն», *Որբաշխարհի աստղ* (Պէյրութ, մարտ 1925), թիվ 1, 11-12։

89 Գէորգեան, Թաշճեան, *Դար մը պատմութիւն*, 146։

90 Հ. Երամեան, «Որբ (շարունակություն)», *Որբունի*, 1919, թիվ 2, 21։

Որբախնամը, ի թիվս հայկական բազմաթիվ բարեգործական կազմակերպությունների առաջնորդվել է հետևյալ գաղափարով. «Արդէն ազատուած և պատասպարուած որբերին հանդէպ ունինք դեռ հրամայողական պարտականութիւններ: Բաւական չէ անոնց սնունդ, հագուստ և գրենական պիտոյք հայթայթել: Անհրաժեշտօրէն հարկ է կեդրոնացնել զանոնք *ազգային մթնոլորտի մը մէջ*, պիտի ընենք նոյն իսկ՝ *հայրենի հողերու վրայ*»⁹¹:

Բոլորին համար հասկանալի և ընդունելի էր, որ հայ որբերի կենտրոնացման հարցը լուծվի հայկական հողի վրա, քանի որ օտարների հոգածությունը նույնպես ուներ իր խնդիրները՝ նպատակների, մեթոդների ու միջավայրի փոփոխությունները երբեմն աննպաստ պայմաններ էին ստեղծում որբերի հայկական ինքնության համար:

Եգիպտոսի հայ որբախնամը որբապահպան, որբախնամ կառույց էր, որն ուներ նմանատիպ կառույցին բնորոշ բոլոր հատկանիշները: Այն ակտիվ գործունեություն էր ծավալում իր զույգ վարչությունների, բազմաթիվ մասնաճյուղերի, հանձնախմբերի, ինչպես նաև կամավորների խմբերի միջոցով: Որբախնամը նաև համագործակցության օրինակ է. կազմակերպությունը համագործակցել է հայկական և օտարերկրյա տարբեր կազմակերպությունների հետ: Իր ակտիվ գործունեության հանրագումարում Եգիպտոսի հայ որբախնամը, որը հավանաբար գործել է մինչև 1927 թ.⁹², Ցեղասպանության տարիներին շուրջ 3400 որբերի փրկության երաշխավորն է դարձել, որից շուրջ 1500-ը՝ Կիլիկիայում:

THE ACTIVITIES OF THE ARMENIAN ORPHANS' CARE SOCIETY OF EGYPT DURING THE ARMENIAN GENOCIDE IN CILICIA

Narine V. Margaryan

Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

SUMMARY

The article discusses the activities and the main goal of the Armenian Orphans Care Society, which was established in Egypt in 1905 and was reorganized in 1916 – to provide the urgent and necessary assistance to orphans, which survived the massacres and hunger, in particular in Cilicia.

The Society launched its activities through the departments in Cairo and Alexandria and via many branches, commissions, and groups of volunteers. The Orphans' Care Society cooperated with several international and local Armenian benevolent organizations.

The article describes fundraising activities, lotteries, and the system of donation boxes

91 Յ. Թ. Գալսեան, Անյետաձգելին, *Որբունի*, 1920, թիվ 11, 219:

92 Պայրամեան, *Հայկական համագալսին կառոյցները*, 82:

organized by the Society. The Society spent the entire profit to fund the orphanages in Adana, Ayntap, Anturay, Damascus, and Baghdad-Baquba.

The Orphans' Care Society played a significant role in orphan gathering activities in Cilicia, accommodating orphans in its orphanages in Adana and Ayntap. The Adana orphanage launched its activities in 1919 at the suggestion of Ruben Heryan, Egypt's Armenians' delegate in Syria. The number of orphans was gradually growing and reached 1,300, which created some problems regarding the funding and accommodation of orphans. The article discusses the situation in the orphanage, the issues related to food, education, healthcare, and other daily problems. The orphanage leadership sought to solve those problems by cooperating with Orphans' Care Society and Armenian National Union, which partly funded the orphanage. After the activation of Kemalists in Cilicia, the Society organized the relocation of 700 orphans from Adana orphanage to Mersin, where AGBU took care of part of the orphans.

Regarding the Ayntap orphanage, the delegate of Cilicia Hakob Aghazarm visited the Ayntap orphanage in August 1919. He established a special caretaker-steering body chaired by Nerses vicar Tavugchyan, while Gevorg Aslanyan was appointed president. Aghazarm personally participated in the first sessions. Shortly after, the director of the Hama orphanage – Ghazaros Ghplikyan, moved to Ayntap with the last remaining orphans and became the director of the new orphanage. The Society would like to keep up to 500 orphans in the orphanage, but it failed to reach that goal due to the political situation. The Ayntap orphanage orphans moved to Jounieh coastal settlement in Lebanon in July 1920. The Society cooperated with the American Relief organization to fund the orphanage. The article describes the educational and artisanship activities of the orphanage. The Society was led by the ideology of national unity, emphasizing the significance of the activities aimed at protecting the Armenian identity of orphans. The Society periodically printed the name lists of the orphans of Adana and Ayntap orphanages in its official "Vorbuni" magazine and names of their parents, their birthplaces, and other information to activate the work to find the relatives of orphans or foster the adoption process. During its activities, the Society saved up to 3,400 orphans; 1,500 were first kept in Cilicia and later relocated to Lebanon.

Key words: Armenian Genocide, Armenian Orphan Care Society of Egypt, orphan gathering, orphans, survival, a delegation of Cilicia, fundraising, Orphanage of Adana, Orphanage of Ayntap, Vorbuni, the name lists of orphans.

ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА ПОПЕЧЕНИЯ СИРОТ ЕГИПТА ВО ВРЕМЯ ГЕНОЦИДА АРМЯН В КИЛИКИИ

Нарине В. Маргарян

Фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

РЕЗЮМЕ

В статье рассматривается деятельность и основная цель Армянского общества попечения сирот, которое было создано в Египте в 1905 году и реорганизовано в 1916 году - оказание срочной и необходимой помощи сиротам, пережившим резню и голод, в частности в Киликии.

Общество начало свою деятельность посредством отделений в Каире и Александрии, а также многочисленных филиалов, комиссии и группы добровольцев. Общество помощи сиротам сотрудничало с несколькими международными и местными армянскими благотворительными организациями.

В статье описывается деятельность Общества по сбору средств, проведению лотерей и внедрению системы ящиков для сбора пожертвований. Всю прибыль Общество направляло на финансирование детских домов в Адане, Айнтапе, Антуре, Дамаске и Багдаде-Бакубе. Общество сыграло важную роль в сборе сирот в Киликии, разместив их в своих сиротских домах в Адане и Айнтапе. Аданский сиротский дом начал свою деятельность в 1919 году по предложению Рубена Геряна, делегата египетских армян в Сирии. Число сирот постепенно росло и достигло 1,300 человек, что создало определенные проблемы с их финансированием и размещением. В статье обсуждается ситуация в сиротском доме, вопросы, связанные с питанием, образованием, медицинским обслуживанием и другие повседневные проблемы. Руководство детского дома пыталось решить эти проблемы, сотрудничая с обществом “Попечения сирот” и Армянским национальным союзом, который частично финансировал сиротский дом. После активизации кемалистов в Киликии, Общество организовало переселение 700 сирот из сиротского дома Аданы в Мерсин, где Всеармянский благотворительный союз взял на попечение часть сирот.

Что касается сиротского дома в Айнтапе, делегат от Киликии Акоп Агазарм посетил его в августе 1919 года. Он создал специальный Попечительский-Руководящий орган, главой которого стал священник Нерсес Тавугчян, а председателем был назначен Геворг Асланян. Агазарм лично участвовал в первых заседаниях. Вскоре после этого директор сиротского дома в Хаме Казарос Гпликян переехал в Айнтап с последними оставшимися сиротами и стал директором нового сиротского дома. Общество планировало содержать в сиротском доме до 500 детей, но не смогло достичь этой цели из-за политической ситуации. В июле 1920 года сироты из приюта в Айнтапе переехали в прибрежное поселение Джуния в Ливане. Общество сотрудничало с Американским комитетом помощи Ближнему Востоку в деле финансирования приюта.

В статье описывается образовательная и ремесленная деятельность приюта. Общество руководствовалось идеологией национального единства, подчеркивая значимость деятельности, направленной на защиту армянской идентичности сирот. Общество периодически печатало в своем официальном журнале “Ворбуни” именные списки сирот приютов Аданы и Айнтапа, а также имена их родителей, места их рождения и другую информацию, чтобы активизировать работу по поиску родственников сирот или содействовать процессу усыновления. За время своей деятельности Общество спасло до 3,400 сирот, из которых 1,500 сначала содержались в Киликии, а затем были перевезены в Ливан.

Ключевые слова: Геноцид армян, Армянское общество помощи сиротам Египта, сбор сирот, сироты, выживание, делегация Киликии, сбор средств, детский дом Аданы, детский дом Айнтапа, Ворбуни, именные списки сирот.

REFERENCES

Gevor'gyan, Raymond and Tashchyan, Vahe. *Դար մը պատմություն Հայ Բարեգործական Ընդհանուր Միության, 1906-1940*. Հ. Ա [A Century of History of the Armenian General Benevolent Union, 1906-1940. Vol. A]. Cairo-Paris-New York: AGBU Central Committee, 2006;

Margaryan, Narine. «Միջագետքի անապատների հայ որբախույզները (1918-1923 թթ.)» [Armenians Searching for Orphans in the Mesopotamian Deserts (1918-1923)]. *Armenological issues: bulletin* 13, no. 1 (2018): 39-57;

Marutyan, Harutyun and Margaryan, Narine (eds). *Հայերի փրկության գործը Մերձավոր Արևելքում 1915-1923 թթ., միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու* [The Rescue of Armenians in the Middle East in 1915-1923. International Conference Proceedings]. Yerevan: AGMI publ., 2020;

Parian, Levon and Parian, Maro (eds). *Անապատի ագռավները, Լևոն Յոթնեղբարյանի հուշերը* [Crows of the Desert: Memoirs of Levon Yotneghbaryan]. Yerevan: Hayastan, 2017;

Payramyan, Suren. *Հայկական համայնքային կառույցները Եգիպտոսի մէջ* [Armenian Community Institutions in Egypt]. Cairo: Nupar, 2017;

Salbi, M. *Ալեակներ եւ իլեակներ* [Waves and Remnants]. Alexandria: S. Gasparyan, 1920;

Ատանայի ազգ. Որբանոցը (Քաղուած Ազգ. Միության ներկայացուած տեղեկագրէն) [Adana National Orphanage (from a bulletin submitted by the National Union)]. *Cilicia* (Adana), 18 april 1919;

Կանոնագիր Հայ որբահինամ ընկերության (Ալեքսանդրիա). [Charter of the Armenian Orphans' Care Society (Alexandria)]. Gairo: Z. Perperyan, 1916;

Կանոնագիր Միացեալ որբահինամ ընկերութեանց Հայոց ի Գահիրէ [Charter of the United Armenian Orphans' Care Society in Cairo]. Cairo: Onik Halepyan, 1906;

Հայ որբախնամ ընկերության Այնթապի որբանոց, Ակնարկ մը հաստատության պարագաներուն եւ քառամեայ պատմության վրայ (1919 օգոստոսէ 1923 յունիս) [Aintab Orphanage of the Armenian Relief Society, an Overview of the Events and the Four Year History of the Institution]. Alexandria: S. Gasparean, 1923;

Հայ որբախնամ ընկերութիւն, Բնամանայ տեղեկագիր Հայ որբախնամ ընկ. Գահիրէի հատուածին գործադիր ժողովին 1918 նոյեմբերէն 1919 յուլիս 31 [Armenian Orphans' Care Society, Bulletin of the Cairo Executive Committee of the Armenian Orphans' Care Society for the Period November 1918 to 31 July 1919]. Cairo: P'aros, 1922;

Հայ որբախնամ ընկերութիւն, Տեղեկագիր Հայ որբ. Ընկ. Գահիրէի հատուածին վարչական ժողովոյ, շրջան 1919 օգոստ. 17-էն 1921 դեկ. 31 (Գահիրէ, Փարոս, 1922): [Armenian Orphans' Care Society, Bulletin of the Cairo Section's Administrative Meeting of the Orphans' Care Society, for the Period of 17 August 1919 to 31 December 1921]. Gairo: P'aros, 1922;

«Հայ ուսանողութիւն. հայ որբանոցներ. մայիս 28» [Armenian Students: Armenian Orphanages: May 28]. *Nor Serund* (Adana), 1921;

Մեր որբերուն պահապան հրեշտակները, Դեռասի հայ կամավորներու նուիրահաւաքության Դ տարուան արդիւնքը, 1924 [The Guardian Angels of our Orphans, the Result of the Fundraising of the 4th Year by the Adolescent Armenian Volunteer]. Cairo: Yusaber, 1924;

Մեր որբերուն պահապան հրեշտակները, Դեռասի հայ կամավորներու նուիրահաւաքության Ե տարուան արդիւնքը, 1925 [The Guardian Angels of our Orphans, the Result of the Fundraising of the 5th Year by the Adolescent Armenian Volunteer], Cairo: P'aros, 1922;

Յուշամատենան Ճիպէյլի ամերիկեան որբանոցի 1920-1925 [Houshamadyan of the Jbeil American Orphanage, 1920-1925]. Beirut: Hamazgayin, 1969;

Տեղեկագիր Հալէպի հայկական որբանոցի (31.7.15-30.9.1919) [Bulletin of the Armenian Orphanage of Aleppo (31.7.15-30.9.1919)]. Aleppo, 1919.

Հեղինակի մասին

About the Author

ОБ авторе

Նարինե Վ. Մարգարյան, պատմ. գիտ. թեկ., արևելագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի գիտնական քարտուղար:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանությունից հետո Մերձավոր Արևելքի արաբական երկներում հայտնված հայ տարագիրների վիճակը, նրանց սոցիալ-տնտեսական, քաղաքական ինտեգրումը այդ երկրներում, ինչպես նաև նրանց

փոխհարաբերությունները տեղի արաբական ժողովուրդների հետ:
Էլ. հասցե՝ narine.margaryan@genocide-museum.am

Narine V. Margaryan, PhD in history, Orientalist, Academic-secretary, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – the plight of Armenian refugees in the Arabic countries of the Middle East after the Armenian Genocide, the process of their social-economic and political integration as well as their relations with local Arab population.

E-mail: narine.margaryan@genocide-museum.am

Нарине В. Маргарян, канд. ист. наук, востоковед, ученый секретарь Фонда “Музей-институт Геноцида армян.”

Область исследований – положение армянских депортированных лиц на Ближнем Востоке после Геноцида армян, их интеграция в общественно-политическую жизнь арабских стран, а также их взаимоотношения с местным арабским населением.

Эл. почта: narine.margaryan@genocide-museum.am

**ՔԵՄԱԼԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ
ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՓԱՄԲԱԿԻ ՏԱՐԱԾ-ՔՈՒՄ (ՇԻՐԱԿԻ ՆԱՀԱՆԳ)
ԸՍՏ ԱԿԱՆԱՏԵՍ-ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ
ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (1920 - 1921 թթ.)**

Վազգեն Վ. Հախոյան

Ազգային պատկերասրահ, Հայաստան

Հոդվածում ներկայացվում են Փամբակի տարածքում քեմալականների 1920-1921 թթ. ցեղասպան քաղաքականության դրսևորումները: Հոդվածը հիմնված է վերապրողներից և ականատեսներից նրանց ժառանգների միջոցով մեզ հասած ընտանեկան հիշողությունների վերլուծության վրա: Բանավոր նյութերը ձեռք են բերվել ազգագրական և բանահավաքչական դաշտային հետազոտությունների ու դիտարկումների արդյունքում, նյութական մի շարք վկայություններ՝ հողամաքրման աշխատանքների միջոցով, օգտագործվել են արխիվային նյութեր, ժամանակի մամուլ, մասնագիտական գրականություն: Անդրադարձ է արվել հայ խաղաղ բնակչության նկատմամբ քեմալականների ցեղասպան գործողությունների ընթացքին, կոտորածների կազմակերպման ձևերին:

Բանալի բառեր՝ քեմալականներ, Փամբակ, Շիրակի նահանգ, Ալեքսանդրապոլ, Արևմտյան Հայաստան, Կարս, կոտորած, Հայոց ցեղասպանություն, ականատես, վերապրող, վկայություններ, հիշողություններ, դիմադրություն, չեզոք գոտի:

Հոդվածը ներկայացվել է 15.06.2020:

Ընդունվել է տպագրության 16.04.2021:

The article was submitted on 15.06.2020 and accepted for publication on 16.04.2021.

Статья поступила 15.06.2020 и была принята к публикации 16.04.2021.

Ինչպես հղել՝ Վազգեն Վ. Հախոյան, «Քեմալականների իրականացրած զանգվածային կոտորածները Փամբակի տարածքում (Շիրակի նահանգ) ըստ ականատես-վերապրածների ընտանեկան հիշողությունների (1920 - 1921 թթ.)», *Յեղասպանագիտական հանդես* 9, no. 1 (2021), 83-122:

How to cite: Vazgen V. Hakhoyan, “Mass Killings Implemented by the Kemalists in Pambak Area (Shirak Province) According to the Family Memories of Eyewitness-Survivors (1920-1921),” *Tseghaspanagitakan handes* 9, no. 1 (2021): 83-122.

Как сослаться: Вазген В. Ахоян, Массовые погромы, осуществленные кемалистами в Памбакском районе (провинция Ширак) по семейным воспоминаниям очевидцев-выживших (1920-1921),” *Тсехаспанагитакан андес* 9, no. 1 (2021): 83-122.

Ներածություն

1920 թ. թուրք-հայկական պատերազմն իր ողբերգական հետևանքները թողեց Ալեքսանդրապոլի գավառում. այստեղ սրի քաշվեց հայ խաղաղ բնակչության մի մասը, մի զգալի հատվածն էլ դարձավ տարագիր: Չնայած թուրքական հրամանատարության խոստումներին՝ ապահովելու բնակչության կյանքի, պատվի և գույքի անձեռնմխելիությունը, քեմալականներն դաժան բարբարոսություններ իրականացրին Ալեքսանդրապոլի գավառում: Ալեքսանդրապոլի հեղկոմի անդամ Նահապետ Կուրդիկյանն իր ցուցմունքներում հայտնում է. «Քաղաքը վեր է ածվել գերեզմանոցի» և «կարելի է ասել, որ մեզ մոտ գավառ այլևս գոյություն չունի»¹:

Թուրքերը հայաթափում էին Հայաստանի Հանրապետության առավել հայաշատ գավառներից մեկը: Տեղացիների հետ կոտորվում էին 1915 թ. Մեծ եղեռնից փրկված բազմաթիվ գաղթականներ, ինչպես նաև 1920 թ. Վանանդի նահանգի կոտորածներից մազապուրծ եղած բազմահազար հայեր²:

Գրավելով Ալեքսանդրապոլը՝ թուրքերն անցնում են իրենց «հին գործին»: Ազգայնամոլ թուրք գեներալ Քյազիմ Կարաբեքիր փաշայի ղեկավարած զինուժի մասնակցությամբ գավառի տարբեր շրջաններում տեղի են ունենում զանգվածային կոտորածներ: Դրանցից անմասն չի մնում Փամբակի (Դարաքիլիսայի գավառ)՝ Ջաջուռի լեռնանցքից (թամբոց) մինչև Նալբանդ կայարան հատվածի բնակչությունը: 1920 թ. թուրք-հայկական պատերազմի՝ նոյեմբերի 18-ի զինադադարի համաձայն Նալբանդ կայարանից մինչև Համզաչիման³ հայտարարվում է հայ-թուրքական «չեզոք գոտի», որը սակայն գտնվում էր թուրքերի վերահսկողության տակ⁴: Մինչև զինադադարը՝ նախորդ երեք օրերին, Փամբակի նշված հատվածում տեղի են ունենում անմարդկային գազանություններ: Փամբակի հովտում կոտորածները և այնուհետև բռնաճնշումները շարունակվել են Ալեքսանդրապոլի գավառի ռազմակալման ամբողջ ընթացքում (1920 թ. նոյեմբերի 6 - 1921 թ. ապրիլի 22):

Մեր կողմից Փամբակի տարածքում կատարված ազգագրական, բանահավաքչական ուսումնասիրությունները փաստում են երբևէ տեղի ունեցած սարսափելի կոտորածները: Կատարված դաժան իրողությունների մասին պատմությունները վերապրածներից և ականատեսներից անցել են նրանց ժառանգներին, որոնցից

1 Վարդան Փեփրիզյան, «Քեմալականների նվաճողական քաղաքականությունը Հայաստանում և Սովետական Ռուսաստանի դիրքը», *Բանբեր Երևանի համալսարանի* 2, no. 65 (1988), 96:

2 1920 թ. հոկտեմբերի վերջին քեմալական զորքը գրավում է Վանանդի (Կարսի) նահանգը: Նահանգի քրիստոնյա բնակչությունը ենթարկվում է կոտորածների և բռնազաղթի: Ջարդերից փրկվածների մի մասն էլ մատնվել է սովի: *Հայկական հարց հանրագիտարան* (Երևան, Հայկական հանրագիտարանի գլխ. Խմբագրություն, 1996), 178-181: Վանանդի նահանգը գտնվում էր Շիրակի նահանգի արևմուտքում, ուստի թուրքական հարձակման ժամանակ բնակչության որոշ մասը գաղթում է Շիրակի նահանգ:

3 Այժմ՝ Մարգահովիտ (Լոռու մարզ):

4 Կորիճ Սարգսյան, «Համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում», *Գարուն* 4 (1990), 43:

էլ մենք գրանցել ենք նրանց հիշողությունները⁵: Խորհրդային տարիներին և, հատկապես, ստալինյան բռնապետության շրջանում, 1920 թ. տեղի ունեցածի ականատեսները և գաղթականները խուսափում էին խոսել կատարված չարիքների մասին: Ճիշտ է, նրանք հրապարակային չէին արտահայտվում, բայց պատմում էին իրենց հարազատներին, համագյուղացիներին: Այդ պատմությունները պատմում էին օդաներում⁶, երբ հավաքվում էին ընկերներով, հարևաններով, քաղաքից⁷ գալիս էր նաև աշուղ և մարդիկ մեղմում էին իրենց ցավերը⁸: Որոշներն էլ լռում էին՝ այդ դաժան օրերի հիշողություններով իրենց ժառանգներին «չծանրաբեռնելու» համար: 1960-ական թթ. ականատեսները սկսում են շարադրել նաև հուշագրություններ:

Թուրքերի վարքային դրսևորումները նախքան կոտորածները

Թուրքերը, որպես կանոն, մոլորեցնում էին բնակչությանը՝ նրանց բնաջնջելու համար օգտագործելով տարբեր խարդավանքներ: Ականատեսների վկայությունների համաձայն նրանք ամեն միջոց գործի էին դնում, որպեսզի կոտորածներից առաջ բնակչությանը կենտրոնացնեն մեկ վայրում. այդպես բազմաթիվ մարդիկ հայտնվում էին գյուղերի մեծ մարազներում⁹, օդաներում, ապա կոտորվում կամ կենդանի այրվում էին: Այդպես են շատ դեպքերում առանձնացրել տղամարդկանց ու սպանել:

Ղալթախչի¹⁰ գյուղում, որտեղ միայն տեղացիներից կոտորել են 2100 մարդ¹¹, կոտորածների առաջին օրը հայտարարել են, որ բնակիչները չվախենան և չփախչեն, որովհետև նրանք գործ ունեն «թուրքահայերի» հետ¹²: Հաջորդ օրը թուրքերը հայտարարել են գյուղի եկեղեցում¹³ օգնություն բաժանելու մասին և որ ընտանիքից

5 Հավաքչական աշխատանքներն իրականացրել ենք 2007 թ. և շարունակում ենք մինչ օրս: Հիմնական բանախոսներն ականատես-վերապրածների ժառանգներն են՝ առաջին և երկրորդ սերնդի ներկայացուցիչները: Սակայն հոգվածում որպես բանասացի խոսք բերվում են սկզբնաղբյուրի գործառույթի դերը ստանձնած վերապրողների և ականատեսների հաղորդած տեղեկությունները, որոնք գրանցելու ժամանակ հանդես են գալիս որպես ընտանեկան հիշողության տարրեր: Մեր կարծիքով, այս կերպ ընթերցողի համար ավելի տեսանելի է դառնում բանավոր պատմության սկզբնաղբյուրային արժեքը: Վկայությունների մեծ մասը ձայնագրել ենք և գրի առել, դրանք պահվում են տողերիս հեղինակի անձնական արխիվում: Տե՛ս «Վերապրածների և ականատեսների ու նրանց բանավոր պատմությունները փոխանցած ժառանգների աղյուսակ ըստ գյուղերի»:

6 Գոմին կից սենյակ, հյուրասենյակ:

7 Աշուղները Փամբակի տարածք էին գալիս Ալեքսանդրապոլից (Լենինականից):

8 Բանասաց՝ Վոլոդյա Մկրտչյան (ծնվ. 1929 թ., Ադրուլաղ):

9 Գոմին կից, երբեմն հեռու շինություն, ձմռանը հարդ, անասնակեր պաշարելու կառույց:

10 Այժմ՝ Հարթագյուղ (Լոռու մարզ):

11 Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 114, ց. 2, գ. 27, թ. 85: Համեմատած Փամբակի տարածքի մյուս գյուղերի հետ այստեղ թվով առավել շատ կոտորածներն են արձանագրվել տեղի բնակիչների շրջանում:

12 Մկրտիչ Ներսիսյան, *Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր* (Երևան, Գիտություն, 2005), 129:

13 Եկեղեցին կոչվել է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ 1902 թ., դրանից առաջ՝ 1843-1902 թթ.՝ Սուրբ

որքան շատ անդամ գնա՝ այնքան շատ օգնություն կստանան. այդ է պատճառը, որ շատերը գնացել են երեխաների հետ: Այնուհետև ասկյարները եկեղեցու բակում դաժանորեն կոտորում են հավաքվածներին¹⁴:

Հնչել են նաև սպառնալիքներ. այսպես, օրինակ, ականատես Վարդան Աֆրիկյանը (ծնվ. 1855 թ., Ղալթախի), որը 1920 թ. նոյեմբերի 17-ին Ղալթախից փախել էր Ղարաքիլիսա¹⁵, վկայում է, որ թուրքերը նոյեմբերի 14-ին մտել են Ղալթախի գյուղ՝ մեկ թնդանոթով և մեծ թվով գնդացիներով: Բնակիչները նրանց դիմավորել են աղ ու հացով և առաջարկել զորքի համար ճաշ պատրաստել: Թուրքերը մերժել են, ասելով, որ կճաշեն հաջորդ օրը: Հաջորդ օրը մինչև մութն ընկնելը պաշարելով գյուղը՝ գյուղի ավագից պահանջել են հավաքել բոլոր գյուղացիներին և նույնիսկ երեխաներին, ծերերին ու կանանց իբր ցուցակագրելու համար, սպառնալով, որ ով չներկայանա կամ թաքնվի, կախաղան կբարձրացվի, իսկ նրանց տները հրի կմատնվեն¹⁶: Մեկ այլ դեպքում ասելով, թե իբր ժողով է լինելու և փաշան ուզում է նրանց հետ խոսել՝ Ղալթախի գյուղում բնակչության մի մասին կենտրոնացրել են Գալստանց մարագում, մի մասին էլ Դալլաքանց օդայում և այլ տներում, որից հետո իրականացրել են կոտորածը¹⁷:

Աղբուլաղ¹⁸ գյուղի տարբեր թաղամասերում նույնպես տարբեր միջոցներ են կիրառվել մարդկանց կոտորելու համար: Ասկյարները անցել են տնից տուն ու դուրս են բերել ժողովրդին: Մի թաղի բնակիչներին հավաքել են եկեղեցու բակում, իսկ մյուս թաղի բնակչությանը՝ Դուրգարենց կալում¹⁹, հետո բոլորին միավորել են մի տեղ²⁰: Ապա հայտարարել են, որ Աղբուլաղի բնակիչները և փախստականները՝ Կարսից և Ալեքսանդրապոլից²¹, պետք է տարվեն Ալեքսանդրապոլ, որպեսզի հաշվառվեն, քանի որ նրանք արդեն թուրքահպատակ են: Այդպես մարդկանց կտրելով իրենց բնակավայրերից և մոլորեցնելով՝ լցրել են մարագները, կամ իբր

Ստեփանոս (տե՛ս ՀԱԱ ֆ. 47 ց. 6, գ. 162, 164): Փամբակի տարածքի գյուղերում եկեղեցիները առավել հայտնի են որպես «ժամ», շատ դեպքերում բանասացները չեն հիշում անունները: Եկեղեցիների անունները ճշտվել են չափաբերական մատյանների ուսումնասիրությամբ: Եկեղեցիներն այժմ կիսավեր վիճակում են:

14 Բանասաց՝ Ավետիս Ավագյան (ծնվ. 1927 թ., Ղալթախի), ականատես Հեղնար Ավագյանի (ծնվ. 1900 թ., Կարս) որդին:

15 Այժմ՝ Վանաձոր:

16 Ներսիսյան, *Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր*, 129: «Ղալթախի գիւղի կոտորածների մանրամասնությունները», *Յառաջ*, no. 254 (1920), 4:

17 Բանասաց՝ Լևոն Գաբրիելյան (ծնվ. 1949 թ.), ականատես Սիմոն Սիմոնյանի (ծնվ. 1906 թ., Ղալթախի) որդին: Բանասացներ՝ Ավետիք Գալստյան (ծնվ. 1940 թ., Ղալթախի), ականատես՝ Արեգ Աֆրիկյանի (ծնվ. 1905 թ., Ղալթախի) որդին, Էմմա Գալստյան (ծնվ. 1953 թ., Լենինական), ականատեսի հարսը: Արեգ Աֆրիկյանը տեսել է ընտանիքի անդամների և համագյուղացիների սպանողը, ընտանիքի ինը երեխաներից հրաշքով փրկվել է միայն ինքը, քանի որ կանգնած է եղել մոր առջևում, թիկունքով ընկել է ու մնացել է դիակների տակ:

18 Այժմ՝ Լուսաղբյուր (Լոռու մարզ):

19 Հացահատիկը դիզելու, կալսելու, մաքրելու տեղ:

20 ՀՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 38:

21 Այժմ՝ Գյումրի:

Ալեքսանդրապոլ տանելու և հաշվառելու պատրվակով սայլերով ու ոտքով տարել ու կոտորել են Ջարդի ձորում²²: Այդ մասին են անուղղակիորեն փաստում նաև Ջարդի ձորում սպանված մարդկանց ձեռքերի մեջ հայտնաբերված բանալիները²³: Մեկ այլ ականատեսի վկայության համաձայն ասկյարները մտել են տները և հայտարարել, որ գնան ցուցակագրվեն գյուղի եկեղեցում²⁴ նպաստ ստանալու համար²⁵: Ղարաբոյա²⁶ գյուղում նույնպես հայտարարել են օգնության մասին. Շուշանիկ Կուրդիկյանի (ծնվ. 1890 թ., Ղարաբոյա) վկայության համաձայն՝ թուրքերը հայտարարել են, որ գյուղի եկեղեցում²⁷ «աղեզ ալյուր»²⁸ են բաժանելու: Նա երեխայի հետ գնացել է եկեղեցի²⁹: Ղարաբոյա գյուղում՝ զորապետի հրամանով (որին մուղուր³⁰ էին կոչում) թուրքերը հայտնել են, որ տղամարդիկ գնան գյուղի եկեղեցին ու դպրոցը, իսկ կանանց խաբելով հայտնել են, որ սպանությունից խույս տալու նպատակով իրենց ափերի մեջ պետք է կնիք խփեն³¹:

Ղալթախչի, Ղարաբոյա և Աղբուլաղ գյուղերում այս հնարքները կիրառվել են մարդկանց կենտրոնացնելու, խմբավորելու և ոչնչացնելու նպատակով:

Ալեքսանդրապոլի գավառի բնակչությունը թուրքական վտանգի դեմ հանդիման մնում է անօգնական: Բախտի քմահաճույքին մնացած բնակչությունը ստիպված է լինում աղ ու հացով դիմավորել թշնամուն³², ինչը, մեր կարծիքով, կարելի է համարել «ինքնապահպանության» դրսևորում, որովհետև դրանք իրականացվել են գյուղի ավագների ու քահանաների առաջնորդությամբ և բնակչությանը կոտորածից

22 Բանասաց՝ Հռիփսիկ Հարությունյան (ծնվ. 1926 թ., Աղբուլաղ), ականատես Սարիբեկ Հարությունյանի (ծնվ. 1875 թ., Աղբուլաղ) աղջիկը:

Ջարդի ձորը գտնվում է Գյումրիից մոտ 20 կիլոմետր դեպի հյուսիս-արևելք, Ջաջուռի լեռնանցքով դեպի ձախ: Փամբակի տարածքում այն անվանում են նաև Հգազի ձոր: 1920 թ. աշնանը թուրքերը այս ձորն են բերել ու զանգվածաբար գնդակահարել և սրախողխող արել Ալեքսանդրապոլից, մոտակա գյուղերից և Ղարաբախի գավառի գյուղերից բազմահազար խաղաղ բնակիչների: Ավելի մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 134:

23 Տե՛ս Արմենուհի Մխչյան, «Մոմավառություն՝ Գյումրիում. ցեղասպանության շարունակությունը տեղի է ունեցել նաև Շիրակ աշխարհում», <https://armenpress.am/arm/news/803273>, դիտվել է 16.10.2020:

24 Եկեղեցին կոչվել է Սուրբ Աստվածածին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 47, ց. 6, գ. 57):

25 ՀՅԹԻ, Թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 38: Հայկանուշ Խանգաղյանի (ծնվ. 1909 թ., Աղբուլաղ) վկայությունը:

26 Այժմ՝ Խնկոյան (Լոռու մարզ):

27 Եկեղեցին կոչվել է Սուրբ Աստվածածին (ՀԱԱ, ֆ. 47, ց. 6, գ. 177, 178):

28 Ըստ բանասացի՝ ալյուրի տեսակ, որ այն ժամանակ կոչվել է այդպես:

29 Բանասաց՝ Ջանիբեկ Մամիկոնի Հարությունյան (ծնվ. 1946 թ., Խնկոյան), ականատեսի թողը:

30 Մյուսուր, մյուդիր՝ թուրք պաշտոնյա, կառավարիչ, տեսուչ:

31 ՀՅԹԻ, Թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 42: «Վերապրածի վկայություն» հուշագրող՝ Ժենյա Խաչատրյան (ծնվ. 1918 թ.), ականատես Վարդանուշ Խաչատրյանի (ծնվ. 1898 թ., Նալբանդ) դուստրը: Բանասաց՝ Սամվել Բադալյան (ծնվ. 1972 թ., Խնկոյան), ականատես Հայկանուշ Բադալյանի (ծնվ. 1895 թ.) թողը:

32 Կարինե Ալեքսանյան, «Ալեքսանդրապոլի անկումը՝ Կարսի սցենար», <http://nationalidea.am/articles.php?id=74>, դիտվել է 15.10.2020:

փրկելու նպատակ են հետապնդել: Բացի այդ այս երևույթը նաև հայ բոլշևիկների ակտիվ քարոզչության հետևանքն էր: 1920 թ. աշնանը թուրքական մահաբեր արշավանքի օրերին Ալեքսանդրապոլի (և ոչ միայն) հայ բոլշևիկները պարտվողական բովանդակությամբ թռուցիկներ էին տարածում զինվորների և խուճապահար ժողովրդի մեջ. «Չկրակեն, հայ աշխատավոր զինվոր, եղբայրական թուրք բանակի վրա, նա քեզ բերում է ոչ թե ստրկություն, այլ ազատություն. նա գալիս է օգնելու քեզ քո սրբազան պայքարի մեջ»³³: Բաքվում գտնվող ՀԿ(Բ)Կ Կենտկոմի անդամների ստորագրությամբ «հույժ գաղտնի» տրվել էր քարոզչության հրահանգ՝ թիկունքում և ռազմական գոտիներում հնարավորության դեպքում նաև թռուցիկների միջոցով ծավալել լայն քարոզչություն: Ասվում էր, որ «Թուրքիան այլևս նախկին Թուրքիան չէ և Հայաստանի նկատմամբ ագրեսիվ նպատակներ չունի», «Քեմալական Թուրքիան Ռուսաստանի դաշնակիցն է, և պայքարում է իր ազգային ազատության համար» և այլն³⁴:

Թշնամուն աղ ու հացով դիմավորելու դեպքեր ենք տեսնում նաև Ղարաքիլիսայի գավառում: Ինչպես նշվեց Ղալթախչի մտած թուրքերին դիմավորել են աղ ու հացով: Գյուղի ազդեցիկ մարդիկ քյոխվայի³⁵ նախաձեռնությամբ փաշային ընդառաջ են գնացել աղ ու հացով, սակայն թուրքերը խաղաղասիրության դրսևորում են ցույց տվել ընդամենը մեկ օր՝ հաջորդ օրն իրականացնելով սարսափելի կոտորած: Թուրք փաշային աղ ու հացով է դիմավորում նաև Ղալթախչի գյուղի քահանան՝ Տեր Գևորգը, որին թուրքերը տանում են իրենց հետ և սպանում, կոտորածի առաջին օրը քահանային և գյուղից երեք ազդեցիկ մարդկանց տանում են Փոքր Քափանակի³⁶ ուղղությամբ³⁷:

Հայտնի է, որ Աղբուլաղ գյուղի քյոխվան մի քանի մարդկանց հետ աղ ու հացով գնացել էր թուրքերին ընդառաջ: Թուրք փաշան սրով խփել, աղն ու հացը թափել էր գետնին, իսկ քյոխվային սպանել³⁸:

Ամփոփելով փաստենք, որ թուրքերի «նախապատրաստական գործողությունները» կոտորածներից առաջ նպատակաուղղված էին հայ խաղաղ բնակչության շրջանում թերևս «ապահովության զգացում» առաջացնելուն, որը կոյտուրացներ անարգել բռնությունների գործադրումը:

33 Արարատ Հակոբյան, «Մի ամբաստանագիր Ալեքսանդրապոլի հեղկոմի խայտառակ գործերի մասին», *ՎԷՄ համահայկական հանդես* 1 (2015), 228-229:

34 Կտրիճ Սարգսյան, «Համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում», 20:

35 Գյուղապետ, տանուտեր:

36 Այժմ՝ Հովիտ (Շիրակի մարզ):

37 Բանասաց՝ Միշա Մինայան (ծնվ. 1928 թ., Ղալթախչի), ականատես Գուրգեն Մինայանի (ծնվ. 1903 թ., Ղալթախչի) որդին: Բանասաց՝ Լևոն Գաբրիելյան (Հարթագյուղ), ականատես Միմոն Միմոնյանի որդին: «Ղալթախչի գիւղի կոտորածների մանրամասնությունները», *Յստաջ*, no. 254 (1920), 4: Հիշատակվող ականատեսը նույն Վարդան Աֆրիկյանն է, որի վկայությունը հրատարակվել է ժամանակի մամուլում:

38 Մկրտիչ Խանգաղյան, *Իմ հայրենի գյուղը՝ Փամբակի Լուսաղբյուրը* (Երևան, Հրագրան, 2000), 178: ՀՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 38:

Կոտորածների վայրերը և եղանակները

1920 թ. նոյեմբերի 15-ին թուրքերը երեք գորապյունով մտնում են Փամբակի տարածք. առաջին գորապյունը մտնում է Ղալթախչի, երկրորդը գնում է Ղարաբոյա, իսկ երրորդը՝ Աղբուլաղ³⁹:

Ականատեսների վկայության համաձայն գյուղերում կոտորածները կազմակերպվել և իրականացվել են ինչպես կանոնավոր բանակի, այնպես էլ հրոսակախմբերի կողմից⁴⁰: Ղարաբոյա գյուղում ասկյարների հետ միասին կոտորածներին մասնակցել է նաև «խուժանը»: Կանոնավոր զորքի կոտորածից հետո եկել է կատաղած խուժանը, որը սկսել է նորից կոտորել և զբաղվել սպանվածների խուզարկությամբ և թալանով⁴¹: Ղալթախչի գյուղում կոտորածներին մասնակցած ասկյարների մեջ շատ են եղել քրդեր, ինչպես նաև բանտերից ազատված հանցագործներ⁴²: Աղբուլաղ գյուղում առանձին տների վրա հարձակվել են երկու-երեք զինված ասկյարներ և նույնիսկ հետագայում շատերի մեջ, որոնք անցել էին «չեզոք գոտին», կարծիք էր ստեղծվել, թե ողջ գյուղի բնակչությանը կոտորել են մի քանի ասկյար⁴³: Կոտորածներին մասնակցել են նաև տարածաշրջանում բնակվող թուրքերը⁴⁴:

Հայաստանի գրաված մասերում ձեռք բերված հետախուզական տվյալների համաձայն «տաճկական զորքերը» զուտ «տաճկական տարրերից» չէին կազմված, այլ տեղաբնակ՝ Զարիշատի⁴⁵, Աղբաբայի⁴⁶ թուրքերից, մասնավորապես բանակի ձիավոր մասը⁴⁷:

Գյուղերի մեծ մարագներում հայ բնակչությանը խաբեությամբ կենտրոնացնելուց հետո, որտեղ իբր նրանց պետք է հաշվառելին, թուրքերն իրականացնում են դաժան կոտորածներ: Դրանց առաջին զոհերը տղամարդիկ էին, որի նպատակը բնակչությանը դիմադրություն ցույց տալու հնարավորությունից զրկելն էր: Թուրքերը Ղալթախչի

39 Ներսիսյան, Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, 129:

40 Քեմալական բուն զորաբաժիններից բացի, բանակում գործում էին նաև երկու աշիրեթական գնդեր, ադրբեջանական հեծելազորի հարյուրյակ, լեզգիների հեծելագունդ և քրդական, թաթարական և թուրքական անկանոն հրոսակախմբեր: Յակոբ Տեր-Յակոբեան, *Հայաստանի վերջին աղէտը: Քեմալական արշավանքը, Կարսի եւ Ալեքսանդրաբոլի անկումները, հայ բանակին քայքայումը, յարձակման եւ քայքայման պատճառները պայշեվիբեան տիրապետութիւնը: Անտիպ փաստաթուղթեր դիւանագիտական գրեր եւ բազմաթիւ պատկերներ* (Կ. Պօլիս, տպ. Մ. Տեր Սահակեան, 1921), 93:

41 Բանասաց՝ Սամվել Բադալյան (ծնվ. 1972 թ., Խնկոյան), ականատես Հայկանուշ Բադալյանի (ծնվ. 1895 թ.) թոռը:

42 Բանասաց՝ Ազատ Սահակյան (ծնվ. 1935 թ., Ղալթախչի), դեպքերի ժամանակակից Մեխակ Սահակյանի (ծնվ. 1888 թ., Ղալթախչի) որդին:

43 Բանասաց՝ Հռիփսիկ Հարությունյան (ծնվ. 1926 թ., Աղբուլաղ): Ականատես Սարիբեկ Հարությունյանի (ծնվ. 1875 թ., Աղբուլաղ) աղջիկը:

44 Բանասաց՝ Հռիփսիկ Հարությունյան:

45 Այժմ՝ Արփաչայ, քաղաք և շրջան Թուրքիայի հանրապետության Կարսի մարզում: Նաև Գրենադեթսկոյե: Տեղի քուրդ բնակիչները անվանում են Զարուշաղ:

46 Համապատասխանում է Ամասիայի և մասամբ Աշոքքի շրջաններին (Շիրակի մարզ):

47 ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 33, թ. 52:

գյուղում իբր ցուցակագրման համար հավաքված բնակիչներից առանձնացնում են բոլոր տղամարդկանց, բոլորից վերցնում են դանակները և դրամները, ապա 20 հոգանոց խմբերով յոթ ասկյարների ուղեկցությամբ տանում: Այնուհետև, չորսական մարդ մտցնում են տները և սվիններով խողխողում⁴⁸:

Շատ են եղել մարդիկ, որոնք, չհավատալով գյուղի ավագին և չվստահելով թուրքերին, թաքնվել են մարագներում, հորերում, գաղտնի կացարաններում, դեզերի, փայտե ամբարների, մեծ սնդուկների մեջ և այլուր: Շատ դեպքերում թուրքերը հայտնաբերում են թաքստոցները և կոտորում մարդկանց: Շատերը մատնվում են երեխաների լացի ձայներից:⁴⁹ Մարագներում թաքնված կանայք երբեմն ստիպված խեղդամահ էին անում իրենց նորածին երեխաներին, որպեսզի չմատնվեն և երեխաների ձայներից ասկյարները չմտնեն մարագները: Ըստ ականատեսի՝ Անգին Ոսկանյանը (ծնվ. 1897 թ., Դուզքենդ⁵⁰), խեղդելով իր երեխային, փրկում է բազմաթիվ այլ երեխաների (նրանց երգիկից հանելով) և 30 կնոջ կյանք⁵¹:

Թաքստոցները, որոնք հիմնականում չեն հայտնաբերվել թուրքերի կողմից, եղել են առանձին ջրհորների մեջ փորված փոքր կացարաններ⁵²:

Հուշագրող Սարգիս Հարությունյանը (ծնվ. 1907 թ., Ղարալ⁵³), որ Կարսի դեպքերի ականատեսն էր և տեսել էր թուրքական գազանությունները, տեղեկացնում է նաև Փամբակի երեք գյուղերի հրեշավոր կոտորածների մասին՝ նշելով, որ մոր՝ Հախոյանց գերդաստանից, Ղալթախի գյուղում՝ սեփական տանը, դաժանաբար սպանվել են 19 հոգի: Իսկ իր ծննդավայրին (Ղարալին) հարևան Ղալթախի, Ղարաբոյա, Աղբուլաղ գյուղերի կոտորածը բնութագրում է որպես գազանություն⁵⁴:

Փամբակի տարածքում կոտորածների հիմնական զենքը հրացանի սվինն էր: Օրինակ, խոշոր կոտորածի վայրերից մեկում՝ Ջարդի ձորում, նույնպես մեծամասամբ սպանել են սառը զենքերով⁵⁵: Գյուղերում խաղաղ բնակչությանը կոտորել են ամենայն դաժանությամբ. դիակները և ողջ մնացածները խոշտանգվել են, մասնատվել և գլխատվել: Մարդիկ ողջ-ողջ այրվել են մարագներում կամ կենդանի լցվել ջրհորները: Կոտորել են ինչպես առանձին տներում, այնպես էլ հավաքական մեծ ու փոքր մարագներում, ձորերում. բանասացների ձևակերպմամբ «թվանքի խշտիկով խշտկահարել են»⁵⁶: Ինչպես Հայոց ցեղասպանության ժամանակ՝ Արևմտյան

48 «Ղալթախի գիղի կոտորածների մանրամասնությունները», *Յսուաջ*, no. 254 (1920), 4:

49 Բանասաց՝ Միշա Մինասյան (Հարթագյուղ):

50 Այժմ՝ Ախուրյան (Շիրակի մարզ):

51 Բանասաց՝ Ավետիս Ավագյան (Հարթագյուղ), դեպքերի ականատես Հեղնար Ավագյանի որդին: Նաև բանասաց՝ Լորենտա Ոսկանյան (ծնվ. 1957 թ., Հարթագյուղ), ականատես Անգին Ոսկանյանի թոռնուհին:

52 Բանասաց՝ Ժենյա Մկրտչյան (ծնվ. 1933 թ., Ղալթախի):

53 Այժմ՝ Կաթնաջուր (Լոռու մարզ):

54 Սարգիս Հարությունյան, *Կանքի ճանապարհ*, Երևան: Հուշագրություն է, հրատարակվել է ձեռագրի իրավունքով, որպես հուշանվեր, 26, 92:

55 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 134:

56 Բանասաց՝ Միշա Մինասյան (Հարթագյուղ):

Հայաստանում, 1920 թ. Շիրակի նահանգում նույնպես իրականացրել են ծիսական բռնություններ: Ծիսական բռնությունների ամենատարածված ձևերից էին զոհերի մարմինների խոշտանգումը, հատկապես վերջույթների անդամահատումը. ականջ կտրելը, աչք հանելը, սեռական օրգանների խեղումը և այլն, որոնք մեծ տարածում են ունեցել նաև համիդյան և Ադանայի կոտորածների ժամանակ⁵⁷: Ինչպես արդեն նշվեց, թուրքերը դաժանորեն կոտորել են հատկապես արական սեռի ներկայացուցիչներին: Թուրքերը Ղարաբոյա գյուղում հետապնդում էին անպաշտպան մարդկանց, առաջին հերթին՝ արական սեռի ներկայացուցիչներին. տղա երեխաներին մասնատում են՝ կտրում ոտքերը, ձեռքերը ու գլխատում⁵⁸:

Հուշագրող Ֆիդայի Գրիգորյանը (ծնվ. 1908 թ., Ղալթախ) իր ինքնակենսագրության մեջ ներկայացնում է Ղալթախի գյուղում իր տեսած սարսափելի կոտորածները: Նա այլ մարդկանց հետ թաքստոցում էր, երբ թուրքերը մտնում են այնտեղ և սկսում սրախողխող անել անպաշտպան մարդկանց՝ խոշտանգելով, գլխատելով և թրատելով նրանց: Սգրախով⁵⁹ հարվածում էին վիրավորներին և մահացածներին: Հուշագիրը ողջ է մնում՝ դիակների տակ մնալով, սակայն, շատերի պես, ականջի հետևը և վզի շրջանում ստանում է սվինի հարվածներ: Կոտորածները դադարեցնելու հրամանից հետո Ֆիդային իրենց տանը հայտնաբերում է ընտանիքի անդամների դիակները⁶⁰: Կոտորածից հետո թուրքերը հայտարարում են, որ այդ գյուղերի տարածքներն արդեն «Թուրքիա» են և իրենք կարող են անցնել Հայաստան, որը սկսվելու էր Ավդիբեկ⁶¹ գյուղից. շատերը հեռանում են⁶²:

Ականատեսների վկայության համաձայն՝ Ղարաբոյա գյուղում թուրքերն ընտրում էին տարողունակ մարագներ, որպեսզի շատ մարդ տեղավորվեր: Խաբեությանը, իբր հաշվառելու նպատակով, կանանց և երեխաներին լցնում էին առանձին մարագները, տղամարդկանց՝ առանձին և կոտորում: Կանանց մեծ մասին կոտորում են գյուղի եկեղեցում⁶³: Մարդկանց առանձնացնում էին նաև Աղբուլաղում: Գլխավոր

57 Առավել մանրամասն՝ Հասմիկ Գրիգորյան, *Ջանգվածները և զանգվածային բռնությունները. Օսմանյան կայսրության մուսուլման բնակչության մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը* (Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2017), 126-132:

58 Բանասաց՝ Սամվել Բադալյան (Իսկոյան), ականատես՝ Հայկանուշ Բադալյանի (ծնվ. 1895 թ.) թողը:

59 Նիզակ:

60 Պատի մեջ սարքած պահարանից վերցնում է Բասենի Հերթև գյուղից բերված իրենց տան սուրբը՝ «Իսկանդերի գիրքը» (ըստ բանասացի այդ գիրքը եղել է «Նարեկ»): Այժմ նրանց տան մոտ է գտնվում սուրբ Իսկանդեր մատուռը, հասնում է Փամբակ գետի վտակներից Արտագետ գետը, սակայն թուրքերը բռնում են նրան: Ուզում են խլել գիրքը, նետեն սուլաղը (սառած գետի վրա անցք, որտեղից ջուր էին հանում), ինքը չի տալիս, ընկնում է սուլաղի վրա: Թուրքերը հայիցում են, խփում, բայց չեն վնասում, ասելով, որ այդ իրենց՝ հայերի «դորանն» է:

61 Այժմ՝ Ծաղկաբեր (Լոռու մարզ):

62 Բանասաց՝ Ազնիվ Աֆրիկյան (ծնվ. 1946 թ., Հարթագյուղ), ականատեսի հարսը: Բանասացը մեջբերումներ է անում հուշագրությունից: Հուշագրությունը գտնվում է բանասացի մոտ: Ըստ զինադադարի համաձայնագրի, չեզոք գոտին սկսվելու էր ոչ թե Ավդիբեկից, այլ նրանից 11 կմ արևելք գտնվող Նալբանդ կայարանից:

63 Բանասաց՝ Վարդգես Սարիբեկյան (Իսկոյան):

հավաքատեղի Թոփչանց գոմից և բակից տղամարդկանց և պատանիներին առանձնացնում են կանանցից և երեխաներից, լցնում են Ղարազոյան Վարդանի և Մաթոսի գոմն ու մարագը ու այրում⁶⁴:

Ղալթախչի գյուղում կոտորածի «մեծ շինությունը» Գալստանց մարագն է եղել⁶⁵: Սակայն այդ գյուղերում կոտորածները այս մարագներով չեն սահմանափակվել. գյուղերի առանձին թաղամասերում բազմաթիվ մարագներ, գոմեր ու տներ են օգտագործվել ոճիրներն իրականացնելու համար: 1921 թ. լուսանկարները ներկայացնում են կոտորածի վայրերը՝ այն շինությունները, որտեղ պարզորոշ երևում են նաև զոհերի աճյունները և դիակները⁶⁶:

Ականատես-վերապրող Սիմա Սարգսյանը (ծնվ. 1910 թ., Ղալթախչի) վկայում է, թե ինչպիսի դաժանությամբ էին թուրքերը ստուգում արդեն իսկ խոշտանգված դիակները Ղալթախչի գյուղում: Նա այդ ժամանակ դիակի տակ է եղել և աջ ոտքին ստացել սվինի երկու հարված: Շատերը կրկնակի սվինահարման ժամանակ մահացել են: Այս սարսափելի իրողության՝ սվինահարված դիակների կրկնակի և եռակի վերստուգումների և դիակների խեղման մասին պատմում են բազմաթիվ ականատեսներ⁶⁷:

Ականատեսներից մեկի վկայության համաձայն՝ Ղալթախչի գյուղում կոտորածը շարունակվել է նաև մույթն ընկնելուց հետո. թուրքերը կրակներ են վառել ու հայհոյանքներով կրկին սվինահարել վիրավորներին⁶⁸:

Ականատես Վարդանուշ Խաչատրյանը (ծնվ. 1898 թ.), ում հղիության վերջին օրերն էին, նույնպես վկայում է, թե ինչպես են Ղարաբոյա գյուղում սվինահարել կանանց ու լցրել ձորը: Նա սահել է ձորը և մնացել դիակի տակ: Թուրքերի սվիններն անցել են իր վրա գտնվող դիակի տակից և երկու սանտիմետր խորությամբ ինը տեղից վիրավորել էին նրա թիկունքը: Առավոտյան լույսը բացվելուն պես ձորն են եկել հինգ թուրքեր և նորից սվինահարել դիակները ու վերադարձել գյուղ: Այս գործողությունները կրկնվել են երեք օր⁶⁹:

Ականատես Սարիբեկ Հարությունյանի (ծնվ. 1875 թ., Աղբուլաղ) ողջ ընտանիքին թուրքերը կոտորում են Ջաջուտի լեռնանցքում գտնվող Հզազի ձորում: Նույն ճակատագրին են արժանանում նաև այս գյուղի մյուս բնակիչները, որոնց ասել էին, թե իբր տանում են Ալեքսանդրապոլ հաշվառելու. նրանց վերջին կանգառը Հզազի ձորն էր: Սարիբեկի կինը և երեխաները զոհ են գնում թուրքական դաժան կոտորածին: Նրան սվինահարում և նետում են գյուղի միջով հոսող առվակը, որտեղ երկար ժամանակ մնում է ուշաթափված: Ուշքի գալով՝ վազում է Ջարդի ձոր ու տեսնում

64 ՀՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 38:

65 Բանասաց՝ Ժենյա Մկրտչյան (Հարթագյուղ):

66 ՀԱԱ Կինոֆոտոֆոնո փաստաթղթերի մասնաճյուղ: Պոզիտիվ լուսանկարների ֆոնդ: Լուսանկարներ՝ p-30, p-31, p-248, «Ղալթախչի զոհեր, զոհերի վայրեր»:

67 Բանասաց՝ Լենա Թորոպյան (ծնվ. 1936 թ., Ղալթախչի), ականատեսի աղջիկը:

68 «Ղալթախչի գիւղի կոտորածների մանրամասնություններ»:

69 ՀՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, p.8, ֆ.հ.42:

բազմահազար «հոշոտված դիակներ»⁷⁰: Հզագի ձորում թուրքերը կոտորել են նաև Տացու Աթաբեկի⁷¹ ընտանիքից ութ կին ու տասներկու երեխա⁷²:

Ջարդի ձորում սպանող տեղի էր ունեցել գազանաբար: Ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Ղարաքիլիսայի Ամերիկյան կոմիտեի ներկայացուցիչ Չարլզ Գրանտը, ըստ որի Ջաջուռի լեռնանցքի գրեթե բարձունքին 200 ֆուտ տարածության վրա նրանք հանդիպում են մեծամասամբ երեխաների դիակների: Նրանք եկել էին եզրահանգման, որ դրանք մերձակա գյուղերի հայ բնակիչների դիակներ էին, որոնք մորթվել էին 3-4 ամիս առաջ: Զոհերի տեսանելի թիվը մոտավորապես 1200-1500 մարդ էր, որոնք, դատելով գտնված ընդամենը 200 փամփուշտների պարկուճներից, մեծամասամբ սպանվել էին սվիններով կամ այլ տեսակի սառը զենքերով, ինչը հաստատվում էր հատկանշական վերքերով: Օրինակ՝ կտրված կրծքեր, հղի կանանց ճեղքված որովայններ և այլն: Հատկանշական է եղել տղամարդկանց դիակների իսպառ բացակայությունը: Արական սեռի ամենատարիքով զոհը 14 տարեկան է եղել: Պարկուճների թուրքերեն վերատառությունները և փամփուշտների վրայի կիսալուսնի և աստղի նշանները կասկած չեն թողել, թե ովքեր են եղել մարդասպանները: Կոտորածի տեղում թափված փամփուշտների ուղիղ հավասար շարքը պարզ կերպով ցույց է տվել, որ կոտորածները կատարվել են ուսուցված, պատշաճ դեկավարված զորաջոկատի կողմից⁷³:

Նմանօրինակ փամփուշտների պարկուճներ, որոնց մասին վկայում է Չարլզ Գրանտը, հայտնաբերվեցին նաև Հարթագյուղում կատարված ուսումնասիրությունների ժամանակ: Մեր կողմից ուսումնասիրված մարագից, հացատան թոնրից և հարակից տարածքից⁷⁴ հայտնաբերվեցին մարդկային այրված ոսկորներ, գոտի, մատնոց և կրակված փամփուշտներ, ինչը խոստովանում էր խաղաղ բնակիչների նկատմամբ կատարված ոճիրի⁷⁵:

Փամփուշտի պարկուճների ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դրանք հիմնականում Օսմանյան կայսրության պատվերով թողարկված գերմանական արտադրության Mauser M1890 7,65x53 տրամաչափի հրացանի համար նախատեսված փամփուշտների պարկուճներ են⁷⁶: Պարկուճների հետևի հատվածում պատկերված են թուրքական մահիկ ու աստղ և օսմանատառ գրություններ, օրինակ՝ «մաուգեր, 1328 հիջրա (1910 թ.)»: Կան այլ տրամաչափի 1909, 1914, 1915, 1918 թթ. թվագրվող պարկուճներ⁷⁷:

70 Բանասաց՝ Հռիփսիկ Հարությունյան (Հարթագյուղ):

71 Աթաբեկ Խնկոյան, Խնկո Ապեր (ծնվ. 1870 թ., Ղարաբոյա):

72 Սերո Խանգադյան, *Հայրենասպառում*, 1959-1981, Գիրք Գ (Երևան, Հայաստան, 1984), 334:

73 ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 134:

74 Ուսումնասիրության (պեղումների) է ենթարկվել Սիրան Հախոյանի (Սիրան արքա) ավերված տունը, որը կոտորածներից հետո այդպես էլ չի բնակեցվել, իսկ կինը հաստատվել է Թիֆլիսում:

75 Տե՛ս պատկեր 1:

76 ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 64, ֆ.հ. 286, 287:

77 Տե՛ս պատկեր 2:

Ջարդի ձորը մերձակա գյուղերի բնակիչների վերջին հանգրվանը եղավ. ինչպես նշեցինք, շատերն անտեղյակ էին, թե ուր են գնում և ուր են տանում թուրքերն իրենց՝ հաշվառելու, թե՛ սպանելու: Մինչև օրս Ջարդի ձորից հայտնաբերվում են տարբեր մատնաքներ, որոնք խոսում են պատմական այդ դեպքերի մասին⁷⁸: Ջարդի ձորում սպանվածների մեջ շատ են եղել Աղբուլաղ գյուղի բնակիչները, նաև գաղթականներ⁷⁹:

Կոտորածների վայրերում դիակների մեծ մասը ռազմակալման ողջ ընթացքում չեն թաղվել: Ջաջուռի լեռնանցքում և Փամբակի տարածքի նշված հատվածում լինում էին սաստիկ ձմեռներ, գարունը ուշ էր գալիս, ձյան բարձրությունը հասնում էր մինչև 1,5 մետրի: Ականատեսների հիշողությունների համաձայն ջարդերի ժամանակ՝ նոյեմբերի 15-ին, արդեն ձյուն էր եկել⁸⁰: Հետևաբար դիակները մնացել են ձյան տակ, կացարաններում, կոտորածների այլ վայրերում: Գարնանը՝ ձնհալից հետո, դրանք տարաբնույթ հիվանդությունների պատճառ են դարձել՝ մնալով և նեխելով նաև տներում: Այն, որ տարածաշրջանում արդեն իսկ առկա էին բազմաթիվ վարակիչ և տարափոխիկ հիվանդություններ՝ խոլերա, բժավոր ու հետադարձ տիֆ, մալարիա և այլն, վկայում է հուշագրող Սարգիս Հարությունյանը⁸¹:

1921 թ. մայիսի 2-ի հեռագրով իջեցված հ.182 կարգադրությամբ հանձնարարվում է հուղարկավորել Դալթախչի, Դարաբոյա և Աղբուլաղ գյուղերում թուրքերի կողմից կոտորածի ենթարկված հայերի դիակները, իսկ հանձնաժողովի կողմից կատարված հաշվարկները և դիակների ուսումնասիրությունները փաստում են, որ սպանվածների 90 տոկոսը եղել են կանայք և երեխաներ և միայն 10 տոկոսը՝ տղամարդիկ: Դիակների վրա, որպես կանոն, եղել են 10-15-ից ավելի սրի հարվածներ, դիակների մի զգալի մասը գլխատված և դաժանաբար այլանդակված էր, ջարդի ենթարկվածների մի մասին այրել էին տներում⁸²:

Միայն վերոհիշյալ գյուղերում տեղի բնակչության հետ միասին սրի են քաշվել նաև 7500 պատսպարված փախստականներ Կարսի և Ալեքսանդրապոլի շրջաններից, որոնք Ալեքսանդրապոլի անկումից հետո եկել էին այստեղ⁸³: Թուրք ասկյարներն առանձնակի դաժանությամբ են կոտորել Փամբակի տարածքում ապաստանած գաղթականներին: Ալաշկերտի 1915 թ. ջարդերից փրկված և Կարս գաղթած Եղո Ավետիսյանը (ծնվ. 1898 թ., Ալաշկերտ), ով մարմնի վրա ուներ 32 սվինի հարվածի հետքեր, հալածանքների է ենթարկվում նաև Դալթախչի գյուղում՝ 1920 թ.: Նա տեսել էր, թե ինչպես են թուրքերը խոշտանգում, գլխատում, մասնատում գետնափոր հորերի մեջ թաքնված մարդկանց, որոնք գաղթել էին Կարսից⁸⁴:

78 Արմենուիի Մխոյան, «Մոմավառություն՝ Գյումրիում. ցեղասպանության շարունակությունը տեղի է ունեցել նաև Շիրակ աշխարհում», <https://armenpress.am/arm/news/803273>, դիտվել է 16.10. 2020:

79 Բանասաց՝ Հռիփսիկ Հարությունյան (Հարթագյուղ):

80 ՀՅԹԻ, Թանգարանային ֆոնդեր, Բաժին 8, ֆ.հ. 38:

81 Հարությունյան, 90:

82 ՀԱԱ, ֆ.114, ց.1, գ.124, թ.6, ֆ.114, ց.1, գ.131, թ.12:

83 Նույն տեղում: ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ.27, թ.86:

84 Բանասաց՝ Իշխան Ավետիսյան (ծնվ. 1937 թ., Դալթախչի), ականատեսի որդին:

Կարսի կոտորածից փրկված Հեղնար Ավագյանը (ծնվ. 1900 թ., ամուսնացած է եղել Ուզունքիլիսա⁸⁵ գյուղում) վերստին ապրում է ցեղասպանության սարսափները Ղալթախչիում: Թուրքերը հայտարարել էին, թե իբր օգնություն են բաժանելու գյուղի եկեղեցուն և եկեղեցի շտապող կնոջը ճանապարհին բռնել են, քաշել մազերից և սվինի յոթ հարված հասցրել: Նա ողջ է մնացել, մինչև մահ կրելով տառապանքի հետքերը⁸⁶:

ՀԽՍՀ արտաքին գործերի նախարար Ասքանազ Մոավյանը հեռագրում է Բաքվում Հայաստանի ներկայացուցիչ Դովլաթովին՝ ներկայացնելով նաև կոտորված բնակչության թվերը: Այսպես, թուրքերը Ղալթախչի գյուղում կոտորել են 2100, Աղբուլաղում՝ 1186, Ղարաբոյաում՝ 1100 մարդ: Այս երեք գյուղում կոտորված բնակչության ընդհանուր թիվը կազմում է 4386 մարդ: Այսպիսով՝ միայն այս երեք գյուղերում տեղի բնակիչները և փախստականները միասին, սպանվել են 11886 մարդ⁸⁷:

Խորհրդային Հայաստանի ներքին գործերի ժողկոմ Պողոս Մակինցյանը «Կոմունիստ» թերթի հետ գրույցում ներկայացնում է Ալեքսանդրապոլի և գավառի վիճակը. «Քաղաքն ավերված է: Ահա առաջին տպավորությունը, որ ստանում ես քաղաքից՝ թուրքերի գնալուց հետո: Գտնվել են մեծ կոտորածների հետքեր: Միայն Նալբանդ կայարանի մոտ ձորում⁸⁸, որտեղով ես անձամբ անցա ու տեսա, մոտ 3000 դիակներ կան»⁸⁹:

Փրկված և ականատես բնակիչները նշել են թուրքական մի քանի գորամասերի և Ադրբեջանի հեծելազորի գազանությունների մասին⁹⁰: Եվ ամենևին էլ պատահական չեն դեռևս 1920 թ. մարտ-ապրիլ ամիսներին մուսավաթական բանակի, մուսուլմանական մոլեռանդ խուժանի, թուրք սպաների հրամանատարությամբ իրականացված կոտորածները Արցախում. նույն ձեռագիրը, նույն վարքագիծը, նույն ցեղասպան դրսևորումները՝ տների հրկիզում, բնակչության կոտորած ու թալան: Շուրջում ավերել ու կրակի են մատնել հայերի տները, մորթել խաղաղ բնակչությանը, արյուն ու ավեր սփռել: Սրի են քաշվել հազարավոր տղամարդիկ, կանայք, ծերեր ու երեխաներ⁹¹:

85 Այժմ՝ Էսենյայա, գյուղ Թուրքիայի Հանրապետության Կարսի մարզում, նախկին Վանանդի նահանգի Կարսի շրջանում:

86 Բանասաց՝ Ավետիս Ավագյան (Հարթագյուղ), ականատեսի որդին:

87 ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 27 թ. 86:

88 Մեր կարծիքով խոսքը նույնպես Ջարդի ձորի մասին է, որը գտնվում է Նալբանդ կայարանից արևմուտք, 15 կմ հեռավորության վրա: Թեև ականատեսը նշում է «Նալբանդ կայարանի մոտ ձորում», բայց մինչև Նալբանդ կայարանն այս ձորը մոտ է Ղալթախչի կայարանին: Շիրակամուտում բանահավաքական ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ գյուղում տեղի են ունեցել մասնակի սպանություններ, բռնաճնշումներ, բռնաբարություններ, առևանգումներ, կողոպուտ, բայց ոչ այդ քանակի կոտորածներ: Այդ մասին են փաստում նաև մայիսի 4-ից 11-ը կոտորածների ենթարկված երեք գյուղերում՝ Ղալթախչի, Ղարաբոյա, Աղբուլաղ իրականացված թաղման աշխատանքները և դրանց հիման վրա կազմված ակտը: (ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 27, թ. 85:)

89 Թաթուլ Հակոբյան, *Հայացք Արարատից. Հայերը և թուրքերը: Պատերազմ, սառը պատերազմ, դիվանագիտություն* (Երևան, Անտարես, 2012), 117:

90 Նույն տեղում:

91 Համլետ Հարությունյան, «Շուրջի հայության կոտորածները (1919 թ. հունիս և 1920 թ. մարտ)»,

Թուրքերն ամեն ջանք գործադրում էին մարդկանց կենտրոնացնելու և առավել ծածուկ վայրերում զանգվածաբար կոտորելու համար. Շիրակի նահանգի տարբեր շրջաններում հետագա ուսումնասիրությունները փաստում են տարբեր ձորերում գազանաբար սպանված հազարավոր անմեղ մարդկանց մասին: Այդ ձորերից էին ոչ միայն վերն արդեն հիշատակված Հրզազի կամ Ջարդի ձորը, այլ նաև Ղուզղունի ձորը⁹² և Ղարաբոյայի (Իսկոյանի) ձորը: Վերջինս գտնվում է Փամբակի տարածքում: Այս ձորում թուրքերի կողմից կոտորածները շարունակվել են երեք օր անընդմեջ: Կոտորածները դադարել են, երբ չորրորդ օրն առավոտյան ասկյարները թարգմանիչի հետ միասին գնացել են կոտորածի ձորը (Ղարաբոյա), որտեղ եղել են հիմնական սպանվածների դիակները և հայտարարել են, որ փաշայի հրամանով դադարեցվում են հայերի նկատմամբ բոլոր տեսակի գործողությունները⁹³: Այսպես թուրքերը դադարեցրել են զանգվածային կոտորածները ռազմակալված տարածքներում, բայց գիշերները տների վրա գաղտնի հարձակումները շարունակվել են⁹⁴:

Ազգային արխիվի լուսանկարները (1921 թ.) փաստում են նաև Նալբանդում իրականացված դաժան կոտորածի մասին. լուսանկարներում երևում է, թե ինչպես են զոհերին մինչև սպանելը կապել պարաններով⁹⁵:

Քանի որ հաստատվել էր զինադադար և Նալբանդ կայարանը դարձել էր «չեզոք գոտի», սահմանագծում թուրքերը հետագայում որոշակի զսպվածություն են դրսևորում, չնայած այն հանգամանքին, որ չեզոք գոտին նույնպես գտնվում էր իրենց ենթակայության տակ:

Այսպիսով, կատարված ուսումնասիրությունները փաստում են, որ խաղաղ բնակչության կոտորածները եղել են նախապես պլանավորված և իրականացվել են ռազմական հրամանատարության կողմից հատուկ ընտրված վայրերում:

Ողջակիզում

1920-1921 թթ. թուրքական ռազմակալումից հետո կատարված դիտարկումները փաստում են, որ ջարդի ենթարկված երեք գյուղերի բնակիչների մի մասին այրել են տներում⁹⁶:

Բանքեր հայագիտության 1, no. 7 (2015), 61-62:

92 Բանասաց՝ Մուրջյան Հասմիկ Խաչատուրի (ծնվ. 1936 թ., Թիֆլիս): Պատմությունը լսել է հորից՝ Խաչատուր Մուրջյանի Հարոյանից (ծնվ. 1874 թ., Մ. Քափանակ):

Ղուզղունի ձորը գտնվում է Չրախի (Ջրառատ, Շիրակի մարզ) և Խանվալի (1946 թ. Ծաղկասար: 1960-ական թվականներից ապարնակեցվել է, ավերակները գտնվում են Ջրառատից 5 կմ հյուսիս-արևելք), գյուղերի միջև: 1920 թ. նոյեմբերին թուրքերը Մեծ Քափանակից և շրջակա գյուղերից փախչող բնակչությանը հետապնդում են, շրջապատում, լցնում են Ղուզղունի ձորը և դաժանաբար կոտորում:

93 ՀՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 42

94 Նույն տեղում:

95 Տե՛ս ՀԱԱ Կինոֆոտոֆոնո փաստաթղթերի մասնաճյուղ: Պոզիտիվ լուսանկարների ֆոնդ: Լուսանկարներ՝ p-235, p-243, p-245 Նալբանդի զոհերը: Տե՛ս պատկեր 3, p-243:

96 ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 27, թ. 85: Ըստ բանասացների մարդկանց այրել են ողջ-ողջ:

Ղաթախչի գյուղում թուրքերը նախօրոք հավաքված ժողովրդին լցնում են մարագներից մեկը, կողպում են դուռը, իսկ հետո շուրջը, պատերին ու երդիկին նավթ են լցնում ու կրակի տալիս: Վառվող գերաններն ընկնում են մարդկանց վրա⁹⁷:

Ականատես Գուրգեն Մինասյանի վկայության համաձայն՝ Ղաթախչի գյուղում դիտավորյալ այրել են խոտի դեզերը և դրանցում թաքնված մարդիկ կրակի բաժին են դարձել⁹⁸:

Ողջակիզման դեպքեր են արձանագրվել նաև հարևան գյուղերում: Ինչպես նշվեց, Աղբուլաղում՝ մարագում և գոմում այրել են տղամարդկանց ու պատանիներին:

Ղարաբոյալում թուրքերը հավաքել են խաղաղ բնակչությանը, լցրել գյուղի եկեղեցին, մի մասին էլ մարագներն ու այրել: Այդ հրեշավոր օրերի վկաները՝ Խաչատուր Հարությունյանը, Վարշամ Պողոսյանը, Վարդանուշ Խաչատրյանը, Հա-յաստան Պարոնյանը, Շուշանիկ Հարությունյանը փրկվել են զարհուրելի կոտորածից ու մարդկանց պատմել թուրքական չարագործության մասին⁹⁹: Խնկոյանի (Ղարաբոյալի) եկեղեցին մինչև հիմա կրում է ցեղասպանության հետքերը՝ կրակված պատերով:

Ղարաբոյալի եկեղեցում է եղել Շուշանիկ Կուրդիյանը (ծնվ. 1890 թ., Ղարաբոյա), որը պատմում է, թե ինչպես են ժողովրդին այրել՝ նավթ լցնելով եկեղեցու տանիքին, պատուհաններին ու դռանը, և հետո սվինահարել եկեղեցում¹⁰⁰: Հայկանուշ Բադաս-յանի վկայության համաձայն՝ փաշայի հրամանով այրել են գյուղի եկեղեցին, ուր նախօրոք հավաքվել էր գյուղի բնակչության մի մասը, ապա պատուհաններից կրակել: Հետո սկսել են սրախողխող անել: Դաժան ու վայրենի կոտորածի ժամանակ Հայկանուշը մնացել է դիակների տակ ու ողջ մնացել: Հետո տեսել է, թե ինչպես են

97 Բանասացներ՝ Հայաստան Մկրտչյան (ծնվ. 1936 թ., Ղաթախչի), ականատես Սիրուն Մկրտչյանի (ծնվ. 1910 թ., Ղաթախչի) աղջիկը: Նաև՝ Ժենյա Մկրտչյան (ծնվ. 1933 թ., Ղաթախչի), Սիրուն Մկրտչյանի հարսը:

98 Բանասաց՝ Միշա Մինասյան (Հարթագյուղ):

99 «Նահատակների հիշատակին», *Լուսարձակ* no. 51 (1990), 4:

100 Նա իր գրկում ունեցել է աղջիկ երեխա: Սպանդի ժամանակ կինը ծպտվում է երեխայի հետ, բայց նրանք ևս ստանում են սվինի բազմաթիվ հարվածներ, երեխան մահանում է: Շուշանիկն ութ տեղից սվինահարվելով, արյունաքամ վիճակով, վերցնում է երեխայի դիակը և շտապում մոտակա ձորը: Երեխային իջեցնում է ձորը, հանում է իր կոշիկները, դնում երեխայի գլխի տակ, այնուհետև մարմինը ծածկում շորով: Դուրս գալով ձորից հագիվ-հագ հասնում է մոտակա քիլարը (գյուղական տան մեջ բաժանմունք, որտեղ պահում էին կենսամթերքը), որտեղ գյուղի հասակավոր պապիկներից մեկը թաքցրած է լինում գյուղի երիտասարդ տղաներին: Նրանց մեջ է եղել նաև ամուսինը՝ Արմինակ Վելիանիսյանը (ծնվ. 1889 թ., Ղարաբոյա): Մի կես բարձրանում է երդիկին և կանչում ամուսնուն՝ անունով: Ներսում խուճապ է սկսվում. մտածում են կինը ասկյարի հետ է, ասում են, որ Արմինակը դուրս գնա: Ամուսինը դուրս է գալիս, կնոջը քաշում է ներս: Շուշանիկի արյունահոսող վերքերը լվանում են մածնաջրով և փաթաթում շորերով: Գիշերը թաքստոցներից դուրս գալով ժողովրդի մի մասը գաղտնի ուղևորվում է Նալբանդ: Ճանապարհին, Թագագյուղի կոնդի մոտ, ըստ ականատեսի, ժողովրդին հանդիպում է Սեպուհը, որը լսելով կոտորածի մասին, մտրակում է նրանց (տղամարդկանց-Վ.Հ.) և ուղեկցողների հետ ձիերի գլուխները շուտ տալով գնում են դեպի Ղարաքիլիսա: Բանասաց՝ Ջանիբեկ Մամիկոնի Հարությունյան (ծնվ. 1946 թ. Խնկոյան), ականատեսի թոռը:

Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանյանն իր հուշերում գրում է, որ Սեպուհը զինադադարի նախօրյակում անսպասելի ու հանկարծակի հարձակվում է Ջաջուռի բարձունքներում «տանկաց առաջավոր զորամասերի վրա», սակայն պարտվում է: ՀԱԱ ֆ. 477, ց. 1, գ. 15, թ. 4, 5, 6:

Շիրակի դաշտից բազմահազար ժողովրդին զենքով ու բռնությամբ Ալեքսանդրապոլի ճամփով¹⁰¹ քշելով բերել ու լցրել Ղարաբոյայի ձորը¹⁰²:

Ականատեսի վկայության համաձայն, հրոսակներն Աղբուլաղ գյուղում բերում են դիոլ-գուռնան և մարագի խոտի մեջ թաքնված տղամարդկանց նվագի ուղեկցությամբ այրում են՝ նախապես շղթայելով նրանց պողպատե լարերով և նավթ լցնելով նրանց վրա: Թուրքերը չարախնդորեն հռչակում են, հետո դիոլ-գուռնան տեղափոխում են այն գոմի և մարագի առջև, որտեղ այրվում էին մյուսները¹⁰³:

Ծիսականացված այս վայրագություններն էլ ավելի զարհուրելի են դառնում այն պատճառով, որ ոճրագործները հրճվում էին իրենց «քաջագործություններով»: Մարդկանց այրելը և բռնություններին տոնական բնույթ հաղորդելը նորություն չէր թուրքերի համար. Արևմտյան Հայաստանի Վանի և Բիթլիսի նահանգներում լայնորեն տարածված էր ողջակիզումները նվագակցությամբ ու պարերով ուղեկցելը¹⁰⁴: Թուրք հրոսակները փաշայի հրամանով կենդանի խաչում են Աղբուլաղի քահանա Մկրտիչ Տեր Մկրտչյանին, որը գյուղի ավագի հետ աղ ու հաց էր տարել նրանց դիմավորելու: Փաշան գլխատել էր գյուղի ավագին, իսկ քահանային, որ փախել էր, խաչելով էր պատժել ի սարսափ բոլորի¹⁰⁵: Քահանային խաչել էին գոմի դռան վրա, ապա նավթ լցրել և այրել գոմն ու մարագը¹⁰⁶: 1962 թ. գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցում գտնվող Տեր Մկրտչի գերեզմանի վերաբացումը փաստում է իրողությունը. նրա գանգի մեջ՝ ճակատի հատվածում, 23 սմ երկարությամբ գամ է մխված եղել¹⁰⁷:

Խեղդամահություն ջրհորներում

Ոճրագործների վերաբերմունքը զոհերի նկատմամբ դրսևորվել է նաև կենդանի-կենդանի նրանց ջրհորները լցնելով և խեղդամահ անելով: Ղալթախչի գյուղի տարբեր թաղամասերում խուճապի ու վախի մատնված ժողովրդին հանել են տներից, լցրել են ջրհորները և փակել կափարիչները¹⁰⁸: Այդ մասին է վկայում Ղալթախչի գյուղի բնակչության կոտորածի վերջին կենդանի վկա Արաքսի մայրիկը (ծնվ. 1904 թ., Ղալթախչի), որը փրկվել էր դաժան կոտորածից¹⁰⁹:

101 Լեռնային ճանապարհ Խնկոյանից՝ Փամբակի լեռներով Շիրակի դաշտ:

102 Բանասաց՝ Սամվել Բադալյան (Խնկոյան):

103 Մկրտիչ Խանգաղյան, *Իմ հայրենի գյուղը՝ Փամբակի Լուսաղբյուրը*, 179:

104 Հասմիկ Գրիգորյան, *Ջանգվածները և զանգվածային բռնությունները*, 13:

105 Բանասաց՝ Վոլոդյա Մկրտչյան (ծնվ. 1929 թ., Աղբուլաղ), պատմությունը լսել է հորից, ժամանակակցից՝ Սենիկ Մկրտչյանից (ծնվ. 1905 թ., Աղբուլաղ):

106 Մկրտիչ Խանգաղյան, *Իմ հայրենի գյուղը՝ Փամբակի Լուսաղբյուրը*, 178:

107 Բանասաց՝ Վոլոդյա Մկրտչյան (Լուսաղբյուր): Բանասացը մեխը պահում է, որպես «ընտանեկան մատուց»:

108 Բանասաց՝ Միշա Մինասյան (Հարթագյուղ):

109 <https://www.youtube.com/watch?v=j2S6ZajMRT4&feature=share&fbclid=IwAR37TjiSbCLB7qCiKUMRK8Rkj1Vrw3YCT2p6A8HvLUj9rd-BwhFteEtA0>, դիտվել է 20.12.2020:

Սաթենիկ Հախոյանը¹¹⁰ պատմում է, թե ինչպես են թուրքերը Ղալթախչիում կոտորել մոր գերդաստանի անդամներին՝ ոմանց լցնելով ջրհորը: Մայրը՝ Վարսենիկ Գալոյանը (ծնվ. 1905 թ., Ղալթախչի), եղել է ջրհորը նետվածներից մեկը: Թուրքերը հսկա քարեր են նետել ջրհորի մեջ, որոնցից մեկը պատռել է Վարսենիկի դեմքը՝ աչքի շրջանում թողնելով սպի:

Ղարաբոյայում նույնպես արձանագրվել են մարդկանց ջրհորներում խեղդամահ անելու դեպքեր: Վարդգես Սարիբեկյանը հիշում է, որ իրենց ջրհորը մաքրելիս մեծ քանակությամբ դիակներ են հանել¹¹¹:

Հիմա էլ այս գյուղերում կան փակ ջրհորներ, որոնք մարդկային մասունքներ են թաքցնում: Այս իրողությունը հաստատվեց, երբ 2000 թ. Հարթագյուղում բացվեց փակ ջրհորներից մեկը¹¹²: 2001 թ. հոգեհանգստի արարողությունից հետո ջրհորում հայտնաբերված մասունքներն ամփոփվեցին գյուղի եկեղեցում¹¹³:

Սպանություններ և բռնություններ կանանց և երեխաների նկատմամբ

Ականատես Սաթենիկ Հարությունյանը (ծնվ. 1912 թ., Ղալթախչի) վկայում է, թե ինչպիսի դաժանությամբ էին թուրքերը սպանում երեխաներին, տանջանքների ենթարկում այն մայրերին, որոնք օգնության էին հասնում նրանց: Երբ թուրքերը փորձում են սպանել Սաթենիկին և իր եղբորը, մայրը երեխաներին պաշտպանելու նպատակով ընկնում է նրանց վրա: Ասկյարները սվինահարում են մորը: Այդ հարվածներից մի քանիսը հասնում են մինչև Սաթենիկի մարմինը, որի մեջքը հետագայում նմանվում է բազմաթիվ ծալքերով պարկի¹¹⁴:

Ականատես Եղիսաբեթ Եղիկյանը վկայում է, թե ինչպես են Ղալթախչի գյուղում թուրքերը գազանաբար սպանել իր վեց երեխաներին. նա խոտի տակ թաքնված է եղել, երբ տեսել է, որ որդուն թրատում են, դուրս է վազել օգնության: Մորը կապել են պոնիից ու ստիպել, որ նայի, թե ինչպես են դաժանաբար սպանում երեխաներին: Կտրում են ութ տարեկան Ադունիկի ձեռքը, հանում են երեք տարեկան Նաներիկի աչքերը: Այս ամենը տեսնելով՝ կինն ամեն անգամ ուշագնաց է լինում, բայց ամեն անգամ ուղղում են նրա կախ ընկած գլուխը, որ տեսնի: Այլևս չդիմանալով՝ կինը նորից ուշագնաց ընկնում է. թուրքերը մտածում են, թե մահացել է և հանգիստ են թողնում նրան: Թուրքերը սպանում են նաև մյուս երեխաներին՝ Արուսյակին, Մոսկովին և Սիրանուշին¹¹⁵:

110 Ականատեսի դուստրը (ծնվ. 1926 թ., Ղալթախչի):

111 Բանասաց՝ Վարդգես Սարիբեկյան (ծնվ. 1930 թ., Ղարաբոյա):

112 Տե՛ս պատկեր 4:

113 ՀՅԹԻ, Թանգարանային ֆոնդեր, բաժին 1, ֆ.հ. 1375, 1376, 1377, 1378, 1379, 1380: «2001 թ. ապրիլի 24-ին Հարթագյուղի եկեղեցում կայացած 1920 թ. քեմալականների կողմից սպանված 11 նահատակների ոսկորների վերաթաղման և հոգեհանգստի արարողությունը»:

114 Բանասաց՝ Գրետա Աֆրիկյան (ծնվ. 1939 թ. Ղալթախչի), ականատեսի աղջիկը:

115 Հուշագրող՝ Սողոմոն Սարգսյան, ականատեսի որդին (ծնվ. 1927 թ., Ղալթախչի), «Մորս

Ականատես Սիմոն Սիմոնյանի (ծնվ. 1906 թ., Ղալթախ) վկայության համաձայն՝ ասկյարները խաբեությամբ իրենց կենտրոնացնում են մարագներում ու սկսում կոտորել. նրանք նախ կրակում են, վախեցնում մարդկանց, հետո դաժանաբար սպանում: Թուրքերը կրակում են փոքր եղբորը, որը մոր գրկում էր. փամփուշտն մտնում է նաև մոր կուրծքը, երկուսով ընկնում են: Տեսնելով մարդկանց դաժանաբար սվինահարումը՝ պատանի Սիմոնը փախչում է՝ թաքնվելով հարևանի մարագում: Մարդկանց խումբ-խումբ կոտորելուց հետո ասկյարներն սկսում են որոնողական աշխատանքները՝ թաքնվածներին հայտնաբերելու նպատակով: Ասկյարների ձայներից Սիմոնը շարժվում է, թուրքերից մեկը վառում է կրակը և մոտեցնում դեմքին՝ նրան դուրս քաշելով: Գյուղացիներից մեկն ասում է, թե «մի՛ սպանեք նրան, նա քահանայի թոռ է, կիմանա թաքցրած ոսկու վայրը»: Նրան ստիպում են ձյան վրա ոտաբորիկ շրջել գյուղով մեկ, սակայն ոսկին այդպես էլ չեն գտնում: Սիմոնի ոտքերը ցրտահարվում են, իսկ թուրքերից մեկը եփվող կաթսայի միջից վերցնում է գառան յուղերը և քսում է նրա ոտքերին՝ ասելով, որ երեխա է: Սիմոնը մինչև կյանքի վերջ կրում է «տառապանքի հետքերը»¹¹⁶:

Ականատես Գլախ Աֆրիկյանը (ծնվ. 1909 թ., Ղալթախ) վկայում է, որ թուրքերը անխղճորեն հարվածներ էին հասցնում երեխաներին. նա մարագում է լինում կրակոցների և սվինահարումների ժամանակ, մնում է մոր դիակի տակ՝ գլխին, վզին, մեջքին ստանալով սվինի հարվածներ, որոնք խորը, տեսանելի սպիների ձևով կրում է մինչև կյանքի վերջ¹¹⁷: Եղիշե Գևորգյանի (ծնվ. 1892 թ., Ղալթախ) ընտանիքի անդամներին ասկյարները շատերի հետ տանում են Բաղդասարյանների տան դիմացի ջրհորը խեղդելու: Եղիշեի մայրը ասկյարին ասում է, որ երեխաներին չսպանեն և ինքը կրեի թաքցրած ոսկին: Ասկյարները երեխաներից մեկին թողնում են, որ տանի իր հետ, մյուսներին պահում են մինչև ոսկին բերելը: Կինը վերադառնում է երեխայի հետ՝ բերելով ոսկին: Թուրքերը վերցնում են ոսկին և սպանում բոլորին¹¹⁸:

Արմենակ Գալոյանի (ծնվ. 1892 թ., Ղալթախ) կնոջը՝ Արաքսայի թուրքերը սպանում են սրախողխող անելով, իսկ փոքր որդուն ծխականացված սպանում են՝ մորթելով անմիջապես տան շենքի սալաքարի վրա¹¹⁹:

Ականատես Սիրուն Մկրտչյանն (ծնվ. 1910 թ., Ղալթախ), իր հինգ տարեկան եղբոր հետ փախչելով վառվող մարագից վազում է իրենց տուն: Ասկյարները հետապնդում և երկու անգամ կրակում են նրանց ուղղությամբ: Աղջիկը վախից թողնում է եղբորը, իսկ ինքը նետվում է ջրհորը, որտեղ թաքնված էր հայրը: Ասկյարները

պատմածից (եղելություն)»: Նան Սողոմոն Սարգսյան, *Աղավաւտուն* (Նոյեմբերյան, Գրոց, 1997), 55-63: Տե՛ս <https://www.youtube.com/watch?v=0947J5T-uxU>, դիտվել է 20.12.2020:

116 Բանասաց՝ Լևոն Գաբրիելյան (Հարթագյուղ):

117 Բանասաց՝ Գրետա Աֆրիկյան (Հարթագյուղ):

118 Բանասացներ՝ Սիրան Գևորգյան (ծնվ. 1946 թ., Ղալթախ): Գրիգոր Գևորգյան (ծնվ. 1962 թ., Հարթագյուղ), դեպքերի ժամանակակցի թոռները: Պատմությունը լսել են հորից՝ Սերյոժա Եղիշեի Գևորգյանից (ծնվ. 1925 թ., Ղալթախ):

119 Բանասաց՝ Փայլակ Գալոյան (ծնվ. 1945 թ., Ղալթախ), ականատեսի որդին:

գլխատում են եղբորը և կրակում ջրհորի մեջ՝ կարծելով, որ սպանեցին նաև աղջկան¹²⁰:

Ականատես Զարո Ավետիսյանի (Աղբուլաղ) երկու փոքր երեխաներին թուրքերը սրախողխող են անում իրենց տանը՝ օրորոցի մեջ: Ասկյարների տուն ներխուժման ժամանակ մայրը հագիվ կարողանում է մտնել ցորենի ամբարը: Երեխաների լացի ձայներին ընդառաջ գնալով՝ թուրքերը գլխատում են փոքրիկներին¹²¹:

Աղբուլաղում տղամարդկանց այրելուց հետո կանանց ու երեխաներին շրջափակված պահում են մինչև երեկո: Երեկոյան ասկյարները նրանց դուրս են բերում ճանապարհի վրա, բաժանում խմբերի (երկուսից-երեք) և քշելով տանում Ջաջուռի լեռնանցքը՝ ասելով, թե տանում են Գյումրի: Ջաջուռի լեռնանցքի Հզազի ձորում նրանց կոտորում են: Մինչ այդ նույն վայրում կոտորած են լինում Շիրակի դաշտից բերած կանանց և երեխաների խմբին¹²²:

Ականատես Հայկանուշ Խանգաղյանը տեսել էր հարևանուհու՝ Մարանի մեծ տղայի՝ Անդրանիկի սուսկալի սպանության տեսարանը: Մարանը, իր երեք երեխաների՝ Գևորգի, Ավետիքի, Անդրանիկի հետ հրաշքով փրկվելով զանգվածային կոտորածներից (պառկել էր նրանց վրա և պաշտպանել սրի հարվածներից), հասել էր Ջաջուռի յայլան¹²³: Այնուհետև անցնելով սարի մյուս կողմը՝ կինը իր հինգ և յոթ տարեկան երեխաներին թողնում է քարափի տակ՝ նրանց ասելով. «նստե՛ք, մինչև ձեր հայրը կգա, ձեզ հաց կբերի և ձեզ էլ կվերցնի»: Երեխաներին խաբում է և իր հետ վերցնելով ավագ որդուն՝ Անդրանիկին, Հայկանուշի և վերջինիս հորաքույր Խանումի հետ հասնում է Քեֆլի¹²⁴ ու տեղավորվում մի գոմում: Ներս են մտնում ասկյարները և պահանջում ոսկի: Իրեն հասակակից Քոչարյան Ասլիի աղջկա հետ ներս ու դուրս վազվզող տղային կարգի հրավիրելու համար Մարանը ձայնում է. «Անդրանիկ ջան, ներս արի՛, հանգիստ մնա՛, մինչև սրանք գնան»: Լսելով Անդրանիկի անուրը, հարձակվում են երեխայի վրա, բռնում են նրան, պառկեցնում, վիզը դնում են տան շեմքին և սրով կտրում երեխայի գլուխը: Կտրում են նաև Անդրանիկի հետ խաղացող աղջնակի գլուխը¹²⁵:

Դիակների հետագա ուսումնասիրությունները փաստում են Դալթախչի, Դարաբոյա, Աղբուլաղ գյուղերում սպանված մեծաթիվ երեխաների մասին¹²⁶: Աղբուլաղի և Ջաջուռի շրջաններում գործող թաղման հանձնաժողովի տվյալների համաձայն սպանվածների ութսուն տոկոսը հինգից տասներկու տարեկան երեխաներ էին¹²⁷:

120 Սիրուն Մկրտչայնը փրկվում է՝ հետագայում իր պատմությունը պատմելով իր հարազատներին: Բանասացներ՝ Հայաստան Մկրտչյան (Հարթագյուղ), ականատեսի աղջիկը: Ժենյա Մկրտչյան (Հարթագյուղ), ականատեսի հարսը:

121 Բանասաց՝ Սոխակ Ավետիսյան (ծնվ. 1929թ., Աղբուլաղ), ականատեսի որդին:

122 ՀՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ. հ. 38:

123 Ամառային արոտավայր, սար, որտեղ բարձրանում և ապրում են խաշնարածներն իրենց անասուններով:

124 Այժմ՝ Կաքավասար (Շիրակի մարզ):

125 ՀՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 38

126 ՀԱԱ ֆ. 114, ց. 2, գ. 27, թ. 85:

127 Սերո Խանգաղյան, *Հայրենասպառում*, 1959-1981, Գիրք Գ (Երևան, Հայաստան, 1984), 335:

Ղարաբոյա գյուղից Ստեփան եղբոր (ծնվ. 1899 թ.) պատմության համաձայն՝ երբ օսմանլու թուրքերը գավթում են Շիրակն ու իրենց լեռները, ձորի գյուղերից¹²⁸ տասնհինգ հազար երեխա¹²⁹ են հավաքում՝ ասելով, որ տանում են Ալեքսանդրապոլի որբանոց, որպեսզի սովից չմեռնեն։ Ապա լցնում են սայլերը և ջարդում Հազ-Հազի ձորում¹³⁰։ Երեխաների հետ են եղել նաև իր երկու փոքր եղբայրներն ու քույրը¹³¹։

Երեխաների սպանդի մասին են վկայում նաև Աղբուլաղի և Ջաջուռի շրջանների լուսանկարները։ Լուսանկարներում պարզորոշ երևում են սպանված մանկահասակ երեխաները¹³², որոնց դիակները կիտված են իրար վրա¹³³։ Ականատեսները պատմում են նաև բռնաբարությունների, բռնաճնշումների, ստիպողական ամուսնությունների և գերեվարությունների մասին։ Ականատես Հայկանուշ Բադալյանը պատմում էր Ղարաբոյա գյուղում անխնա սեռական բռնությունների մասին, երբ կանանց և աղջիկների մեծ մասը բռնաբարվել են¹³⁴։ Ականատես Արաքսի Մկրտչյանը պատմում էր, որ կանանց սպանել են երեխաների առաջ, իսկ երեխաներին՝ կանանց։ Վառել են մի կնոջ մազերը, մյուսի կուրծքն են սրախտոխոդ արել¹³⁵։ Այդ օրերի սարսափելի դեպքերի մասին է վկայում նաև «սպանված հայուհու դին» լուսանկարը¹³⁶։

Նալբանդում¹³⁷ աղջիկներին թաքցնում են խորը փորված հորերի, ամբարների ու թոնիրների մեջ և փակում, սակայն թուրքերին հաջողվում է գնքով դուրս բերել նրանց ու բռնությամբ տանել։ Նալբանդում նույնպես շատ են եղել բռնաբարության դեպքերը¹³⁸։ Ղարաբոյա գյուղում թուրք փաշան իր համար ընտրում է երկու աղջիկ, իսկ գորքին հրամայում է զբաղվել մնացյալով¹³⁹։

128 Խոսքը Փամբակի հովտի գյուղերի մասին է։

129 Ներկայացվող թիվը ենթակա է քննության։ Ըստ Վրացական ԽՍՀ Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարին 1921 թ. մայիսի 13-ին ուղարկված կապի աշխատակից Կոստանուշվիլու հայտագրի, որտեղ ներկայացվում է տեղական իշխանությունների կողմից կազմված հանձնաժողովի մոտավոր հաշվումները ռազմակալված Ալեքսանդրապոլի գավառում, բնակականների կողմից սպանված երեխաների թիվը հասնում էր 5000-ի, վիրավորվել էին 3000-ը, սովամահ էին եղել 10000-ը (ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 169, թ. 14)։ Միայն Փամբակի տարածքում սպանված երեխաների թիվը ներկայացնող փաստաթուղթ առայժմ չենք հայտնաբերել։ Հարկ է նշել, որ Փամբակի երեք գյուղերում՝ Ղալթախի, Ղարաբոյա, Աղբուլաղ, սպանված մարդկանց ընդհանուր թիվը կազմում էր 11886 (ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 27 թ. 86)։

130 Ջարդի ձոր, Հզազի ձոր։

131 Սերո Խանգաղյան, *Հայրենասպառում*, 1959-1981, Գիրք Գ, 335-336։

132 ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 134, թ. 2, 3 ։

133 ՀԱԱ Կինոֆոտոֆոնո փաստաթղթերի մասնաճյուղ։ Պոզիտիվ լուսանկարների ֆոնդ։ Լուսանկարներ՝ p-233, p-236, p-237, p-239, p-240, p-241 Աղբուլաղ և Ջաջուռ գյուղերի սպանված երեխաները։ Տե՛ս Պատկեր 5, p-240։

134 Բանասաց՝ Սամվել Բադալյան (Խնկոյան)։

135 Բանասաց Վոլոդյա Մկրտչյան (Լուսաղբյուր), ականատեսի որդին։

136 Տե՛ս ՀԱԱ Կինոֆոտոֆոնո փաստաթղթերի մասնաճյուղ։ Պոզիտիվ լուսանկարների ֆոնդ։ Լուսանկար՝ p-234, Սպանված հայուհու դի։

137 Այժմ՝ Շիրակամուտ (Լոռու մարզ)։

138 Բանասաց՝ Գոհարիկ Կյուրեղյան (Շիրակամուտ)։

139 Բանասաց՝ Վարդգես Սարիբեկյան (ծնվ. 1930 թ., Ղարաբոյա), դեպքերի ժամանակակից՝

Բռնաբարություններ են իրականացվել նաև կոտորելուց առաջ. Ջարդի ձորում կատարված դիտարկումների ժամանակ նման եզրահանգման է գալիս Չարլզ Ֆ. Գրանտը՝ Ղարաքիլիսայի Ամերիկյան կոմիտեի ներկայացուցիչը¹⁴⁰:

Ականատես Զարո Ավետիսյանի վկայության համաձայն, թուրքերը նախքան կոտորածները և ընթացքում առանձնացրել են գեղեցկադեմ աղջիկներին և կանանց ու տարել Ջաջուռ, որտեղ եղել է հիմնական հավաքատեղին: Շատ աղջիկների տանում են Թուրքիա: Կիրառվել են բռնություններ, բռնաբարություններ, փախչողներին սպառնացել են սպանել: Փաշան Ջաջուռում է եղել: Երկու զինված ասկյար հրացանները կանանց և աղջիկների վրա պահած, տարել լցրել են մեծ գոմի մեջ և դուռը կողպել: Թուրքերը պահակ են կանգնեցրել շինության մոտ և հաճախակի վախեցրել նրանց ու երբ կանայք ու աղջիկները լաց են եղել ու բղավել, չարախնդորեն ծիծաղել են նրանց վրա: Երեք օր սոված թողնելուց հետո եկել է փաշան, հաց բերել, հրամայել առանձնացնել նրանցից սիրունատեսներին ու տարել: Այսպես անընդհատ առանձնացրել են աղջիկներին ու տարել: Մնացյալ կանայք տեղում երկար ժամանակ ենթարկվել են բռնությունների, որոշներին Դիրաքլարի¹⁴¹ քահանայի միջնորդությամբ փաշան ազատ է արձակում¹⁴²: Փամբակի նշված տարածքի բոլոր գյուղերում արձանագրվել են դեպքեր, երբ թուրքերը հայ աղջիկներին հասցնում էին հոգեկան խանգարման: Այսպես, Ղալթախչի գյուղում երբ ասկյարները կանանց հավաքատեղի մարագից փորձում են տանել Արեգ Աֆրիկյանին, նա վազելով փախչում է ասկյարների ձեռքից՝ իրեն նետելով վառվող թոնրի մեջ: Հետո կանայք հանում են նրան և փրկում կյանքը¹⁴³: Արեգ Աֆրիկյանի վկայության համաձայն, կոտորածից հետո թուրքերն իրեն ուզում էին տանեն և նա այդ քայլին է գնում, որպեսզի չընկնի նրանց ձեռքը: Նրա ոտքերը այրուցքներ են ստանում և մինչև կյանքի վերջ ոտքերի վրա հետքեր են մնում սայիների տեսքով¹⁴⁴:

Շիրակի դաշտում նույնպես արձանագրվել են նման դեպքեր: Ականատես Հայկանուշ Մովսիսյանը (ծնվ. 1886 թ., Հաջի-Նազար)¹⁴⁵ վկայում է, որ թուրքերը գեղեցիկ հայ կանանց ու աղջիկներին ուղարկում էին Թուրքիա: Երբ նրան նույնպես ասկյարները փակում են գոմում, որպեսզի թուրք փաշան մյուս կանանց և աղջիկների հետ տանի Թուրքիա, նա իր մազերը կտրում է, դեմքին մուր քսում, աչքերի մեջ փեյին¹⁴⁶ լցնում (հետագայում վաղաժամ կուրացման պատճառ է դառնում): Տեսնելով կնոջ հանդուգն արարքը՝ ասկյարներն ուզում են Հայկանուշին սպանել, սակայն Դիրաքլարի քահանան փրկում է նրան¹⁴⁷:

Ռաֆայել Նազարյանի (Ղարաբոյա) որդին:

140 ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 134:

141 Այժմ՝ Կառնուտ (Շիրակի մարզ):

142 Բանասաց՝ Սոխակ Ավետիսյան (Լուսաղբյուր), ականատեսի որդին:

143 Բանասաց՝ Ազնիվ Աֆրիկյան (Հարթագյուղ): Հուշագրող, ականատես-վերապրող՝ Ֆիդային Գրիգորյան:

144 Բանասաց՝ Էմմա Գալստյան (Հարթագյուղ):

145 Այժմ՝ Կամո (Շիրակի մարզում):

146 Չորացրած մանր գոմաղբ, որը փռում են անասունների տակը:

147 Բանասաց՝ Ազատ Սահակյան (Հարթագյուղ), ականատեսի որդին: Այն, որ Ջաջուռի շրջա-

Ղալթախչիում թուրք փաշան սիրահարվում և իր հետ տանում է Համասփյուռ Խաչատրյանին (ծնվ. 1901 թ., Ղալթախչի): Սակայն Համասփյուռը կարողացել էր գիշերը փախչել, վերադարձել գյուղ և թաքնվել գաղտնի կացարանում՝ գյուղի ձիթ-հանքում: Հետո եղբայրները նրան տարել էին Համամլու: Չկարողանալով գտնել Համասփյուռին՝ թուրքերը երկրորդ անգամ կոտորում են գյուղի բնակչությանը: Կատաղած խուժանը, ինչպես նաև բազմաթիվ քրդեր, գոռալով «Համաս», այրում են կացարանները: Համասփյուռ Խաչատրյանի գերդաստանից 50 հոգու այրում են բարաքում (Ժամանակավոր փայտե շինություն)¹⁴⁸: Այն, որ Ղալթախչի գյուղը թուրքերը երկու անգամ գրավել և բնակչությանը կոտորածի են ենթարկել, չխնայելով նույնիսկ կանանց, երեխաներին և ծերերին, վկայում են դեպքերի ականատեսները¹⁴⁹:

Ֆիդային Գրիգորյանի պատմության համաձայն, Ղալթախչի գյուղի կենտրոնական հատվածում թուրքերը վերցնում են մի մեծ շինություն, որն օգտագործում են զվարճությունների համար՝ այդտեղ հավաքելով բազմաթիվ աղջիկների ու կանանց և ենթարկելով սեռական բռնությունների¹⁵⁰: Այս իրողության մասին է վկայում նաև ականատես Վարդանուշ Խաչատրյանը, ում մի շարք մարդկանց հետ Ղարաբոյալից տեղափոխել են Ղալթախչի մի մեծ շինության մեջ, որտեղ հավաքել են հայ կանանց և երաժշտության տակ ծաղրածանակի ենթարկել¹⁵¹:

Այսպիսով, քեմալականները ոչ միայն չէին խնայում կանանց և երեխաներին, այլ նրանց հանդեպ ցուցաբերում էին անմարդկային և դաժան վերաբերմունքը:

Կողոպուտ

Ժամանակակցի վկայությամբ, Փամբակի տարածքի գրավված գյուղերից թուրքերը տարել էին սննդի հիմնական պաշարը՝ բերքը, որ հավաքվել էր աշնանը գյուղացիների կողմից, տարել էին անասուններին, այրել էին խոտի դեզերը. ոչինչ չէր մնացել բացի թթվից, որով սնվել էր բնակչությունը ողջ ձմեռ ու կենդանի մնացել¹⁵²: Որոշ մարդիկ կարողացել էին հատուկ փորված կացարաններում, որոնք եղել էին հիմնականում ջրհորների մեջ, թաքցնել ցորենի պարկերը, որն էր նրանց գոյությունը պաշտպանելու

նում գտնվող թուրք փաշան հաշվի է նստել Դիրաքլարի քահանայի հետ, վկայակոչում են բազմաթիվ վերապրածներ: Երևույթը բացատրվում է հետևյալ կերպ. երբ 1918 թ. Ղարաբախիսայի ճակատամարտում թուրքեր են գերի ընկնում, Դիրաքլարի քահանան շատերին է կարողանում ազատ արձակել: Նրանց մեջ է լինում նաև այս փաշան: Քահանան լսում է, որ հայ աղջիկներին ուզում են տանեն Թուրքիա, խնդրում է, որ փաշան ազատ արձակի նրանց: Փաշան անսայով մի մասին արձակում է, իսկ գեղեցկատեսներին այնուամենայնիվ ուղարկում է Թուրքիա: Բանասաց՝ Սոխակ Ավետիսյան (Լուսաղբյուր):

148 Բանասացներ՝ Լիլիթ Կարենի Միմոնյան (ծնվ. 1963 թ., Երևան), ականատեսի թոռնուհին, Փարիզ, Ֆրանսիա: Պատմությունը լսել է ականատեսից: Վաղարշակ Զաքարյան (ծնվ. 1955 թ., Երևան): Ականատեսի թոռը: Պատմությունը լսել է ականատեսից:

149 «Մեր ճակատում», *Յանաջ*, no. 253 (1920), 4:

150 Բանասաց՝ Ազնիվ Աֆրիկյան (Հարթագյուղ):

151 ՀՅԺԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 42: Բռնաբարության դեպքերը բազմաթիվ են եղել, սակայն շատ դեպքերում մարդիկ չէին պատմում, խուսափում և ամաչում էին:

152 Բանասաց՝ Ավետիս Ավագյան (Հարթագյուղ): Պատմությունը լսել է մորից՝ Հեղնար Ավագյանից:

հիմնական միջոցն էր եղել: Այդ տարի ձմեռը շուտ էր եկել՝ նոյեմբերին, և ձգվել երկար¹⁵³: Թուրքերի թալանը և տարած ոսկին Ղալթախչի գյուղից այնքան շատ է եղել, որ նրանք գյուղը կոչում են Քյուչուկ Իստամբուլ (Փոքր Ստամբուլ)¹⁵⁴:

Ժամանակի մամուլը գրում է, որ Ղալթախչիի և Փոքր Քափանակի շրջանների ազգաբնակչությունը տեղահանվել է: Աղբաբայից այդ շրջաններ են բերվել մեծ քանակությամբ սայլեր՝ ազգաբնակչության թալանի մատնված ամբողջ հարստությունները տեղափոխելու նպատակով¹⁵⁵: Մեկ այլ նյութում անդրադարձ կա նաև Աղբուլաղ և Ղարաբոյա գյուղերի բնակիչների 1920 թ. նոյեմբերի 15-ի կոտորածներին: Եվ կողոպուտի մասով նշվում է, որ Աղբաբայից բերել են 500 սայլ, որոնց վրա բարձել են կողոպտված հարստությունները¹⁵⁶:

Կոտորածներից առաջ ասկյարները պարբերաբար խուզարկում և թալանում էին գյուղերի բնակչությանը: Աղբուլաղից ժողովրդին Ջաջուռի լեռնանցք տանելուց առաջ նույնպես ասկյարները թալանում են, խլելով նրանց մոտ եղած ոսկեղենը և թանկարժեք իրերը¹⁵⁷:

Իրադրությունը չեզոք գոտուն մոտ գյուղերում

Ականատեսների վկայության համաձայն, մինչ թուրքերը կհասնեին Նալբանդ՝ տեղի բնակիչների մի մասը հասցնում են փախչել լեռները: Գոհարիկ Կյուրեղյանը (ծնվ. 1920 թ., Նալբանդ) վկայակոչելով ականատեսների պատմությունները նշում է, որ թուրքերին Նալբանդ գյուղում դիմավորել են աղ ու հացով: Այնուհետև գյուղի ազդեցիկ մարդիկ բանակցել են բարձրաստիճան թուրք զինվորականների հետ, որ կհավաքեն և իրենց կտան բնակչության կողմից թաքցրած ոսկիները: Հավաքում են ոսկիները և տալիս են թուրք հրամանատարին: Թուրքերը գյուղի ավագների ձեռքերից կապած շուրջ 15 հոգու ողջ-ողջ թաղում են: Թուրքերի դաժանությունը արտահայտվում է նաև հղի կնոջը մորթելով: Կոտորածները Նալբանդում շարունակվել են որոշ ժամանակ, այնուհետև դադարեցվել են: Խուճապահար բնակչության մեծ մասը փախել են լեռները: Պատասպարվելով հիմնականում Գոմծակի¹⁵⁸ սարում, «Մակո յայլայում», «Չիչխանի խարաբա»¹⁵⁹ բնակատեղիում, Չիչխանավանքում¹⁶⁰: Մարդիկ մտել են քարայրները, ձորերը, յայլանների գոմերը: Թուրքական զորքը հասնում է Նալբանդ գյուղի կեսը և կանգ է առնում ուժեղ մատախուղի, բքի և ցածր տեսանելիության պատճառով: Մուժը

153 Բանասաց՝ Ժենյա Մկրտչյան (Հարթագյուղ):

154 Բանասաց՝ Միշա Մինասյան (Հարթագյուղ):

155 «Ղալթախչի և Փոքր Քապանաքի ազգաբնակչությունը տեղահանուած», *Յանաջ*, no. 263 (1920), 2:

156 «Թուրքերի գրառած վայրերում», *Յանաջ*, no. 264 (1920), 2:

157 ՀՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 38:

158 Քարայր և գոմահանդ:

159 Գյուլատեղի 10- 15-րդ դդ.՝ գյուղից 6 կմ հյուսիս:

160 Սև վանք՝ 6-րդ դար, գտնվում է գյուղից հյուսիս:

իջնում է Թափանլու¹⁶¹ գյուղի լեռներից: Մարդիկ մտածել են թե «իրենց հասած սրբի¹⁶² օգնությունն է» և անսկստ անցել են լեռները¹⁶³: Հետագայում, կոտորածներից մինչ օրս, Նալբանդի (Շիրակամուտ) բնակիչների պատկերացումների մեջ մնացել է թե «սուրբը օգնեց և թուրքերը վախեցան նրա զորությունից, դադարեցրեցին Նալբանդի կոտորածները ու չառաջացան և չկոտորեցին Նալբանդից այն կողմ ընկած գյուղերի բնակչությանը»: Մինչդեռ մեզ հայտնի է, որ թուրքերը չառաջացան, որովհետև հաստատվել էր զինադադար:

Կոտորածի ենթարկված գյուղերից փրկվածները դառնում են փախստական ու ապաստանում Համամլուի շրջանի գյուղերում՝ հայ-թուրքական զորքերի «չեզոք գոտում»: Այսպես, օրինակ՝ դեպքերի ժամանակակից Վարսենիկ Համբարյանի (ծնվ. 1906 թ.) պատմության համաձայն Ղալթախչիից փրկված մի շարք ընտանիքներ ապաստանել էին Զիգդամալ¹⁶⁴ գյուղում և մնացել այնքան, մինչև թուրքերը հեռացել էին բռնազավթած շրջաններից: Ապաստանածները հիմնականում եղել են տարիքով տղամարդիկ, իսկ տեղի բնակիչները սարսափահար փախել էին լեռները՝ լսելով տեղի ունեցած դաժանությունների մասին¹⁶⁵: Փախուստը պայմանավորված էր նրանով, որ երբ թուրքերը նոր էին գրավել Փամբակի գյուղերը, առաջին հերթին պահանջել էին տղամարդկանց ներկայանալ՝ իբր հաշվառելու, սակայն նրանցից շատերը, գիտակցելով մոտալուտ հաշվեհարդարը, պարզապես փախել են: Գերի վերցվածների մեջ շատ էին նաև բանակ զորակոչվածները, որոնք դարձել էին քարոզչության զոհ, դասալիքներ:

Ականատես Մելիսակ Սահակյանի (ծնվ. 1877 թ., Ղալթախչի) վկայության համաձայն, նախքան թուրքերի մուտքը Ղալթախչի, գյուղ է եկել մի զինվորական (հայտնի չէ հայ, թե թուրք) և հայտարարել, որ թուրքերը արշավում են առաջ՝ դեպի Ղարաքիլիսա և պահանջում են, որ տղամարդիկ գյուղից դուրս գան, և այդ դեպքում թուրքերը կանանց և երեխաներին ձեռք չեն տա: Մեծ մասը հավատալով գյուղից դուրս են գալիս և, արդյունքում, շատ ընտանիքներ մնում են անպաշտպան¹⁶⁶: Այս հանգամանքով է պայմանավորված նաև հետագայում՝ կոտորածներից հետո դիակների քննության ժամանակ Ջարդի ձորում տղամարդկանց դիակների իսպառ բացակայությունը, իսկ գյուղերում սպանվածների մեջ տղամարդկանց ընդամենը տասն տոկոս լինելը¹⁶⁷:

Շրջանի բնակչության հիշողության մեջ է մնացել հայազգի Գեղամ փաշայի (կատարված ուսումնասիրությունները փաստում են, որ «փաշա» կոչումը իրեն տրվել է ժողովրդի կողմից) պատումը, որը թուրքական կրթություն ստացած սպա էր և, շրջանառվող լուրերի համաձայն՝ Փամբակ արշաված փաշայի համակոորդացին ու

161 Այժմ՝ Գեղասար (Լոռու մարզ):

162 Մատուռ Սուրբ Աստվածածին, Գեղասար գյուղից 2 կմ հարավ, ժայռապատ լեռան գագաթին:

163 Բանասացը պատմությունները լսել է ականատեսներ՝ տատից՝ Կյուրեղյան Մարիամից (Նալբանդ, ծն. թիվը անհայտ) և մորից՝ Հայկանուշ Կյուրեղյանից (ծնվ. 1903 թ., Նալբանդ):

164 Այժմ Արևաշող (Լոռու մարզ):

165 Բանասաց՝ Դրախտուհի Մագդյան (ծնվ. 1939 թ, Արևաշող), Վարսենիկ Համբարյանի դուստրը:

166 Բանասաց՝ Ազատ Սահակյան (Հարթագյուղ):

167 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 134, ֆ. 114, ց. 2, գ. 27, թ. 85-86:

ընկերը: Նրա շնորհիվ բազմաթիվ մարդիկ փրկվում են կոտորածից: Նա կանխել էր Մեծ Պարնի և իր ծննդավայր Ավդիբեկ գյուղերի կոտորածը: Նա նաև կարողացել էր պաշտպանել կոտորածի ենթարկված գյուղերի այն փախստական բնակիչներին, որոնք փրկվել էին ջարդերից և ապաստանել Ավդիբեկում¹⁶⁸: Գեղամ Հունանյանը¹⁶⁹ (ծնվ. 1874 թ., Ավդիբեկ) հետագայում (1930 թ.) մեղադրվել է որպես հակահեղափոխական խմբավորման անդամ, հավաքների մասնակից և բռնադատվել¹⁷⁰:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց մինիստրին ուղղված Օսմանյան կառավարության մոտ Ալեքսանդրապոլում ՀՀ ԱԳՆ դիվանագիտական ներկայացուցիչ Գ. Խոյեցյանի կողմից ուղարկված 1918 թ. հոկտեմբերի 4-ի գեկուցագրից տեղեկանում ենք, որ Ավդիբեկի գյուղացի Գեղամ խան Սարգսյանը, ծանոթ լինելով արաբներն, պարսկներն, թուրքներն լեզուներին, Օսմանյան կառավարության կողմից նշանակվել է Փամբակի և Լոռիի շրջանների մյուլիիր (наблюдательный начальник) և աշխատում է ըստ հնարավորության թեթևացնել այդ շրջանների ժողովրդի դրությունը¹⁷¹:

Ակնատես Նազան Աշուղաթոյանի (ծնվ. 1895 թ., Մեծ Պարնի) վկայության համաձայն, երբ թուրքական զորքը հասնում է իրենց գյուղ, Գեղամ փաշան հագնում է իր զինվորական համազգեստը, վերցնում է մի փոքր տղայի և աղ ու հացով ընդառաջ գնում գորքին: Աղոթքի ժամ է լինում: Նա գլխին շոր է փաթաթում և սկսում է թուրք փաշայի հետ դուրան կարդալ: Լուրանի ընթերցանությունից հետո հանում են փաթեթոցները, ճանաչում են միմյանց և ողջագուրվում: Պարզվում է, որ ընկերներ են, սովորել էն իրար հետ Գերմանիայում: Զորքը տեղակայվում է գյուղում: Գեղամը հրամայում է հացի նախապատրաստություն տեսնել, փաշայի համար գորգեր բերել: Գյուղի տղամարդկանց մեծ մասը գյուղից փախչում են լեռները՝ դեպի Որդնավ¹⁷²: Թուրքերը Ավդիբեկում զանգվածային կոտորածներ չեն իրականացնում, բայց սկսում են թալանը, կողոպտում են բռնաճնշումները, սակայն հաշվի առնելով Գեղամ փաշայի ներկայությունը՝ իրենց «զուսպ» են դրսևորում¹⁷³:

Այնուամենայնիվ, Մեծ Պարնի և Ծաղկաբեր գյուղերում ևս բնակիչների կյանքի և գույքի նկատմամբ եղել են ոտնձգություններ. կանանց բռնաբարություններ, առևանգումներ, թալան և սպանություններ: Արխիվային լուսանկարներից պարզ է դառնում, որ Ավդիբեկ գյուղի տարածքում ևս եղել է կոտորած: Լուսանկարները ներկայացնում են հրեշավոր գազանության հետևանքները, նաև բռնությունների ձևերը: Նկարների ուսումնասիրությունից պարզորոշ երևում է, որ սպանվածներին նախապես միմյանց հետ կապել են պարաններով¹⁷⁴:

168 Բանասաց՝ Հայկազ Աֆրիկյան (ծնվ. 1930 թ., Ղալթախչի):

169 Գեղամ Սարգսյան-Հունանյան Գաբրիելի:

170 Տե՛ս ՀԱԱ ֆ. 1191, ց. 18, գ. 923, թ. 307, ֆ. 1191, ց. 18, գ. 924:

171 ՀԱԱ ֆ. 200, ց. 2, գ. 18, թ. 2:

172 Այժմ՝ Զրաշեն (Լոռու մարզ):

173 Բանասաց՝ Վահագն Պետրոսյան (ծնվ. 1966 թ., Ծաղկաշեն), ականատեսի թողը:

Պատմությունը լսել է հորից՝ Պետրոսյան Արամից (ծնվ. 1926թ. Ավդիբեկ):

174 Տե՛ս ՀԱԱ Կինոֆոտոֆոնո փաստաթղթերի մասնաճյուղ: Պոզիտիվ լուսանկարների ֆոնդ:

Փամբակի հովտի մյուս գյուղերը փրկվում են կոտորածներից ոչ այնքան Գեղամ «փաշայի» կամ մյուս գյուղերի ազդեցիկ մարդկանց վարած քաղաքականության շնորհիվ, որքան այն իրողության, որ արդեն կնքվել էր հերթական և արդեն վերջնական գինադադարը: Այս մասին վկայակոչում է նաև հուշագրող Սարգիս Հարությունյանը: Մասնավորապես նա գրում է, որ Սովետական Ռուսաստանի վճռական միջամտությամբ թուրքերի կողմից իրենց գյուղում և հարևան չորս գյուղերում¹⁷⁵ բռնություն և արյունահեղություն տեղի չի ունենում: Այնուհանդերձ, այդ գյուղերի վիճակը շատ ծանր էր վառելիքի ու հացի բացակայության պատճառով, ինչի հետևանքով Ղարալ գյուղում մահացողների թիվը հասնում էր օրական 3-4 մարդու¹⁷⁶: Սակայն Ղարալում իրականացված կոտորածների մասին (ինչի մասին լռում է հուշագրող Սարգիս Հարությունյանը) դարձյալ վկայում են լուսանկարները¹⁷⁷:

Փաստերի վերհանումը և կատարված հետազոտությունները թույլ են տալիս ենթադրել, որ հուշագրողը և բանասացները, նշելով, որ իրենց գյուղերը խուսափել են կոտորածներից, նկատի են ունեցել զանգվածային կոտորածները:

Թուրքական շարժը «չեզոք» գոտում ակտիվանում է, երբ Համամլու¹⁷⁸ գյուղում տեղակայված Ղարաքիլիսայի կայագործի կարմիրբանակայինների բաժանմունքը կայագործի պետի որոշմամբ հետ է կանչվում: Այդ նույն օրը թուրքերը սկսում են առևանգել կանանց, հափշտակում են անասուններին¹⁷⁹:

Ըստ բանասացների, բռնազավթման ողջ ընթացքում թուրքական զորքերն իրականացնում էին թալան, սեռական և աշխատանքային շահագործում: Հայտնաբերելով արհեստավորների, դարբինների, կոշկակարների տները, նրանց ճնշումների ենթարկելով, աշխատեցնում էին՝ կանչելով նաև «չեզոք գոտուց» կամ կից գյուղերից, սպառնում հաշվեհարդար տեսնել թաքնվողների և թաքցնողների նկատմամբ: Ռազմակալված շրջանների ողջ մնացած մասնագետ բանվորները և արհեստավորները շահագործվում էին ինչպես տեղում, այնպես էլ հավաքվում էին և բռնի ուղարկվում Էրզրում¹⁸⁰:

Ականատես Անգին Ոսկանյանի վկայության համաձայն, ողջ մնացած կանանց ստիպել են գուլպաներ գործել ասկյարների համար՝ չսպանելու պայմանով¹⁸¹:

Այսպիսով, թուրքերը ռազմակալված տարածքի բնակչությանը կոտորելուց, գերեվարելուց և փախստական դարձնելուց բացի ենթարկում էին նաև տնտեսական շահագործման:

Լուսանկարներ՝ p-33, p-34, p-242, p-246, p-247 Ավդիբեկի զոհերը: Տե՛ս պատկեր 6, p-246:

175 Հուշագրողը Ղարալ (Կաթնաջուր) գյուղից է, մյուս չորս գյուղերը մինչև գինադադարի գիծը՝ Նալբանդ կայարան ընկած գյուղերն են՝ Ավդիբեկ (Ծաղկաբեր), Մեծ Պարսի, Գյոգյոլուշ (Սարալանց), Նալբանդ (Շիրակամուտ):

176 Հարությունյան, 92:

177 Տե՛ս ՀԱԱ Կինոֆոտոֆոնո փաստաթղթերի մասնաճյուղ: Պոզիտիվ լուսանկարների ֆոնդ: Լուսանկարներ՝ p-32, p-249 Ղարալի զոհերի մնացորդները:

178 Այժմ՝ Սպիտակ (Լոռու մարզ):

179 ՀԱԱ ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 15:

180 ՀԱԱ ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 2:

181 Բանասաց՝ Լորեստա Ոսկանյան:

Ինքնապաշտպանության և դիմադրության որոշ դրվագներ

Նոյեմբերի 14-ին Ջաջուռի ուղղությամբ թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ հայկական զորամասերը թողնում են Ջաջուռի լեռնանցքը և երեկոյան նահանջում են Համամլի գյուղը¹⁸²։ Վանանդի (Կարսի) նահանգապետ Ստեփան Ղորղանյանն իր հուշերում գրում է, որ Սեպուհը զինադադարի նախօրյակում անսպասելի ու հանկարծակի հարձակվում է Ջաջուռի բարձունքներում «տաճկաց» առաջավոր զորամասերի վրա։ Սեպուհը պարտվում է։ Սակայն այս հարձակումը իրարանցում է առաջացնում Կարաբեքիր փաշայի ճամբարում։ Սեպուհի անսպասելի հարձակումը Ստեփան Ղորղանյանը համարում է «վարչական և ռազմական տեսակետից զավեշտ», որը սակայն բացահայտում է, որ Կարաբեքիր փաշան այլևս «ուժ չուներ», իսկ թուրք հրամանատարությունը հիմք ուներ կարծելու, որ հայերը հարձակվում են նրանց վրա՝ բոլոր կողմերից¹⁸³։

Թուրքերին դիմադրելու նպատակով աշխարհագրային ջոկատները սպասում են Ջաջուռի լեռնանցքում, իսկ թուրքերը անակնկալ ձևով Ղալթախչի գյուղ են մտնում՝ ճեղքելով Փամբակի լեռնաշղթան և անցնելով Բագեր¹⁸⁴ բնակատեղի լեռնային ճանապարհով, որը Փոքր Քափանակ գյուղից գալիս էր Ղալթախչի¹⁸⁵։

Ականատես Սիմոն Խաչատրյանի (ծնվ. 1885 թ., Ղալթախչի) վկայության համաձայն, թուրքական բանակը չի կարողանում անցնել Ջաջուռի լեռնանցքը, քանի որ 20-25 արցախցի հերոսներ մեկ շաբաթ արյան գնով պաշտպանում են դիրքը, ապա նահատակվում։ Նրանք շրջակա գյուղերի բնակիչներին առաջարկել էին ձևավորել տեղական ինքնապաշտպանություն, սակայն մերժում էին ստացել։ Հայազգի բոլշևիկները թուրքերին Փամբակի հովիտ են մտցնում Փոքր Քափանակի կողմից։ Թուրքերի լեռնային հրանոթների գնդակոծման տակ հայտնված ջոկատի տղաները զոհվում են։ Ականատեսն այդ ժամանակ եղել է գործող բանակում։ Բռնազավթումից հետո վերադառնում է գյուղ և տեսնում, որ թուրքերը սրի են քաշել բոլոր զավակներին՝ յոթ տղա, երկու աղջիկ։ Գտնում ու հուղարկավորում է բոլորին, բացի մեկ որդուց։ Կինը փրկվել էր կոտորածից¹⁸⁶։ Այնուամենայնիվ, հայկական նահանջող զորամասերից մնացած ջոկատի և նրանց միացած շրջակա գյուղերի որոշ բնակիչների կողմից Ջաջուռի լեռնանցքում կազմակերպվում է դիմադրություն¹⁸⁷։ Ինքնապաշտպանական մարտերի մասին է վկայում նաև կամավորական ջոկատի անդամ Վաղարշակ Գևորգյանը (ծնվ. 1894 թ., Ղալթախչի)։ Նա մեծ զայրույթով նշում

182 «Նոյեմբերի 15-ին», *Յանաջ*, no. 251 (1920), 4:

183 ՀԱԱ ֆ. 477, ց. 1, գ. 15, թ. 4, 5, 6:

184 Հնագույն բնակատեղի Հարթագյուղից 5 կմ հարավ:

185 Բանասաց՝ Միշա Մինասյան (Հարթագյուղ):

186 Բանասաց՝ Գարիկ Կոստանյան (ծնվ. 1958 թ., Հարթագյուղ), ականատեսի թողը: Պատմությունը լսել է հորից՝ Հովհաննես Սիմոնի Կոստանյանից (ծնվ. 1924 թ.):

187 Խանգաղյան, *Իմ հայրենի գյուղը՝ Փամբակի Լուսաղբյուրը*, 177:

է, որ քեմալական բանակի շատ ասկյարների գլխի բուդյոնովկաներին¹⁸⁸ բոլշևիկյան կարմիր աստղ էր¹⁸⁹:

Ինքնապաշտպանության դրսևորում ենք տեսնում նաև Ղալթախչի գյուղում, երբ թուրք հինգ ձիավոր ասկյարներ նախապես հավաքված տղամարդկանց շարքով փորձել են տանել Ջարդի ձոր: Տղամարդկանց խմբի մեջ էր նաև Լազլագանց Կարոն, որը շատ ուժեղ, հաղթանդամ, բարձրահասակ տղամարդ էր: Նախքան շարժվելը նա շավվարի տակ՝ ոտքի վրա, սայլի ձող է ամրացնում: Թուրք ձիավորներից երկուսը կանգնում են շարքի կողքերը, մեկը՝ հետևը, իսկ երկուսը գնում են առջևից: Երբ հասնում են Ղարաբոյա գյուղի դաշտերը, Կարոն շավվարից հանում է ձողը և խփում է ասկյարի գլխին, նրան ձիուց ցած է գցում և վերցնում գեները: Այսպես մինչև հասնում են Ջաջուռի թունելի մոտ, սպանում են նաև մյուս ասկյարներին: Առջևից գնացող ասկյարները տեսնելով, որ հայերն են ձիու վրա, փախչում են: Տղամարդկանց այս խումբը փրկվում է և փախչում Լոռի¹⁹⁰:

Ականատես Բաղալ Բադասյանը (ծնվ. 1895 թ., Ղարաբոյա) պատմում է, որ իր եղբայրը՝ Ղարաբոյա գյուղի ուժեղ տղամարդկանցից մեկը, չդիմանալով թուրքական գազանություններին և անմարդկային վերաբերմունքին, ձեռքերով խեղդում է սպառնացող, մարդասպան ասկյարին և ասում գյուղացիներին, որ թաքցնեն դիակը: Սակայն վախեցած մարդիկ չեն թաքցնում, ինչի արդյունքում փաշայի հրամանով Բաղալի եղբորը կախում են սյունից և բոլորի ներկայությամբ մաշկազերծ անում¹⁹¹:

Վերջաբանի փոխարեն

1921 թ. հունվարի 18-ին Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի ժողկոմն ուշացած բողոք է ներկայացնում Անկարայի կառավարությանը՝ Կարսի, Ալեքսանդրապոլի գավառի և «չեզոք գոտու» խաղաղ բնակչության նկատմամբ իրականացվող բռնության, թալանի և սպանությունների վերաբերյալ: Նշվում է նաև, որ Աղբուլաղի և Համամլուի շրջաններում թուրք ասկյարների զինված ջոկատները ներխուժել են հայկական գյուղերը և կողոպտել, սպանել մարդկանց և բռնաբարել կանանց¹⁹²:

Ալեքսանդրապոլի գավառը և կոտորածի ենթարկված Փամբակի տարածքն աստիճանաբար ամայանում էր. Ալեքսանդրապոլի հեղկոմի անդամ Նահապետյանը 1921 թ. հունվարի 19-ին հաղորդում է, որ գավառի 75000 մարդուց մնացել է 15000-ը¹⁹³: 1921 թ. հունվարի 31-ի տվյալներով՝ «տաճկական զորքի» թիվը սպանդի

188 Գլխարկի տեսակ:

189 Բանասաց՝ Վաղարշակ Զաքարյան (ծնվ. 1955 թ., Երևան), ականատեսի թողը: Պատմությունը լսել է ականատեսից:

190 Բանասաց՝ Իշխան Ավետիսյան (Հարթագյուղ):

191 Բանասաց՝ Սամվել Բադասյան (Խնկոյան):

192 Հրանուշ Խառատյան, «Թուրք-հայկական պատերազմի ընթացքը և քեմալականների արևելահայկական կոտորածները», <https://www.lragir.am/2020/04/25/540898/>, դիտվել է 10.17.2020:

193 Հրանտ Աբրահամյան, «Ալեքսանդրապոլի իրադարձությունների շուրջ (1920 թ. նոյեմբեր – 1921 թ.

վայրում պակասում է: Այսուհետ Ղալթախչի և Նալբանդ կայարաններում, որպես «չեզոք գոտու» շրջան, մնում միայն պահակներ և սակավաթիվ զինվորներ¹⁹⁴: Այս ամենը պայմանավորված էր նրանով, որ այլևս գյուղերի մի մասը կոտորված էին, կողոպտված ու ավերված: Շինություններում մնացած անթաղ դիակները դառնում էին համաճարակի պատճառ:

Ողջ մնացած մարդիկ լքում էին իրենց տները՝ փրկություն գտնելով Հայաստանի այլ վայրերում: Վանանդի նահանգից ևս Հայաստան էին գալիս նոր գաղթականներ: Այսպես, Սանահինի մոտ անապատան 6000 հայ գաղթականների ճակատագրի մասին է հայտնում Մարիամ Զավարյանը: Վրաց կառավարությունը մերժում է նրանց թույլատրել շարունակել իրենց ճանապարհը Վրաստանի միջով: Թիֆլիսից գաղթականների գործերով եկած Մարիամ Զավարյանը դիմում է Ղարաքիլիսայի հեղկոմին, որպեսզի միջոցներ ձեռք առնեն գաղթականներին տեղափոխելու համար: Մինչ կղիմեին Երևան, Ղարաքիլիսայի հեղկոմը մի գնացք հինգ վագոններով լեցուն գաղթականներով ուղարկում է դեպի Ալեքսանդրապոլ: Գնացքում է լինում նաև թուրք սպա իր հետևորդներով: Գնացքը Ջաջուռի մոտ թունելի մուտքի առջև կանգ է առնում՝ ձյան մեջ խրվելու պատճառով և մնում է երկու օր: Ջաջուռի թուրք զինվորները և խուժանը, տեղեկանալով այդ մասին, գիշերով հարձակվում են գնացքի վրա և թալանում են գաղթականներին՝ շատերին թողնելով միայն ներքնաշորերով: Սարսափահար գաղթականությունը ուղարկում է իրենցից մեկին Ղարաքիլիսա՝ հեղկոմին խնդրելով նոր գնացք՝ Ղարաքիլիսա վերադառնալու համար, որովհետև այդտեղ իրենց մնալը սպառնում է թուրքերի կողմից նոր կոտորածի: Ահաբեկված գաղթականները վերադառնում են Ղարաքիլիսա¹⁹⁵:

Այս դեպքը վկայում է, թե ինչ վիճակում էր ռազմակալված տարածքը անվտանգության առումով: Այստեղից փրկված բնակչությունը դառնում էր տարագիր: Եվ միայն թուրքերի գնալուց հետո են ողջ մնացածները վերադառնում և սկսում վերակենդանացնել իրենց բնակավայրերը: Թուրքերի հեռանալուց տարիներ հետո ռազմակալված գյուղերի բնակչության պատկերը ցույց է տալիս Ղարաքիլիսայի գավառային գործկոմի կազմած ցուցակը: Դրանք երկրորդ շրջանի մեջ մտնող գյուղերն են, որտեղ տեղի էին ունեցել նաև սարսափելի կոտորածները: Ղալթախչի գյուղում բնակչության թիվը՝ 785 էր, Աղբուլաղում՝ 840, Ղարաբոյայում՝ 570¹⁹⁶: Կատարված դիտարկումների արդյունքում եկանք այն եզրահանգման, որ այս գյուղերում մեծամասամբ սպանվել են կանայք և երեխաները, իսկ ողջ մնացած տղամարդիկ վերադառնալով իրենց բնակավայրեր հիմնականում ամուսնացել են Կարսի նահանգից այս շրջաններում հաստատված կանանց հետ (գաղթականներ), շարունակելով կենդանացնել իրենց բնակավայրերը:

Ամենին պատահական չէին Փամբակի վերոնշյալ տարածքի և Շիրակի բազմաթիվ

ապրիլ), Լրաբեր հասարակական գիտությունների 2 (2007), 129:

194 ՀԱԱ ֆ. 114, ց. 2, գ. 10, թ. 10:

195 ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 124, թ. 11: ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 39:

196 ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 2, թ. 19:

գյուղերում իրականացված զանգվածային կոտորածները: Պատերազմի հետևանքով հայ խաղաղ բնակչությունը՝ Կարսից մինչև Ալեքսանդրապոլ, ունենալով 1918 թ. դառը փորձը, դիմել էր փախուստի, կենտրոնանալով հիմնականում այս վայրերում: Իսկ թուրքական զորքը, օգտվելով ստեղծված պայմաններից, իրականացնում էր ֆիզիկական բնաջնջում:

Համեմատելով Արևելյան Հայաստանում թուրքական ռազմուժի և խուժանի գործողությունները Արևմտյան Հայաստանի տարածքում տեղ գտած Հայոց ցեղասպանության հետ, կարող ենք փաստել բազմաթիվ նմանություններ իրականացման ձևերի ու հետապնդած նպատակների միջև: 1920 թ. աշնանը, օգտվելով պատերազմական դրությունից՝ քեմալականներն իրականացնում էին խաղաղ հայ բնակչության զանգվածային բնաջնջում, ճիշտ այնպես, ինչպես Առաջին աշխարհամարտի ընթացքում: Քեմալականները վարվում էին նույն կերպ, ինչպես ժամանակին վարվել էին երիտթուրքերը:

Վերապրածների և ականատեսների ու նրանց բանավոր պատմությունները փոխանցած ժառանգների աղյուսակ ըստ գյուղերի

Հարթագյուղ (նախկինում՝ Ղալթախչի)					
Վերապրողի, ականատեսի ազգանուն, անուն	Ծննդյան թիվ, վայր	Բանասաց(ներ)	Ծննդյան թիվ, վայր	Ականատես- վերապրողի հետ կապը, ումից լսել է պատմությունը	Նյութի հավաքագրման տարեթիվը, վայրը
Ավագյան Հեղնար	1900 թ., Կարս	Ավետիս Ավագյան	1927 թ., Ղալթախչի	Որդին: Պատմությունը լսել է մորից՝ ականատեսից:	2009 թ., Հարթագյուղ
Ավետիսյան Եղո	1898 թ., Ալաշկերտ	Իշխան Ավետիսյան	1937 թ., Ղալթախչի	Որդին: Պատմությունը լսել է հորից՝ ականատեսից:	2013 թ., Հարթագյուղ
Աֆրիկյան Արեգ	1905 թ., Ղալթախչի	Ավետիք Աղասու Գալստյան, Էմմա Շիրակի Գալստյան	1940 թ., Ղալթախչի: 1953 թ., Լենինական:	Որդին, հարսը: Պատմությունը լսել են ականատեսից:	2008 թ., Հարթագյուղ
Աֆրիկյան Գլախ Դանիելի	1909 թ., Ղալթախչի	Գրետա Աֆրիկյան	1939 թ., Ղալթախչի	Աղջիկը: Պատմությունը լսել է հորից՝ ականատեսից:	2009 թ., Հարթագյուղ
Գալոյան Արմենակ Գրիգորի	1892 թ., Ղալթախչի	Փայլակ Արմենակի Գալոյան	1945 թ., Ղալթախչի	Որդին: Պատմությունը լսել է հորից:	2009 թ., Հարթագյուղ
Գալոյան Վարսենիկ Գրիգորի	1905 թ., Ղալթախչի	Սաթենիկ Վաղարշակի Հախոյան	1926 թ., Ղալթախչի	Դուստրը: Պատմությունը լսել է մորեղբորից՝ Արմենակ Գրիգորի Գալոյանից:	2007 թ., Հարթագյուղ
Գրիգորյան Ֆիդային	1908 թ., Ղալթախչի	Ազնիվ Աֆրիկյան	1947 թ., Հարթագյուղ	Հարսը: Պատմությունը լսել է ականատեսից:	2015 թ., Հարթագյուղ

Վազգեն Վ. Հախոյան

Գևորգյան Վաղարշակ	1894 թ., Ղալթախի	Վաղարշակ Զաքարյան	1955 թ., Երևան	Թողը: Պատմությունը լսել է պապից՝ ականատեսից:	2021 թ., Երևան
Խաչատրյան Սիմոն	1885 թ., Ղալթախի	Գարիկ Կոստանյան	1958 թ., Հարթագյուղ	Թողը: Պատմությունը լսել է հորից՝ Հովհաննես Սիմոնի Կոստանյանից (ծնվ. 1924 թ.) ականատեսի որդուց:	2017 թ., Հարթագյուղ
Մինասյան Գուրգեն	1903 թ., Ղալթախի	Միշա Գուրգենի Մինասյան	1928 թ., Ղալթախի	Որդին: Պատմությունը լսել է հորից՝ ականատեսից:	2008 թ., Հարթագյուղ
Մկրտչյան Սիրուն	1910 թ., Ղալթախի	Ժենյա Մկրտչյան, Հայաստան Մկրտչյան	1933 թ., Ղալթախի, 1936 թ. Ղալթախի	Հարսը: Աղջիկը: Պատ- մությունը լսել են ականատեսից:	2008 թ., Հարթագյուղ, 2021 թ. Հարթագյուղ
Մովսիսյան Հայկանուշ (Հայկո) Իսաչոյի	1886 թ., Հաջի- Նազար	Ազատ Մեխակի Սահակյան	1935 թ., Ղալթախի	Որդին: Պատմությունը լսել է մորից՝ ականատեսից:	2009 թ., Հարթագյուղ
Հարությունյան Սաթենիկ	1912 թ., Ղալթախի	Գրետա Գլախի Աֆրիկյան	1939 թ., Ղալթախի	Աղջիկը: Պատմությունը լսել է մորից՝ ականատեսից:	2009 թ., Հարթագյուղ
Խաչատրյան Համասփյուռ	1901 թ., Ղալթախի	Լիլիթ Սիմոնյան, Վաղարշակ Զաքարյան	1963 թ., Երևան 1955 թ., Երևան	Թոռները: Պատմությունը լսել են ականատեսից:	2020 թ., Տեսագանգ Երևան-Փարիզ: 2021 թ., Երևան
Ոսկանյան Անգին	1897 թ., Դուզքենդ	Լորետա Ոսկանյան	1957 թ., Հարթագյուղ	Թողը: Պատմությունը լսել է տատից՝ ականատեսից:	2013 թ., Գյումրի

Սահակյան Մելսակ Մկրտչի	1877 թ., Ղալթախչի	Ազատ Մելսակի Սահակյան	1935 թ., Ղալթախչի	Որդին: Պատմությունը լսել է հորից՝ ականատեսից:	2009 թ., Հարթագյուղ
Սարգսյան Սիմա	1910 թ., Ղալթախչի	Լենա Թորոսյան	1936 թ., Ղալթախչի	Աղջիկը: Պատմությունը լսել է մորից՝ ականատեսից:	2007 թ., Հարթագյուղ
Սիմոնյան Սիմոն	1906 թ., Ղալթախչի	Լևոն Գաբրիելյան	1949 թ., Հարթագյուղ:	Որդին: Պատմությունը լսել է հորից:	2020 թ., Հարթագյուղ
Լուսաղբյուր (նախկինում՝ Աղբուլաղ)					
Ավետիսյան Զարո	Աղբուլաղ Ծննդ. թիվը չի գրանցվել	Սոխակ Ավետիսյան	1929 թ., Աղբուլաղ	Որդին: Պատմությունը լսել է մորից:	2012 թ., Լուսաղբյուր
Մկրտչյան Արաքսի	Աղբուլաղ Ծննդ. թիվը չի գրանցվել	Վուրդյա Մկրտչյան	1929 թ., Աղբուլաղ	Որդին: Պատմությունը լսել է մորից:	2012 թ., Լուսաղբյուր
Հարությունյան Սարիբեկ	1875 թ., Աղբուլաղ	Հռիփսիկ Հարությունյան	1926 թ., Աղբուլաղ	Աջիկը: Պատմությունը լսել է հորից:	2009 թ., Գյումրի:
Իսնկոյան (նախկինում՝ Ղարաբոյա)					
Բաղասյան Բաղալ	1895 թ., Ղարաբոյա	Սամվել Բաղասյան	1972 թ., Իսնկոյան	Թոռը: Պատմությունը լսել է ականատեսից:	2020 թ., Իսնկոյան:
Բաղասյան Հայկանուշ	1895 թ., Ղարաբոյա	Սամվել Բաղասյան	1972 թ., Իսնկոյան	Թոռը: Պատմությունը լսել է ականատեսից:	2020 թ., Իսնկոյան:
Կուրդիկյան Շուշանիկ	1890 թ., Ղարաբոյա	Ջանիբեկ Մամիկոնի Հարությունյան	1946 թ., Իսնկոյան	Թոռը: Պատմությունը լսել է ականատեսից:	2020 թ., Վաղարշապատ
Ծաղկաբեր (նախկինում՝ Ավդիբեկ)					

Վազգեն Վ. Հախոյան

Աշուղաթոյան Նազան	1895 թ., Մեծ Պարնի	Պետրոսյան Վահագն	1966 թ., Ծաղկաշեն	Թողը: Պատմությունը լսել է հորից՝ Պետրոսյան Արամից (ծնվ. 1926թ. Ավդիբեկ)	2020 թ., Ծաղկաբեր
Շիրակամուտ (նախկինում՝ Նալբանդ)					
Կյուրեղյան Հայկանուշ	1903 թ., Նալբանդ	Կյուրեղյան Գոհարիկ	1920 թ., Նալբանդ	Աղջիկը: Պատմությունը լսել է մորից՝ ականատեսից:	2021 թ., Շիրակամուտ
Կյուրեղյան Մարիամ	Ծննդ. թիվը անհայտ, Նալբանդ	Կյուրեղյան Գոհարիկ	1920 թ., Նալբանդ	Թողը: Պատմությունը լսել տատից՝ ականատեսից:	2021 թ., Շիրակամուտ



Պատկեր 1.

Հողամաքրման արդյունքում հայտնաբերված մասունքներ և թուրքական պարկուճներ:



Պատկեր 2.

Թուրքական կրակված փամփուշտների պարկուճներ:



Պատկեր 3.
Նալբանդի (Շիրականոտ) սպանվածները 1920-1921 թթ.:



Պատկեր 4.
2000 թ. Հարթագյուղում՝ ջրհորից հայտնաբերված մարդկային գանգեր (1920 թ. քեմալականների կողմից իրականացված սպանդի հետևանք):



Պատկեր 5.

Ադրուաղի (Լուսադրյուր) և Ջաջուռի սպանված երեխաները 1920-1921 թթ.:



Պատկեր 6.

Ավդիբեկի (Ծաղկաբեր) սպանվածները 1920-1921 թթ.:

**MASS KILLINGS IMPLEMENTED BY THE KEMALISTS IN PAMBAK AREA
(SHIRAK PROVINCE) ACCORDING TO THE FAMILY MEMORIES OF
EYEWITNESS-SURVIVORS (1920-1921)**

Vazgen V. Hakhoyan
National Gallery of Armenia

SUMMARY

In 1920, the operations of Kemalist troops in the Pambak area until the outlined “neutral zone” of the Turkish-Armenian troops were true genocidal action, similar to the genocide implemented by Young Turks in the Western Armenia. Not only had the local residents fell victim to the Turkish sword, but also thousands of exiled from Kars province and refugees from Shirak. The article is largely based on the reproduction of the memories of eyewitnesses and their descendants. Ethnographic research, collection of oral accounts, land clearing works and observations, as well as archival studies have been carried out. The studies demonstrate the process of actions, the forms of organizing the massacres and the pursued goals of the genocidal acts of the Kemalists against peaceful Armenian population.

Key words: Kemalists, Pambak, Shirak province, Alexandropol, Western Armenia, Kars, massacre, Armenian Genocide, eyewitness-survivors, testimonies, memories, resistance, neutral zone.

**МАССОВЫЕ ПОГРОМЫ, ОСУЩЕСТВЛЕННЫЕ КЕМАЛИСТАМИ
В ПАМБАКСКОМ РАЙОНЕ (ПРОВИНЦИЯ ШИРАК) ПО СЕМЕЙНЫМ
ВОСПОМИНАНИЯМ ОЧЕВИДЦЕВ-ВЫЖИВШИХ (1920-1921)**

Вазген В. Ахоян
Национальная галерея Армении

РЕЗЮМЕ

Действия кемалистских войск в 1920 г. в районе Памбака до помеченной “нейтральной зоны” турецко-армянских войск были настоящим геноцидом, подобным геноциду, совершенному младотурками в Западной Армении. Жертвами турецкого меча становятся не только местные жители, но и тысячи мигрантов из Карсского района и беженцев из Ширака. Статья во многом основана на воспроизведении воспоминаний очевидцев и их потомков. Проводились также этнографические, фольклорные, межвые работы и наблюдения, архивные исследования. Исследования показывают порядок проведения геноцидальных действий кемалистов против мирного армянского населения, способы организации массовых убийств и преследуемые цели.

Ключевые слова: кемалисты, Памбак, Ширакская провинция, Александрополь, Западная Армения, Карс, резня, Геноцид армян, очевидцы-выжившие, свидетельства, воспоминания, сопротивление, нейтральная зона.

REFERENCES

Abrahamyan, Hrant. «Ալեքսանդրապոլի իրադարձությունների շուրջ (1920 թ. նոյեմբեր – 1921 թ. ապրիլ)» [On the Events of Alexandropol (November, 1920 – April, 1921)]. *Herald of Social Sciences* 2 (2007): 122-132;

Der-Hagobyan, Hagob. *Հայաստանի վերջին աղէտը: Քէմալական արշաւանքը, Կարսի եւ Ալեքսանդրապոլի անկումները, հայ բանակին քայքայումը, յարձակման եւ քայքայման պատճառները պաշէվիքեան տիրապետութիւնը* [The Last Disaster of Armenia. The Kemalist Invasion, the Fall of Kars and Alexandropol, Disintegration of the Armenian Army, Reasons of Attack and Destruction of the Bolshevik Rule]. Constantinople: M. Der Sahakian, 1921;

Grigoryan, Hasmik. *Զանգվածները և զանգվածային բռնությունները. Օսմանյան կայսրության մուսուլման բնակչության մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը* [The Masses and Mass Violence: Participation of Muslim Population of the Ottoman Empire in the Armenian Genocide]. Yerevan: Institute of Archaeology and Ethnography, 2017;

Hakobyan, Ararat. «Մի ամբաստանագիր Ալեքսանդրապոլի հեղկոմի խայտառակ գործերի մասին» [An Indictment Concerning the Scandalous Affairs of Revolutionary Committee of Alexandropol]. *VEM Pan-Armenian Journal* 1 (2015): 228-236;

Hakobyan, T'at'ul. *Հայացք Արարատից. Հայերը և թուրքերը: Պատերազմ, սառը պատերազմ, դիվանագիտություն* [View from Ararat: Armenians and Turks. War, Cold War, Diplomacy]. Yerevan: Antares, 2012;

Harutyunyan, Hamlet. «Շուշիի հայության կոտորածները (1919 թ. հունիս և 1920 թ. մարտ)» [The Massacres of the Armenians of Shoushi (June 1919 and March 1920)]. *Bulletin of Armenology* 1 no. 7 (2015): 50-69;

Harutyunyan, Sargis. *Կյանքի ճանապարհ* [The Road of Life]. Yerevan, typewritten, unpublished;

Khanzadyan, Mkrtich'. *Իմ հայրենի գյուղը՝ Փամբակի Լուսաղբյուրը* [My Native Village – Lusaghbyur of Pambak]. Yerevan: Hrazdan, 2000;

Khanzadyan, Sero. *Հայրենասպասում, 1959-1981* [Telling about the Homeland]. Yerevan: Hayastan, 1984;

Nersisyan, Mkrtich'. *Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր* [Undeniable Documents of the Armenian Genocide]. Yervan: Gitutyun, 2005;

Pehrizyan, Vardan. «Քեմալականների նվաճողական քաղաքականությունը Հայաստանում և Սովետական Ռուսաստանի դիրքը» [The Conquest Policy of the Kemalists in Armenia and the Position of Soviet Russia]. *Bulletin of Yerevan University* 65 (1988): 92-99;

Sardaryan, Ktrich. «Համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում»
[At the Eastern Crossroad of the World Revolution]. *Garun* 4, no. 281 (1990): 16-45.

Հեղինակի մասին
About the Author
Об авторе

Վազգեն Վ. Հախոյան, հայագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի ասպիրանտ:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Թուրքիայի ցեղասպան քաղաքականության դրսևորումներն Արևելյան Հայաստանում:

Էլ. հասցե՝ van.karno@gmail.com

Vazgen V. Hakhoyan, Armenian Studies researcher, PhD student at the “Armenian Genocide Museum-Institute” Foundation.

Research fields - manifestations of the Turkish genocidal policy in Eastern Armenia.

E-mail: van.karno@gmail.com

Вазген В. Ахоян, арменовед, аспирант фонда “Музей-институт Геноцида армян.”

Область исследований - проявления геноцидальной политики Турции в Восточной Армении.

Эл. почта: van.karno@gmail.com

ՀԱՅ ՀՈՌՈՄՆԵՐԸ 19-ՐԴ. ՎԵՐՋԻ – 20-ՐԴ. ՍԿՋԲԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ
ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՀՈՐԶԱՆՈՒՏՈՒՄ

Գևորգ Ս. Ղազարյան
Աթենքի համալսարան, Հունաստան

Դարերի ընթացքում ուղղափառ (օրթոդոքս) հայերը, կամ այսպես կոչված «հայ հոռոմները», դիմագրավել են նույն մարտահրավերներին, ինչ և ողջ հայ ժողովուրդը: Լինելով էթնիկապես հայ, իսկ դավանապես պատկանելով Rum millet-ին՝ ուղղափառ հայերն ենթակա էին նաև այն գործընթացներին, որոնք վերաբերում էին թուրքահպատակ հույն ժողովրդին: Այդ իսկ պատճառով նրանք հայտնվեցին Օսմանյան կայսրության թե՛ հայահալած և թե՛ հունահալած քաղաքականության հորձանուտում: Ուստի կարևոր է 19-րդ դ. վերջում և 20-րդ դ. սկզբում հայ հոռոմների և մյուս քրիստոնյաների դեմ իրականացված ցեղասպանությունների կապի վերհանումն ու լուսաբանումը: Սույն հոդվածը, որը հիմնված է հայերեն ու հունարեն ինչպես տպագիր, այնպես էլ արխիվային անտիպ վկայությունների վրա, այդ ուղղությամբ առաջին փորձն է:

Բանալի բառեր՝ Մեծ եղեռն, Հայոց ցեղասպանություն, հույների ցեղասպանություն, համիդյան կոտորածներ, հայ հոռոմներ, ուղղափառ հայեր, Արևմտյան Հայաստան, Ակն, Չմշկածագ, Բյուրանիա, Իզմիթ:

Հոդվածը ներկայացվել է 07.02.2021:

Ընդունվել է տպագրության 27.03.2021:

The article was submitted on 07.02.2021 and accepted for publication on 27.03.2021.

Статья поступила 07.02.2021 и была принята к публикации 27.03.2021.

Ինչպես հղել՝ Գևորգ Ս. Ղազարյան, «Հայ հոռոմները 19-րդ դ. վերջի – 20-րդ դ. սկզբի քրիստոնյաների կոտորածների հորձանուտում», *Յեղասպանագիտական հանդես* 9, no. 1 (2021), 123-142:

How to cite: Gevorg S. Kazaryan, “The Hay Horoms in the Whirlpool of the Massacres of Christians in the Late 19th – Early 20th Centuries,” *Tseghaspanagitakan handes* 9, no. 1 (2021): 123-142.

Как сослаться: Геворг С. Казарян, “Хай Хоромы в водовороте резни христиан конца 19-го – начала 20-го века,” *Тсехаспанагитакан андес* 9, no. 1 (2021): 123-142.

Ներածություն

Արևմտյան Հայաստանի հայ հոռոմները հիմնականում խիտ բնակվում էին Երզնկայի Հողուս, Ակնի Վանք, Ձորակ, Շրգու և Մուշեղկա, Չմշկաձագի Մամաս, Սեդրկա և Խնդրկիկ գյուղերում: Բացի դրանից՝ Ակնի վերոնշյալ գյուղերից ու Հողուսից 15-րդ և 17-րդ դդ. գաղթած հայ հոռոմները բնակություն էին հաստատել Իզմիրի նահանգում (պատմական Բյուրանիա)՝ հիմնելով Օրթագյուղ ու Խուդի գյուղերը, ինչպես նաև Ֆնդըզըլը գյուղախումբը: Քանի որ համիդյան ջարդերի ու Մեծ եղեռնի ընթացքում հայ հոռոմների այս հատվածները տարբեր ճակատագրի արժանացան, նպատակահարմար ենք համարում դրանց անդրադառնալ առանձին-առանձին:

Գյուղ Հողուս

Կամախի շրջանի Հողուս (Հողիս) գյուղն Արևմտյան Հայաստանի հայ հոռոմների ամենամեծ բնակավայրն էր¹: Այսպես, ըստ Գարեգին եպս. Սրվանձտյանցի (1840-1892)՝ Հողուսը Կամախի (Քեմախի) շրջանի 26 հայկական գյուղերից մեկն էր և 1879 թ. դրությամբ ուներ միայն հայ բնակչություն՝ 80 տուն՝ 1300 բնակչով, որոնցից 120-ը տեղի Արշակունյան վարժարանի սաներ էին: Գարեգին սրբազանը նշում է գյուղի Սբ Տիրամայր եկեղեցու և վարժարանի հասույթներն ու դրամական վիճակը²: Անցյալ դարի սկզբում Հողուսի մասին վիճակագրական տվյալներ է հաղորդում Ֆարիատը՝ Մինաս Գասապյանը (1882-1945): Ըստ նրա՝ Հողուսն ուներ 300 տուն, որը բազմապատկած միջինը 5 շնչով, ստացվում է շուրջ 1500 հոգի: Ըստ նույն հեղինակի՝ Հողուսի դպրոցն ուներ 3 ուսուցիչ և 450 սան, որոնցից 250-ը՝ տղա, մնացյալը՝ աղջիկ³: Այլ՝ թերևս ավելի ստույգ տեղեկությունների համաձայն՝ Հողուսն ուներ 110-130 հայ հոռոմ ընտանիքներ, մոտավորապես 1050 հոգի⁴:

Համիդյան կոտորածների ժամանակ Հողուսը ջարդերից զերծ է մնում խորամանկության շնորհիվ. գյուղացիներն իրենց բարեկամ, երզնկացի փաստաբան Փանիկ Լամբիդիսի միջոցով կարողանում են համոզել թուրքական իշխանություններին, որ իրենք ոչ թե հայեր են, այլ սոսկ հայախոս հույներ⁵: Սրանով գյուղի բնաջնջումն առժամանակ կանխվում է:

1 Հողուս գյուղի մասին եզակի տվյալներ հաղորդող հունարեն երկու հոդվածներ՝ ներածությամբ ու ծանոթագրություններով հանդերձ, բոլորովին վերջերս թարգմանաբար ներկայացրել ենք գիտական հանրությանը. Գևորգ Ղազարեան, «Բարձր Հայքի Հողուս գիւղը յունալեզու հրապարակումներում», Հանդես Ամսօրեայ, 2020, պրնակ 357-382:

2 Գարեգին Սրվանձտյանց, *Երկեր*, հ. 2 (Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982), 493:

3 Ֆարիատ, «Հայ-Հոռոմները կամ յունադուան Հայերը [Ուսումնասիրութեան փորձ]», Ազատամարտ օրաթերթ (Կոստանդնուպոլիս), 1910, 1/14 ապրիլ, 2:

4 Գևորգ Ղազարեան, «Բարձր Հայքի», պրնակ 366, 373: Ըստ Ռայմոնդ Գևորգյանի և Պոլ Փաբուճյանի՝ նախորդ դարի սկզբում Հողուսում կար 50 տուն և 500 շունչ «հայախոս ուղղափառներ»: St' n Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman à la veille du Génocide* (Paris: Les Editions d' Art et d'Histoire "Arhis," 1992), 456:

5 Գևորգ Ղազարեան, «Բարձր Հայքի», պրնակ 375-376:

Քսան տարի անց՝ 1916 թ. աշնանը, Հոդուսի գլխին նորից կախվում է բնաջնջման վտանգը: Գյուղի քահանա Նիկոլ Փափագյանն իրագեկվում է, որ վճիռ է կայացվել հողուսցիներին տարհանել և ուղարկել մահվան քարավաններ: Քահանան անհապաղ կապ է հաստատում քուրդ ցեղապետների հետ, որոնք վճարի դիմաց հանձն են առնում փրկել գյուղացիներին: Այսպես, հոկտեմբերի 28-ին քրդերը 300 զինված մարդկանցով իջնում են սարերից, շրջապատում գյուղը, գերեվարում թուրքական պահակազորը՝ սպանելով դիմադրություն ցուցաբերած հրամանատարին: Այնուհետ իրենց հետ վերցնելով գյուղի բնակիչներին՝ շարժական գույքի հետ մեկտեղ, քրդական գյուղերի ու դժվարանցանելի լեռնային տեղանքի միջով, ձմռան խստագույն պայմաններում ռուս-թուրքական ռազմաճակատը շրջանցելով՝ քրդերը հողուսցիներին հանձնում են ռուսական զորքի առաջապահ ջոկատին: Ռուս զինվորական ղեկավարությունը հողուսցիներին տանում է Երզնկա: Մինչև 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունը հայ հոռոմներին խնամում էր ռուսական Կարմիր խաչը: Դրանից հետո հողուսցիները հանձնվում են բախտի քմաճույքին և որպեսզի նորից թուրքերի ձեռքը չընկնեն, 1918 թ. հունվարին խուճապահար հետևում են նահանջող ռուսաց զորքերին: Ճանապարհներին նրանցից շատերը կոտորվում են սառնամանիքից, հիվանդություններից ու քրդերի հարձակումներից, իսկ կիսամահ վերապրածները հազիվ հասնում են «ռուսական հող»⁶:

Ակնի գյուղերը⁷

Ինչպես արդեն ասվեց, Ակնի շրջանում հայ հոռոմների գյուղերը չորսն էին՝ Վանքը, Ձորակը, Մուշեղկան ու Շրգուն⁸: Դրանց մեջ Վանքն ամենամեծն էր: Գտնվում էր Ակնից հյուսիս: Իր ծաղկուն շրջանում գյուղն ունեցել է 90 տուն, իսկ ընտանիքները,

6 Նույն տեղում, սյունակ 377-378 :

7 Ակնին առնչվող անտիպ նյութերի մեջ հատուկ պետք է նշել այն տեղեկությունները, որոնք անթելված են Աթենքի փոքրասիական հետազոտությունների կենտրոնի (Κέντρο Μικρασιατικών Σπουδών) պահոցում: 1962 թ. աշխատակցուհի Է. Ղազին մեկնել է Էվիա կղզու Կաստանիոտիսա գյուղը և տեղեկություններ է հավաքել Հունաստան գաղթած ակնեցի հայ հոռոմներից: Ղազին հավաքած նյութը պահվում է կենտրոնի պահոցում՝ առանձին ծրարներում. Κέντρο Μικρασιατικών Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος Χώρα Ευφράτη-1 (այսուհետ՝ ΚΜΣ/ΑΠΠ, φάκ. ΧΕ-1). Κέντρο Μικρασιατικών Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος Χώρα Ευφράτη-2 (այսուհետ՝ ΚΜΣ/ΑΠΠ, φάκ. ΧΕ-2). Κέντρο Μικρασιατικών Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος Χώρα Ευφράτη-3 (այսուհետ՝ ΚΜΣ/ΑΠΠ, φάκ. ΧΕ-3). Κέντρο Μικρασιατικών Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος Χώρα Ευφράτη-4 (այսուհետ՝ ΚΜΣ/ΑΠΠ, φάκ. ΧΕ-4): Այս ծրարների ազգագրական ու բանահյուսական հարուստ բովանդակությունը մենք արդեն հրապարակել ենք առանձին հոդվածով: Տե՛ս Գևորգ Ղազարյան, «Արևմտյան Հայաստանի հայ-հոռոմների ավանդազրույցներն ու ավանդույթները», *Գիտությունների ազգային ակադեմիայի Շիրակի Հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական աշխատություններ* 2, no. 23 (2020), 218-219:

8 Ակնի հայ հոռոմների մասին տե՛ս մեր վերջին ուսումնասիրությունները, որտեղ բերված է թեմային առնչվող մատենագրությունը: Գևորգ Ղազարյան, «Ակնի հայ հոռոմները», *Վարձք* 12 (2016), 19-26. Գևորգ Ղազարյան, «Ակնի Վանք գյուղի 1787 թ. հայ հոռոմների Ավետարանը», *Բանբեր Մատենադարանի* 24 (2017), 221-232:

որպես կանոն, բաղկացած են եղել 10-12 շնչից⁹: 19-րդ դ. 60-70-ական թթ. եղել է հայ հոռոմների 80 տուն և թուրքերի 10 տուն, սակայն կրկնակի հրդեհից ու արտագաղթից հետո գյուղը ամայացել է, այնպես որ նույն դարի 90-ականներին Վանքում կար հայ հոռոմների միայն 40-50 տուն, իսկ թուրք ընտանիքների թիվը նույնն էր մնացել¹⁰: 1914 թ. դրությամբ գյուղում բնակվում էր 45 հայ հոռոմ ընտանիք¹¹:

Ձորակ գյուղն ընկած էր Ակնից 1,5-2 կմ հյուսիս-արևելք: Ժամանակին այն ունեցել է 100 տուն բնակիչ, որոնցից 80-ը քրիստոնյա, մնացյալը՝ թուրք¹²: Հավանաբար 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո սկսվել է գյուղի ամայացումը. 55 ընտանիք գաղթել է Օրթագյուղ և Գեյվե (Իզմիրի նահանգ)¹³: Արտագաղթը հետագայում շարունակվել է, այնպես որ, 19-րդ դ. 90-ական թթ. Ձորակում մնացել էր հայ հոռոմների ընդամենը 10 տուն, այդքան էր նաև թուրք ընտանիքների թիվը¹⁴:

Շրգում 19-րդ դ. 90-ականներին ուներ հայ հոռոմների 30 և թուրքերի 20 տուն¹⁵: Այլ տեղեկության համաձայն՝ 20-րդ դարասկզբին գյուղն ունեցել է 60 տուն (350 հոգի), որոնց կեսը հայ հոռոմներինն էր (160-180 հոգի), իսկ կեսը՝ թուրքերինը¹⁶:

Մուշեղկան ընկած էր Ձորակից հյուսիս-արևելք: Մինչև 1908 թ. այստեղ եղել է ոչ պակաս, քան 50 ընտանիք, որից 20-ը՝ թուրք: Նշված թվականից հետո մոտավորապես 10 հայ հոռոմ ընտանիք գաղթել է Օրթագյուղ, Գեյվե և Կոստանդնուպոլսի Կադրքոյ (Քաղկեդոն) թաղամաս¹⁷:

1896 թ. սեպտեմբերի սկզբին բնաջնջվում է Ակն քաղաքի բնակչության մեծագույն

9 КМΣ/АПП, фάκ. XE-1:

10 Յովսէփ Կ. Ճանիկեան, *Հուրթինք Ակնայ* (Թիֆլիս, Մարկիանոս Դ. Ռոսիյանցի տպ., 1895), 57-58: Ըստ հայ հոռոմների հուշերի՝ Վանքում միայն երկու թուրք հովիվներ են ապրելիս եղել (КМΣ/АПП, фάк. XE-1):

11 Նույն տեղում:

12 КМΣ/АПП, фάк. XE-4:

13 Նույն տեղում:

14 Նույն տեղում, հմմտ. Ճանիկեան, *Հուրթինք Ակնայ*, 59:

15 Նույն տեղում, հմմտ. Ճանիկեան, *Հուրթինք Ակնայ*, 59:

16 КМΣ/АПП, фάк. XE-3:

17 КМΣ/АПП, фάк. XE-2: Հայ հոռոմների հաղորդած այս թվերից տարբերվում են Ճանիկյանի տվյալները, որոնց համաձայն՝ 19-րդ դ. վերջում Մուշեղկայում եղել է 15 տուն հայ հոռոմ, նույնքան թուրք և մեկ հայ առաքելական ընտանիք (Ճանիկեան, *Հուրթինք Ակնայ*, 60): Ըստ Մինաս Գասապյանի՝ 1910 թ. դրությամբ Վանքում բնակվել է 45 ընտանիք, որոնցից 30-ը՝ հայ հոռոմ, 14-ը՝ թուրք, Ձորակում՝ 20 ընտանիք, որոնցից 12-ը՝ հայ հոռոմ, 7-ը՝ թուրք, Մուշեղկայում՝ 30 ընտանիք, որոնցից 15-ը՝ հայ հոռոմ, 14-ը՝ թուրք, և Շրգումում՝ 45 ընտանիք, որոնցից՝ 25-ը հայ հոռոմ, 19-ը՝ թուրք: Բացի այդ՝ այս չորս գյուղերից ամեն մեկում, ըստ Գասապյանի, բնակվել է մեկական հայ առաքելական ընտանիք: Գասապյանը ընտանիքի անդամների թիվը հաշվում է միջինը հինգ հոգի, այդպիսով, ակնեցի հայ հոռոմների ընդհանուր թիվը, ըստ նրա, մոտ 410 է եղել: Իսկ չորս գյուղերի դպրոցականների թիվը, հեղինակի հաղորդմամբ, մոտավորապես 245 է եղել, որից 145-ը՝ տղա, իսկ մնացածը՝ աղջիկ (Ֆարիատ, «Հայ-Հոռոմները», *Ազատամարտ օրաթերթ* (Կոստանդնուպոլիս), 1/14 ապրիլ 1910, 2): Ակնհայտ է, որ այս վերջին թվերն անստույգ են: Այլ են նաև Գևորգյանի ու Փաբոյճյանի տվյալները, որոնց համաձայն՝ Վանքում բնակվել են 150, Ձորակում՝ 70, Շրգումում՝ 320, իսկ Մուշեղկայում՝ 164 հոգի ուղղափառ հայեր (Kévorkian and Paboudjian, *Les Arméniens*, 380):

մասը, որից հետո քաղաքում մնում է ընդամենը 150 հոգի՝ կին և ծերունի: Ջարդերն ու թալանը տարածվում են գյուղերում՝ գոհերի թիվը հասցնելով շուրջ 3000-ի¹⁸: Ոճրագործությունն աննկատ չի մնում արտասահմանում: Այսպես, աթենքյան 'Εστία [էստիա – օջախ] օրաթերթի անանուն լրագրողը 1896 թ. սեպտեմբերի 13-ի նույն համարում գուժում էր. «Փոքր Ասիայում վերջին անհանգստության վերաբերյալ Կոստանդնուպոլսից ստացված մեր նոր տեղեկության համաձայն՝ կոտորվածների մեջ են 800 հայ հոռոմներ, այսինքն՝ ուղղափառ հայեր, որ Էզինի (Ակնի – Գ. Ղ.) մոտակայքում են բնակվում, և 1500 մաքուր հայեր»¹⁹:

Համիդյան ջարդերից հետո Ակնի հայ հոռոմների գյուղերում ժամասացությունը, հայերենի փոխարեն, կատարվում է կարամանլերենով՝ հունատառ թուրքերեն²⁰:

1908 թ. ընդունվում է երիտթուրքական սահմանադրությունը, որի համաձայն՝ թուրքական բանակ էին գորակոչվում նաև քրիստոնյաները: Այս «ժողովրդավարական» նորամուծությունը քրիստոնյաների շրջանում արտագաղթի նոր ալիք է բարձրացնում: Այսպես, 1908 թ. սկսած վանքցի շատ ընտանիքներ Կոստանդնուպոլիս են գաղթում: Այդ ընթացքում թուրքերը 80-100 լիրայի դիմաց ուզում էին գնել հայ հոռոմների տները, բայց միայն 12 թուրք ընտանիքների է հաջողվում հաստատվել Վանքում: Հայ հոռոմները գերադասում են մնացած տները պարզապես կողպել ու հեռանալ: Մեծ եղեռնի նախաշեմին՝ 1914 թ., Վանքում հայ հոռոմների միայն 45 տուն էր մնացել²¹: Նույն թվականին Շրգուի հայ հոռոմներից շատեր բռնում են գաղթի ճանապարհը: Հետագայում՝ 1919-1920 թթ., գաղթածների տներն ու ունեցվածքը, իշխանությունների որոշմամբ, թուրքերը զավթում են²²:

Հայոց ցեղասպանության ժամանակ Ակնի սակավաթիվ հայ հոռոմները ջարդերից գերծ են մնում միայն այն բանի շնորհիվ, որ արդեն ոչ թե հայեր, այլ հայախոս հույներ էին համարվում: Նրանց վիճակված էր իրենց հայրենակիցների զոհաբերման անգոր վկաները դառնալ: Ակնեցի հայ հոռոմների վկայությամբ՝ Ակնի հայության վերջին մնացորդները կոտորելուց հետո ջարդարարները գոհերի մարմինները նետում էին Եփրատ գետը, ինչի հետևանքով անգամ գետի գույնն էր փոխվել: Դիակներն այնքան շատ էին, որ գետի ստորին հոսանքի բնակավայրերից բոլոր է գալիս, ինչից հետո միայն սկսում են մարմինները թաղել. «Մի ամիս շարունակ ջրերով իջնող նրանց

18 Ակնի կոտորածների մասին համառոտ տե՛ս Առաքել Քէչեան, Մկրտիչ Պարսամեան (խմբ.), *Ակն և ակնցիք* (Փարիզ, Ամերիկայի Ակնայ հայրենակցական միություն, 1952), 734-737. «Ակն քաղաքի կոտորածը», *Դրօշակ* «Հայ Յեղափոխական Դաշնակցության» օրգան (Թիֆլիս-Վիեննա-Ժնև), 1896, թիվ 26, 194-195:

19 'Εστία (Աթենք), 13 սեպտեմբեր 1896, 3: Հարկ է նշել, որ օրաթերթի այս հրապարակման մեջ անճշտություն կա. 1880 թ. վիճակագրության համաձայն՝ նրանց թիվը մոտավորապես 530-ի էր հասնում, իսկ ըստ Հանիկյանի տրամադրած թվերի վերլուծության՝ մոտ 800-ի: Հետևաբար 'Εστία-ի տեղեկության մեջ ակնեցի հայ հոռոմների թիվը պիտի որ շփոթության մատնված լինի նրանց ընդհանուր թվի հետ:

20 Հրաչ Բարթիկյան, «Հայ-հոռոմները (քաղկեդոնիկ հայերը) հունական պարբերականներում», *Պատմա-բանասիրական հանդես* 3 (2008), 257:

21 КМΣ/АПП, фάκ. XE-1:

22 КМΣ/АПП, фάκ. XE-3:

(հայերի - Գ.Ղ.) ուռած դիակներն էինք տեսնում: Սարսափելի հոտ էր գալիս: Այդ ժամանակվանից չուզեցինք գետից ձուկ ուտել»²³:

Մինչև 1916 թ. Մուշեղկայում երկու հայ առաքելական ընտանիք էր բնակվում: Հայ հոռոմների հուշերի համաձայն՝ «Այն ժամանակ նրանց հանեցին ու կոտորեցին, և հայկական շունչ չմնաց, հույներն էլ (ինձ՝ հայ հոռոմները - Գ.Ղ.) հեռացան՝ ավելի լավ բախտ գտնելու»²⁴: Նույն տեղում հայ հոռոմները հիշում են, որ «թուրքերը մեծ ատելություն էին տածում միայն հայերի հանդեպ, նրանց հանդեպ մեծ չարություն ունեին ու հարմար ժամի էին սպասում՝ նրանց ոչնչացնելու համար»²⁵:

Ակնի առաքելական հայերին խալատ բնաջնջելուց հետո թուրք հսկիչները հասնում են ուղղափառ հայերի գյուղերն ու ոչնչացնում հայոց լեզվի դասագրքերը: Հայ հոռոմների մեջ մայրենի լեզվի ուսուցումը խստիվ ու մեկընդմիշտ արգելվում է²⁶:

Զմշկածագի գյուղերը

Զմշկածագի շրջանի հայ հոռոմների գյուղերն էին Մամսան, Սեդրկան ու Խնդրկիկը (Խնդվկիկը)²⁷: Սրանցից Մամսան, որ ընկած էր Զմշկածագ քաղաքից հյուսիս-արևելք, իր բնակչության թվով շրջանի երկրորդ գյուղն էր. 1878 թ. այնտեղ եղել է առաքելական հայերի 40 և ուղղափառ հայերի շուրջ 36 տուն, իսկ 1915 թ.՝ առաքելականների 44 տուն՝ 171 շնչով, և ուղղափառների 38 տուն՝ 168 շնչով²⁸:

Սեդրկա գյուղը գտնվում էր Զմշկածագ քաղաքից շուրջ 15 կմ հյուսիս-արևմուտք: 1878 թ. գյուղն ուներ երկուական առաքելական և ուղղափառ հայերի տներ²⁹, իսկ 1915 թ. նույն տեղում բնակվում էր 8 առաքելական (21 կամ 24 շունչ), 1 հայ հոռոմ (3 շունչ) և արդեն 24 թուրք ընտանիք (93 շունչ)³⁰:

23 КМЗ/АПП, ф.ак. XE-2:

24 Նույն տեղում:

25 Նույն տեղում:

26 КМЗ/АПП, ф.ак. XE-1:

27 Այս ուսումնասիրությունը կատարելիս օգտվել ենք չմշկածագի Հարություն Աճեմյանի՝ հայրենակիցներից հավաքած տեղեկություններից, որոնք նա անցած դարի 50-ական թթ. Բոստոնում ամփոփել է «Ուրոյն տեղագրութիւն Զմշկածագ գաւառի» վերտառությամբ ձեռագիր մատյանում, որը պահվում է National Association for Armenian Studies and Research (NAASR) պահոցում (Belmont, MA): Մամսային ու Սեդրկային վերաբերող հատվածների լուսանկարները մեզ սիրահոժար կերպով տրամադրեց «Յուշամատեն» նախագծի տնօրեն Վահե Թաշճյանը, որին հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը:

28 Համբարձում Յ. Գասպարեան, *Զմշկածագ և իր գիւղերը* (Պոսթոն, Պայքար, 1969), 205: Հմմտ. Հայկազն Գ. Ղազարեան, *Պատմագիրք Զմշկածագի* (Պէյրոս, Համագգային, 1971), 247-248: Մեր կարծիքով՝ Մամսան համեմատաբար նոր գյուղ է եղել, քանի որ այն եկեղեցի չի ունեցել. միայն 1830 և 1834 թթ. են կառուցվել գյուղի երկու սրբավայրերը, համապատասխանաբար ուղղափառ Սբ. Թեոդորոս (Թորոս) և առաքելական Սբ. Գևորգ եկեղեցիները:

29 Գարեգին վրդ. Սրուանձտեանց, *Թորոս Աղբար Հայաստանի ճամբորդ*, մասն Բ (Կ. Պոլիս, Գ. Պաղտատլեան տպ., 1884), 117:

30 Գասպարեան, *Զմշկածագ*, 382-383: Յովհաննէս Աճեմյան, «Մամսայ», *Ուրոյն տեղագրութիւն*

1895 թ. համիդյան կոտորածների ժամանակ քրդերը ջարդեր են կազմակերպում Չմշկածագի հայկական բնակավայրերում: Մամսայի հայերը, բավականաչափ գենք ու գինամթերք ունենալով, մարտնչում են հրոսակների դեմ՝ տալով մարդկային զոհեր³¹: Քրդերի դեմ մղած մարտերի ընթացքում ընկած հայ հոռոմներից հիշատակվում են Թումա Ամուի ու Նրա մարտակից Պապայի (Պապայան) Նիկոլի անունները³²: Այդուհանդերձ, քրդերի հարձակման ժամանակ մամսացի հայ հոռոմները թալանի չեն ենթարկվում, ընդհակառակը, նրանցից ոմանք համագործակցում են թշնամու հետ³³:

Այս իրադարձություններից հետո թալանված Խնդրկիկ գյուղի 8 հայ հոռոմ ընտանիքների մի մասը Մամսա է տեղափոխվում, մյուս մասն արտագաղթում է, և այդպիսով գյուղը դադարում է գոյություն ունենալ³⁴: Բացի դրանից՝ Մամսայում որոշակիորեն սրվում են երկու դավանանքներին պատկանող գյուղացիների փոխհարաբերությունները, որոնք մինչ այդ էլ հաշտ ու հանդարտ չէին³⁵: Նույն 1895 թ. մամսացի հայ հոռոմները, ընդհանուր գյուղապետարանից առանձնանալով, թուրքերի օգնությամբ կազմում են իրենց առանձին վարչությունը³⁶:

1915 թ. թուրքերն այդ ներագգային-ներհամայնքային հակասությունները հմտորեն օգտագործում են՝ մամսացի հայ հոռոմ տղամարդկանց դարձնելով իրենց գործիքը՝ հայերին կոտորելու համար: Նշված թվականի հունիսին կայմակամը ժամանում է գյուղ ու բնակիչներից սկսում է հավաքել գենքը: Նույն օրը, բնակիչներին պաշտպանելու պատրվակով, թուրքերը 30 ոստիկաններով շրջապատում են գյուղը: Մինչ այդ քրդերն արդեն քշել տարել էին գյուղի անասունները: Թուրքերը ձերբակալում են մամսացի հայ և հայ հոռոմ երիտասարդներին, ապա առաջիններին բանտարկում են ախոռում, իսկ վերջիններին՝ ազատ արձակում: Հայ հոռոմներին թուրքերը տալիս են ոստիկանական գործառույթներ՝ զինաթափ անելու ու հսկելու հայերին: Թուրքերը մամսացի ձերբակալված տղամարդկանց շարքերը այլ գյուղերից ձերբակալվածներով են հավելում և բոլորին միասին առաջնորդում են Կարմրի գյուղ: Եփրատի ափին սկսվում է ձերբակալվածների կոտորածը: Նահատակների մարմինները լցնում են ջուրը: Ըստ Հովհաննես Աճեմյանի հուշերի՝ մամսացի հաջի Յանկոյի գլխավորությամբ մի քանի հայ հոռոմ տղամարդիկ ուղեկցել են մահվան շարանը և Եփրատի ափին

Չմշկածագ գաւառի [անտիպ], 1954, Պոսթըն (Յովհաննես Աճեմյանի արխիվներ, NAASR), 1: Գևորգյանի և Փարուճյանի տվյալները փոքր-ինչ տարբեր են. ըստ դրանց՝ Մամսան ուներ առաքելականների 80 (570 շնչով) և ուղղափառների 38 ծովս (168 շնչով), իսկ Սեդրկայում բնակվում էին 33 առաքելական և 64 ուղղափառ հայեր (Kévorkian and Paboudjian, *Les Arméniens*, 386):

31 Գասպարեան, *Չմշկածագ*, 382-283:

32 Նույն տեղում, 660; Աճեմյան, «*Մամսայ*», 26:

33 Նույն տեղում, 37:

34 Աճեմյանն անվանապես նշում է Խնդրկիկից Մամսա տեղափոխված 12 ընտանիքները (Աճեմյան, «*Մամսայ*», 4; Յովհաննես Աճեմյան, «*Սեթրկայ*»/Ուրոյն տեղագրութիւն Չմշկածագ գաւառի, 6)

35 Ընդհանուր առմամբ, մամսացի հայ հոռոմները բարոյագուրկ վիճակում էին. Աճեմյանի նկարագրությամբ՝ «Գողութիւն, ստութիւն, տաճկաբարոյ ցոփ խօսակցութիւն սովորական են անոնց երկու սեռին մէջ: Հակառակ անոր, որ իրարու ազգական ու բարեկամ են ու խնամի, միշտ միմեանց հետ ամուսնանալով, ընտանեկան սերն ալ կը պակսի անոնց շատերուն մօտ: Անուս կինը անկիրթ մարդուն գերի է դարձեր» (Աճեմյան, «*Մամսայ*», 37):

36 Գասպարեան, *Չմշկածագ*, 211; Աճեմյան, «*Մամսայ*», 36:

գազանաբար տանջամահ են արել գյուղի հայ առաքելական քահանա տեր Սամուել Աճեմյանին³⁷:

Այդ ամենից հետո Մամսան դառնում է կոտորածի ու թալանի վայր: Որոշ հայեր կարողանում են փրկվել և ապաստանել լեռներում, սակայն ամիսներ անց ի վերջո ստիպված են լինում իջնել: Վերապրածներից ոմանք վերահաստատվում են Մամսայում, որտեղ մինչև 1915 թ. դեկտեմբերը հավաքված է եղել 57 հոգի: Նրանցից 32-ը բնիկ է եղել: Բացի այդ՝ հայ հոռոմները ապաստան էին տվել իրենց հետ խնամիական-ազգակցական կապեր ունեցող ևս 12 հոգու³⁸: Այդ ընթացքում հայերի տներին ու պարտեզներին տիրացել էին հայ հոռոմները, որոնք և թույլ չէին տալիս վերապրածներին օգտվել դրանց պտուղներից՝ սպառնալով տեղեկացնել ոստիկանությանը: Այսպիսով, Եղեռնը վերապրածները 1917 թ. հեռանում են Երզնկա³⁹:

Հովհաննես Աճեմյանի՝ 1922 թ. հավաքած տեղեկությունների համաձայն՝ մամսացի 171 առաքելական հայերից 87-ը զոհվել է ցեղասպանության ժամանակ, 44-ը՝ վերապրել, իսկ մնացած 40-ի ճակատագիրն անհայտ է: Նա նշում է, որ հետագայում այս թվերը ենթադրաբար փոփոխված պիտի լինեն⁴⁰: Ըստ հեղինակի, սակայն, մամսացի հայ հոռոմները ևս զերծ չեն մնացել զոհերից: Այսպես, 1932 թ. Օհայո նահանգի Թոլիդո քաղաքում հավաքված և հայ հոռոմ տկն Սուլթանայի հաղորդած տեղեկության համաձայն՝ 1915 թ. Մամսայում եղել է հայ հոռոմների 38 տուն (նա նշում է ընտանիքի գլխավորների անունները)՝ 163 անձով, «որոնցմէ մեռած⁴¹ և թրքական բանակին մէջ սպաննուածներու համագումարն է 58 անձ», մեկ անձի ճակատագիրն էլ անհայտ է: Նա նաև նշում է, որ այս թվերը հետագայում «որ այժմ շատ տարբեր ըլլալը որոշ է»⁴²:

1915 թ. Սեդրկա գյուղի հայ տղամարդիկ ևս ձերբակալվում և սպանվում են, մնացածները՝ տեղահանվում: Մի հայ հոռոմ ընտանիք՝ բաղկացած երեք անձից (տկն Աննա, օրիորդ Սոֆիա և մանուկ Կոստան Կոստանյաններ⁴³), հավանաբար զերծ է մնում բնաջնջումից⁴⁴:

37 Գասպարեան, Չմշկածագ, 245, 423, 656; Աճեմյան, «Մամսայ», 38: Աճեմյանը չի նշում, թե ինչու են հայ հոռոմները սպանել հենց քահանային՝ կրոնական մոլեռանդությամբ, թե՛ այլ պատճառով: Ենթադրում ենք, որ սույն եղեռնագործության պատճառը կարող է հետևյալը լինել. ժամանակին տեր Սամուելը հայ հոռոմ վարպետ Ադամի օգնությամբ թաքստոց է շինած եղել եկեղեցական գանձերը պահելու համար: Թաքստոցի տեղը, վարպետից ու քահանայից բացի, որևէ մեկը չի իմացել (Գասպարեան, Չմշկածագ, 210): Հավանաբար ոճրագործները տանջամահ են արել տեր Սամուելին՝ փորձելով նրանից իմանալ գանձարանի տեղը: Մեր այս ենթադրությունն արդարանում է նրանով, որ հետագայում ցեղասպանությունը վերապրածները այդ գանձերը տեսել են հենց Հաջի Յանկոյի տանը (Աճեմյան, «Մամսայ», 35, 47): Սրա հետ մեկտեղ՝ պետք է նշել, որ տեր Սամուելի նահատակության մասին պահպանված մեկ այլ տեղեկության համաձայն՝ նրան սպանել են թուրքական Շնկազ գյուղում, ընդ որում՝ հայ հոռոմների մասնակցության մասին այս տարբերակում խոսք չկա (Ղազարեան, Պատմագիրք, 450-451):

38 Աճեմյան, «Մամսայ», 38:

39 Նույն տեղում, 48:

40 Աճեմյան, «Մամսայ», 2:

41 Խոսքը բնական մահվամբ վախճանվածների մասին է:

42 Նույն տեղում, 2-3:

43 Նույն տեղում, 1:

44 Աճեմյան, «Սեթրկայ», 5:

Իզմիթի նահանգի գյուղերը⁴⁵

Դեռևս 15-րդ և 17-րդ դդ. Իզմիթի նահանգ գաղթած ուղղափառ հայերի բնակավայրերն էին Գեյվե սանջակության Օրթագյուղ (Օրթաքյոյ, Միջինգյուղ, նախնական անվանումը՝ Ագրակ կամ Ադրերակ) և Խուդի (Սարաշլը) գյուղերը, որոնց բնակիչներն այստեղ էին գաղթել համապատասխանաբար Ակնի շրջանի Միջինգեղ (Ադրերակ) ու Խուդի գյուղերից (Ակն քաղաքից հյուսիս)⁴⁶:

Օրթագյուղն ընկած էր Իզմիթ քաղաքից (պատմական Նիկոմեդիա) 75 կմ հարավ-արևելք: 20-րդ դ. սկզբներին այս ավանում բնակվել են շուրջ 6000 ուղղափառ և 2000 առաքելական հայեր, համապատասխանաբար մոտավորապես 500 և 200 ընտանիքներ⁴⁷: Ավանում գործում էր արական մեկ դպրոց՝ 8-16 տարեկան 300 սաներով ու հինգ ուսուցիչներով, աղջիկների դպրոց՝ 70 սաներով ու երկու ուսուցչուհիներով, երեք մանկապարտեզ, որոնցից յուրաքանչյուրն ուներ 4-8 տարեկան 150 երեխա՝ վեց դաստիարակչուհիներով⁴⁸:

Խուդի գյուղն ընկած էր Օրթագյուղից 3 կմ արևելք, իսկ Իզմիթից՝ 48 կմ հարավ-

45 Բյութանիայի հայ հոռոմների մասին բնիկներից քաղված եզակի տեղեկություններ են պահվում արդեն հիշված Փոքրասիական հետազոտությունների կենտրոնում՝ պահոցի ինը ծրարներում, տե՛ս Կենտրո Μικρασιάτικων Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος Βιθυνία-13 (այսուհետ՝ ԿՄՏ/ԱՊՊ, ֆάκ. Β-13). Կենտրο Μικρασιάτικων Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος Βιθυνία-14 (այսուհետ՝ ԿՄՏ/ԱՊՊ, ֆάκ. Β-14). Կենտրο Μικρασιάτικων Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος Βιθυνία-15 (այսուհետ՝ ԿՄՏ/ԱՊՊ, ֆάκ. Β-15). Կենտրο Μικρασιάτικων Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος Βιθυνία-16 (այսուհետ՝ ԿՄՏ/ԱՊՊ, ֆάκ. Β-16). Կենտրο Μικρασιάτικων Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος Χώρα Βιθυνία-32 (այսուհետ՝ ԿՄՏ/ԱՊՊ, ֆάκ. Β-32). Կենտրο Μικρασιάτικων Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος Βιθυνία-34 (այսուհետ՝ ԿՄՏ/ԱՊՊ, ֆάκ. Β-34). Կենտրο Μικρασιάτικων Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος Βιθυνία-37 (այսուհետ՝ ԿՄՏ/ԱՊՊ, ֆάκ. Β-37). Կենտրο Μικρασιάτικων Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος Βιθυνία-39 (այսուհետ՝ ԿՄՏ/ԱՊՊ, ֆάκ. Β-39).

46 Բարթիկյան, «Հայ-հոռոմները», 237, 251:

47 Նույն տեղում, 247: Հմմտ. Μάγδα Κιτρομηλίδου, «Πασχάλης Πασχαλίδης, ὁ ἱεροδιδάσκαλος τοῦ Χουδίου. Πληροφορίες γιὰ τὴν ἐκπαίδευτικὴ καὶ πνευματικὴ κίνησιν ὁρθοδόξων ἀρμενοφώνων πληθυσμῶν τῆς Βιθυνίας στὰ χρόνια 1903-1909», *Μικρασιατικά Χρονικά* 18 (1988): 247: Օրթագյուղի երաժշտագետ Գ. Պախտիկոսն իր մի գործում ընդունում է այս թվերը, այլուր սակայն ուղղափառների թիվը իջեցնում է 4000-ի (տե՛ս Γεώργιος Δ. Παχτικός, *Ὀλυμπιακοὶ Ἀγῶνες ἐν Βιθυνίᾳ* (Αθήνα, 1893), 7. Γ. Δ. Παχτικός, «Ὁρτάκιοι τῆς Βιθυνίας», *Ἑστία* (Λίβερν), 1892, 6 (Ἰανουάριος-Ἰούνιος), 96): Ըստ Գասապյանի՝ Իզմիթի հայ հոռոմների ընդհանուր թիվը հասել է շուրջ 8000-ի (Մինաս Գ. Գասապյան (Ֆարհատ), *Հայերը Նիկոմիդիոյ գաւառին մէջ. Ուսումնասիրութիւն վիճակագրական ցուցակներով և քարտէսով* (Պարտիզակ, 1913, 240): Այլ տեղում նա հաշվում է մոտավորապես 5750 հոգի՝ բաժանված 1150 ընտանիքների, ըստ այսմ՝ Գեյվեում՝ 15 տուն, Միջնագյուղում՝ 750, Խուդիում՝ 250, Բուրհանիեում ու Շաշլիում՝ 40-ական և Բյուպում՝ 55 (Ֆարհատ, «Հայ-Հոռոմները», *Ազատամարտ* (Կոստանդնուպոլիս) 1/14 ապրիլ 1910, 1): Թվերի այս տատանումները հավանաբար կախված են նրանից, թե ընտանիքում միջինը քանի շունչ է ենթադրվում: Այսպես, ըստ Գեորգիոս Պախտիկիսի՝ 1891 թ. դրությամբ Խուդիում կար 450 ընտանիք, որից 250-ը՝ քրիստոնյա, 200-ը՝ թուրք, ընդ որում՝ ընտանիքում կար նվազագույնը 6 երեխա, ըստ դրա՝ ընտանիքը բաղկացած էր լինում առնվազն 8 հոգուց՝ չհաշված, որ հաճախ ընտանիքները մեկ հարկի տակ կազմում էին գերդաստան՝ բաղկացած 20-30 հոգուց: Ըստ նույն հեղինակի՝ Խուդիի հայ հոռոմները կազմում էին 2000 հոգի, իսկ Օրթագյուղինը՝ 6000 (Բարթիկյան, «Հայ հոռոմները», 241, 247):

48 Ֆարհատ, «Հայ-Հոռոմները», 2:

արևելք: Տեղի ավանդազրույցների համաձայն՝ գյուղը հիմնել է 7 ընտանիք, որից 5-ը եղել է հայ հոռոմ, իսկ 2-ը՝ թուրք: Ժամանակի ընթացքում քրիստոնյա ընտանիքների թիվը հասել է 250-300-ի: 6 հույն ընտանիք եկել էր Էպիրոսից (հյուսիսարևմտյան Հունաստան) ու Կեսարիայից: Թուրքերը բնակվել են առանձին թաղում, և նրանց թիվը հասել է 70 ծխի:⁴⁹ 20-րդ դ. սկզբում Խուդիում բնակվում էր մոտավորապես 1200-2000 հայ հոռոմ և 500-800 թուրք⁵⁰: Գյուղի քրիստոնյաների արական դպրոցն ունեցել է շուրջ 130-160 աշակերտ, իսկ օրիորդաց վարժարանը՝ 100 սան⁵¹: Այլ տվյալներով՝ Խուդիի դպրոցը երկսեռ է եղել և ունեցել է 7-15 տարեկան սաներ՝ 160 տղա, 170 աղջիկ: Երկսեռ է եղել նաև մանկապարտեզը՝ շուրջ 40 երեխաներով⁵²:

Այս երկու գյուղերի բնակիչները հիմնում են տարածաշրջանի մի քանի հայ հոռոմ բնակավայր: Այսպես, Խուդիից առաջացած գյուղերից էր Բուրհանիեն, որը 1850 թ.՝ Երուսաղեմ ուխտի գնալուց հետո հիմնադրել է հայ հոռոմ «հաջի» կոչված Անաստաս Միրաքոլլին (1820-1903 թթ.): Նրա որդին՝ պապա (հայր) Հակոբը (1854-1920 թթ.), եղել է քյուղի քահանան և նահատակվել է հայ հոռոմների ջարդերի ժամանակ: Բուրհանիեն սկզբնապես ունեցել է 65 ծուխ, որոնք ժամանակի ընթացքում հասել են 100-ի⁵³:

Իզմիթի նահանգի հայ հոռոմների գյուղերից էին Գյուպը (շուրջ 60-80 ծուխ) ու Սաշլըն (40 ծուխ), որոնք հիմնել էին օրթագյուղիները⁵⁴: Ինչ վերաբերում է կրթական վիճակին, ապա 20-րդ դարասկզբին Բուրհանիեի դպրոցն ուներ 40 աշակերտ, Գյուպինը՝ 50, Սաշլընը՝ 35⁵⁵:

Սակավաթիվ հայություն կար Գեյվե ավանում և դրան հարակից Էջմե գյուղում. 20-րդ դարասկզբին 5000 թուրք բնակչություն ունեցող Գեյվեում բնակվել է մոտ 10-15 հայ հոռոմ ընտանիք՝ 70 շնչով, և գրեթե նույնքան առաքելական հայեր⁵⁶: Գեյվեի քրիստոնեական դպրոցն ուներ 20 սան՝ տղա և աղջիկ⁵⁷:

Մոտավորապես 1744-1753 թթ. Իզմիթի նահանգի Կանդրայի սանջակում՝ Ադաբազարից դեպի հյուսիս-արևելք, հիմնվել էր Ֆնդըզըլը գյուղախումբը՝ բաղկացած չորս գյուղերից՝ Փափագ, Լենեղ (Վերի Գյուղ), Կադար և Աշաա (Վարի Գյուղ կամ

49 КМՏ/ԱՊՊ, ֆակ. В-39.

50 Киртормялидоу, «Πασχάλης Πασχαλίδης», 244-245:

51 Киртормялидоу, «Πασχάλης Πασχαλίδης», 244-245, 251:

52 Ֆարիատ, «Հայ-Հոռոմները», 2:

53 КМՏ/ԱՊՊ, ֆակ. В-37. КМՏ/ԱՊՊ, ֆակ. В-39.

54 КМՏ/ԱՊՊ, ֆակ. В-34. Ըստ Գևորգյանի և Փաբուճյանի տեղեկությունների՝ Քյուպում բնակվում էին 1064 ուղղափառ հայեր (Kévorkian and Paboudjian, *Les Arméniens*, 138):

55 Ֆարիատ, «Հայ-Հոռոմները», *Ազատամարտ*, 1910, 11/24 ապրիլ 2:

56 КМՏ/ԱՊՊ, ֆակ. В-33, В-34. Այս թվերից շատ տարբեր են Գևորգյանի ու Փաբուճյանի տրամադրած թվերը, համաձայն որոնց՝ Գեյվեում ու Էջմեում կար 385 տուն առաքելական հայեր՝ 2168 շնչով և 800 ծուխ հայ հոռոմներ (Kévorkian and Paboudjian, *Les Arméniens*, 139-140):

57 КМՏ/ԱՊՊ, ֆակ. В-33:

Ներքին Ֆնդըզըլը)⁵⁸: 20-րդ դարասկզբին Ֆնդզըլիի հայ հոռոմների ընտանիքների թիվը հասնում էր շուրջ 300-ի⁵⁹: Մասնավորապես Լևենդն ու Փափազը միասին ունեցել են 170 ծովա, Կադարը՝ 90, Աշաան՝ 63, այսինքն՝ 323 հայ հոռոմ ընտանիք, հետևաբար՝ շուրջ 1615 հոգի⁶⁰: Բացի այդ՝ Կադարում բնակվել է 1, Փափազում՝ 2⁶¹, իսկ Վարի Գյուղում՝ 15 հայ առաքելական ընտանիք⁶²: Ֆնդզըլիի ուղղափառ հայերը սերտ կապեր են ունեցել Ադաբազարի հայերի հետ, ինչն ապահովել է մայրենի լեզվի պահպանությունը⁶³:

19-րդ դ. վերջում սկսվում է Իզմիրի հայ հոռոմների հեղինակացման գործընթացը, որի մանրամասնությունները լուսաբանել ենք առանձին հրապարակմամբ⁶⁴: Ազգային ինքնությունը նվիրապետություն չունենալու պատճառով հույն հոգևորականության անմիջական ենթակայության տակ գտնվելով, չունենալով կրթական անհրաժեշտ մակարդակ ու համակարգ, միլլեթային դրվածքի պատճառով բավականին անջրպետված լինելով հայության մնացյալ հատվածից⁶⁵՝ փոքրաթիվ ուղղափառ հայերը չեն ունեցել որևէ միջոց՝ հեղինակացման ընդդիմանալու համար: Այդ ցավալի գործընթացները համընկնում են համիդյան հայասպան քաղաքականության տարիների հետ, երբ արյունոտ սուլթանը մի ձեռքով կոտորում էր հայերին, մյուս ձեռքով ցուցադրաբար փաղաքշում էր հույներին՝ այդ կերպ բացառելով հայ-հունական փո-

58 КМΣ/АПП, фак. В-13.

59 Μάρκος Κλεώνυμος, Χρήστος Παπαδόπουλος, *Βιθυνικά ή επίτομος μονογραφία της Βιθυνίας και τῶν πόλεων τῆς*, Κωνσταντινούπολις, 1867, 155:

60 Այլ տեղեկատուների համաձայն՝ Աշաան ունեցել է 100, Կադարը՝ 180, Լևենդը՝ 150 ընտանիքներ (КМΣ/АПП, фак. В-14: КМΣ/АПП, фак. В-15, КМΣ/АПП, фак. В-16): Այլուր ունենք նաև հետևյալ թվերը. Ֆնդզըլը գյուղախմբում կար 300 տուն, որոնցից Փափազը՝ 40-50, Լևենդը՝ 100-110, Կադարը՝ 70-80, իսկ Աշաան՝ 60-70 (КМΣ/АПП, фак. В-16):

61 Այս երկու ընտանիքները, որոնցից մեկը բաղկացած էր մորից ու որդուց, իսկ մյուսը՝ նրանց ազգականներից, ստիպված են լինում մկրտվել ուղղափառ ծեսով, որպեսզի տղան կարողանա ամուսնանալ իր սիրած հայ հոռոմ աղջկա հետ: Տարիներ անց՝ 1915 թ., երբ թուրքերն ուզում են սպանդի ենթարկել այդ երկու ընտանիքին, հայ հոռոմները դա թույլ չեն տալիս, և ի վերջո նրանք կարողանում են Հունաստան գաղթել (КМΣ/АПП, фак. В-13):

62 КМΣ/АПП, фак. В-13. Ֆարհատ, «Հայ-Հոռոմները», *Ազատամարտ*, 1910, 7/20 մայիս, 1: Ըստ Գևորգյանի և Փաբոուճյանի՝ Ֆնդզըլում կար 100 տուն՝ 500 շնչով (Kévorkian and Paboudjian, *Les Arméniens*, 139):

63 Ֆարհատ, «Հայ-Հոռոմները», *Ազատամարտ*, 1910, 7/20 մայիս, 1:

64 Գևորգ Ղազարյան, «Հայ հոռոմների ազգային ինքնության խնդրի շուրջ», Լևոն Խաչիկյան. Հարյուրամյակ: Նյութեր ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի ծննդյան հարյուրամյակին նվիրված հայագիտական միջազգային գիտաժողովի (28-29 հունիսի 2018 թ.), Երևան, Մատենադարան, 2019, 180-204:

65 Տակավին 1910 թ. Մ. Գասապյանն ահազանգում էր, որ հայության բոլոր հատվածերը պիտի համախմբվեն «լայն ազգային յառաջադիմական գաղափարի մը շուրջը»: Այս միտքը անոնք պիտի կրնան իրականացնել, որոնք «ազգը» միայն լուսաորջական եկեղեցույ պատերէն ներս չեն ընդունիր, այլ կ'ընդունին, որ այդ պատերէն դուրս ալ կան Հայութեան հարազատ անդամներ, ըլլան անոնք Աւետարանական, Կաթոլիկ, Յունադաւան կամ Օրթոդոքս, վասնզի ոճիր է ներկայ դարուն մէջ շփոթել ազգը կրօնքին հետ, որ անհատական խղճի խնդիր մըն է լոկ» (Ֆարհատ, «Հայ-Հոռոմները», *Ազատամարտ*, 1910, մարտ 30/12 ապրիլ, 1):

խօսգնության ու զինակցության որևէ հեռանկար⁶⁶: Այդ իրավիճակում իհարկե թուրքերը շահագրգռված էին հայ հոռոմներին համարել «հույն» և ոչ թե սպանդի ենթակա «երմենի»:

Հելլենացման գործընթացը շատ ավելի խորն էր Իզմիրի նահանգում, քան թե Ակնում, որտեղ հայ հոռոմները շատ շփումներ չունեին հունական կենտրոնների հետ: Իսկ Իզմիրում հունական քարոզչության ազդեցիկ միջոցները դառնում են դավանական խտրականության սերմանումն ու հունարեն լեզվի տարածումը, ինչի հետևանքով երկուստեք սրվում են առաքելական և ուղղափառ հայերի հարաբերությունները՝ ֆանատիզմի ու արյունոտ ընդհարումների աստիճան⁶⁷: Օրինակ, եթե Օրթաքյոյում մեծահասակները դեռ կարողանում էին ընդհանուր լեզու գտնել, ապա երկու դավանանքների պատկանող երեխաների ու երիտասարդների միջև տեղի էին ունենում արյունոտ ընդհարումներ, ընդ որում՝ հոգևորականությունն էր կրոնական թշնամանք հրահրում երկուստեք⁶⁸: 20-րդ դարասկզբին Բյուրանիայի հայ հոռոմները թեպետ գրեթե կորցրել էին հայկական ինքնագիտակցությունը կամ ամեն կերպ թաքցնում էին իրենց իրական ազգությունն ու իրենք իրենց հույն համարում, այնուամենայնիվ պահում էին լեզուն՝ ազգի ինքնությունը պահպանող կարևորագույն գործոնը: Հենց դա է դառնում հույն պրոպագանդիստների հիմնական թիրախը. հայոց լեզվի կիրառությունը հետապնդվում էր հասարակական վայրերում ու դպրոցներում, հայերեն խոսելու համար սահմանված էր դրամական տույժ, դպրոցներում՝ ֆիզիկական պատիժ⁶⁹: Եվ նույնիսկ այդ միջոցները բավական չէին արմատախիլ անելու հայ հոռոմների մայրենին:

Բյուրանիայի հայ հոռոմների ծանր վիճակը կարգավորելու ազնիվ փորձ է կատարում 1912 թ. Հովակիմ Գ տիեզերական պատրիարքը (1878-1884, 1901-1912 թթ.)⁷⁰: Ավելին՝ հասկանալով, որ հույներն ու հայերը մահվան սպառնալիքի տակ են, քայլեր է ձեռնարկում՝ միավորվելու վերջիններիս երիտթուրքերի դեմ, սակայն նույն 1912 թ. թուրքերն սկսում են խժդժություններ սերմանել Իզմիրի հայ հոռոմների ու առաքելական հայերի միջև: Ի մասնավորի՝ Գեյվեում թուրքերը վերջիններիս դրդում են աշխատանքից հեռացնել հայ հոռոմներին և խուսափել նրանց հետ շփումներից: Ի վերջո գեյվեցի հայ հոռոմներն ստիպված են լինում լքել ավանը՝ հաստատվելով Օրթաքյոյում⁷¹:

1915 թ., երբ սկսվում է Մեծ եղեռնը, և օրթաքյոյոցի առաքելական հայերը բռնում են մահվան ճանապարհը, հայ հոռոմները շտապում են օգտվել նրանց թողած ունեցվածքից, օրինակ՝ գնում էին հայկական դպրոց՝ հատակի տախտակները հանելու

66 Ιωάννης Κ. Χασιώτης, *Αδελφά έθνη εν μέσσω θυέλλης: Αρμένιοι και Έλληνες στις μεγάλες κρίσεις του Ανατολικού ζητήματος (1856-1914)*, (Θεσσαλονίκη: University Studio Press, 2015), 154-159:

67 Ֆարիաա, «Հայ-Հոռոմները», *Ազատամարտ*, 1910, 11/24 ապրիլ, 1-2:

68 КМΣ/АПП, ф.ак. В-34.

69 Նույն տեղում. Ֆարիաա, «Հայ-Հոռոմները», *Ազատամարտ*, 1910, 17-30 ապրիլ, 2:

70 Χασιώτης, *Αδελφά έθνη*, 482-483:

71 КМΣ/АПП, ф.ак. В-33:

և օգտագործելու իրենց նպատակների համար⁷²: Սակայն Իզմիրի հայ հոռոմներին հաշված տարիներ անց պաասում էր նույն սոսկալի ճակատագիրը. 1920 թ. ամռանը մի քանի օրում բնաջնջվում են Բյուրանիայի հայ հոռոմները, մոտավորապես 10000 հոգի⁷³:

Օրթագյուղի կոտորածների մասին մանրամասն պատմել է վերապրած օրթագյուղցի Խ. Հաջիգեորգիուն (Հաջյանցը) իր հուշագրության մեջ⁷⁴: Ըստ նրա՝ 1920 թ. Զատիկին հաջորդող երեքշաբթի օրը՝ ապրիլի 13-ին, քեմալական զորքը շրջապատում է Օրթագյուղն ու սկսում գնդակոծել այն: Զինված գյուղացիները երեք օր պաշտպանվում են, սակայն ի վերջո ստիպված են լինում ապաստանել սարերում՝ գյուղն անպաշտպան թողնելով: Թուրքերն արդեն իսկ հրկիզել էին բավականաչափ տներ ու սպանել մոտավորապես 200 բնակիչների: Թուրքերի հրահանգով՝ օրթագյուղցիները լքում են իրենց բնակավայրն ու հեռանում հարևան գյուղերը, սակայն մի քանի օր անց վերադառնում են իրենց տները: Այս առաջին հարձակման ժամանակ ձերբակալվում են ու անվերադարձ Կարին (Էրզրում) աքսորվում գյուղի գլխավորները: Նույն ընթացքում թուրքերը չարչարում են նաև Օրթագյուղի քահանա պապա Անգելոս Դիմիտրյանին (Դիմիտրիադիսին) և աքսորում Մամուրեթ-Էլ-Ազիզ, որտեղ էլ նա կնքում է իր մահկանացուն⁷⁵:

Մայիսի կեսերին սկսվում է թշնամու երկրորդ հարձակումը: Հրետակոծությունից հետո թուրքերը, գյուղ ներխուժելով, սկսում են թալանն ու կոտորածը: Այսպես, շուրջ 200 տղամարդու կոդոպատում են, մերկացնում, մորթում և դիակներն այրում են Օրթագյուղի Սբ. Գևորգ ուղղափառ եկեղեցում⁷⁶: Գյուղը հրո ճարակ դարձնելով ու կոտորելով մարդկանց՝ թուրքերը հեռանում են, իսկ օրթագյուղցիները դեռ փորձում էին ապրել մոխրի ու ավերակների մեջ⁷⁷:

Օրթագյուղի երրորդ և այս անգամ արդեն վերջնական կործանումը տեղի է ունենում նույն թվականի ամռանը, երբ քեմալական չեթեների գլխավոր Գյավուր Ալիի հրոսակները ավերում են գյուղը: Նույն ողբերգական ճակատագրին են արժանանում շրջանի հայ հոռոմների մյուս գյուղերը: Բժիշկ Վ. Ադամանդիադիսի վկայությամբ՝ «Այս ողջ բնակչությունը... մոտավորապես տասնհինգ հազար բնակիչներով, կու-

72 КМΣ/АПП, фάκ. В-34:

73 Բարթիկյան, «Հայ հոռոմները», 257-258: Սոսկալի կոտորածից փրկվում է հայ հոռոմների ընդամենը տասը տոկոսը՝ գյուղերից պատահմամբ բացակայելով: Օրինակ՝ Բուրհանիեի 600 բնակիչներից փրկվում է միայն 50-ը:

74 Χρήστος Χατζηγεωργίου, *Τὸ Ὀρτάκιοῦ Βιθυνίας. Αἱ σφαγαὶ καὶ ξεθμελλώσις αὐτῶν* (Ἀθήναι: 1965): Ցանկալի է, որ Հաջյանցի այս գիրքը թարգմանվի ու հրապարակվի հայերեն, քանի որ Օրթագյուղի կոտորածների մասին մանրամասն ու ամբողջական միակ հուշապատումն է: Նշենք նաև, որ Իզմիրի հայ հոռոմների կոտորածների մասին բավականաչափ վկայություններ կան, որ ականատեսի շառավիղներն են հրապարակել «Βιθυνιακὰ Χρονικά» (Բյուրանիական ժամանակագրություններ) պարբերականում: Մենք նպատակ ունենք հետազայում առանձին հրապարակմամբ ներկայացնել դրանք հայ ընթերցողին:

75 Χατζηγεωργίου, *Τὸ Ὀρτάκιοῦ*, 7, 23:

76 Նույն տեղում, 34:

77 Նույն տեղում, 44:

տակվեց Կարա Չայ (Սանգարիոս) գետի մոտ գտնվող քարավանատներում: Այնտեղ խոշտանգվեցին, պատվազրկվեցին և ի վերջո մորթվեցին չեթեների ձեռքով, որոնց օժանդակում էր տեղի թուրք բնակչությունը: Ասում են, որ կոտորածը տևել է երեք օր: Պատահաբար շրջակա անտառներում ապաստան գտած բնակչության մնացորդներին հետապնդում էին շներով, իսկ ձերբակալվածներին պատվազրկելու հետ մեկտեղ՝ անդամահատում էին»⁷⁸: Նույն հեղինակը նշում է նաև Բյուրթանիայի հայ հոռոմների ընտանիքների թիվը և նրանցից խլված համայնքային ու անձնական ունեցվածքը՝ թուրքական թղթե լիրայով⁷⁹.

Բնակավայր	Ընտանիքների թիվը	Համայնքային ունեցվածքը	Անձնական ունեցվածքը
Ֆնդրգլը (Աշաքըյոյ, Լևենդըյոյ, Կաստարըյոյ)	400	250 000	1 200 000
Գեյվե ավան և Կայարան	200	180 000	600 000
Օրթաքըյոյ	1200	800 000	7 200 000
Բուրհանիե	600	300 000	1 800 000
Խոուդի	800	450 000	4 000 000
Գյուր	120	60 000	360 000
Սաշլը	80	30 000	240 000
Σ	3400	2 մլն 70 հազար լիրա	15 մլն 400 հազար լիրա ⁸⁰

Գաղթ դեպի Հունաստան

1920 թ. հոդուսցի 30 ընտանիք Նովոռոսիյսկից հասնում է Տրապիզոն, նրանցից 4-ը նույնիսկ վերադառնում է Հոդուս, սակայն ժամանակավորապես⁸¹: 1924 թ. հո-

78 Βενέδικτος Ἀδαμαντιάδης, «Ἐκθεσις ἐπὶ τῆς εἰς ἀνθρώπινας ὑπάρξεις καὶ εἰς χρήμα ἀπώλειας συνπερία τῆς ἐκκριζώσεως τοῦ ἑλληνισμοῦ τῆς βορειοδυτικῆς Μικράς Ἀσίας», *Μικρασιατικά Χρονικά* 7 (1957): 86-87: Հմմտ. Στάθης Πελαγίδης, «Τα δεινοπαθήματα των Ελλήνων στις περιοχές Νικομήδειας καὶ Νίκαιας (καλοκαίρι του 1920)», *Αρχεὶον Πόντου* 53 (2011): 47-48:

79 Βενέδικτος Ἀδαμαντιάδης, «Ἐκθεσις», 95, 97.

80 Վենեդիկտոս Ադամանդիադիսի բերած թվերի մեջ նկատելի է չափազանցությունը, այդ իսկ պատճառով Բարթիկյանը կարծում է, որ նրա այդ հաշվարկերի մեջ նկատի է առնված ոչ միայն հայ հոռոմների, այլև առաքելական հայերի ունեցվածքը (Բարթիկյան, «Հայ-հոռոմները», 259-260):

81 К. Ламтсίδης, «Χοροὺς Ἑλληνικὸν Ἀρμενόφωνον χωρίον τοῦ Ἑρζιγγιὰν Πόντου», *Ποντιακὴ Ἑστία*, τεύχ. 74-75 (1956): 3580. Μάξιμος Μαραβέλάκης, Ἀπόστολος Βακαλόπουλος, Αἱ προσφυγικαὶ ἐγκαταστάσεις ἐν τῇ περιοχῇ Θεσσαλονίκης (Θεσσαλονίκη, 1955), 110. Ղազարյան, «Բարձր Հայքի», սյունակ 379:

դուստրիների մեծ մասը՝ 98 ընտանիք, պապա Նիկոլի առաջնորդությամբ մեկնում է Կոստանդնուպոլիս, այնտեղից էլ՝ Հունաստան: Այստեղ նրանք հաստատվում են Դուդուլար գյուղում (այժմ՝ Սալոնիկի Դիավատա թաղամաս)⁸²: Նույն տեղում բնակություն է հաստատում նաև մուշեղկացի 6 ընտանիք, ինչպես նաև 87 հույն ընտանիք՝ արևմտյան Փոքր Ասիայից⁸³: Բացի այդ՝ հողուսցի 15 ընտանիք մնում է Խորհրդային Ռուսաստանում, 2-ը՝ Կոստանդնուպոլսում, 4 ընտանիք մեկնում է Բուլղարիա, 1 ընտանիք էլ՝ Ռումինիա⁸⁴:

1923 թ. հուլիսի 24-ին կնքվում է Լոզանի պայմանագիրը, որի կետերից մեկը Հունաստանի ու Թուրքիայի միջև մուսուլման և ուղղափառ ազգաբնակչության փոխանակումն էր: Ահա այսպես, հայ հոռոմների սակավաթիվ մնացորդները շուրջ 1 500 000 փոքրասիացի հույների հետ Հունաստան են գաղթում: Ակնի հայ հոռոմները, Ձորակի վերջին քահանա Գրիգոր Փափագյանի (Փափագոլլի, 1866-1951) գլխավորությամբ, բռնելով պարտադրված գաղթի ճանապարհը, 1924 թ. հասնում են Հունաստան: Դրանք ընդամենը 25 հայ հոռոմ ընտանիքներ էին Վանքից, 35 ընտանիք՝ Մուշեղկայից, 10-ական ընտանիքներ էլ՝ Շրգուից ու Ձորակից: Բացի այդ՝ Շրգուից 5 ընտանիք մեկնում է Դամասկոս, մի քանիսն էլ՝ Կոստանդնուպոլիս: Հունաստան հասած ակնեցիներն իրենց բնակության վայր ընտրում են Էվիա կղզու Կաստանիոտիսա գյուղի հարևան տարածքը՝ նմանեցնով կորսված հայրենիքին, և այնտեղ հիմնում են Նեա Էգին (Նոր Ակն) գյուղը⁸⁵: 1928 թ. դրությամբ այն ուներ 207 բնակիչ: Հետագայում Նեա Էգինը միացվում է Կաստանիոտիսայի հետ:

Նույն 1924 թ. մամսացի 35 ընտանիք՝ պապա Անդրեաս քահանայի գլխավորությամբ հաստատվում է Հունաստանի Կիլիկիա մարզի Շեքերլի (այժմ՝ Զախարատո, Կիլիկիա մարզկենտրոնից 4,5 կմ հյուսիս), որտեղ մինչ այդ բնակություն էր հաստատել 15 պոնտացի հույն ընտանիք: Հետագայում նրանց միանում են Վրաստանի Ծիսգարոյից գաղթած հույներ: Մամսացի 8-9 ընտանիք էլ հաստատվում է նույն շրջանի Պիկրոլիմնի գյուղում⁸⁶:

Այսպիսով, 19-րդ դ. վերջում և 20-րդ դ. սկզբում Օսմանյան կայսրությունում ծա-

82 Λαμτσίδης, «Χογούζ», 3580: Ղազարյան, «Բարձր Հայքի», սյունակ 379: Հունաստանում հաստատված հողուսցի ընտանիքների թիվը հստակ չէ: Ինչպես տեսանք՝ մինչև 1916-18 թթ. ողբերգական իրադարձությունները գյուղն ուներ ամենաշատը 130 ընտանիք: Կ. Լամցիդիսը թեպետ ընդգծում է, որ գաղթի ճանապարհներին հողուսցիների մեծագույն մասը կյանքին հրաժեշտ տվեց, մինչև ժամանակ նշում է, որ Դիավատա ժամանեց 103 հողուսցի ընտանիք (Λαμτσίδης, «Χογούζ», 3581. Ղազարյան, «Բարձր Հայքի», սյունակ 382): Գ. Անաստասիադիսը նշում է, որ 1926 թ. Ռուսաստանից Դիավատա ժամանեցին 50 հայ հոռոմ ընտանիքներ. Իսկ Մաքսիմոս Մարավելակիսն ու Ապոստոլոս Վակալոպուլոսը նույն թվականի դրությամբ նշում են 98 ընտանիքներ (Բարթիկյան, «Հայ-հոռոմները», 250. Μαραβέλάκης, «Αι προσφυγikai», 109. Ղազարյան, «Բարձր Հայքի», սյունակ 365):

83 Μαραβέλάκης, «Αι προσφυγikai», 109. Ղազարյան, «Բարձր Հայքի», սյունակ 365:

84 Ղազարյան, «Բարձր Հայքի», սյունակ 368:

85 ΚΜΣ/ΑΠΠ, φάκ. ΧΕ-1. ΚΜΣ/ΑΠΠ, φάκ. ΧΕ-3:

86 Աճեմյանը նշում է մամսացի երկու հայ հոռոմների՝ Մարիայի որդի Յորդան աղային, Խովաս Յորգին ու Պապայան Անդրեասին, որոնք հաստատվել են Հալեպում (Աճեմյան, «Սեթրկայ», 6):

վալված հակաքրիստոնեական քաղաքականության պայմաններում հայ հոռոմները հայտնվել էին կրկնակի հարվածի տակ: Թեպետ համիդյան կոտորածների ժամանակ նրանք զերծ են մնում ֆիզիկական բնաջնջումից, սակայն նրանց մեջ ավելի է խորանում ազգային ինքնության կորստի գործընթացը, որն առավել ընդգծված է դրսևորվում Իզմիթի նահանգում: Հայկական ինքնությունից հեռանալն ու «հայախոս հույն» համարվելը ուղղափառ հայերին հիմնականում զերծ է պահում Հայոց ցեղասպանության սարսափներից, սակայն մյուս կողմից՝ այդ հանգամանքը նրանց բախտակից է դարձնում հույն ժողովրդին. եթե Իզմիթի հայ հոռոմները 1920 թ. հույների հետ զանգվածաբար բնաջնջվում են, ապա Արևմտյան Հայաստանի սակավաթիվ ուղղափառ հայեր 1924 թ. փոքրասիացի հույների հետ ստիպված են լինում մեկընդմիջտ լքել հայրենի եզերքն ու գաղթել Հունաստան:

THE HAY HOROMS IN THE WHIRLPOOL OF THE MASSACRES OF CHRISTIANS IN THE LATE 19TH – EARLY 20TH CENTURIES

Gevorg S. Kazaryan
University of Athens, Greece

SUMMARY

The Orthodox Armenians or so-called Hay Horoms (Armenian Romans) in the late 19th – early 20th centuries were compactly settled in Western Armenia, namely in the villages of Vank, Dzorak, Shrzu and Musheghka in Akn district, in the villages of Mamsa, Sedrka and Khenderkik in Chemishkatsag district, as well as in the village of Hoghus in Kamakh region. Apart from this, the migrants from Akn and Hoghus resided in the villages of Ortakyöy, Khudi and in other places of Izmit province (historical Bithynia). During the Hamidian massacres in 1895-1896 the Orthodox Armenians did not suffer great loss. However, after these events, the process of Hellenization started to strengthen among the Hay Horoms, so that in the early 20th century they were no longer considered as Orthodox Armenians, but Armenian-speaking Greeks. For this reason they avoided the horrors of the Armenian Genocide except the Hoghus village whose habitants left their homeland to avoid being deported. Later the survived villagers immigrated to Greece. In the summer of 1920 the Hay Horoms of the Izmit province, approximately 10,000 people, were perished and their villages were destroyed. As regards the few Orthodox Armenians of Akn and Chemishkatsag regions, according to the Treaty of Lausanne (1923) they emigrated from Turkey to Greece with the Greek population of Asia Minor.

Key words: Armenian Genocide, Greek Genocide, Hamidian Massacres, Hay Horoms, Orthodox Armenians, Western Armenia, Akn, Chemishkatsag, Bithynia, Izmit.

ХАЙ ХОРОМЫ В ВОДОВОРОТЕ РЕЗНИ ХРИСТИАН КОНЦА 19-го – НАЧАЛА 20-го ВЕКА.

Геворг С. Казарян

Афинский университет, Греция

РЕЗЮМЕ

Православные армяне или так называемые хай хоромы (армяне-ромей) в конце 19-го – начале 20-го вв. компактно проживали в Западной Армении, именно в деревнях Ванк, Дзорак, Шрзу и Мушегка Акнской области, в деревнях Мамса, Седрка и Хндркик Чимишкацагской области, а также в деревне Хогус области Ерзынка. Кроме того, выходцы из Акна и Хогуса проживали в поселках Ортакей, Худи и в иных местах Измитского вилайета (историческая Вифиния). Во время резни армян, учиненной при султанине Амбур Гамиде II в 1895-1896 гг. хай хоромы, не понесли особых потерь, однако после резни среди них усилились процессы эллинизации, из-за чего в начале 20-го в. они уже считались не армянами, а армяноязычными греками. Как таковые, православные армяне избежали ужасов Геноцида армян 1915 г., за исключением деревни Хогус, жители которой, спасаясь от депортации, покинули родные места. Впоследствии выжившие хогусцы мигрировали в Грецию. Летом 1920 г. массовому уничтожению подверглись хай хоромы Измитского вилайета, общей численностью около 10,000 человек. Что касается немногочисленных православных армян Акнской и Чимишкацагской областей, то согласно Лозаннскому мирному договору 1923 г. они были переселены в Грецию вместе с греческим населением Малой Азии.

Ключевые слова: Геноцид армян, геноцид греков, гамидовская резня, православные армяне, хай хоромы, Западная Армения, Акн, Чимишкацаг, Вифиния, Измит.

REFERENCES Unpublished Works

Achemyan, Hovhannes. «Մամսա՝/Ուրդն լեղագրութիւն Չիշկաճագ գաւառի [Mamsa/Special Topography of Chimishkatsag province]. Boston, 1954, Archive of the National Association for Armenian Studies and Research (NAASR, Belmont, MA);

Achemyan, Hovhannes. «Սեւրկա՝/Ուրդն լեղագրութիւն Չիշկաճագ գաւառի [Set'rka/Special Topography of Chimishkatsag province]. Boston, 1954, Archive of the National Association for Armenian Studies and Research (NAASR, Belmont, MA);

Κέντρο Μικρασιατικών Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος Βιθυνία [Centre for Asia Minor Studies/Archive of Oral Tradition/Convert Country of Bithynia];

Κέντρο Μικρασιατικών Σπουδών/Αρχείο προφορικής παράδοσης/Φάκελος Χώρα

Ευφράτης [Centre for Asia Minor Studies/Archive of Oral Tradition/Convert Country of Euphrates].

Published works

«Ակն քաղաքի կոտորածը» [The Massacre of Akn City]. *Droshak*, Periodical of Armenian Revolutionary Federation (Tiflis-Vienna-Geneva), 1896, № 26, 194-195;

Adanantiadis, Venediktos. «Ἐκθεσις ἐπὶ τῆς εἰς ἀνθρώπινας ὑπάρξεις καὶ εἰς χρήμα ἀπώλειας συνεπεία τῆς ἐκρίζωσέως τοῦ ἑλληνισμοῦ τῆς βορειοδυτικῆς Μικρᾶς Ἀσίας» [Report about the Human and Financial Losses Due to Uprooting of Greek Population of North-Western Asia Minor]. *Mikrasiatika Chronika* 7 (1957): 83-100;

Bart'kikyan, Hrach'. «Հայ-հոռոմները (քաղկեդոնիկ հայերը) հունական պարբերականներում» [Hay Horoms (Chalcedonian Armenians) in Greek Periodicals]. *Historical-Philological Journal* 3 (2008): 237-260;

Chajigeorgiou, Christos. *Τὸ Ὀρτάκιοϊ Βιθυνίας. Αἱ σφαγαὶ καὶ ξεθεμελίωσις αὐτῶν* [Ortakyöy of Bythinia, its Massacres and Demolition]. Athens, 1965;

Chanikyan, Hovsep. *Հուրիւնք Ակնայ* [Antiquities of Akn], Tiflis: Rotineants', 1895;

Chasiotis, Ioannis. *Ἀδελφὰ ἔθνη ἐν μέσῳ θυνέλλης: Ἀρμένιοι καὶ Ἕλληνες στὶς μεγάλες κρίσεις τοῦ Ανατολικοῦ ζητήματος (1856-1914)* [The Brother Nations in the Storm: the Armenians and the Greeks in the Great Crises of the Oriental Question (1850-1914)]. Thessaloniki: University Studio Press, 2015;

Farhat (Minas Gasapian). «Հայ-Հոռոմները կամ յունադասան Հայերը [Ուսումնասիրութեան փորձ]» [Hay Horoms or Orthodox Armenians [Attempt of Researching]]. *Azatomart* (Constantinople), 1910;

Gasapian, Minas. *Հայերը Նիկոմիդիոյ գաւառին մէջ. Ուսումնասիրութիւն վիճակագրական ցուցակներով և քարտէսով* [The Armenians in Nicomedia Province: Researching with Statistic Lists and a Map]. Partizak, 1913;

Gasparyan, Hambardzum. *Չւշկածագ և իր գիւղերը* [Chimishkatsag and its Villages]. *Payqar* (Boston), 1969;

Ghazaryan, Haykazn. *Պատմագիրք Չւշկածագի* [Book of History of Chimishkatsag]. Beirut: Hamazgayin, 1971;

Kazaryan, Gevorg. «Բարձր Հայքի Հողոս գիւղը յունալեզու հրապարակումներում» [The Village Hoghus of Higer Armenia in Greek Publications]. *Handes Amsorya* (2020), col. 357-382.

Kazaryan, Gevorg. «Ակնի հայ հոռոմները» [The Hay Horoms of Akn]. *Vardzk* 12 (2016): 19-26;

Kazaryan, Gevorg. «Ակնի Վանք գյուղի 1787 թվականի հայ հոռոմների Ավետարանը» [The Gospel of Orthodox Armenians of the Vank Village of the Akn Region]. *Bulletin of Matenadaran* 24 (2017): 222-232;

Kazaryan, Gevorg. «Արևմտյան Հայաստանի հայ-հոռոմների ավանդազրույցներն ու ավանդույթները» [The Tales and Traditions of Hay Horoms of Western Armenia].

Scientific Works of Shirak Centre of Armenological Studies of NAS RA 2, no. 23 (2020): 209-222;

Kazaryan, Gevorg. «Հայ հոռոմների ազգային ինքնության խնդրի շուրջ» [On the Problem of the Ethnic Identity of Hay-Horoms] in *Levon Khachikian. Centenary. Proceedings of the International Armenological Conference, Dedicated to the 100th Anniversary of Academician Levon Khachikian's Birth, 28-30 June, 2018*. Yerevan: Matenadaran, 2019, 180-204;

Kitromilidou, Magda. «Πασχάλης Πασχαλίδης, ὁ ἱεροδιδάσκαλος τοῦ Χουδίου. Πληροφορίες γιὰ τὴν ἐκπαιδευτικὴ καὶ πνευματικὴ κίνηση ὀρθοδόξων ἀρμενοφώνων πληθυσμῶν τῆς Βιθυνίας στὰ χρόνια 1903-1909» [Paschalis Paschalidis, the Teacher of Khou-di. Information about Educational and Spiritual Movement of Orthodox Armenian-speaking Populations of Bythynia in 1903-1909]. *Mikrasiatika Chronika* 18 (1988): 241-274;

Kleonimos, Markos. Papadopoulos, Christos. *Βιθυνικά ἢ ἐπίτομος μονογραφία τῆς Βιθυνίας καὶ τῶν πόλεών τῆς* [Bythinika or a Short Monography of Bythynia and its Cities]. Constantinople, 1867;

Lamtsidis, K. «Χογούζ. Ἑλληνικὸν Ἀρμενόφωνον χωρίον τοῦ Ἑρζιγγιᾶν Πόντου» [Hoghuz: Armenian-speaking Greek Village in Erzingan of Pontus]. *Pontiaki Estia* 74-75 (1956): 3578-3581;

Maravelakis, Maximos. Vakalopoulos, Apostolos. *Αἱ προσφυγικαὶ ἐγκαταστάσεις ἐν τῇ περιοχῇ Θεσσαλονίκης* [The Settlements of Refugees in Thessaloniki Region]. Thessaloniki, 1955;

Pakhtikos, Georgios. «Ὀρτάκιοϊ τῆς Βιθυνίας» [Ortakyöy of Bythynia]. *Estia*, 1892, 6 (January-June), 96;

Pakhtikos, Georgios. *Ὀλυμπιακοὶ Ἀγῶνες ἐν Βιθυνίᾳ* [The Olympic Games in Bythynia]. Athens, 1893;

Pelagidis, Stathis. «Τα δεινοπαθήματα των Ελλήνων στις περιοχές Νικομήδειας και Νίκαιας (καλοκαίρι του 1920)» [The Ordeals of the Greeks in Nikomedia and Nikea Regions (Summer of 1920)]. *Archeion Pontou* 53 (2011): 45-58;

Qech'eyan, Araquel. Parsamyan Mkrtich'. *Ակն և ակնցիք* [Akn and the Habitants of Akn]. Paris: American Patriotic Union of Akn, 1952;

Srvandzteants', Garegin. *Երկեր* [Works, Vol. 2]. Yerevan: Academy of Sciences of Armenian Soviet Socialistic Republic, 1982;

Srvandzteants', Garegin. *Թորոս Աղբար Հայաստանի ճամբարը* [T'oros Aghbar, Traveller of Armenia, part 2]. Constantinople, 1884;

Ἑστία [Hearth]. Athens, 13 September 1896.

Հեղինակի մասին
About the Author
Об авторе

Գևորգ Ս. Ղազարյան, Աստվածաբանության դոկտոր, գրաբարի դասավանդող Աթենքի համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետին կից Արևելյան Քրիստոնեության ուսումնասիրության կենտրոնում:
Ուսումնասիրությունների ոլորտը՝ աստվածաբանություն, եկեղեցու պատմություն, հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերություններ, ուղղափառ հայերի պատմություն:
Էլ-հասցե՝ gkazaryan@theol.uoa.gr

Gevorg S. Kazaryan, Doctor of Theology, Teacher of Ancient Armenian Language (Grabar) in Oriental Christianity Research Laboratory at the Faculty of Theology of the University of Athens.

Research fields – Theology, Ecclesiastical History, Armeno-Byzantine Ecclesiastical Relations, History of Orthodox Armenians.

E-mail: gkazaryan@theol.uoa.gr

Геворг С. Казарян, доктор богословия, преподаватель древнеармянского языка (грабара) в Центре изучения Древневосточного Христианства при Богословском факультете Афинского университета.

Область исследований: богословие, история церкви, армяно-византийские церковные отношения, история православных армян.

Эл. почта: gkazaryan@theol.uoa.gr

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Հեղինակների համար

- Հոդվածը պետք է ներկայացնել «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն՝ հեղինակի և բոլոր համահեղինակների(երթե գրված է համահեղինակությամբ) մասին տեղեկատվությամբ:
- Հոդվածը պետք է լինի բացառապես հեղինակի/համահեղինակների կողմից կատարված ուսումնասիրություն. խստիվ արգելվում է գրագողությունը:
- Հոդվածը չպետք է նախկինում նույնությամբ տպագրված լինի որևէ լեզվով՝ բացառությամբ առանձին դեպքերի՝ խմբագրի համաձայնությամբ:
- Հոդվածը չպետք է միաժամանակ հանձնված լինի տպագրության կամ դիտարկման մեկ այլ տեղում:
- Հոդվածը պետք է բարեխղճորեն շարադրված լինի՝ պահպանելով «Ցեղասպանագիտական հանդեսի» սահմանած կանոնները:
- Հոդվածի շրջանակում կատարված ուսումնասիրությունը պետք է հիմնված լինի ստույգ տվյալների վրա:
- Հոդվածը պետք է ունենա գիտական նորույթ և արդիականություն:
- Հոդվածում (հղման տեսքով) թույլատրելի է երախտագիտություն հայտնել ուսումնասիրությանը որևէ կերպ աջակցած անձանց:
- Հեղինակը պարտավոր է համագործակցել խմբագրակազմի հետ, կատարել անհրաժեշտ փոփոխությունները, հավելումները կամ կրճատումները, ինչպես նաև շտկել սխալները:
- Հեղինակն իրավունք չունի վիճարկելու խմբագրության՝ հոդվածը չտպագրելու որոշումը կամ գրախոսության բացասական կարծիքը՝ առանց հիմնարար փաստարկների:

Գրախոսների համար

«Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածները գրախոսվում են առվազն մեկ գրախոսի կողմից: Գրախոսությունը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքի հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ:

Գրախոսը պետք է՝

- նյութը գրախոսի՝ անկախ անձնական հետաքրքրություններից ու շահերից՝ դրսևորելով բացառապես գիտական անաչառ մոտեցում,
- լրացնի գրախոսման համար նրան ուղարկված ձևաթուղթը հնարավորինս սեղմ ժամկետներում,
- շահերի բախման առկայության դեպքում այդ մասին տեղեկացնել խմբագրությանը:

Գրախոսված ձևաթուղթը պահվում է «Ցեղասպանագիտական հանդեսի» արխիվում, չի տրամադրվում որևէ մեկին՝ այդ թվում՝ հեղինակին, և այն հրապարակման ենթակա չէ: Գրախոսման արդյունքների, առաջարկների ու դիտարկումների մասին հեղինակին տեղեկացվում է տրամադրված էլ. փոստի միջոցով:

Խմբագրակազմի համար

Խմբագրակազմը պարտավորվում է՝

- կազմակերպել «Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածների պատշաճ գրախոսությունը,
- հոդվածը «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն հանձնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, հեղինակին տեղեկացնել խմբագրական խորհրդի որոշման վերաբերյալ,
- հետևել պարբերականի հրատարակչական էթիկետին և երաշխավորել հրատարակվող աշխատանքների գիտական բարձր մակարդակը,
- չհրապարակել հեղինակի և գրախոսի անձնական տվյալները և չտրամադրել դրանք երկու կողմերին:

Խմբագրությունն իրավունք ունի մերժելու հոդվածի տպագրությունը, եթե այն չի համապատասխանում խմբագրության կողմից սահմանված պահանջներին:

Խմբագրությունը նյութերի տպագրության կամ մերժման որոշումը կայացնում է՝ հիմնվելով գրախոսների կատարած առաջարկների ու դիտարկումների վրա՝ հանդեսի տեխնիկական պահանջներին բավարարելու դեպքում:

Գրախոսման փուլի ավարտից և հեղինակի կողմից կատարված շտկումներից հետո հոդվածները խմբագրվում են «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրական մոտեցումներին համաձայն:

Հեղինակային իրավունք

Հրատարակված նյութերի հեղինակային իրավունքը (©) պատկանում է «Ցեղասպանագիտական հանդեսին»: Տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո հեղինակը պարտավորվում է լրացնել և ստորագրել հեղինակային իրավունքի փոխանցման վերաբերյալ ձևաթուղթը:

Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութեր

Հեղինակի պատասխանատվությունն է հեղինակային իրավունքով պաշտպանված ցանկացած նյութի (լուսանկար, տեքստ, պատկեր, աղյուսակ, դիագրամ և այլն) տպագրության կամ վերատպության համար գրավոր թույլտվություն ստանալը (ում պատկանում է հեղինակային իրավունքը): Դրանք պետք է տրամադրվեն «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրությանը (տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո): Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերի համար ձևաթուղթը կտրամադրվի խմբագրության կողմից:

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ

Ցեղասպանագիտական հանդեսում հրատարակման համար կարող են ներկայացվել գիտական հոդվածներ, գրախոսություններ, ինչպես նաև, առանձին դեպքերում խմբագրության որոշմամբ, մշակված անտիպ հուշագրություններ:

Ցեղասպանագիտական հանդեսում հրատարակման ներկայացվող հոդվածները լինելու են հիմնականում հայերենով (արևելահայերեն, արևմտահայերեն), իսկ առանձին դեպքերում՝ խմբագրության համաձայնությամբ՝ նաև օտար լեզուներով:

Ներկայացվող հոդվածները նախ դիտարկվում և հավանության են արժանանում խմբագրակազմի կողմից, ապա՝ թեմատիկ, որակական և տեխնիկական պահանջների

բավարարման դեպքում միայն՝ ուղարկվում գրախոսության:

Ցեղասպանագիտական հանդեսին ներկայացված հոդվածները գրախոսվում են առնվազն մեկ գրախոսի կողմից, գործընթացը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքների հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ: Խմբագրությունն իրավունք ունի անմիջապես մերժել ներկայացված նյութը՝ Ցեղասպանագիտական հանդեսի տեխնիկական և գիտական պահանջներին չբավարարելու դեպքում:

Ցեղասպանագիտական հանդեսում հոդվածների տպագրությունը կատարվում է անվճար հիմունքով:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Ծավալը՝ մինչև 30 էջ (ավելի մեծ ծավալի դեպքում՝ խմբագրության որոշմամբ):
2. Հայերեն տեքստը կազմել «Sylfaen» տառատեսակով, լատինատառ և սլավոնատառ տեքստերը՝ «Times New Roman» տառատեսակով, 12 տառաչափով, իսկ հղումները՝ 10 տառաչափով:
3. Առաջին էջում գրել հոդվածի հեղինակ(ներ)ի անունը, հայրանվան սկզբնատառը, ազգանունը, գիտական աստիճանը:
4. Հոդվածի վերնագիրը գրել ՄԵԾԱՏԱՌ-ԵՐՈՎ, թավատառ, հավասարեցնել կենտրոնում:
5. Հաջորդ տողում գրել «Բանալի բառեր — » արտահայտությունը և կցել նվազագույնը 5 հանգուցային բառ կամ արտահայտություն՝ 10 տառաչափով:
6. Հոդվածի բնագրի լեզվով գրել կարճ ներածական հատված (Abstract)՝ 150-200 բառ:
7. Անհրաժեշտության պարագայում բուն տեքստից անմիջապես հետո հասցեագրել երախտագիտություն անհատներին և/կամ կազմակերպություններին (acknowledgment):
8. Հոդվածի բուն տեքստից հետո (եթե կա երախտագիտության խոսք, ապա դրանից հետո) գրել նախ անգլերեն, ապա՝ ռուսերեն ամփոփումը: Անգլերեն հոդվածի դեպքում գրել նախ հայերեն, ապա՝ ռուսերեն ամփոփում, իսկ ռուսերեն հոդվածի դեպքում՝ նախ հայերեն, ապա՝ անգլերեն ամփոփում:
Յուրաքանչյուր լեզվով ամփոփման վերնագրից հետո կցել համապատասխան լեզվով բանալի բառեր (բանալի բառերը բոլոր լեզուներով տրվող ամփոփումներում պետք է լինեն նույնը):
9. Ամփոփումներից հետո ներկայացնել ոչ լատինատառ գրականության ցանկն այբբենական կարգով՝ նշելով նյութի վերնագիրը բնագրով, իսկ [] փակագծերում տալ համարժեք անգլերեն թարգմանությունը: Հղման այլ մանրամասները (հեղինակի անուն, ազգանուն, հրատարակչության անունը, վայրը, ամսագրի վերնագիրը և այլն) տալ լատինատառ՝ ներկայացված տառադարձմամբ, օրինակ՝

Marut'yan, Harut'yun. *Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* [Iconography of Armenian Identity. Vol. 1: The Memory of Genocide and the Karabagh Movement]. Yerevan: Gitut'yun, 2009;

Սուրիական տարեցոյց [Syrian Almanach]. Cairo: Zareh Pe'rpe'rean, 1924;

Ցավի, հիշողության և պայքարի կոթողներ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված կոթողներ [Memorials of Sorrow, Remembrance and Struggle]. Yerevan: Ministry of Diaspora, 2010;

Sahakyan, Vera. «Հատուկ կազմակերպության (Թեշքիլաթ-ը Մախսուսե) ձևավորման նախադրյալները», *Հայոց ցեղասպանություն – 100. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու* [“Prerequisites of the Formation of Special Organization (Teşkilât-i

Mahsusa)” in Armenian Genocide -100. Collection of Papers of the International Conference]. Yerevan: Gitut’yun, 2016, 198-212.

Marutyan, Harutyun. «Ինքնության «ամրացման» երկու հնարաորություններ Հայաստան-Սփիւրք յարաբերությունների համատեքստում», *Սփիւրք եւ ինքնություն* (Խմբ.՝ Շահան Գանտահարեան) [“Two ‘possibilities’ of strengthening Identity in the Context of Armenia-Diaspora Relations,” in Diaspora and Identity (ed. Shahan Kandaharian)]. Antelias-Lebanon: Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2018, 219-233.

Margaryan, Narine. «Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրության պետական որբանոցներում (1915-1918 թթ.)» [Turkification of Armenian Children in the Ottoman Empire’s State Orphanages (1915-1918)]. *Ts’eghaspanagitakan handes* 4 no. 1 (2016): 25-43;

Antonyan, Aram. «Տօքոս. Ալթունյան» [Dr. Alt’unyan]. *Veratsnund* (Paris), 27 May, 1919, no. 12.

10. Ներկայացնել նաև հեղինակի մասին տվյալներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով՝ գրել նաև պաշտոնը և աշխատավայրը, ուսումնասիրությունների ոլորտը, էլ. փոստի հասցեն:

ՀՂՈՒՄՆԵՐ

11. Ցեղասպանագիտական հանդեսի հղումները ձևավորել համաձայն *The Chicago Manual of Style Online 17th Edition*-ի:

Հղումները պետք է համարակալվեն սկզբից մինչև վերջ: Անկախ լեզվից յուրաքանչյուր աղբյուր, եթե շարունակաբար հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից պետք է օգտագործվի՝

Նույն տեղում: (եթե էջը նույնն է)

Նույն տեղում, ...: (եթե էջը փոխվում է)

Ա. *Գրքեր* (մենագրություններ կամ համահեղինակությամբ աշխատություններ)

1) Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները, հեղինակի անունը (ամբողջությամբ), հեղինակի ազգանունը, վերնագիրը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Բոլոր գրքերի վերնագրերը գրել շեղատառ:

Անգլերեն վերնագրերի բոլոր բառերը (բացառությամբ նախդիրների, հոդերի կամ շաղկապների) գրել մեծատառ: Օր.՝

1. Սարգիս Թորոսյան, *Դարդանելից մինչև Պաղեստին* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013), 55:

2. Валерий Тунян, *Россия и Армянский вопрос* (Երևան: Музей-институт Геноцида армян, 1998), 55.

3. Vahagn Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (Providence - Oxford: Berghahn Books, 1995), 55.

2) Եթե նույն հոդվածում գիրքը հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից և անկախ լեզվից պետք է նշվի կրճատ տարբերակը՝ հեղինակի ազգանունը, գրքի շեղատառ վերնագիրը (կարճ վերնագրերի դեպքում) կամ վերնագրի առաջին մի

քանի բառը (երկար վերնագրի դեպքում): Օր.՝

Թորոպյան, *Դարդանելից մինչև Պաղեստին*, 55:

Тунян, *Россия и Армянский вопрос*, 55.

Dadrian, *The History of the Armenian Genocide*, 55.

4) Մեկից ավելի հեղինակների դեպքում, գրել առաջին երկու հեղինակների անունները և ազգանուններն ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», “и др.”, “et. al.”, որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

Բ. Թարգմանված գրքեր

Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը, ազգանունը, գրքի վերնագիրը, թարգմանողի ամբողջական անունը և ազգանունը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Գրքի վերնագիրը պետք է գրել շեղատառ:

1. Jhumpa Lahiri, *In Other Words*, trans. Ann Goldstein (New York: Alfred A. Knopf, 2016), 146.

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում), շեղատառ, էջը: Օր.՝

1. Lahiri, *In Other Words*, 184.

Գ. Թվային գրքերի (ebook)

Թվային գրքերի օգտագործման դեպքում գրել գրքի տվյալները վերոնշյալ սկզբունքներով, ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը: Եթե գրքի էջերը առկա չեն, ապա պետք է նշել բաժնի կամ գլխի համարը և դիտման ժամանակը: Օր.՝

1. Herman Melville, *Moby-Dick; or, The Whale* (New York: Harper & Brothers, 1851), 627, <http://mel.hofstra.edu/moby-dick-the-whale-proofs.html>, դիտվել է 17.07.2019:

2. Philip B. Kurland and Ralph Lerner, eds., *The Founders' Constitution* (Chicago: University of Chicago Press, 1987), chap. 10, doc. 19, <http://press-pubs.uchicago.edu/founders/>, դիտվել է 17.07.2019:

3. Brooke Borel, *The Chicago Guide to Fact-Checking* (Chicago: University of Chicago Press, 2016), 92, ProQuest Ebrary.

4. Jane Austen, *Pride and Prejudice* (New York: Penguin Classics, 2007), chap. 3, Kindle.

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) շեղատառ, էջը կամ բաժնի կամ գլխի համարը: Օր.՝

1. Melville, *Moby-Dick*, 722–723.

2. Kurland and Lerner, *Founders' Constitution*, chap. 4, doc. 29.

3. Borel, *Fact-Checking*, 104–105.

4. Austen, *Pride and Prejudice*, chap. 14.

Դ. Ժողովածուներ

1) Ժողովածուները պետք է հղվեն՝ նշելով հեղինակի անունը, ազգանունը ամբողջական,

հողվածի կամ գլխի վերնագիրը չակերտների մեջ, ամբողջ ժողովածուի վերնագիրը, խմբագիր(ներ)ը կամ կազմող(ներ)ը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Օր.՝

1. Vahakn Dadrian, “Ottoman Archives and Denial of the Armenian Genocide,” in *The Armenian Genocide: History, Politics, Ethics*, ed. Richard G. Hovannisian (New York: St. Martin's Press, 1992), 280.
2. Վերթինե Սվազյան, «Հայոց ցեղասպանությունը ըստ ականատես վերապրողների վկայությունների», *Հայոց Մեծ եղեռն 90*, հողվածների ժողովածու (Երևան, ԵՊՀ հրատ., 2005), 471:
3. Сурен Манукян, “Наказание за верность.” От Эрзурумского конгресса до Сарыкамышского сражения,” *Первая мировая война: взгляд спустя столетие: доклады и выступления участников V Международной научно-практической конференции* (М.: Изд-во МНЭПУ, 2016), 648.

2) Բազմակի ոչ շարունակական հղումներնրի դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հողվածի կամ գլխի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Dadrian, “*Ottoman Archives*,” 471.
2. Սվազյան, «*Հայոց ցեղասպանությունը*», 471:
3. Манукян, “*Наказание за верность*,” 648.

Ե. Հողվածներ

1) Հողվածներ հղելիս նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հողվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Առկայության դեպքում ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը, նաև ` DOI-ն (Digital Object Identifier): Օր.՝

1. Rouben P. Adalian, “Comparative Policy and Differential Practice in the Treatment of Minorities in Wartime: the United States Archival Evidence on the Armenians and Greeks in the Ottoman Empire,” *Journal of Genocide Research* 3, no. 1 (2001): 35.
- Shao-Hsun Keng, Chun-Hung Lin, and Peter F. Orazem, “Expanding College Access in Taiwan, 1978–2014: Effects on Graduate Quality and Income Inequality,” *Journal of Human Capital* 11, no. 1 (2017): 9–10, <https://doi.org/10.1086/690235>
3. Peter LaSalle, “Conundrum: A Story about Reading,” *New England Review* 38, no. 1 (2017): 95, Project MUSE.
4. Շուշան Խաչատրյան, «Ջիհադը և Հայոց ցեղասպանությունը. հրովարտակներ, հրահանգներ ու կոչեր», *Ցեղասպանագիտական հանդես* 6, թիվ 2 (2014), 40:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հողվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Adalian, “Comparative Policy and Differential Practice,” 35.
2. Keng, Lin, and Orazem, “Expanding College Access,” 23.
6. Խաչատրյան, «Ջիհադը և Հայոց ցեղասպանությունը», 40:

Զ. Համահեղինակությամբ հողվածներ

Երեքից ավել համահեղինակ ունեցող հոդվածներում նշել առաջին հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», “и др.”, “et. al.”, որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

Է. Մամուլ

Մամուլի հոդվածներ հղելիս պետք է նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հոդվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Նշել նաև հանդեսի տպագրության վայրը: Օր.՝

1. Գալստյան Սուսաննա, «Երվանդ Օտյանը և ազգային տոնը», *Ազգ* օրաթերթ (Երևան), 24 ապրիլի 2010, 13:
2. Rebecca Mead, “The Prophet of Dystopia,” *New Yorker*, April 17, 2017, 43.
3. Farhad Manjoo, “Snap Makes a Bet on the Cultural Supremacy of the Camera,” *New York Times*, March 8, 2017, <https://www.nytimes.com/2017/03/08/technology/snap-makes-a-bet-on-the-cultural-supremacy-of-the-camera.html>.
4. Խմբագրական, *Ազատամարտ* օրաթերթ (Կ.Պոլիս), 31 հոկտեմբեր/13 նոյեմբեր 1914, 1:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Գալստյան, «Երվանդ Օտյանը», 13:
2. Mead, “The Prophet of Dystopia,” 43.
3. Manjoo, “Snap.”
4. Խմբագրական, 1:

Ը. Թեզեր և ատենախոսություններ

Թեզերը և ատենախոսությունները հղելիս պետք է նշել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, թեզի կամ ատենախոսության վերնագիրը չակերտների մեջ, պաշտպանության վայրը, տարեթիվը, էջը: Օր.՝

1. Cynthia Lillian Rutz, “King Lear and Its Folktale Analogues” (PhD diss., University of Chicago, 2013), 99–100.
2. Նարեկ Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը Ռաֆայել Լեմկինի կողմից» (ատեն., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2017), 77:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, թեզի կամ ատենախոսության վերնագիրը՝ ամբողջությամբ կամ կրճատ, շեղատառ, չակերտների մեջ, պաշտպանության վայրը և տարեթիվը, էջը:

1. Rutz, “King Lear,” 158.
2. Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը», 77:

Թ. Համացանց

Համացանցային նյութերը հղելիս՝ գրել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ (եթե նշված է), նյութի վերնագիրը (եթե նշված է), ապա՝ համացանցային հասցեն և նյութից օգտվելու ամսաթիվը: Օր.՝

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton,” <http://www.genocidewatch.org/genocide/tenstagesofgenocide.html>, դիտվել է 17.07.2019:

2. Նարինե Մարգարյան, «Օսմանյան Կայսրության Պետական Որբանոցներում Կիրառվող Թրքացման Մեթոդները», <http://www.genocide-museum.am/arm/05.02.2019-MargaryanNarine.php>, դիտվել է 17.07.2019:

3. Katie Bouman, “How to Take a Picture of a Black Hole,” filmed November 2016 at TEDxBeaconStreet, Brookline, MA, video, 12:51, https://www.ted.com/talks/katie_bouman_what_does_a_black_hole_look_like, դիտվել է 17.07.2019:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք նշել հեղինակի ազգանունը և/կամ նյութի վերնագիրը(երկար վերնագրերի դեպքում՝ կրճատ): Օր.՝

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton.”

2. Մարգարյան, «Օսմանյան Կայսրության»:

3. Bouman, “Black Hole.”

12. Անձնական հաղորդակցություններ

Անձնական հաղորդակցությունները, ներառյալ էլեկտրոնային և տեքստային նամակները (messages), ինչպես նաև սոցիալական ցանցերի միջոցով ուղարկվող հաղորդագրությունները հղելիս, պետք է նշել հետևյալ կերպ.

1. Պետրոս Տեր-Մաթոսյան, Ֆեյսբուքյան նամակ հեղինակին, 1 օգոստոսի 2017 թ.:

2. Պետրոս Տեր-Մաթոսյան, Էլեկտրոնային նամակ հեղինակին, 15 մարտի 2017 թ.:

13. Ամսաթվերի գրելաձև

1. Խոսքին քերականորեն չկապվող ամսաթվերում նախադաս թվանշանը գրել առանց չակերտի և առանց հոդի, իսկ ամսանունը՝ սեռական հոլովաձևով: Պահպանել ամսաթիվ-ամսանուն-տարեթիվ հերթականությունը: Ամսանունը գրել փոքրատառ: Այսպես՝ 15 մայիսի 2018 թ. կամ 15.05.2019:

Թույլատրելի է նաև ամսանվան ուղիղ ձևով գրությունը: Օրինակ՝ 15 մայիս 2018 թ.: Շարադասության փոփոխության դեպքում ամսանունը կարող է գրվել նաև սկզբում: Օրինակ՝ մայիսի 15 2018 թ.:

1. Ամիս-ամսաթիվը և տարեթիվն իրարից ստորակետով չանջատել: Օրինակ՝ 3 հունվարի 2019 թ. կամ 2019 թ. փետրվարի 1:

2. Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերում գործածել միջակետ: Օրինակ՝ 25.01.2019:

3. «Թվական» բառի համառոտագրությունը՝ «թ.»-ն, գրել թվանշանից առանձին՝ թողնելով բացատ: Օրինակ՝ 31 հունվարի 2019 թ.: Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերից հետո «թ.»-ն չգրել՝ համարելով ավելորդ:

14. Տառադարձություն

Հայերեն

Ա ա - A a
 Բ բ - B b
 Գ գ - G g
 Դ դ - D d
 Ե ե - E e
 Չ զ - Z z
 Է է - E' e'
 Ը ը - Ë ë
 Թ թ - T' t'
 Ժ ժ - Zh zh
 Ի ի - I i
 Լ լ - L l
 Խ խ - Kh kh
 Ծ ծ - Ts ts
 Կ կ - K k
 Հ հ - H h
 Ձ ձ - Dz dz
 Դ դ - Gh gh
 Ճ ճ - Ch ch
 Մ մ - M m
 Յ յ - Y y
 Ն ն - N n
 Շ շ - Sh sh
 Ո ո - Vo vo (բառամիջում գրել օ ձևով)
 Չ չ - Ch' ch'
 Պ պ - P p
 Զ շ - J j
 Ռ ռ - R' r'
 Ս ս - S s
 Վ վ - V v
 Տ տ - T t
 Բ բ - R r
 Յ գ - Ts' ts'
 Ո հ ու - U u
 Փ փ - P'p'
 Ք կ - Q q
 Եվ է Ev ev
 Օ օ - O' o'
 Ֆ ֆ - F f

Ռուսերեն

А а - A a
 Б б - B b
 В в - V v
 Г г - G g
 Д д - D d
 Е е - E e
 Ё ё - Io io
 Ж ж - Zh zh
 З з - Z z
 И и - I i
 Й й - İ ĩ
 К к - K k
 Л л - L l
 М м - M m
 Н н - N n
 О о - O o
 П п - P p
 Р р - R r
 С с - S s
 Т т - T t
 У у - U u
 Ф ф - F f
 Х х - Kh kh
 Ц ц - Ts ts
 Ч ч - Ch ch
 Ш ш - Sh sh
 Щ щ - Shch shch
 Ъ ъ - “
 Ы ы - Y y
 Ь ь - ‘
 Э э - E' e'
 Ю ю - Iu iu
 Я я - Ia ia

Տպագրությունը՝ օֆսեթ, թուղթ՝ օֆսեթ,
տպաքանակը՝ 150:

Համակարգչային ձևավորումը՝ Զրիստինե Վարդանյանի

Տպագրվել է